



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 5 1892

Մ Ա Յ Ի Ս

1892 № 5

ՉՈՐՏՈՒԹՅԱ ՏԱՐԻ

	Երես
1 ԽՄԲ.	661 Կաթողիկոսական ընտրությունները:
2 ԳՈԳՈԼ, Ն.	663 Պլիւշվին:
3 ԼԵՇԵՆՅՅ	687 Երազ (բանաստեղծութիւն):
4 ՍԵՆԿԵԻՂ, ՀԵՆՐԻԿ	689 Առանց զաւանանքի (վեպ):
5 ԹՈՒՄԱՆԵԱՆՅՅ, ՅՈՎՃԱՆՆԵՍ	725 Դէէր (բանաստեղծութիւն):
6 ՎԱՐԹՈՒՆԵԱՆՅՅ, ԳՐԻԳՈՐ	726 Արդիւնագործ. Անդրկովկասում, II:
7 ԲԱԼԱՎԵԱՆ, ՍԱՄՈՒԵԼ	739 Միջատակիր բուները:
8 ՖԵԼԻՔՍ	743 «Եատուրալիտը» և Զոյան, I:
9 ՄԱԼԻԱՍՈՒԵԱՆՅՅ, ԱՏ.	758 «Եղիշի պատմութիւնը»
10 ՏՐԱՆԴԻԱՍՈՒԵԱՆ ՄԻ.	769 «Քիմիա Ուսկօթա:
11 ԼՈՒՍԻՆԻ.	773 Ամուալ քրտնիկ:
12 Խ. Մ.	779 Կամակներ կչմիածնից:
13 *	805 Պատգամատորն. աղղա՞ւան ցուցակ:
14 ԱԿԱՆԱՏԱՍ	809 Ամեն. հայոց կաթոլ. ընտրութիւնը:
15 Ֆ.	826 Ռուսակ. պետ. ելիսացուց 1892 թ.:
16 Ֆ.	830 Ռուսական քրոնիկ:
17 ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, ԳՐ.	841 Երաժշտական քրոնիկ:
18 ԼՈՒՍԻՆԻ.	844 Գրականագիւան. օգնութ. ընկերութ.
19 ԽՄԲ.	845 Խմբագրութեան կողմից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.



ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-ՕՏԻՆԵԱԾԻ

1892



ՄԱԿՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 5 1892

ՄԱՅԻՍ

1892 № 5

ԶԱՐԳՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ

1892

Дозволено цензурою. Тифлісь, 11 Мая 1892 г.

Типографія М. Д. Ротніанца. На Гол. просп. соб. домъ № 41.

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Մայիսի 3-5-ին ս. էջմիածնում՝ մասնակցութեամբ 72 ձայների, կատարւեցին կաթողիկոսական ընտրութիւնները: Բոլոր 72 ձայններով ընտրւեց կաթողիկոսական առաջին թեկնածու գերազատիւ Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան, կոչւած Հայրիկ, և որպէս երկրորդ թեկնածու՝ սրբազն Մատոթէոս եպիսկոպոս Խզմիրլեան: «Մուրճ» ամսագիրը միանում է ազգի ընդհանութեան հետ և լիապէս բաժանում ընդհանուրի բերկրաները Խրիմեան Հայրիկի միաձայն ընտրութեան համար: Աւրախ ենք, որ «Մուրճ»-ը առանց որ և է տատանման առաջարկել էր որպէս կաթողիկոս ամենայն հայոց այն մեծ մարդուն, որը ընտրութիւնների հանդիսաւոր օրը ազգի բոլոր հոգևորական և աշխարհական ներկայացուցիչների միաձայն հաւանութիւնը գտաւ: Մենք չենք կասկածում որ «Մուրճ»-ը որ և է չափով աջակցել է կաթողիկոսական խնդրի այդ յաջող ելքին. զորա մէջ միիմարութիւն գտնելով, չմեր մէջ զօրանում է վատահութիւնը որ նաև ապագայում՝ ազգի համար ծանրակշիռ խնդիրներում՝ մենք մեր ազգին կարող կը լինենք խելացի խորհուրդներով օգնել, արժանանալով ընթերցող հասարակութեան կողմից առելի և ընդարձակ հաւատուի դեպի մեզ:

ԽՍԲ.



# ՊԼԻՒՐԱԿԻՆ

(ԴԱԴՈՒԹ ԱՄԵՐԻԿԱ ՀԱԳԻՆԵՐԻՑ ՄԻ ՀԱՇԻԱԾ)

Թարգմ. ՄԿՐՏ. ՂԱԶԱՐԵԱՆՅԻ

Մինչդեռ Զիւթկովը մտածում էր և ներքում ծիծաղում գիւղացիների՝ Պլիւշկինին կպցրած մականւան վրայ<sup>1)</sup>, չը նկատեց, թէ ինչպէս հասաւ՝ բազմաթիւ խրճիթներ ու վողոյներ ունեցող լայնարձակ գիւղի մէջ տեղը։ Շուտով, սակայն, նրան այդ նկատել տւեց մի կարգին ցնցում, որ պատճառեց գերաններից շինած սալարկը, որի առջև քաղաքի քարէ տալարկը ոչինչ էր։ Այս գերանները դաշնամուրի մասների նման մերթ բարձրանում էին, մերթ ցածանում, և անզգոց անցորդը<sup>2)</sup> առանում էր կամ մի ուռոց ծոծրակի վրայ, կամ մի կալոց բիծ ճակատի վրայ, կամ թէ չէ պատահում էր, որ իւր սեփական առամներով սաստիկ կծում էր իւր իսկ սեփական լեզուի ծայրը։ Մի տեսակ առանձին խարխուլութիւն նկատեց նա գիւղի բոլոր շինութիւնների վրայ։ Խրճիթների վրայ գերանները մթնագոյն էին և հին. շատ կտուրներ ծակծկուանել էին մաղի նման. միւսների վրայ մնացել էին հաչանները<sup>3)</sup> վերևից, և երկու կողմից բարակ գերանները կողերի նման։ Երկում էր իրանք տէրերը նրանցից վար էին առել կեղևները<sup>4)</sup> և տախտակը, դատելով, և ի հարկէ

<sup>1)</sup> Կարկատաճ, և դրա հետ միասին մի զուական, շատ յաջող, լայց անզործածական քաղաքալարի խօսակցութեան մէջ։

<sup>2)</sup> Ֆըծօք։

<sup>3)</sup> Կոնեկ։

<sup>4)</sup> Դրանք, ճառերի կեղևներ, որտնցով ուսու գիւղացիք լրցնում են տան գերաններից շինած պատերի միջերքը։

իրաւացի, որ անձրեւ ժամանակ Խրճիթը չեն ծածկում, իսկ պարզ օրը արդէն ինքն էլ չի կաթիլ. իսկ կնոջ նման այնահեղ նստել էլ չարժէ, քանի որ արձակ տեղ կայ և' զինետանը և' մեծ ճանապարհի վրայ, մի խօսքով, որտեղ ուզում եւս Խրճիթների լուսանուաներն առանց ապակու էին. մի քանիսը խցւած փալսառի կամ զիսունով. կտուրների տակ ճաղերով փոքրիկ պատշգամբները, որոնք ցայտնի չեն, թէ ինչ սպառմառներով շինուում են մի քանի ռուսական Խրճիթներում, թեքը էլ էին և սեացիլ, մինչեւ անդամ ոչ զեղարւեսորդն: Խրճիթների յետեից շատ տեղերում շարքերով ձգւում էին հացի հանգին շեղջեր, որոնք, ինչպէս երեւում է, երկար մնացել էին անձեռնմխելի. նոքա դոյնով նման էին հին, վատ թրծած աղիւսի. նոցա գագաթների վրայ բռւսել էր ամեն տեսակ խոտ ու մոռ և մինչեւ անդամ կողքին կպէել էր մի թուփ: Հացը, ինչպէս երեւում է, աղացինն էր: Հացի շեղջերի և խարխուլ կտուրների յետեից վերամբառնում և սլովը լում էին մաքուր օղի մէջ մերժ աջ, մերժ ճախ կողմից, նայած թէ կառքը որ կողմի էր պալատում, գիւղի երկու եկեղեցիները, մէկը միւսի կողքին, մէկը զատարկւած, փայտից, միւսը՝ քարեայ, գեղնած պատերով, բծաւորւած, ճաքճքոսած: Մաս մաս սկսեց երեւալ աղացի տունը և առա ամբողջապէս ներկայացաւ այնուեղ, որտեղ Խրճիթների շղթան ընդհատեց և նրանց փոխանակեց գառարկ տեղ բանջարանոցով կամ կազմամբանոցով, շրջապատւած ցածլիկ, տեղտեղ կոտրուած ցանկապատով: Մի տեսակ զառամեւալ ինւալիդի էր նմանում այս տարօրինակ զղեակը, երկար, անչափ երկար: Տեղ տեղ նա մի ցարկանի էր, տեղ-տեղ երկու: Մթնագոյն կտուրի վրայ, որ ոչ ամեն տեղ յուալի պաշտպանում էր նրա հնութիւնը, ցցւած կային մէկը միւսի հանգեալ երկու բելւեգերներ, երկումն էլ արդէն խախուած, զրկւած երբեմն իրանց ծածկող ներկից: Տան ճաքճքոտած պատերը տեղ-տեղ երեսն էին հանում սըւաղի մերկ ցամեցը և, ինչպէս երեւում է, վնասներ էին կրել ամեն տեսակ վատ եղանակներից, անձրեններից, փոթորիկներից և աշնանացին փոփոխականութիւնից: Առասմուսներից միան երկումն էին բաց, իսկ միւսները փակւած էին փեղկերով, կամ մինչեւ իսկ տախտակներ էին խփւած: Այս երկու լուսամուտները, իրանց կողմից, նոյնուկս

կիսաքոռ էին. Նրանցից մէկի վրայ կպցրած մթին էր տալիս կապոյտ, շաքարի թղթից մի եռանկիւնի:

Տան յետևը ձգւած հին, ընդարձակ պարտէզը, որ գուրս էր դալիս գիւղից և յետոյ կորչում դաշտի մէջ, խոտերով խեղդւած ու չորացած, երեսում էր, միակն էր՝ որ թարմացնում էր այս ընդարձակ գիւղը և միակը, որ կատարեալ բանաստեղծական էր իւր գեղադրական ամացութեան մէջ: Իբրև կանաչագոյն ամպեր և անկանոն դողդոջ տերեններով գմբէթներ ընկած էին երկնալին հորիզոնի վրայ աղասութեան մէջ փարթամօքէն աճած ծառերի միացած գագաթները: Թղթենու սպիտակ հսկայամարմին բունը, զրկւած գագաթից, որ կոտրել էին փոթորիկը կամ կայծակը, բարձրանում էր այդ խիտ կանաչութեան միջից և կանգնում օդի մէջ իբրև կանոնաւոր մարմարեայ փայլուն կոթող. շեղ, սրածայր կոտրւածքը, որով նա վերջանում էր բարձրում փոխանակ թակաղակի՝ մթին էր տալիս նրա ձիւնափայլ սպիտակութեան վրայ իբրև գլխարկ, կամ իբրև սև թռչուն: Դայլուկը<sup>1)</sup> որ ներքեսում խեղդում էր թանթրուենու<sup>2)</sup>, և վայրի կաղնիների թփերը, և յետոյ վազում էր ամբողջ ցանկապատի վրացով, վերջապէս վեր էր ուղղում և փաթաթւում էր մինչև կէսը կոտրւած թիստենուն: Հասնելով նրա մէջ տեղը, նա այնտեղից կախւում էր ցած և սկսում էր արդէն կազել ուրիշ ծառերի գագաթներին, կամ թէ չէ քաշ էր գալիս օդի մէջ, օղակ-օղակ ոլորելով իւր բարակ, բռնող ճանկերը, որոնք հեշտութեամբ երերւում էին օդից: Տեղ-տեղ բացւում էր խիտ կանաչութիւնը, արելից լուսավառւած, և նրա մէջ տեղը երեսում էր չը լուսաւորւած խորութիւն, որ աչք էր զարկում մութ անդունիքի նման. նա ամբողջապէս սուերաւորւած էր և հազիւ-հազ նշմարւում էին նրա սև խորութեան մէջ, ձգւող նեղ շատիղը, քանդւած ճաղերը, խախտըւած հովարանը, ուռենու փչակաւոր զառամեալ բունը, մոխրագոյն քարինջը<sup>3)</sup>, որ իւր փշատերեներով գուրս էր ցցւում ուռենու յետևից, սարասկելի խլութեան մէջ չորացած, խառնւած ու խճճւած տերեններ ու ոստեր, և վերջապէս չինարի մասաղ ձիւղը, որ

<sup>1)</sup> Խմել. <sup>2)</sup> Բյան. <sup>3)</sup> Կապական.

կողքից տարածել էր իւր կանաչ թաթ-տերևները, որոնցից մէկի տակ, Աստւած գիտէ, ինչպէս, մանելով արեգակը, յանկարծ գարձնում էր նրան թափանցիկ և հրեղէն, որ հրաշալի փայլում էր այս թանձր մթութեան մէջ: Մի կողմը, պարտիղի նոյն խակ ծացրին, մի քանի բարձրահասակ, միւսներին անհամաչափ բարդիներ բարձրացրած պահում էին իրանց գողգոջուն կատարների վրայ աղուաւի ահազին բներ: Նրանցից մի քանիսի վրայից սրկւած և ոչ ամբողջապէս բաժանւած ճիւղերը կախւած էին ցած, չորացած տերեւներով միասին: Մի խօսքով, ամեն ինչ այնպէս լաւ էր, որպէս չի կարող հնարել ոչ բնութիւնը, ոչ արւեսոր, բայց որպէս լինում է միայն այն ժամանակ, երբ նոքա կը միանան միւնանց հետ, երբ մարդու, շատ անդամ աննպատակ կուտակւած աշխատութեան վրայ իւր վերջնական քանդակագրիչը կը տանի: բնութիւնը, կը թեթեացնէ ծանր զանդւածները, կոչնչացնէ կոշտ ու կոպիս կանոնաւորութիւնը և ողորմելի ճեղքերը, որոնց միջով նշմարւում է չը ծածկւած, մերկ ուրագիծը, և երբ նա տալիս է մի հրաշալի ջերմութիւն այն ամենին, ինչ որ ստեղծւել է չափւած, յառակ և մաքուր զովութեան մէջ:

Մի կամ երկու պատյան անելուց յետոց մեր հերոսը վերջապէս տան առջեն էր, որը նրան այժմ աւելի ևս տիսուր երեւաց: Կանաչ բորբոքուր պատուէ էր արդէն ցանկապատի և զաների մաշւած փայտը, բակը բոնւած էր բազմաթիւ խախտող շնութիւններով՝ ծառաների բնակարաններով, ամբարանոցներով, մառաններով: Նրանց մօտ, աջ ու ձախ երեւում էին զոներ, որոնք բացւում էին ուրիշ բակերի մէջ: Ամեն ինչ վկայում էր, որ այսաեղ մի ժամանակ կեանքը եռ էր գալիս ընդարձակ ծառալով, իսկ այժմ ամեն ինչ մնացը էր: Տեսարանին կենդանութիւն տւող ոչինչ չկար, ոչ դուռ էր բացւում, ոչ մարդ էր դուրս դալիս մի տեղից, ոչ կենդանութիւն կամ տնացին հոգս ու ցաւ կար: Միմիայն գլխաւոր զարբազն էր բաց, այն էլ նրա համար, որ մի գիւղացի խսիրով ծածկած բարձած սացլը ներս էր քշել և կարծես զիտմամբ երևացել այս մեւած տեղում կենդանութիւն դժելու: Ուրիշ ժամանակ այդ զարբազն էլ ամուր փակւած էր լինում, որովհետեւ երկաթէ օղակից կախ էր ընկած մի հսկայ կողպէք:

Եինութիւններից մէկի մօտ Զիշիկովը շուտով նկատեց մի վի-

գուր որը սկսեց սայլով եկած գիւղացու հետ կուել։ Երկար նա  
չը կարողացաւ ջոկել, թէ ի՞նչ սեսի էր ֆիզուրը. կի՞ն թէ  
մարդք Հագի շորը բոլորովին անորոշ էր, շատ նման կնոջ կրկնոցի։  
Պլիսին գիշերւացդակ, որ ծածկում են գիւղացի աղախիները. միայն  
ձայնը կնոջ ձայնից մի քիչ տոելի խռապոտ թւաց։ «Վայ թէ կի՞ն է»,  
մտածեց Զիչիկովը ինքն իրան և խօսն աւելացրեց՝ «վայ թէ  
չէ», — «ի հարկէ, կի՞ն է», ասաց նա վերջապէս, աւելի լաւ զննելուց  
յետոց։ Ֆիգուրը իւր կողմից զիտում էր նրան նոյնպէս ուշի ուշով։  
Երկում էր, որ հիւրը նրա համար մի օտարոտի բան էր, որովհետեւ  
նա աչքերով տնտղում էր ոչ միայն նրան, այլ և կառապան Սելին-  
Փանին և ձիերին, գնչից սկսած մինչև սրոշ։ Նրա գօտկից կախ  
ընկած բանալիներից և նրանից, որ նախատում էր զիւղացուն բա-  
ւական հաջողական խօսքերով, Զիչիկովը եղբակացրեց, որ նա կլիւ-  
նիցա ։<sup>1)</sup> պէտք է լինի։

— Խնդրեմ տսես, ա քիր, ասաց նա, կառքից իջնելով, աղէն...

— Տանը չէ, ընդհատեց կլիւչնիցան, առանց սպասելու, որ նա  
հարցը վերջացնէ, և մի վայրկեան յետոց աւելացրեց՝ բաց ի՞նչ էք  
ուզում։

— Գործ ունիմ։

— Գնացէք սենեակ, ասաց կլիւչնիցան՝ դառնալով և ալիւրոտած  
ու ներքեկց մեծ ձեղք ունեցող մէջքը նրան անելով։

Զիչիկովը մտաւ մութ, ընդարձակ նախասենեակը, որտեղից,  
կարծես մտանից, սառն օդ փշեց։ Նախասենեակից նա ընկաւ մի  
ուրիշ սենեակ, որ նոյնպէս մութն էր, միայն դռան տակի լայն ձեղ-  
քից շատ քիչ լոյս էր առնում։ Այդ դրուն էլ բաց անելով, նա  
վերջապէս լոյս աշխարհ ընկաւ։ Աչքին ներկայացած խառնակու-  
թիւնը նրան շւարեցրեց։ Կարծես տան սենեակների յատակները  
լւանում էին և բոլոր կահ-կարասին առժամանակ այսուեղ էին զիգել։  
Սեղաններից մեկի վրայ դրած էր մինչև խոկ մի կոտրած աթոռ։  
Նրա մօտ մի ժամանցոց, ճոճանակը կանգնած, որի վրայ սարդն  
արդէն ուստացն էր կցել։ Այդտեղ դրւած էր կողքով թեք ընկած  
մի պահարան, մէջը հին արծաթեղէն, շիշեր և ինական ապակե-

<sup>1)</sup> Կլուշակաւանալիներ պահող աղախին։

զէն։ Սառափիէ մողացիկով նախշած գրասեղանի վրայ, որի սաստափը տեղ տեղ թափւել էր, և գեղնած, սոսնձապատ փոսերն էին մնացել, ինչ ասես չկար։ Մի դէզ մանը գրուած թուղթ, ծածկւած մարմարեայ կանաչած մամուլով, ձւածեւ կոթով. մի ինչ որ հնադարեան գիրք, կաշեայ կազմով և կարմիր եղբներով. վայրի ընկոյզի մեծութեամբ մի կիսրոն, բոլորովին չորացած. մի բազկաթռուի կոտրած թեւ, նամակով ծածկած մի բիւմկա, մէջը մի ինչ որ հեղանիւթեւ երեք ճանճ. մի կտոր զմուռ. ով զիտէ որտեղից վերցրած մի փալսի կտոր. երկու թամաքոտած կարծես թոքախտից չօրացած գրիչներ. մի բոլորովին գեղնած ատամիորիչ, որով թերեւս տանտէրը փորում էր ատամները, երբ ֆրանսիացիք դեռ չէին արշաւել Մոսկւայի վրայ։

Պատերի վրայ մօտ մօտ և խառն ի խուռն մի քանի պատկեր էր կախ տւած՝ մի ինչոր կուտի երկար, գեղնած պատկեր, որ ներկայացնում էր ահազին թմբուկներ, եռանկիւնի դլխարկներ գրածդոռացող զինւորներ, խեղդւող ձիեր և որ գրած էր առանց ասպակու բրոնզեայ բարակ զոլերով և անկիւններում բրոնզեայ բոլորակներով կարմիր փալսէ շըջանակի մէջ։ Դրանց կողքին պատի կէսը բռնել էր մի ահազին սեացած իւղաներկ պատկեր, որ ներկայացնում էր ծաղիկներ, պտուղներ, մի կտրած ձմերուկ, մի վարազի ցուռկ և դիմի վայր կախ ընկած մի բադ։ Առաստաղի մէջ տեղից կախած էր մի ջահ, կտաւէ շապկի մէջ, որ փոշուց նմանել էր ապրեշումի բոժոժի, շերամը միջին։ Սենեակի անկիւնում յատակի վրայ դիզւած էին այնպիսի բաներ, որոնք աւելի կոպիտ են և արժանի չեն սեղանների վրայ դրւելու։ Թէ ինչ կար իսկապէս այդ դէզի մէջ՝ դժւար էր որոշել, որովհետև նրա վրայ այնքան առատ փոշի կար, որ ամեն մի դիպչողի ձեռքերը ձեռնոցի նման էին զառնում։ Միւս բաններից աւելի նկատելի կերպով դուրս էր ցցւած փալտէ թիակի մի կոտրած կտոր և մի կօշկի հին տակ։ Եթեք չէր կարելի ասել, թէ այս սենեակի մէջ կենդանի արարած ապրում լինէր, եթէ նրա ներկայութիւնը չը յացանէր սեղանի վրայ ընկած հին, մաշւած դիշերագրակը։

Մինչ նա դիտում էր այդ ամբողջ տարօրինակ կահաւորութիւնը, կողքի դուռը բացւեց և ներս մտաւ միւնոյն կլիւչնիցան, որին հանդիպել էր նա բակում Բայց այսուեղ նա

որ դա աւելի շուտով կլիւչնիկ<sup>1)</sup> էր, քան թէ կլիւչնիցաւ կլիւչնիցան զոնէ մօրուք չի ածելում: իսկ սա, ընդհակառակն, ածելում էր, և, երեսում էր, բաւական ուշ ուշ, որովհետեւ նրա ամբողջ ծնոտը և այսերի վարի մասերը նման էին երկաթէ թելերից շինած քերոցի, որով ախտուում ձիերին են թիմարում: Զիշիկովը իւր դէմքին հարցական արտայալութիւն ապավի, անհամբեր սպասում էր, թէ կլիւչնիկն ինչ է ուզում իրան ասել. կլիւչնիկն էլ իւր կողմից էր սպասում, թէ Զիշիկովն ինչ է ուզում իրան ասել: Վերջապէս վերջինս, այսպիսի տարօրինակ տարակսւսանքի վրայ զարմացած, վճռեց հարցնել:

—Հը՛, աղէն ամննն է, ինչ է:

—Այստեղ է տանտէրը, ասաց ծառան:

—Ո՞ւր է հապա, կրկնեց Զիշիկովը:

—Կնքը ես, ինչ է, այ մարդ, ասաց կլիւչնիկը: —Վա, ախր տանտէրը ես եմ, է:

Այստեղ մեր հերոսը ակամայ յետ յետ գնաց և զննողաբար նայեց նրան: Քիչ չէր պատահել նրան ամեն տեսակ մարդ տեսնել մինչեւ անգամ այնպիսին, որպիսին մեզ ու ընթերցողին գուցէ երբէք չը պէտք է վիճակւի տեսնել, բայց սրա պէսը դեռ նա չէր տեսնել նրա դէմքն առանձին ոչինչ չէր ներկայացնում, նա համարեա այնպէս էր, ինչպէս շատ նիհար ծերունիներինն է լինում: Միայն ծնոտը շատ էր դուրս ցցւած, այնպէս որ ամեն անգամ թքելիս նա պէտք է թաշկինակով ծածկէր, որպէս զի թուքը ծնոտին չընկնէր: Նրա փոքրիկ աչիկները չէին մարել և սլուլում էին թաւուտ ունքերի տակից մկների նման, երբ նրա սուր քթերը մուժ ծակերից դուրս հանած, ականջները տնկած և բեխերը շարժելով մտիկ են տալիս, թէ կատուն կամ չարածնի երեխան մի տեղ չեն թաք կացել արդեօք, և կասկածանքով նոյն իսկ օդն են հոտոտում: Աւելի ևս նշանաւոր էր նրա պաճուճանքը: Ոչ մի միջոցով, ոչ մի ջանքով չէր կարելի զլուխ հանել թէ նրա խալաթն ինչից էր թիււած: Թեերն ու կուրծքը այնքան էին իւղոտել և փայլում, որ զառել էին իւֆտ, որից կօշիկ են կարում: Յետեկից, փոխանակ երկուսի, չորս փէշ էր քաշ գալիս, որոնց միջից բամբակը

<sup>1)</sup> Կլյուշնիք—բանալիներ պահող աղամարդ-ծառան:

քուլայ քուլայ դուրս էր լնինում: Վզին եւ այնպիսի մի բան էր փաթաթած որ խոկի չէր կարելի ջոկել՝ զուլսայ էր, կապիճ էր, թէ փորկապ. միայն փողալատ՝ երբէք. մի խօսքով, եթէ Զիշիովը նրան այդպէս աղճաղարդւած տեսնէր մի տեղ եկեղեցու դրան առաջ, հաւանական է, որ նրան մի աւ դրօշ տար, որովհետեւ, ի պատիւ մեր հերոսի պէտք է ասել, որ նա ոզորմած սիրո ունէր և երբէք չէր կարող դիմանալ, որ խեղճին մի դրօշ չը տար: Բայց նրա գէմը կանգնողը աղքատ չէր. նրա զէմը կանգնողը կալածատէր էր. այդ կալածատէրն ունէր հազարից աւելի հողի. և թող մէկը փորձէր ուրիշի մօտ գտնել այնքան: Հայց, թէ յորէն և թէ ալիւր, և հէնց ուղղակի զիզած, ուժմ մատանները, շտեմարանները, չորյնելու տեղերը լիքը լցւած լինէին այնքան կտաւով, մահուգով, թէ պատրաստած և թէ կիսապատրաստ ոչխարի մորթով, չորացրած ձուկով և ամեն տեսակ բանջարեղէնով ու մնիեղէնով: Հապա որ մարդ մանէր նրա բանւորների բակը, որտեղ շինած ու սկաշար դրած էր ամեն տեսակ փայտեղէն ու խոկի չը բանեցրած ամանեղէն, նրան այնպէս կերևար, թէ չէ ընկել արդեօք Մոսկացի առազգագործների քարւ անսարան, ուր ամենայն օր ժիր զոքանիները և սկեսուրները խոհարարու հինուրին յեանները ձգած՝ ուղերւում են իրանց անտեսական պատրաստու թիւնները տեսնելու, և որտեղ ամեն տեսակ փայտեր՝ կարած, տաշած, սանգած, հիւսւած, սարի պէս իրար վրայ զիզւած սպիտակին են տալիս, էլ տակառ, էլ գալ էլ կարաման, էլ տիփար, էլ ջրի կուժ, էլ սանդիրք, էլ աթոռ, էլ խոսցի, էլ հայի տաշտ, էլ լացքի տաշտ, որտեղ կանացք ինչ ասես գնում են. բարակ, ծռած կորափիից<sup>1)</sup> շինած արկղներ, կեշու կեղեւից հիւսւած զամբիւղներ և ուրիշ շատ ու շատ բաններ, որոնք ծառացում են հարուստ և աղքատ ուսու աշխարհի ուշտքերին: Թւում էր, թէ Պլուշկինի ինչին էր հարկաւոր փայտեղէնի այսպիսի<sup>1)</sup> ահազին քանակու թիւնը: Ամբողջ կեանքում, մինչև անգամ այդ կալածի պէս երկուսն էլ ունենար, չէր կարող այդքան բանը գործածել. բայց նրան այդ էլ քիչ էր երեւում: Սրանով չը բաւականանալով, նա գեռ ամենայն օր ման էր գալիս իւր զիւղի փողցներում, աչք էր ածում կամուրջների և առուների վրայ ձգած

<sup>1)</sup> Օսպա.

գերանների տակ և ինչ որ աչքին ընկնում էր, — կօշկի հին տակ, կնոջ փալաս, երկաթէ մեխ, կաւէ ամանի կտոր, — բոլորը կրում էր տուն և զարսում այն գէզի վրաց, որ Զիշիկովը նկատել էր սենեակի անկիւնում: «Տեսէք, էլի ձինորսը դուրս եկաւ որսի», ասում էին գիւղացիք, երբ տեսնում էին նրան որսի գնալիս: Եւ արգարե, նրանից յետոց աց ևս հարկաւոր չէր փողոցն աւելել: Պատահեց, որ ձիով անցնող սպան խթանը կորցրեց. այդ խթանը մի ակնթարժում ուղևորւեց զէպի ծանօթ գէզը: Եթէ մի կինարմատ սրատահմամբ ջրհորի մօտ զոյլը մնանում էր, նա թըսցնում էր և զոյլը: Ասենք եթէ գիւղացին նկատում էր և հէնց տեղն ու տեղը երեսովը տալիս՝ նա չէր վիճում և գողացած բանը վերաբարձնում էր. բայց եթէ այդ բանը մի անգամ ընկնում էր գէզի մէջ, ամեն ինչ պրծած էր: Նա երդում էր ուտում, թէ այդ բանն իրանն է, զնել է այս ինչ ժամանակ այս ինչ մարդուց, կամ պատենական է: Խւր սենեակում նա վերցնում էր յատակից ինչ որ տեսնում էր՝ զմուռ, թղթի կտոր, փետուր, և այդ ամենը զնում էր դրասեղանի վրաց կամ պատուհանում:

Բայց կար ժամանակ, երբ նա միան խնայող տանտէր էր, տմունացած և ընտանիքի հայր. հարեւանն էլ զալիս էր նրա մօտ ճաշելու, լսելու և նրանից անստեսութիւն և խմացողութիւն սովորելու: Ամեն ինչ արագ էր զնում, ամեն ինչ կատարւում էր չափւած ընթացքով: Բանում էին ջրաղացներն ու թաղիքի զործարանները, բանում էին և մահուդի զործարանները, հիւսնի դազգեահը<sup>1)</sup>, մանարանները. ամեն տեղ, ամեն բանի մէջ թափանցում էր տանտիրոջ սրատես հայեացքը, և նա աշխատասէր սարդի նման հոգատար ու ժիրաժիր վազվզում էր խւր տնտեսական ոստայնի բոլոր ծայրերը: Չափազանց բուռն զգացումներ չէին արտացայտում նրա գէմքի գծերի վրաց, բայց աչքերի մէջ խելք էր երեւում: Նրա խօսքերը ցոյց էին տալիս, որ փորձառու և աշխարհից հասկացող մարդ է, և հիւրի քէֆն էր զալիս նրան լսելիս: Սիրաշահ և քաղցրախօս տանտիկինը հուչակւած էր իբրև աղ ու հացով կին. գէմ էին գալիս երկու սիրունառես աղջիկներ, երկուսն էլ վարդի նման թարմ ու շէկ. դուրս էր վազում որդին, մի կաց-

<sup>1)</sup> Стапօք.

տառ երեխայ և բոլորի հետ համբուրւում էր. նրա այնքան պէտքը չէր թէ հիւրը դրա համար ուրախ կը լինի թէ ոչ Տան մէջ բոլոր լուսամուսները բաց էին. վերնատանն ապրում էր ֆրանսիացի ուսուցիչը, որ փառաւոր ածելում էր և նշանաւոր հրացանաձիգ էր. նա միշտ փայտամորիկ կամ բարդ էր բերում ճաշի համար, երբեմն էլ միայն ճնճղկան ձու, և պատիրում էր, որ իրան համար ձւածեղ պատրաստեն, որովհետև ամբողջ տանը այլ ևս ուրիշ ուսուղ չը կար Վերնատանը կենում էր և նրա հայրենակիցը՝ երկու աղջիկների զատարակուհին: Խնքը տանտէրը ճաշի էր նստում թէւ մի քիչ մաշւած, բայց կոկիկ սերթուկով, արմունկները կարգին էին. ոչ մի տեղ մի կարկատան չը կար: Բայց բարի տանտիկինը մեռաւ. բանալիքների և նրանց հետ միասին մանր մունք հոգսերի մի մասն անցաւ տանտիրոջը: Պիհւշկինն աւելի անհանդիստ զարձաւ և, ինչպէս բոլոր այրիները, աւելի կատածու և աւելի ժլատ: Մեծ զստերը, Ալէքսանդրա Ստեպանովնային նա չէր կարող ամեն բան հաւատալ, և իրաւունք էլ ունէր, որովհետև Ալէքսանդրա Ստեպանովնան շուտով փախաւ Աստած գիտէ որ հնեցելազօր գնդի շտաբս-ռոտմիստրի հետ և վրակլսու պասկւեց մի տեղ՝ փայտեայ եկեղեցու մէջ, իմանալով որ հայրը չի սիրում սպաներին այն տարօրինակ նախապաշարումով, իբր թէ բոլոր զինւորականները թղթամոլ և շռայլ մարդիկ են: Հայրը նրան ուզարկեց նրա յետելից իւր անէծքը, բայց հոգ չը տարաւ յետեն ընկնելու: Տոնն աւելի ևս դատարկւեց: Տանտիրոջ մէջ աւելի նկատելի կերպով սկսեց արտայացուել ժլատութիւնը: Կոշտ մազերի մէջ տեղ-տեղ սպիտակին տւող ալիքը, ժլատութեան հաւատարիմ ընկերը աւելի նպաստեց նրա զարգանալուն: Ֆրանսիացի ուսուցիչն արձակւեց, որովհետև որդու ծառայութեան մտնելու ժամանակն հասել էր. մաղամ ն արտաքսւեց, որովհետև յայտնեց նրա ոչ անմեղութիւնը Ալէքսանդրա Ստեպանովնայի փախատի մէջ: Որդին ուղարկւած լինելով նահանդական քաղաք, որպէս զի պալատում, հօր կարծիքով, հիմնաւոր պաշտօնավարութիւն սովորի. դրա փոխարէն մնաւ գնդի մէջ և արդէն մոնելուց յետոյ հօրը գրեց և փող խնդրեց համազգեատի համար: Նատ բնական է, որ նա ստացաւ այն, ինչ որ հասարակ ժողովրդի մէջ աւում է «ոսները»: Վերջապէս վերջին դռւսարը, որ նրա հետ մնացել էր տանը, մեռաւ. ծերու-

նին մնաց մենակ իբրև զարաւուլ, իբրև սկահաղան և իբրև տէր իւր հարասութիւնների: Մենաւոր կեանքը առաս սնունդ էր մասակարարում ժլատութեանը, որ, ինչպէս ցայտնի է, սոված գայլի է նման, և որքան շաս է լափում՝ այնքան աւելի անկուշո է դառնում: Մարդկացին զգացումները, որ առանց նրան էլ նրա մէջ այնքան խոր չէին, բուգէ առ բուգէ նոսրանում էին, և օր չէր անցնում, որ մի բան չը կորչեր այդ մաշւած աւերակի մէջ: Հակառակի պէս հէնց այդ ժամանակ, կարծես դիտմամբ հօր կարծիքը զինւրականների մասին հաստատելու համար, որդին թղթախաղի մէջ տարւեց. նա ուզարկեց նրան սրտի խորքից իւր հայրական անէծքը և այլ ևս երբէք չը հետաքրքրուեց իմանալու, թէ արգեօք նա գոյութիւն ունի աշխարհում, թէ ոչ Տարւէ տարի նրա տան պատուհանները փակւում էին, վերջապէս մնաց միայն երկուսը, որոնցից մէկը, ինչպէս արդէն ընթերցողը տեսաւ, թղթած էր: Տարւէ տարի աշքից կորչում էին իւր տնաեւութեան աւելի զլսաւոր մասերը, և նրա կարճատես հայեացքը պտոյս էր գալիս թղթի կտորտանքի և փետուրների շուրջը, որ նա հաւաքում էր իւր սենեակում: Այլ ևս չէր զիջանում գնորդներին, որոնք դալիս էին նրանից տնաեւական արդիւնաբերութիւններ գնելու, նրանք սակարկում էին, սակարկում, և վերջապէս նրան բոլորզին թողին, ասելով, թէ նա սատանաց է, մարդ չէ: Հայն ու խոռը փառում էին, դէզերն ու շեղջերն իսկ և իսկ ազը էին դառնում, թէկուզ նրանց վրայ կազմաբ տնկիր. ալիւրն ամբարներում քարացել էր, պէտք էր կատրուել. մահուգեղէնին, կտաւեղէնին և ուրիշ տնային նիւթերին մարդ վախենում էր ձեռք տալ, նոքա փոշիանում էին: Նա ինքն էլ արդէն մոռանում էր, թէ ինչից ինչքան ունէր. ցիշում էր միայն, թէ սպահարանում ինչ աեղ է գրած շիշը, մէջը մի ինչ որ համեմուն խմիչքի մնացորդ, որի վրայ ինքը նշան էր արել, որ չը լինի թէ մէկը զողուուց խմէ. ցիշում էր նաև, թէ որտեղ է գրած փետուրը կամ զմուռի կտորը: Այն ինչ կալւածում եկամուտը հաւաքում էր առաջւայ պէս. նոյնքան հարկ պէտք է վճարեր զիւդացին, նոյն շափով ընկոյզ պարտական էր բերել ամեն մի կի: նոյնքան թոփ կտաւ պէտք է զործէր կտաւադործը: Այս բոլորը լցւում էր ամբարներում, բոլորը փառում ու կերւածք էր կառնում, նա ինքն էլ վերջա-

պէս դարձաւ մի տեսակ կարկասանի տեղ մարդկութեան վրայ: Ալէքսանդրա Ստեղանովնան ինչ որ մի երկու անգամ եկաւ փոքրիկ որդեակի հետ, աշխատեց որ կարողանաց մի բան տուանալ: Երեսում էր, որ աստանդական կեանքը շտաբս-բռումիստրի հետ այնպէս զրաւիչ չէր, ինչպէս երեսում էր հարսանիքից առաջ: Պլիւշինը այնու ամենայնիւ նրան ներեց և մինչեւ անգամ փոքրիկ թուանը մի ինչ որ կոճակ տւեց հետը խաղալու, որ ընկած էր սեղանի վրայ, բայց փող ոչինչ ըլ տւեց: Մի ուրիշ անգամ Ալեքսանդրա Ստեղանովնան եկաւ երկու երեխանների հետ և հօրը բերեց քաղցր պակսիմաս թէյի համար և մի նոր խալաթ, որովհետև հօր հագին այնպիսի մի խալաթ կար, որ մարդ վրան նայելիս ոչ միայն խղճում էր, այլ մինչեւ իսկ ամաչում էր: Պլիւշինը երկու թուաներին էլ փայփայեց, և նատեցնելով մէկին աջ, միւսին ձախ ծնկան վրայ, խաղացրեց ճիշդ այնպէս, կարծես ձի նատած լինէին. պակսիմասն ու խալաթն ընդունեց, բայց աղջկան ոչինչ չը տւեց: Ալեքսանդրա Ստեղանովնան հէնց այնպէս էլ զնաց:

Ահա թէ ինչպիսի կալւածառէր էր կանդնած Զիշիովի առջելը: Պէտք է ասել, որ այսպիսի երեսով շատ հազւագիւտ է ուուսական աշխարհում, որուեղ ամեն ինչ աւելի շուտով սիրում է փուել, քան թէ կուչ դալ, և այս երեսով աւելի էլ աչքի է լնինում, որ հէնց այգտեղ կը գտնւի հարեւանութեան մէջ մի կալւածառէր որ քէֆ է անում, ինչպէս միայն ռուս պոմեշչիկը զիսէ բաց սրտով թուանդ քէֆ անել և, ինչպէս ասում են, կեանքի հախիցն է դալիս: Առաջին անգամ անցնողը ապշած կանդ է առնում նրա բնակարանը տեսնելիս և չի իմանում թէ այդ ինչ իրաւառէր իշխան է յանկարծ լոյս ընկել մանր անյայտ կալւածատէրերի մէջ: Նրա սպիտակ, քարաշէն տները անթիւ ծխնելոյզներով, բելւեղերներով, շրջապատուած մի խումբ վիխելներով, հողմացոցներով և եկաւոր հիւրերի համար ամեն տեսակ օժեւաններով, կարծես պալատաններ լինեն: Խնչ ասես չունի նա, թառոններ, խրնճոցքներ, ամբողջ գիշերը լուսավառում է ճրադներով ու լապտեներով վարդարուած սպարտէզը, որուեղ զզրդում է երաժշտութիւնը: Խահանդի կէսը զուգւած և ուրախ զբանում է ծառերի տակ և այս բւնազբուիկ լուսաւորութեան մէջ ոչ ոքի վայրենի և ահաւոր

չի թւում, երբ տերեւախիտ ծառերի միջից հանդիսաւոր կերպով զուրս է ցցւում կեղծ լուսով լուսաւորւած ճիւղը, զբկւած իւր վառ կանաչ գոյնից, իսկ վերեւում աւելի մութ և աւելի մուայլ և քսան անդամ աւելի ահաւոր է երւում այդ լոյսի միջով գիշերացին երկինքը, և հեռու, բարձրումը, ծառերի մասց գաղաթները աւելի խոր մղւած անթափանցելի խաւարի մէջ, տերեւները շարժելով, սրբողում են ներքելից իրանց բները լուսաւորող այս կեղծ ոսկու փայլի վրայ:

Մի քանի րոպէ արդէն կանդնած էր Պլիւշկինը առանց մի բառ ասելու, իսկ Զիչիկովը, թէ տանտիրօջ տեսքից և թէ սենեակում եղած բոլոր բաներից գրաււած, չը կարողացաւ խօսք բաց անել:

Երկար նա չը կարողացաւ գոնել, թէ ինչ խօսքերով բացարէ իւր այցելութեան պատճառը: Հէնց այն է ուզում էր այս միտքն յայտնել, թէ լսելով նրա առաքինութեան և նրա հոգու հազւագիւտ յատկութիւնների մասին, պարտք է համարել անձամք մատուցանել իւր յարգանքների հաւասարիքը, բայց, կանգ առաւ, և զդաց, որ այդ չափանց է: Նորից մի կողմնակի ակնարկ ձգեց սենեակում եղած բոլոր իրերի վրայ և զգաց, որ առաքինութիւն և հոգեկան հազւագիւտ յատկութիւններ խօսքերը շատ յաջող կերպով կարելի է փոխարինել անտեսութիւն և կարգ ու կանոն խօսքերով, ուստի ճառն այսպէս ձեւափոխելով ասաց, թէ լսելով նրա անտեսութեան և կալւածների հազւագիւտ կառավարութեան մասին, պարտականութիւն է համարել նրա հեա: Ճանօթանալ և անձամք մատուցանել իւր յարգանքների հաւասարիքը: Ի հարկէ, կարելի էր ուրիշ, աւելի լաւ պատրւակ բերել, բայց այդ ժամանակ մոքին ուրիշ ոչինչ չեկաւ:

Այս խօսքի վրայ Պլիւշկինը շրթունքներով մի բան մրմռաց, որովհետև առամ չունէր.—թէ ինչ՝ խսկալէս յայտնի չէ, բայց հաւանօրէն միաքն այս էր՝ «գրմղը տանի քեզ էլ, քո յարգանքն էլ»:

Բայց քանի որ մեր մէջ հիւրասիրութիւնն այնքան ընդունւած է, որ կծծին չի կարող նրա օրէնքներից դուրս գալ, ուստի նա խսկոյն աւելացրեց քիչ աւելի որոշ. — խոնարհաբար խնդրում եմ նստէք: Ես վաղուց է հիւրեր չեմ տեսնում, ասաց նա, — և, խոստովանակ լինի, նրանց մէջ օգուտ քիչ եմ տեսնում: Ամենաանվայել սովորու-

թիւն են զցել. իրար մօտ հիւր են զնում; իսկ անաեսութիւնը երեսի վրայ թողնում... արի ու նրանց ձիերին էլ խոս տուր: Ես վաղուց արդէն ճաշել եմ, իսկ իմ խոհանոցը շատ ցած է, անպիտան, ծըն-նելոցն էլ բոլորովին քանուել է վառեա վայ թէ հրդեհ ընկնի:

«Այ քեզ օյին», մոածեց ինքն իրան Զիշիկովը. — «Լու որ Սա-բակեիչի մօտ մի հաս թանըլիթ<sup>1)</sup> ու մի կտոր ոչխարի կող կերայ»:

—Թարսի ողէս ամբողջ կալւածում մի գաստա խոտ էլ չի ճար-ւում, շարունակեց Պլիւշկինը: Եւ Շշմարիս, Բնչպէս յետ զցես. մի փոքրիկ կտոր հող է, զիւղացին՝ ծոյլ, աշխատել չի սիրում, հենց մոածում է, թէ ոնց անէ, որ զինետուն ընկնի... Մէկ էլ տեսար ծերութեանս օրերում սկսեցի ողորմութիւն անել:

—Բայց ես լսել եմ, համեստ կերապով նկատեց Զիշիկովը, որ դուք հազար հոգուց աւելի ունիք:

—Այդ ով ասաց: Մի լաւ թքէիք ասողի երեսին: Նա հանաքչի մարդ է եղել, երեխ ուզեցել է ձեղ կատակ անել: Բան են ասում — հազար հոգի. հապա մի զնա համարիր, ոչինչ էլ չես զսնիլ: Այս վերջին երեք տարում անիծւած տենդից դիտես ինչքան դիւղացի մեռաւ:

—Ի՞նչ էք ասում, շնոր մեռան, բացականչեց Զիշիկովը ցա-ւակցաբար:

—Այ՞ո, շնոր շատ:

—Խնդրեմ ասէք՝ քանի հոգի կը լինէին:

—Ուժտուն հոգի:

—Զէ:

—Խոմ չեմ խարում, եղբայր:

—Խնդրեմ ասէք. կարծեմ այդքան հոգի դուք հաշւում էք վերջին թւահամարից սկսած:

—Այզպէս որ լինէր՝ էլի փառք էր, ասաց Պլիւշկինը. — այն ժամանակամից եթէ հաշւենք՝ հարիւր քսան էլ կը լինի:

—Դրստու, ամբողջ հարիւր քսան, բացականչեց Զիշիկովը և մինչեւ անգամ զարմանքից բերանը փոքր ինչ բայ արեց:

—Այս ծերութեան հասակիս խոմ սուտ խօսելու չեմ. եօժան...

<sup>1)</sup> Յօդրակա.

առն տարիս մօտենում է, ասաց Պլիւշկինը: Նա, երևում էր, վիրաւորւեց այսպիսի համարեա ուրախ բացականչութիւնից: Զիշիկովը նկատեց, որ արդարեւ անվայել է այդպիսի անկարեկցութիւն դէպի ուրիշն ցաւը, ուստի հենց խկոյն հառաջեց և ասաց, թէ ի սրտէ ցաւակցում է:

— Դէ ախր ցաւակցութիւնից դրականիս ի՞նչ օգուտ, ասաց Պլիւշկինը: Այ, այսուեղ իմ կողքին կենում է մի կապիտան. սատանան դիտէ մրանեղից լուս ընկաւ. ասում է ազգականս է, քեռի ջան, քեռի», ձեռս էլ է պաշում. բայց որ սկսում է ցաւակցել, աջնպիսի մի վայնասուն է հանում, թէկուզ ականջներդ վակիր: Երեսը կաս կարմիր, երեսի սարսափելի շատ է խմում: Երեսում է սպազ ժամանակը փողերը վատնել է, կամ թատրոնի զերասանուհին է կորդել, հիմա էլ դալիս ցաւակցում է:

Զիշիկովն աշխատեց բացառը, որ իւր ցաւակցութիւնը բոլորին նման չէ կապիտանի ցաւակցութեանը, որ ինքը ոչ միայն լոկ խօսքով, այլ և գործով պատրաստ է ասպացուցանելու, և հենց խկոյն, առանց դէս ու դէն ընկնելու, պատրաստականութիւն յայսնեց իւր վրայ առնելու այլպիսի գերազդ պատահարներով մեռած բոլոր գիւղացիների փոխարէն հարկ տալու պարտականութիւնը: Այս առաջարկութիւնը, երեսում էր, բոլորովին ապշեցրեց Պլիւշկինին. նա աչքերը չուած երկար նացում էր նրան և վերջապէս հարցրեց.— Դուք, բարեկամ, զինւորական ծառայութեան մէջ խոր չէք ծառայել:

— Ո՛չ, պատսսխանեց Զիշիկովը, բաւական նենգամիտ կերպով.

— Վարել եմ քաղաքացիական պաշտօն:

— Քաղաքացիական, կրկնեց Պլիւշկինը և սկսեց շրթունքները ծամքել, կարծես թէ մի բան էր ուտում. բայց ի՞նչպէս, չէ՞ որ դա ձեզ վնաս է:

— Զեր բաւականութեան համար պատրաստ եմ վնաս էլ կրելու:

— Ախ, բարեկամ, ախ իմ բարերար, բացականչեց Պլիւշկինը, ուրախութիւնից չը նկատելով, որ շատ անձունի կերպով քթից կամ էր ընկել բռնօթին թանձր սուրճի նման, և խալաթի փեշերը յետ դնալով երեւան էին հանում շորերը, ոչ բոլորովին վայել նացելու համար.— Այ, միիթարեցիք ծերուկիս. ախ, Ասումած իմ, ախ, Ասումած իմ... Պլիւշկինն այլ ևս չը կարողացաւ խօսել: Բայց մի

վայրկեան շանցած, այս ուրախութիւնը, ինչպէս մի անթարթում արտայացուել էր նրա փայտեայ երեսի վրայ, այնպէս էլ մի ակնթարթում անցաւ, կարծես իսկի չէր էլ եղել, և նրա դէմքը դարձաւ ընդունեց բաղհանոգ արտայացութիւն: Նա մինչեւ անդամ թաշկինակով քիթը սրբեց, թաշկինակը փաթաթեց մի կծիկ արեց և սկսեց տանել բերել վերին շրթունքի վրայ:

— Կ՞անք ուրեմն, թոյլ ուեւք հարցնել. լինդրեմ չը բարկանաք. զուք յանձն էք առնում ամեն տարի նրանց փոխանակ հարկ վճարել. իսկ փողերն ինձ կը յանձնէք թէ դանձարանին:

— Այ, մենք ինչպէս կ'անենք. նրանց համար վաճառագիր կը կազմենք, իբր թէ նրանք կենդանի են և իբր թէ դուք նրանց ծախում էք ինձ:

— Հա, վաճառագիր... ասաց Պլիւշկինը, մոքի մէջ լինկաւ և սկսեց շրթունքները ծամ ծմել. ախր վաճառագիր, վաճառագիրն էլի ծախս կուղի: Ծաւայողներն էլ այնպէս անխիղճ են որ: Առաջւայ ժամանակը լինէր, յիսուն կոպէկ սե փող կը տայիր, մի տոպրակ էլ ալիւր կուղարկիր, բանըդ գլուխ կը գար. իսկ հիմա մի ամբողջ բեռ կոր կոտ-ձաւար ուղարկիր, զեռ մի կարմիր թուղթ էլ հետը. այսպէս էլ արծաթսիրութիւն: Ես չեմ ի յանում, թէ ինչպէս ուրիշ ոչ ոք սրա վրայ ուշադրութիւն չի դարձնում: Գոնէ նրանց մի փրկարար խօսք կասէին: Զէ որ փրկարար խօսքն էլ մեծ բան է: Ով ինչ ուղում է, թող ասէ, փրկարար խօսքին ոչ ոք չի կարող դէմ կենալ:

«Ասենք դու դէմ կը կենաս», ինքն իրան մոտածեց Զիշիկովը, և խակոյն ասաց, որ նրան յարգելուց ինքը պատրաստ է մինչեւ անդամ վաճառագրի ծախսերն էլ իւր վրայ է առնում: Պլիւշկինը եզրակացրեց, թէ հիւրը կառութեալ յիմար պէսք է լինի և միայն ձևացնում է թէ քաղաքացիական որաշտօն է վարել. բայց հաւանական է, որ սպայ է եղել և քաշ է եկել զերասանուհիների յետևեց: Սակայն և այնպէս նա չը կարողացաւ ուրախութիւնը թաքցնել և ամեն տեսակ միսիթարութիւն մաղթեց ոչ միայն նրան, այլ մինչեւ իսկ նրա զաւակներին, առանց հարցնելու զաւակ ունի թէ ոչ: Յետոյ մօտեցաւ պատուհանին, մատներով ապակին թիւթիւկացրեց և ձայն աւելց. մէջ, Պրոշկա»: Մէ

Լսելով, որ մինչեւ անդամ վաճառագրի ծախսերն էլ իւր վրայ է առնում, Պլիւշկինը եզրակացրեց, թէ հիւրը կառութեալ յիմար պէսք է լինի և միայն ձևացնում է թէ քաղաքացիական որաշտօն է վարել. բայց հաւանական է, որ սպայ է եղել և քաշ է եկել զերասանուհիների յետևեց: Սակայն և այնպէս նա չը կարողացաւ ուրախութիւնը թաքցնել և ամեն տեսակ միսիթարութիւն մաղթեց ոչ միայն նրան, այլ մինչեւ իսկ նրա զաւակներին, առանց հարցնելու զաւակ ունի թէ ոչ: Յետոյ մօտեցաւ պատուհանին, մատներով ապակին թիւթիւկացրեց և ձայն աւելց. մէջ, Պրոշկա»:

բոպէից յետոյ լսեց, որ մէկը շտագ շտագ ներս վազեց նախասենեակը. երկար այնաեղ քսքսում, կօշիկներով թխկթխացնում էր. վերջապէս դուռը բացւեց և ներս մտաւ Պրոշկան, մի տասներեք տարեկան տղայ, հագին այնպիսի մեծ կօշիկներ, որ քայլելիս քիչ էր մնում ոտքերը միջից դուրս գային: Թէ ինչո՞ւ Պրոշկան այդպիսի մեծ կօշիկներ էր հագել, կարելի է հէնց խկոյն իմանալ: Պլիւշկինի բոլոր ծառաների համար, ինչքան որ տանը կացին, մի զոյգ կօշիկ կար միայն, որ միշտ պէտք է մնար նախասենեակում: Ով որ կանչում էր աղայի սենեակը, սովորաբար ամբողջ բակը բուզիկ էր չափում, բայց մոնելով նախասենեակ, կօշիկներն հագնում էր և այնպէս վացելուց կերպով մոնում սենեակի: Սենեակից դուրս գալիս կօշիկները դարձեալ թողնում էր նախասենեակում և դարձեալ գնում ոտարոպիկ: Եթէ մէկը աշնան ժամանակ պատուհանից նայէր, մանաւանդ երբ առաւօտներն սկսում է քիչ քիչ եղեամն գնել, կը տեսնէր, որ բոլոր ծառաները այնպէս են վեր ցատկուում, որ թատրոններում ամենալաւ պարողն իսկ դժւար թէ կարողանաց նրանց պէս թռիչքներ անել:

—Հապան մի սրա սիմաթին մտիկ տւէք, ասաց Պլիւշկինը Զիշիկովին, մատով Պրոշկայի երեսը ցոյց տալով.— վայտի պէս խոմ յիմար է. բայց փորձի համար մի բան դրէք, մի ակնխտարթում կը թուցնէ:— Ասա ինչո՞ւ եկար, յիմար, ինչո՞ւ:— Այսուեղ նա մի փոքր լսեց, որին Պրոշկան պատասխանեց նոյնպէս լուսթեամբ:— Սամովարը ցցիր, լսում ես: Այս բանալին էլ առ տուր Մաւրային, թող գնայ մսուանը, այնտեղ դարսկում քաղցր պաքսիմաս կայ, Ալէքսանդրա Ստեսանովեայի բերածը. — թող թէյի հետ բերեն... Սպասիր, մէր ես գնում, աւանակ, ալս դու աւանակ... Ոտքերիդ մէջ սատանաց է մաել ինչ է... Դեռ մի լսիր: Կարելի է պաքսիմասը երեսից փշացած լինի. թող գանակով քերէ. փշանքը դէն չածէ, այլ տանի հաւանոցը: Տես այ, դու մասունը չը մտնես, եթէ ոչ գիտես քեզ ինչ կանեմ. ցախաւելով կը ծեծեմ, որ համով լինի. հիմա խոմ ախորժակը լսու է՝ որ աւելի լսու լինի: Հապան մէկ փորձիր մասան մտիր. իսկ ես այդ ժամանակ պատուհանից կը նայեմ: — Դրանց ոչինչ չի կարելի հաւատալ, շարունակեց նա, զաւնալով Զիշիկովին, երբ արդէն Պրոշկան քաշւեց զնաց իւր

կօշիկներով միասին։ Սրանից յետոյ նաև սկսեց Զիչիկովի վրայ էլ կասկածանքով նայել։ Այսպիսի արտասավոր մեծահոգութիւնը սկսեց նրան անհաւատալի թւալ, և նա ինքն իրան մտածեց. «բայց սատանան զիտէ, կարելի է հէնց մի պարծենկոտ մարդ է, ինչտէս այդ բոլոր զեղիս ու շռայլ մարդիկ. առեր կը փչի որպէս զի խօսի, թէյ խմի, յետոյ կը վերկենայ ու կերթայ»։ Ուստի, նախազդուշութեան համար, բայց դրանից կամենալով նրան մի քիչ փորձել, ասաց, որ վաստ չէր լինիլ վաճառադիրը շռւտով կազմէի, որովհետեւ մարդու վրայ յոյս դնել չի կարելի, այսօր կայ, էգուց Աստուած զիտէ։

Զիչիկովը պատրաստականութիւն յայտնեց հէնց այդ բոպէին կազմելու և պահանջեց միայն բոլոր զիւզայցիների ցուցակը։

Այս բանը հանգստացրեց Պլուշկինին Երեւամ էր, որ նա մտածում էր մի բան անել, և արդարեւ վեր առաւ բանալիները, մօտեցաւ պահարանին և, մի փեղկը բանալով, երկար խառնխանց բաժակներն ու ամանները և, վերջապէս, ասաց. — Տես է, չես էլ դաշնում։ Հիանալի լիքէօր ունէի, եթէ միայն չեն խմել. բոլորը դոզեր են։ Ահա, այս չէ արդեօք։ — Զիչիկովը տեսաւ նրա ձեռքին մի փոքր շիշ, ամբողջապէս փոշու մէջ կորած, ինչպէս Փուժայկայի մէջ։ — Դեռ ոզորմածհողի կինս է պատրաստել, շարունակեց Պլուշկինը։ — Անպիտան կլիւնիցան քիչ է մնացել նրան դէն զցի, մինչև անգամ բերանն էլ չի խցել. անզդամն ձանձ, մանձ, ինչ կեզառառութիւն ասես լցւել էր մէջը. բայց ես աղբը դէն ածեցի, և հիմա, տես, ինչպէս մաքուր է։ Զեղ համար մի բիւմկա ածեմ։

Բայց Զիչիկովն աշխատեց հրաժարել այդպիսի լիքէօրից, տեղով, որ ինքը արդէն համ կերել է, համ խմել։

— Արդէն կերել էք ու խմել ասաց Պլուշկինը։ Դէ ի հարկէ, լաւ հասարակութեան մարդը որտեղ ասես կը ճանաչւի. նա առանց ուտելու էլ կուշտ է։ Ուրիշ բան են այս անպիտան գողերը. նրանց ինչքան ուզում ես կերակրիր. . . Այ, հէնց կապիտաննը. մէկ էլ տեսար, եկաւ. օթեռի ջան, ատում է, մի բան տւեք ուտեմն։ Իսկ ես նրան նոյնքան քեռի եմ, որքան նա ինձ պապ։ Երեխ տանը ուտելու ոչինչ չտնի, զրա համար էլ ամեն տեղ թրե է զալիս։ — Հա, ձեղ հարկաւոր է այդ բոլոր ձրիսկերների ցուցակը։ Ո՞նց չէ, ես

գիտէի և նրանց, ըոլորի անունները գրեցի առանձին թղթի վրայ, որ առաջիկայ թւահամարի ժամանակ բոլորն էլ ջնջեմ: Պլոշկինը ակնոցներն աչքը դրեց և սկսեց թղթերը քրքրել: Տեսակ տեսակ կապոցներ բայց անելիս նա մեծարեց հիւրին այնպիսի առառ փոշիով, որ առ փոշուաց: Վերջապէս դուրս հանեց մի թղթի կտոր, ամբողջապէս գրուած: Նա ծածկւած էր մժեղների նման մանր, խիս խիս գրած գիւղացիների անուններով. այնուեղ ով ասես կար. էլ Պարամանով, էլ Պիմենով, էլ Պանտելէյմոնով, մինչև անգամ երեսում էր մի ինչ որ Գրիգոր Հասիր — Զհամնեսեան: Բոլորը հարիւր քսանից աւել կը լինէին: Այսպիսի մեծ թիւ տեսնելով Զիշիկովը ժպտաց: Նա թուղթը գրպանը դրեց և յայսնեց Պլոշկինին, թէ վաճառագիր կազմելու համար նրան հարկաւոր կը լինի գնալ քաղաք:

— Քաղաք: Բայց ի՞նչպէս... հասլա տունն ում թողնեմ: իմ մարդիկ զիփ գողեր են, մի օրում այնպէս կը պլոկին, որ մի մեխ էլ չեն թողնիլ կափառն կախելու համար:

— Խակի ծանօթ մարդ չունիք:

— Ախր ինչ ծանօթ: Իմ ծանօթները բոլորն էլ մեռել են, կամ ծանօթութիւնը կտրել... Հա, լաւ միտս ընկաւ. ի՞նչպէս չունիմ, ունիմ, բացականչեց նու: Կնքը նախապահը ծանօթ է. առաջւայ տարիները մինչև անգամ տունս էլ էր գալիս: Ի՞նչպէս ծանօթ չէ. մի ամանից էինք ուտում: միասին էինք ցանկապատերից մաղլցում: Ի՞նչպէս ծանօթ չէ, այն էլ այնպէս ծանօթ... Ասում ես նրան գրեմ:

— Ի հարկէ, հէնց նրան:

— Ի՞նչպէս չէ. այնպէս ծանօթ է որ, ուսումնանում լաւ ընկեր էինք: Եւ այդ վայսեաց երեսի վրայ յանկարծ անցաւ մի ջերմ ճառագլթ, արտայացաւեց ոչ թէ զգացում, այլ զգացման մի աղօս արտափացլումն, մի երեսթ, նման այն տեսարանին, երբ անսպասելի կերպով ջրի երեսն է դուրս գալիս խեղդող մարդը, և ափում խունւած ամբոխի մէջ թնդում. է ուրախութեան աղաղակ: Բայց ուրախացած եղբացներն ու քոյրերը ի գուր ափից պարաններ են գցում և սպասում, թէ չի երեւալ արդեօք կունակը կամ կուելուց դադրած թեւերը: Նա վերջին անգամ երեւաց: Ամեն ինչ լուռ է,

և զրանից յետոց աւելի ահաւոր և աւելի ամաչի է դառնում լրին տարերքի հանգարտւած մակերեսովթը: Այդպէս էլ Պիւշկինի դէմքը, յանկարծակի արտափայլած զգացումից յետոց աւելի անզգայ և աւելի գարշելի գարշաւ:

—Սեղանի փրայ մի քառորդ թերթ մաքուր թուղթ կար դրած, ասաց նա, հիմա չը զիսեմ նոր է կորել: Իմ ծառաներն այս-պիսի անպիտան մարդիկ են: Այսուեղ նա սկսեց որոնել սեղանի տակը, սեղանի փրայ, ամեն տեղ քրքրեց և, վերջապէս, գոռաց. «Մաւրա, այ Մավրա»: Նրա ձախնին ներս եկաւ մի կին, ձեռքին մի աման, որի վրայ դրած էր ընթերցողին արդէն ծանօթ ողաքսիմատը, և նրանց մէջ տեղի ունեցաւ այսպիսի խօսակցութիւն:

—Ի՞նչ ես արել թուղթը, զ՞ո՞ղ աւաղակ:

—Աստւած վկայ, աղան, չեմ տեսել. մի փոքր կտոր կար միայն, նրանով էլ դուք բարեհածեցիք բիւմկան ծածկել:

—Իսկ ես, աչքերիցդ տեսնում եմ, որ թուցրել ես:

—Այս ինչու պէտք է թոցնէի, իմ ինչին է պէտք. ես զիր գրել չեմ իմանում:

—Սուտ ես ասում. տարել ժամկոչի տղին ես տւել. նա խոր խաղմրզում է, զրա համար էլ տարել նրան ես տւել:

—Ժամկոչի տղան եթէ ուզենաց, չի կարող իրան համար թուղթ ճարել: Զեր մի կաորին խոմ չի մնացել:

—Լաւ, լաւ, սպասիր, ահեղ զատաստանին զրա համար սատանաները քեզ երկաթէ շամփուրներով կը դաղեն. այ, կը տեսնես, թէ մնց կը դաղեն:

—Ինչու պէտք է դաղեն, երբ որ թղթին ձեռք չեմ տւել. էն, կինարմատ եմ, կարելի է ուրիշ յանցանք արած լինեմ, բայց ոչոք չի կարող երեսովս տալ, թէ գողութիւն եմ արել:

—Սպասիր, ստանաները կը դաղեն ու կ'ասեն. առեղն է քեզ, լիրը անզգամ. աղիդ որ խաբում էիր, լաւ էր: Հենց տաք տաք շամփուրներով կը դաղեն.

—Իսկ ես կ'ասեմ, «զուր էք զաղում», Աստւած վկայ ձեռք չեմ տւելք... Այ հէնց սեղանի փրայ է ընկած: Ամեն անզգամ զուր տեղը նախատում էք:

Պիւշկինը, ճիշտ որ, տեսաւ քառորդ թերթը և մի բոսկ

կանդ առաւ, շրթու նքները ծամճմեց և ասաց: Հաւ լաւ, էլ ինչ ես ացդքան չարանում: Ինչ բարկացոտն ես: Մի խօսք ասում ես թէ չէ, նա տասն է պատասխանում: Գնա ճրագ բնի, նամակը կնքեմ: գեռ կաց, ճրագու մոմ չը բերես. ճրագուն հալւող բան է. կը վառի, կը պրծնի և միան վնաս կը լինի. աւելի լաւ է կողնելիք<sup>1)</sup> բերես:

Մաւրան գուրս զնաց, իսկ Պլիւշկինը նասեց բազկաթոռի վրայ, գրիչը ձեռքն առաւ, թղթի կտորը երկար շրջարջեց այս ու այն կողմ, մտածում էր, թէ չի կարելի արդեօք կէս անել: Բայց, վերջապէս, համոզւեց որ ոչ մի կերպ :ի կարելի, զրիչը թաթախեց թանաքամանի մէջ, որտեղ մի ինչ որ բորբոսնած հեղանիւթ կար, տակն էլ ահագին քանակութեամբ ճանձեր, և սկսեց գրել. այնպիսի տառեր էր շարում, որ նման էին երաժշտական ծայնանիշների, բուպէ առ բուպէ ձեռքի ընթացքը բոնում էր, որ ոսառատում էր ամբողջ թղթի վրայ, խնայողաբար տողը տողին էր կողնում և ափսոսանքով մտածում էր, որ գեռ շատ տեղ էլ բաց է մնում:

Եւ այս աստիճան ոչնչութեան, մանրակրկոութեան, գարշելիութեան կարողացել է հասնել մարդը, այսպէս կարողացել է փոխել: Եւ մի՞թէ սա նման է ճշմարտութեան. ամե՛ն ինչ նման է ճշմարտութեան. ամե՛ն ինչ կարող է պատահել մարդուն: Այսօրւայ կրակոտ երիտասարդը զարհուրած յետ կը փախչէր, եթէ նրան ցոյց տային իւր իսկ պատկերը ծերութեան հասակում:

Հաւաքեցէք, տարէք ձեզ հետ երիտասարդական վակուուկ հասակն անցնելիս և գաման, խսասսիրտ առնական հասակը թեակոխելիս, հաւաքեցէք, տարէք ձեզ հետ բոլոր մարդկացին զգացուժները, մի' թողնէք ճանապարհի վրայ, յետոյ չէք կարող վերցնել: Սպառնալի և սոսկալի է մեզ սպասող ծերութիւնը և ոչինչ յետ չի տալիս: Գերեզմանը նրանից աւելի գթոս է. գերեզմանի վրայ գրւում է. «Այսօրեղ մարդ է թաղւած», բայց ոչինչ չես կարող կարդալ տմարդի ծերութեան սառն, անզգայ դէմքի վրայ:

—Իսկ ձեր բարեկամներից այնպիսի մէկին չէք ճանաչում, ասաց Պլիւշկինը, նամակը ծալի լով, - որին հարկաւոր լինեն փախըստական հողիներ:

<sup>1)</sup> Այսուհետեւ կոչում էին պատկանած գույքը:

— Ուրեմն փախառականներ էլ ունիք, արագութեամբ հարցրեց Զիշիկովը սթափւելով:

— Իսկո՞ այն է, որ կան. փեսաս տեղեկութիւններ հաւաքեց, ասում է իբր թէ հետքերն էլ կորել են: Բայց ինչքան էլ լինի, նա զինուորական մարդ է. խթանները չխէլսկացնելու վարպետ է, խկ որ գաաարաններում՝ գործ տեսնի...

— Իսկ թւով ինչքան կը լինին:

— Եօթանասունի չափ դուրս կը դայ:

— Զէ:

— Ասուած վկայ ճիշդ եմ ասում տարի չի լինում, որ իմ մարդկանցից փախչող էլ լինի: Սարսափելի որկրամոլ մարդիկ են. անզործութիւնից սովորութիւն են գարձրել ուտելով արաքւել. խկ ես զեռ ինքս ոչինչ չունիմ ուտելու... Նրանց համար ինչ էլ որ տային, կառնէի: Խնդրեմ խորհուրդ տաք ձեր բարեկամին. եթէ նրանցից միայն տասն հոգի էլ գտննի, ելի լաւ շահ կունենաց: Այսր մի հոգին հիմա հինգ հարիւր ուուբլու գին ունի:

«Զէ, բարեկամիս խկի ականչն էլ չեմ զցիլ, ասաց ինքն իրան Զիշիկովը և յետոց բացատրեց, որ այդպիսի բարեկամ երբէք չի դանեւիլ, որ այդ գործի համար միմիայն ծախսերն աւելի շատ կը նստեն, որովհետեւ մարդ հազիւ թէ կարողանաց եախէն դատարաններից ազատել ու հեռու փախչել. խկ եթէ նա արդարեւ այնքան նեղութեան մէջ է, ինքը, կարեկցութիւնից շարժւած, պառրաստ է տալու... բայց այդ այնպիսի մի չնչին բան է, որի մասին չարժէ էլ խօսել:

— Խսկ դուք ինչքան կը տայիք, հարցրեց Պլիշկինը և Շնկը ջնուաացաւ. նրա ձեռքերը սնդիկի նման դողլողացին:

— Ես կը տայի ամեն մի հոգուն քսան և հինգական կոսկէկ:

— Եւ ինչպէս, կանխիկ փողով էք առնում:

— Այն, փողերը հէնց այժմ:

— Բայց, սիրելի բարեկամ, իմ աղքատութեան համար գննէքառասնական կոսկէկ էլ է տւէք:

— Մեծայարդ տէր, ասաց Զիշիկովը, քառասնական կոսկէկից ինչ կը լինի. հինգ հարիւրական ոուբլի էլ կը վճարէի, մեծաւ ուրախութեամբ կը վճարէի, քանի որ ձեզպէս յարգելի, բարի ծերունին

նեղութեան մէջ է իւր սեփական բարեսրութեան պատճառով:

—Աստւած վկայ՝ այդպէս է, Աստւած վկայ՝ ճիշդ է, ասաց Պլիշկինը գլուխը քաշ դցելով և տիսուր կերպով շարժելով. —բոլորը բարեսրութիւնից:

—Այ, տեսնում էք, իսկոյն հասկացայ ձեր բնաւորութիւնը: Ինչնու պէտք է ամեն մի հոգուն հինգ հարիւր ռուբլի չը տայի. բայց... կարողութիւն չունիմ: Համեցէք, պատրաստ եմ հինգ-հինգ կոպէկ աւելացնելու, որ այդպիսով ամեն մի հոգին եւեսուն կոպէկ նառի:

—Լաւ, հոգիս, ձեր կամքն է, զ՞նէ երկ-երկու կոպէկ էլ վրայ եկէք:

—Երկ-երկու կոպէկ էլ վրայ կը գամ, համեցէք: Փանի՞ հոգի են. կարծեմ՝ ասացիք եօթանասուն:

—Ո՛չ, բոլորը միասին եօթանասուն և ութ հոգի կը լինի:

—Եօթանասուն և ութ, եօթանասուն և ութ, ամեն մի հոգին երեսուն կոպէկից՝ այդ քեզ... Այսուղ մեր հերոսը մի բոպէ, ոչ աւելի, մոտածեց և մէկէն ասաց. —Ընդամենը կը լինի քսան և չորս ռուբլի իննասուն և վեց կոպէկ: Նա թւարանութեան մէջ շատ վարժ էր: Հենց իսկոյն նա սոխպեց Պլիշկինին, որ ստացականը դրէ և տւեց նրան փողերը, որը առնելով երկու ձեռքերի մէջ, տարաւ գրամարկը դնելու այնպիսի զգուշութեամբ, որ կարծես թէ որ և է հեղանիւթ էր տանում, և ամեն բոպէ վախենում էր, որ չը լինի թէ չփչացու թափի: Դրամարկղին մօտենալով, նա դարձեալ մի անդամ անտղեց փողերը և դրեց, նոյնպէս չափազանց զգուշութեամբ, դարակներից մէկի մէջ, որտեղ հաւանօրէն նրանց վիճակւած էր թաղւած մնալ այնքան ժամանակ, մինչև որ տէր-Կարպը և տէր-Պոլիկարպը, նրա զիւղի երկու քահանաները, նրան թաղէին, յանպատում ուրախութիւն դատերը և վեսային, գուցէ և կապիտանին, որ իրան արձանագրել էր նրա ազգական: Փողերը թագցնելուց յետոց Պլիշկինը նստեց թիկնաթոռի վրայ և, երեսում էր, այլ ևս նիշթ չէր գտնում խօսելու:

—Ի՞նչ, դուք արդէն պատրաստում էք զնալու, ասաց նա, նկատելով, որ Զիշիկովը մի փոքր շարժում արեց միմիայն նրա համար, որ գրամանից թաշկինակը հանէ:

Այս հարցը Զիշիկովին լիշեցրեց, որ արդարեւ շարժէր այլ ևս

ուշանալ:—Այն, ժամանակ է դնալու, ասաց նա զլխարկը վերցնելով:  
—Իսկ թէցը:  
—Ո՛չ, աւելի լու է թէցը մնայ երբ և իցէ մի ուրիշ ժամանակ:  
... Ի՞նչպէս, հասկա սահավար պատիրեցի: Ես, խոստովանք լինի,  
թէցի հետ այնքան գլուխ չունիմ: թանգ խմիչք է, մէկ էլ որ շա-  
քարի գինը շատ է բարձրացել կրակ է գտնել: Պրծչկա, սամավար  
հարկաւոր չէ: Պաքսիմատը տար Մաւրացին տուր, լսնւմ ես. թող  
էլի տռաջւայ տեղը գնէ: կամ թէ ոչ, ոչ, տեսր ինձ այսուղ, յե-  
տոյ ես ինքս կը տանեմ:—Գնաք բարով, սիրելիս, Աստծու օրհնու-  
թիւնը ձեզ վրայ լինի: Իսկ նահակը կը տաք նախագահին, թող  
կարդայ. նա իմ վաղեմի ծանօթս է: Ի՞նչպէս չէ. նրա հետ մի  
ամսնից էինք ուսում:

Այս խօսքից յետոյ ացդ այլանդակ երեսյթը, ացդ կծկած ծերուկը  
նրան բակի միջով ճանապարհ գրեց և ապա հրամացեց, որ հէնց իս-  
կոյն բարբազզ փակեն. յետոյ ման եկաւ մառանները, որ տեսնի, թէ  
իրանց տեղումն են արդեօք պահապանները, որոնք կանգնում էին  
բոլոր անկիւններում և փայտէ թիսկիները խփում դատարկ տա-  
կառներին, փոխանակ չուգունէ տախտակի: Ապա մտաւ խոհանոցը,  
որանդ այն պատրւակով, որ իբր տեսնի, թէ ծառանները լաւ են  
կերակրում թէ ոչ, ինքը մի կուշա չչի ու կաշա կերաւ և բոլորին  
մէկ-մէկ հայհոյելով գողութեան և վատ վարք ու բարքի համար,  
վերադարձաւ իւր սենեակը: Մենակ մնալով, նա մինչև անդամ  
մասձեց, թէ ի՞նչպէս չնորհակալ լինի հիւրից այսպիսի արդարեւ  
անօրինակ մեծահոգութեան համար: «Ես նրան կլնծայեմ», մտածեց  
նա ինքն իրան, «ծոցի ժամացոյց. լու ժամացոյց է, արձաթէ,  
և ոչ թէ պղնձէ կամ բրոնզէ: Մի քիչ փչացել է, բայց նա իրան  
համար կարկասուել կը տայ. նա գեռ ջահիլ մարդ է, նրան հարկաւոր է  
ծոցի ժամացոյց, որ նրանով իւր հարանացուին գուր գայ»: «Աւմ  
թէ, ոչ, աւելացրեց նա փոքր ինչ միտք անելուց յետոյ. աւելի լաւ  
է մահւանից յետոյ կտակով իրան թողնեմ, որ անունա ցիշէ»:

## Ե Ր Ա Զ

ԼԵՌԵՆՅԻ

Լըուին գիշերով անեզըր դաշտում  
Ես ընկած էի վիրաւոր կրծքով.  
Մահու պաղութիւնն մարմնիս էր տիրում;  
Ճակառս ոռողւած երկնային ցօղով:

Ես ընկած էի՝ միակ շնչաւոր  
Վիրաւոր մարդկանց գիւրի շարքում...  
Վըճիտ էր երկինքն աստղաղարդ, անդորր,  
Դիւթական դէմքով լուսինն էր փայլում:

Եւ յիշում էի այն ահեղ մարտը,  
Երբ փողի ձայնից մարդկան փրկութեան  
Ժողովուրդների լէղէօնները  
Ապստամբել էին ընդդէմ շարութեան:

Անարդար կեանքի հնացած ապարան  
Խիստ դըղդիւնով քանդուում էր, գլորւում,  
Մինչ տանջւած ստրկի ձայնը յաղթական  
Մարդկութեանն մի նոր կեանք էր աւետում:

Ուր էք, ընկերներ... հրաժեշտ ձեզ վերջին...  
Մնացած ոյժերըս իմ ժողովելով,  
Ես ինքըս ըստեր՝ դիերի միջին  
Սկսեցի թափառել գաղանի սառսուռով:

Փայլում էր լուսինն և լուսաւորում  
Բիւր ընկածների պաղած դիսկներ...  
Ահա եղբայրքս, ընկերս եմ տեսնում...  
Բոլորն են եղբայր, բոլորն են ընկեր...

Դողաց մարմինըս, ես ընկայ կրկին...  
Յանկարծ հեռւից իմ հասան ականջին  
Թմբկի ու փողի յաղթական ձայներ,  
Ոգեշունչ երգեր, ուրախ գուխւներ:

Դա՝ մի թափոր էր — տօնը յաղթութեան  
Արիւնով փրկւած մարդկութեան,  
Մեծ տօնը կեանքի մի նոր ու արգար —  
Ամենքը՝ ընկեր, ամենքը՝ եղբայր:

Եւ ահա կարծես իջան երկնքից  
Տաւիզի ձայներ հնչիւն հոսանքով,  
Նոյնպէս ներգաշնակ, նոյնպէս սիրալից,  
Ինչպէս և նոր կեանքն իրա բերկրանքով:

Ներգաշնակ ձայներն օդն էին լցնում,  
Ժաղոտում աստղերը, լուսինն էր փայլում,  
Իսկ՝ ես գիերի մէջ, դաշտում սղաւոր  
Դեռ ընկած էի կրծքով վիրաւոր...

## ԱՌԱՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկելիչի

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

## ՄԱՍՆ ԱՐԱՋԻՆ

(Նորունակութիւն<sup>1)</sup>)

2 ապրիլ.

Երէկ փոթորիկ էր: Հարաւային քամին քշում՝ էր ամպերը՝ ձիերի ջոկի նման: Սկզբում հողմը ճեղքում ու ծւատում էր թուխովը, կիտում էր մի տեղ ու ցիրուցան էր անում երկնակամարի տակ, յետոց առաւ տակը և որքան ուժումը կար՝ խփեց ծովի երեսովը, որ բարկացած մարդու դէմքի նման մի ակնթարթում մթնոլեց ու սկսեց ի պատասխան փրփուր ցայտել գէպի վեր: Կատարեւալ կռիւ երկու կատաղի ոյժերի, որնք փոխադարձաբար հարւածելով միմեանց՝ որոս ու կայծակ են յառաջացնում: Բայց այդ բոլորը կարծ տեսեց: Մենք այնուամենայնիւ չը գնացինք մեր սովորական զքոսանքը կատարելու, — ծովը շատ սասաթիկ էր ալէկոծւում: Դրա փոխարէն մենք նայում էինք փոթորկին առակիապատ պատշգամից և երբեմն՝ երբեմն նայում էինք իրար: Եւ չենք կարող

1)Տես «Մուլք» 1892 թ. № 1, 2, 3, 4:

ինքներս մեզ խարել; Մեր մէջ ինչ որ ծաղում է, ինչ որ սկսում է կատարւել; Մեզնից ոչ մէկը սովորական բարեկամական յարաբերութեան սահմանից դուրս եկող ոչ մի խօսք չի արտասանել, ոչ մէկս ոչինչ չենք խոստովանել իրար և սակայն, երբ որ մենք խօսում ենք միմեանց հետ, զգում ենք, որ մեր խօսքերը միայն քողարկութիւն են մի ուրիշ բանիք; Միևնույնն է լինում, երբ որ գնում ենք ծովը զբօսնելու, երբ որ միասին կարդում ենք, երբ որ նա ածում է և ես լսում եմ; Մեր բոլոր այդ արարմնունքները երևում են իբրև պատրւակ, իբրև կեղծ արտաքին ձևեր, որոնց տակ գարանամուտ եղած թագնւում է բանի խորհրդաւոր էռութիւնը, որ առայժմ լուս ու մունջ է և դէմքը ծածկած, բայց միշտ ներկայ է մեր արածներին և առւերի պէս հետևում է մեզ; Մեզնից ոչ մէկը զեռ չի ուզում նրա անունը տալ, բայց երկրւս էլ շարունակ զգում ենք նրա ներկայութիւնը; Այդ երեսյթը անշուշտ կրկնում է ամեն անգամ, երբ տղամարդը և կինարմատը սկսում են փոխադարձարար ներգործել միմեանց վրայ; Երբ է այդ սկսել մեզ համար, ճիշուը չեմ կարող ասել, սակայն պէտք է խոստովանեմ, որ բոլորովին անակնկալ կերպով չի սկսւել:

Դեխտենց հիւրասիրութիւնը ընդունեցի, որովհետեւ տիկին Դեխտը հօրս բարեկամուհին էր և նրա մահից յետոյ ինձ այնքան կարեկցաբար էր վերաբերւում, որքան ոչ ոք Հռոմում; Սակայն ինքնազիտակցութիւնս այնքան զօրեղ է և ես այն աստիճան կարողանում եմ երկուսի բաժանել, որ այտուղ գալուս պէս, չը նայելով որ սիրոս զեռ մորմոքւում էր վշտից, իսկոյն զգացի որ իմ ու այդ կնոջ յարաբերութիւնների մէջ ինչ որ փոփոխութիւններ են կատարւելու: Զայրանում էի ինքս ինձ վրայ, որ հօրս մահնան զրեթէ հետևեալ օրը մոտքումն կարողանում է տեղ գտնել այլպիսի գիտակցութիւն, բայց այնուամենայնիւ այդ գիտակցութիւնը կար մէջս: Այժմ արդարանում են միայն իմ գուշակութիւններս: Իսկ եթէ ասացի, թէ մեր փոփոխւած յարաբերութեան դէմքը քողարկած է, այդ նրա համար էր միայն, որ չը գիտեմ, թէ երբ կը կատարվի յեղաշրջումը և ինչ ձեռվ, բայց բովանդակութիւնը գուշակում եմ և այդ գուշակութիւնների թովիչ տպաւորութեան տակ եմ գլանւում: Նաև միամիտ պէտք է լինէի, եթէ ենթադրէի, թէ նա այդ-

բանը այնքան լաւ չի զիստակցում որքան եւս Երևի ինձնից աւելի լաւ զօալիս կը լինի: Հաւանականորէն նա է զեկավարում այդ փոփոխութիւնները և ինչ որ լինում է՝ կատարւում է նրա կանքովը և նրա ասաւը դատողութեան համաձայն: Որտորդ Դիանան որոգայթ է լարում որսի համար: Սակայն ինձ ի՞նչ, ի՞նչ եմ կորցնելու որ: Ինչպէս գրեթէ իւրաքանչիւր տղամարդ՝ ես այն տեսակ վտանգաւոր երէներիցն եմ, որոնք ժողով են տալիս իրանց հալածել միայն նրա համար, որ յարմար բռպէին իրանք յարձակւեն որսորդի վրայ: Այդպիսի գէպէրում մենք բռորս էլ բաւականաշափ եւանդ ենք ունենում: Այդ այնպիսի մաքառումներ են, որոնց մէջ յաղթութիւնը իրերի բնութեան համաձայն մենք պէտք է տանենք: Ես շատ լաւ զիտեմ, որ տիկին Դւիսը ինձ չի սիրում, ասկայն ես էլ նրան չեմ սիրում: Մեր փոխադարձ ներգործութիւնը միմեանց վրայ ամենալաւ գէպքում երկու վերին աստիճանի արտիստական ու զգայական հեթանոս բնութիւնների ներգործութիւն է: Նրա մէջ ինքնասիրութիւնն էլ է դեր խաղում, բայց այդ աւելի վատ է նրա համար, որովհետեւ այդպիսի խաղի ժամանակ կարելի է զլուխը կորցնել և առաջ դնալով համնել այնտեղ, ուր որ սէրը կը տանի:

Ես շատ հեռու չեմ գնալ: Իմ զգացմունքներիս մէջ գէպի նա չը կայ ամեննեխն ոչ մոերմութիւն, ոչ քնքշութիւն, կայ միայն հիացումն chef-d'oeuvre-ից և տենչանք, որ բնականաբար զգում է տղամարդը, երբ որ այդ հրաշալի «զլուխ-գործոցը» կենդանի կին է: Հայրս ասում էր, որ մեզ համար՝ հրեշտակին կնիկ դարձնելուց մեծ յաղթութիւն չը կայ, իսկ ես կարծում եմ, որ պակաս յաղթանակ չի լինիլ աղամարդու համար եթէ նա Ֆլորենտինեան Վեներացի տաք կուները փաթաթւած զգայ իւր վզովր:

Այդ կողմից տիկին Դւիսը վերջին խօսքն է այն բանի, որ կարող է փափագել ամենանըբացած ու ամենաբուռն երևակայութիւնը Խակը Ֆլորինա<sup>1)</sup> է: Կարելի է բոլորովին գժւել, երբ որ օրինակ

<sup>1)</sup> Յուն գեղեցկուհի, որ մի քանցանքի համար դատւելիս, փոխանակ պաշտպանողական ճառ ասելու, շորերը հանել էր զատաւորների առաջ: Գեղեցկապաշտ լուները աեսնելով նրա աստածալին գեղեցկութիւնը վճռել էին, որ նա չի կարող մեղաւոր լինել:

Ծանօթ. Թարգմ.

մարդ տեսնում է նրան ամազօնակ հաղած՝ այնպէս քիվի, որ մարմնի բոլոր գծազրութիւնները համարեա այնքան պարզ են երևում, որ քան արձանի գծերը: Նաւակում Դանաւէի բանաստեղծութիւնը կարդալիս նա Սիրիլլացի<sup>1)</sup> է, նմանում և այդ ժամանակ մարդ հասկանում է Ներոնի սրբապիղծ կիրքը: Նա այնքան գեղեցիկ է, որ զրեթէ շարագուշակ է իւր գեղեցկութեամբ: Միայն նրա իրար խառնած սև յօնքերն են նրան ժամանակակից, արդի կին դարձնում, բայց ևս աւելի են կրակում մարգու: Նա սովորութիւն ունի մազերը ուղղելիս երկու ձեռքը ծործորակին դնել. այդ ժամանակ կոները բարձրանում են, ամբողջ իրանը ձկուում է դէպի յետ, կուրծքը առաջ է լնկնում և մարդ պէտք է կամքի մեծ ոյժ գործ դնի իւր վրայ, որ չը բռնի նրան, չը նստեցնի կոներին ու տանի հեռու, շատ հեռու մարդկանց աչքերից:

Մեզնից իւրաքանչիւրի մէջ կայ մի-մի թագնւած Սատիր<sup>2)</sup>: Ես որ հօ, ինչպէս ասացի, մի բացառիկ տպաւորւող մարդ եմ, և երբ որ մասձում եմ, թէ իմ ու իւնոնացի այդ կենդանի արձանի մէջ ինչ որ մի բան սկսում է կատարւել թէ ինչ որ մի ոյժ անողոք կերպով մղում է մեզ դէպի իրար, համարեա աչքերս շազւում են և ինքս ինձ հարցնում եմ՝ դրանից էլ աւելի կատարեալ ինչ կարող է հանդիսակել ինձ կեանքում:

Յ ապրիլի.

Որքան որ կին-մարդը կարող է կարեկցութիւն ու հոգատարութիւն ցոյց տալ ծանր կորուստ կրած բարեկամին՝ նա ինձ ցոյց է տալիս: Եւ տակացն զարմանալի բան է, նրա բարութիւնը ինձ վրաց լուսնեակի լոյսի տպաւորութիւն է դործում, — փայլում է, բայց տաքութիւն չ'ունի. արտայալուում է ամենակատարեալ ձեւերով, բայց հողի չը կայ մէջը. բղիսում է վճռից և ոչ բնութիւնից: Կմ մէջ նորից սկեպոիկն է խօսում, բայց ես երբէք այնպէս չեմ զմայլում, որ այդ զմայլունքից մինչև անգամ դիտելու լնդունակութիւնս էլ

<sup>1)</sup> Հուոմում ազդակս էլն անւանւում մարդարէ համարւող կանաչք:

<sup>2)</sup> Առասպեկական արարածներ՝ կէս-մարդ և կէս-նոխազ: Փոխարւրարար ասում են կնամուլ ցինիկ մարդկանց մասին:

Ծանօթ. Թարգմ.

կորցնեմ: Եթէ այդ աստւածուհին բարի լինէր, առենքի համար բարի կը լինէր: Մինչդեռ, օրինակ, նրա յարաբերութիւնը մարդու հետ պարզ ցոյց է տալիս թէ ինչ սրտի տէր է նա: Ճիշտ է՝ խեղճ Դևիսի արիւնը այնքան սառել է, որ նա մրասում է մինչև անդամ արեւի տակ, երբ որ երկնքից կրոսկ է թափւում, բայց որքան ցուրա է զգում նա իրան՝ կնոջ մօտ: Երբէք կնոջ կողմից կարեկցութեան նշոյլ անկամ: Հեմ տեսել դէպի նրա թշւառ գրութիւնը: Կինը նրան պարզ ի պարզոց չի նկատում և բանի տեղ չի գնում: Այդ միլիոնատէրը իրան շրջապատող շւապու թեան մէջ այնքան աղքատ է, որ մարդու խեղճն է գալիս: Նա կարծես անտարբեր է դարձել դէպի ամեն բան, բայց մարդս, քանի որ դեռ գիտակցութեան նշոյլ կայ մէջը, այնու ամենայնիւ զգում է ուրիշի բարու թիւնը: Դրան ամենալու ապացոյց է այն, որ Դևիսը երախտագիտութեամբ է վերաբերում ինձ միմիացն նրա համար, որ ես երբեմն-երբեմն խօսում եմ հետու նրա առողջութեան մասին:

Գուցէ և նրան զեկավարում է այն անգիտակցական ձգոսումը, որի շնորհիւ թոյլ ու անօդնական արարածները փարում են աւելի ուժեղներին: Իսկ ես երբ որ տեսնում եմ նրա կաւճագոյն դէմքը՝ իմ բուռնցքիս մեծութեամբ, նրա երկու չոփի նման ոտները, նրա մինչև անդամ շոք եղանակին հաստ պլեղով փաթաթած պուճով մարմինը, անկեղծ սրտով խղճում եմ նրան: Սակայն չեմ ուզում մինչև անդամ իմ առջև աւելի լաւ ձեւանալ քան եմ իսկապէս: Այդ կարեկցութիւնը ինձ ոչնչից չի պահիլ: Պառը ստեղծւած է դայլին զոհ զնալու համար: Ինձ յաճախ զարմանք է պատճառել այն, որ երբ կին է լինում մէջտեղը՝ տղամարդիկ անգութ են դառնում միմեանց վերաբերմամբ. այդ մեզնում գտազնային բնազգմունքի մնացորդն է, որ հրամայում է կեանքի ու մահւան կուր մղել էզի համար: Այդ կուռում, թէեւ նա մարդկանց մէջ ուրիշ կերպարանք է ստացել, վայ թոյլերին: Մինչև անկամ պատփի զգացմունքը այդ ժամանակ մարդու չի սահնձում: միմիացն կրօնն է, որ անպայման կերպով դատապարտում է այդ կուրը:

12 ապրիլ.

Տասը օր կը լինի, որ ոչինչ չեմ զբել: Մեր յարաբերութիւնների յեղաշրջումը կատարեց սրանից մի շաբաթ առաջ: Առաջուց

Ենթադրում էի, որ այդ ծովի վրայ էր լինելու։ Այն տեսակ կանաչք, ինչպէս Լառւրան է, մինչև անդամ՝ ինքնամոռացութեան բոպէներին չեն մոռանում համապատասխան պայմաններ ընտրելու մասին։ Եթէ նրանք մինչև անդամ բարի գործեր միայն նրա համար են անում, որ այդ սազում է նրանց, ևս աւելի հարկաւոր է նրանց համար, որ իրանց անկումը գեղեցիկ լինի։ Դրա վրայ աւելունում է և այն սէրը գէպի արտասովոր բաները, որ բզիսում է ոչ թէ նրանց հոգու մէջ եղող պօչզիացից, այլ՝ զարդ դաւնալու շարժմար ամեն բանով զարդարելու ցանկութիւնից։ Այն ասամբան չեմ կորցրել զլուխս, որ կարծիքս փոխեմ Լառւրայի մասին, թէպէտեիսկն ասած չը գիտեմ; արգեօք իրաւոնք չունի նս լինելու այնպէս ինչպէս է և կարծելու, թէ մինչև անդամ արեգակն ու աստղերը գոյութիւն ունեն միայն նրա համար, որ ինքը կարողանաց նրանցով զարդարել։ Անպայման գեղեցկութիւնը, իրերի բնութեան համաձայն, պէտք է լինի անսահման եսականութիւն, որ ամեն բան սոսրագրում է իրան։ Լառւրան այդպիսի գեղեցկութեան մարմնացումն է և ոչ ոք իրաւոնք չունի նրանից պահանջել աւելի քան այն, որ նա միշտ և ամեն տեղ գեղեցիկ լինի. գոնէ ես դրանից աւելի ոչինչ չեմ՝ պահանջում...

Օրհնեալ լինի իմ նաւազարական հմտութիւնս, որի շնորհիւ ծովի վրայ նաւակով զբօնելիս ես ու Լառւրան կարողանում ենք մենակ մնալ։ Սրանից մի շաբաթ առաջ ամենասաստիկ շոքի ժամանակ Լառւրան ինձ ասաց, որ ուզում է ծովում զբունել։ Նա Հեկառացի նման սիրահարւած է արեկի տապի վրայ։ Մեղմ քամին կարծ միջոցում բաւական հեռու մղեց մեզ ափից և յանկարծ հանդարտեց։ Մեր լատինական առագաստը վայր իջաւ կայմի վրայով։ Արեգակի ճառագայթները անդրադառնալով հայելիի պէս ողորկ ջրի երեսից աւելի սատոկացնում էին շոքը, թէե կէսօրից անց էր։ Լառւրան ընկաւ մակոյկի յատակին փուլած հնդկական խսիրի վրայ և, զլուխը դնելով բարձին, մնաց անշարժ, թաթախւած նաւակի ամսկովանիի միջով թափանցող ճառագայթների յունիսեան լոյսի մէջ։ Ինձ տիրեց մի տարօրինակ հեշտափիրութիւն և միւնոյն ժամանակ հիացման սարսուռ էր անցնում մարմնովս այդ կոտը նայելիս, որի յունական մարմնաձեւերը գծապրուում էին թեթև հագուստի տակ։ Նրա

վրայ էլ մի տեսակ թմրութիւն էր իջել աքերը շաղւած էին, բերաննը՝ կիսաբաց, ամրող մարմինը՝ թոյլ ու մեղկացած։ Երբ որ աչքս քյում էի նրա վրայ, նու փակում էր կոպերը, կարծես ուզում էր ասել ինձ՝ «Տես, որքան թոյլ եմ...»։

Նաո ուշ վերադառնք տուն և այդ մեր վերադարձը երկար ժամանակ կը մնայ յիշողութեանս մէջ։ Արևի մայր մանելոց յետոց, որի ժամանակ երկինքն ու ծովք միախառնելով մի փայլուն ամբողջութիւն էին կազմել՝ անսահման ու անբաժան, այնպիսի հրաշալի գիշեր սկսեց, որի նմանը երբէք չեմ տեսել ՈՒԻՒԻՔՐԱՅՈՒՄ։ Հորիզոնի տակից բարձրացաւ լուսնի ահագին կարմրագոյն շրջանակը, փարատեց խաւարը մեղմ լոյսով ու շողքը զցեց ծովի վրայ։ Մենք նաւում էինք դէսի ափը այդ շողքի կազմած լայն շողշողուն ճանապարհով։ Ծովը մեղմ ծփում էր սովորական գիշերացին ծփանքով, որ նմանում է խորը հողոցների։ Փոքրիկ նաև ահանգամած մեր ականջին էին հասնում և իգուրացի ձկնորսների խմբովին երգի ձայները։ Քամին նորից բարձրացաւ, բայց ափիցն էր գալիս և բերում էր ծաղկած նարնջենիների բուրմունքը։ Զը նայելով որ ես չեմ կարողանում լիովին անձնատուր լինել ոչ մի տպաւորութեան, այնուամենայնիւ ինձ բոլորովին թովել էր այդ չնաշխարհիկ քաղցրութիւնը, որ սփուած էր ծովի ու ցամաքի վրայ և ցօղի նման նստում էր առարկաների ու հոգիների վրայ։ Երբեմն-երբեմն նայում էի այն ձեղինէի նման գեղեցիկ կնոջ վրայ, որ առաջիս լուսնի լոյսով սպիտակին էր տալիս և մոտախարութեան մէջ էի լնկնում, — ինձ թւում էր թէ մենք ասդրում ենք հին յոցների դարում, թէ նաւում ենք դէսի նւիրական ձիթենիների անտառը, ուր կատարում են էլեղինեան խորհրդատօները։ Մեր վերացումը մեզ թւում էր ոչ միայն բուռն զգայական մի բան, այլ և մի տեսակ պաշտամունք, մի տեսակ միտոիկական կառ այդ գիշերւան, այդ դարնան, ամբողջ բնութեան հետ:

## 15 ապրիլի.

**Մ**եր այստեղից գնալու ժամանակն եկել է, բայց չենք գնում։ Իմ ձեկառան արևից չի վախենում։ Դեխին արել բուժում է, իսկ ինձ համար ԶԵԿԱՅԵՐԻԱՅՈՒԹԻՒՆ էլ այնպէ, կը լինի ինչպէս այսուղ է։

Տարօրինակ միտք է ծագում զլիսում, ես աշխատում եմ  
հեռացնել նրան դլսից, բայց պարզ կ ասեմ թէ ինչ միտք  
է, —երբեմն-երբեմն ինձ թւում է որ քրիստոնեացի հողին,  
թէպէտե հաւատի աղբիւրը նրանում բոլորովին ցամաքած լինի, չի  
կարող ապրել միմիայն արտաքին գեղեցկութեամբ։ Այդ ինձ համար  
շատ ցաւալի դիւտ է, որովհեաե եթէ իմ ենթալրութիւնս ձիշտ  
զուրս գայ, ոտներիս տակից կ'անհետանայ այն հողը, որի վրաց  
կանդնած եմ այժմ։ Ասկայն այդ միտքը ինձ հանդիսաւ չի տալիս։  
Անգ ուրիշ կուլտուրացի պատկանող մարդիկ ենք։ Մեր հողիներում  
կան շատ զոթական սլաքանման ձևեր ու մանւածակոսյա գծեր,  
որոնցից մենք երբէք չենք ազատւիլ և որոնք չը կային յունական  
հոգիներում։ Մեր հոգիները բնազգաբար բարձրանում են դէպի վեր,  
նրանցը՝ մեղմութեամբ ու պարզութեամբ փուլում էին գետնի երես-  
ոով։ ձիշտ է մեզնից նրանք, որոնց մէջ Հելլագացի ոգին աւելի  
սաստիկ է բարախում քան ուրիշների մէջ, կեանքից գեղեցկութիւն  
են պահանջում և ազահաբար վնասում են գեղեցկութիւն, բայց  
նրանք էլ անդիսակցաբար ուզում են, որ Ասպազիան Դամուէի  
Բէատրիչի աչքերն ունենայ։ Այդպիսի ցանկութիւններ իմ մէջ էլ  
կան։ Երբ որ ինձ ու ինձ մոտածում եմ, որ այդ սքանչելի մարդ-  
անասունը՝ լառւրան՝ պատկանում է ինձ և կը պատկանի քանի որ  
սիրոս ուզի, սաստիկ և կրկնակի ուրախութիւն եմ զգում-տղա-  
մարդու և գեղեցկի երկրագուի ուրախութիւն։ և սակայն ինչ որ  
մի բան պակաս է ինձ ու չեմ կարողանում լիսկուրծք շունչ քա-  
շել։ Իմ յունական մեհեանի սեղանի վրաց կանգնած է մարմարէ  
ասուածուհի, բայց զոթական տաճարս պատարկ է։ Հասկանում  
եմ որ ինձ հանդիպել է դրեթէ կատարելութեան մօնեցող մի բան,  
սակայն չեմ կարողանում ազատւել այն մոքից, որ այդ կատարե-  
լիութիւնը ստւեր է ձգում ցետեից։ Ես առաջ կարծում էի, թէ  
Գէօթէի խօսքերը, —«Նմանեցէք ասուածներին ու անսասուններին»  
ամբողջապէս բոլոնդակում են կեանքը և կենսական խնասառութեան  
վերջին խօսքն են։ իսկ այժմ երբոր կատարում եմ այդ պատեր-  
անը, զգում եմ որ այդ նախադասութեան մէջ պակաս է «հրեշ-  
տավիներին» խօսքը։

## 17 ապրիլ.

Դեմն այսօր տեսաւ ինձ նստած ցածիկ աթոռի վրայ Լառու-  
րացի ոսների մօտ ու գլուխս դրած նրա ծնկներին։ Նրա անարիւն  
դէմքից ու հանդած աչքերից մի վայրկեան անդամ չը հեռացաւ  
անտարբեր ու ճնշւած արտայայտութիւնը։ Հնդկական արևանիարնե-  
րով ասղնագործւած փափուկ հողածափները հազին նա անմարմին  
էակի նման հանդարտ անցկացաւ ու մտաւ կողքի գրադարանը։  
Լառուրան պահնչելի էր, երբ որ նրա աչքերը փայլառակեցին ան-  
զուազ զայրովթից։ Ես վերիացայ ու ապատում էի, տեսնեմ թէ ինչ  
կը լինի։ Մաքովս անցաւ թէ գուցէ Դեմսը գրադարանից դուրս  
կը գայ ու ևոլւերը ձեռքին։ Միտքս գրել էի այդ դէպքում պատուհա-  
նովը գուրս շպրանչ նրան իւր պլեզով, ու ևոլւերով ու հնդկական հո-  
ղաթափներով միասին։ Բայց նա գուրս չ'եկաւ։ Շատ սպասեցի ու  
գուր տեղը։ Զը գլանեմ ինչ էր անում այնաեղ։ Իւր թշւառ գրու-  
թեան վրայ էր մտածում արդեօք, թէ լաց էր լինում, թէ գուցէ  
մնացել էր բոլորովին անտարբեր։ Մենք երեքով իրար հետ տեսնե-  
ցինք միայն նախաճաշին և այնպէս նատեցինք նախաճաշելու կարծես  
սկի ոչինչ չէր պատահել։ Գուցէ երեակայութիւնիցս էր, բայց ինձ  
թւում էր, թէ Լառուրան նրա վրայ խիստ հայեացքներ է զցում,  
իսկ նրա անտարբերութեան մէջ սովորականից աւելի զանութիւն  
կայ։ Պէտք է ասել, որ զործը ինձ համար զրանից աւելի անախորժ  
կերպով չէր կարող վերջանալ։ Նրա դէմքը այդ արտայայտութեամբ  
ամբողջ օրը աչքից չէր հեռանում և հէնց այժմ էլ առաջիս կանդ-  
նած է իբրև անխօս յանդիմանութիւն։ Կուասէր չեմ, բայց պատ-  
րաստ եմ արածիս պատասխանը տալու։ Վերջապէս ես աղնւական եմ՝  
և աւելի լաւ կը համարէի, որ Դեմսը այսպէս պատիկ, հիւանդու,  
անպաշտպան մարդ չը լինէր, մի խօսքով այնպէս թրջած հաւ  
չը լինէր։ Այնպիսի գարշելի բան եմ զգում, կարծես անդամալոյն  
մարդու ապատակ եմ տւել։ շատ քիչ է պատահել, որ ինքս դէպի ինձ  
այսպէս զգւանք զգացած լինեմ։

Սակայն ըստ սովորականին գնացինք ծովով զբօսնելու, որովհե-  
տեւ չէի ուզում որ Լառուրան կարծէր թէ չեմ համարձակուում զնալ  
Դեմսի վախից։ բայց այնաեղ առաջին անդամը մեր մէջ թիւրիմա-  
ցութիւն ծաղեց։ Խոստովանւեցի նրան, որ խղճահարւում եմ, իսկ

երբ որ նա սկսեց խղճահարւելուս վրայ ծիծաղել, ուղղակի ասացի նրան.

—Այդ ծիծաղը՝ քեզ սազ չի գալիս, իսկ դու պէտք է չը մոռանաս, որ ամեն բան կարող ես անել, բայց այն բաներից, որոնք քեզ չեն սազում:

Նու կիսեց իրար խառնւած յօնքերն ու դառը—դառը ասաց:

—Մեր մէջ տեղի ունեցած բանից յետոյ դու ինձ աւելի անսպասիժ կերպով կարող ես վիրաւորել քան Դւեխին:

Այդպիսի յանդիմնութիւնից յետոյ ինձ ոչինչ չէր մնում անել քան ներողութիւն խնդրել նրանից, այնպէս որ շուտով մեր մէջ հաշոտւթիւն տիրեց և հառւրան սկսեց խօսել իւր մասին: Նա մի անդամ էլ ասպացուցեց որ շատ խելացի կին է: Առհասարակ, որքան կանանց հետ որ ծանօթ եմ եղել, բոլորն էլ որոշեալ պայմաններում անդիմադրելի ցանկութիւն են ցոյց տուել իրանց կեանքի պատմութիւնն անելու: Իւր կարծիքով այդ վաս բան չէ, որովհեան այն է միայն ասպացուցանում, որ նրանք պահանջ են զգում՝ իրանց արգարացնելու: Թէ իրանց և թէ մեր աշքում, պահանջ, որ մենք ամենեին չենք զգում: Բայց և երբեք ինձ չի հանդիպել ոչ այնքան խելօք կին, որ իւր խստովանութեան մէջ պահպանէր համապատասխան արտիստական չափը, ոչ էլ այնքան ճշմարտախօս, որ թոյլ չը տար իրան սուտ ասել ինձն իրան աւելի լաւ արգարացնելու համար: Ասածիս վկաց եմ բերում բոլոր տղամարդկանց, որոնք զէալք եղած ժամանակը բացի այդ կարող են հաստատել և այն, որ այդ անկումների պատմութիւնները միշտ սաստիկ նման են լինում մէկ-մէկի, ուստի և չափից դուրս ձանձրալի են լինում: Լառւրան սկսեց խօսել իւր մասին նոյնպէս մի քիչ անզուսպ զւարձութեամբ, բայց դրանով սահմանափակւեց նրա նմանութիւնը ուրիշ ստորացած հրեշտակների հետ: Պատմելիս զուցէ նա մի քիչ աշխատում էր բնուրոյն ձեւանալ, բայց ոչ ամենեին զոհ: Իմանալով, որ լսողը սկեպտիկ է, նա չէր ուզում հնմարկել թերահաւատութեան ներողամիտ ծիծաղը տեսնելու վտանգին: Նրա անկեղծութիւնը քիչ էր մնում հասնէր յանդգնութեան և կը հասնէր զբեթէ ցինիկականութեան, եթէ մի տեսակ կենսական սիստեմ չը լինէր, որի մէջ էսթետիկան աշբողջապէս փոխարինել է բարոյագիտութիւնը: Նա ուզեցել է, որ իւր

կերանքը ունենայ Ապոլլոնի զեղեցկութիւնը և ոչ պոլիշխնելի կուզը, — ահա նրա փիլիսոփայութիւնը։ Դեխի հետ պատկել է ոչ թէ ուզդակի նրա միջիօնների համար, այլ որպէս զի այդ միջիօնների շնորհիւ որքան որ հնարաւոր է մարգուս դուրեկան կեանք առեղծի իւր համար և այն այդ բառի ոչ գուեհկական, այլ ամենաբարձր, արտիստական նշանակութեամբ։ Ասենք ոչ մի պարտականութիւն չի զգում դէպի մարդը, որովհետեւ սկզբից նրան ամեն բան ասել է. համ խզում է նրան, համ էլ զգւանք է զգում դէպի նա և քանի որ նա միանգամայն անտարբեր է դէպի ամեն բան, նրան այնքան է բանի տեղ զնում որքան որ կը գնէր եթէ արդէն մեռած լինէր։ Բացի այդ նա աւելցրեց, որ առհասարակ հաշւի չի առնում ոչ մի բան, որ հակառակ է զեղեցկութեան և կեանքի քաղցրութեան։ Հասարակութեան վերաբերմունքը նրա համար շատ քիչ նշանակութիւն ունի և սխալ կը լինէր իմ կողմից եթէ հակառակը կարծէի։ Հօրս բարեկամաբար էր վերաբերում ոչ թէ նրա հասարակական զիրքի համար, այն ողառնաւով, որ նրան համարում էր բնութեան գլուխ-գործոց։ Խնձ վաղուց է սիրելիս եղել Գիտէ, որ ես իրան աւելի կը գնահատէի եթէ որ աւելի դժւարութեամբ ձեռք բերէի, բայց չի ուզեցել սակարկութիւն անել իւր սեփական երջանկութեան հետ։

Տարօրինակ տպաւորութիւն էի գործում ինձ վրայ այդ հրաշալի բերանից լսող, մեղմ, քաղցր, մետալական հնչիւններով վի ձայնով արտասանուող սկզբունքները։ Խօսելիս նա շորերը հաւաքեց իւր ոտների մօա, կարծես կողքին ինձ տեղ բաց անելու համար։ Երբեմն նա աչքերով հետեւում էր մեր մօտով թռչող ձկնեկուշներին, յետոյ նորից դարձնում էր աչքերը՝ իմ դէմքիս էր նայում հետաքրքրւելով թէ ինչ է արտայացում նա։ Ես գւարճութեամբ էի լսում նրա խօսքերը, որովհետեւ նրանք ասպացուցանում էին, որ ես այդ կնոջը հասկացել եմ։ Ուակայն նրա խօսքերի մէջ այնպիսի բան էլ կար, որ ինձ համար բոլորովին նոր էր։ Զընայելով որ ես շատ բարձր էի դասում նրա խելքը, բայց էլի կարծում էի թէ նրա վարժունքը աւելի բնազդական է, թէ նրա արածները մէծ մասամբ բղխում են նրա բնութիւնից։ Ես չէի ենթադրում, որ նա ընդունակ է ամբողջ մի սիստեմ հնարելիւր բնութեան միտումները արդարացնելու ու նրանց նեցուկ տալու համար։

Որոշ չափով այդ բարձրացրեց նրան իմ աչքում, որովհետեւ զուրս եկաւ, որ այնուեղ, ուր ես կասկած էի տանում զանազան ստոր հաշիների մասին, նա վարւելիս է եղել իւր սկզբունքի համաձայն, դուցէ և վաս ու մինչև անգամ սարսափելի սկզբունքի, բայց այնուամենայնիւ սկզբունքի: Ինձ թուում էր, օրինակ, թէ նա զաղոնի զիտաւորութիւն ունի ինձ հետ պատկելու Գեխսի մահից յետոյ. այժմ նա ապացուցեց ինձ որ ես սխալւած եմ եղել: Նա ինքը սկսեց այդ բանի մասին խօսել: Խոստովանւեց, որ եթէ ես սպահելու առաջարկութիւն անէի նրան, երեխ նրա ուժիցը վեր կը լինէր մերժել, որովհետեւ նա ինձ աւելի սաստիկ է սիրում քան ես կարծում եմ (այդ ժամանակ նրա դէմքն ու վիզը կարմրեցին ու վառւեցին). սակայն զիտէ, որ այդ երբէք չի լինել, հաւասարած է, որ վաղ թէ ուշ հեշտ ու հանդիսան կը թողնեմ նրան, կը հեռանամ, բայց ինչ անենք որ Այ ձեռքը կոխում է ջրի մէջ և քաղցր զովութիւն է զգում: միթէ նա ովէաք է իրան զրկի այդ զւարձութիւնից այն պատճառով, որ զիտէ թէ մի բողէ անցած արել կը ցամաքեցնի նրա ձեռքի վրայի առալ ջուրը:

Այդ ասելիս նա կուացաւ նաւակի վրայով, այնպէս որ նրա իրանը գծագրեց իւր անազարտ կառարելութեամբ, և ջրի մէջ թաթախած թաց, վարդիգոյն ստացած, արեկ ճարագայթներից թափանցիկ ձեռները մեկնեց դէպի ինձ:

Ես բռնեցի նրա թաց ձեռները, իսկ նա, կարծես ներգաշնակւելով իմ տպաւորութիւններին, արասանեց քաղցր, սիրալիր ձայնով.

— Սօս արի...

20 ապրիլի.

**Երեկ ամբողջ օրը Լառուրային չեմ աեսել, որովհետեւ տկար էր Պատշաճում դիշերը երկար նատել էր, մրսել է, իսկ յետոյ՝ մրսածութիւնը վոստիսւել է ասամիացաւի: Սիրոս սաստիկ նեղանում է: Բարեբախտաբար զեռ մէկել օրը Նեխսի համար բժիշկ կանչեցին, որ շարունակ նրա մօտ է մնում, ապա թէ ոչ մարդ չէր լինի և որ հետը մի խօսք խօսէի: Բժիշկը ահազին զլխով ու արագաշարժ աչքերով, սեռուկ, պատիկ, ածուխի կտորի նման մի ջահէլ խոալացի է: Նաև խելացի մարդ է երեսում: Պարզ է որ հէնց առաջին երեկոյից**

զննել է մեր զբութիւնը և մեր մէջ տիրող յարաբերութիւնները, տհածը բելորովին բնական բան է համարել և առանց տառանւելու ընդունել է ինձ տան խսկական տէր: Այսօր առաւօտ չը կարողացայ պահել ծիծաղս, երբ որ նա ինձնից հարցրեց, թէ արգեօք կարող է տեսնել «տիկին կոմսուհուն» և գեղ գրել նրա համար: Նատ ապօրինակ են այսաեղի սովորութիւնները: Աւրիշ երկիրներում ամեն տեղ, երբ որ մարդատէր կնոջ վրայ կասկած է ընկնում, թէ ուրիշի է պատկանում, ամբողջ հասարակութիւնը միացած սկսում է հալածել նրան յաճախ անմիտ անգթութեամբ: Այստեղ ընդհակառակը սէրը այնպիսի յարդ է վայելում, որ ամենքը իսկոյն նրա կողմն են անցնում և սկսում են գաւաղրութիւն կազմել ինպաստ սիրահարւածների: Խտալացուն պատասխանեցի, թէ կը հարցնեմ տիկին կոմսուհուց, կուզի արգեօք տեսնել նրա հետ: Այգպիսով այսօր նախաճաշից յետոյ ներս պրծայ և առուրացի բուդուարը: Նա ինձ զժկամակութեամբ ընդունեց, որովհետեւ երեսը մի քիչ ուսել է և չէր ուզում որ ես նրան այդ զբութեամբ տեսնէի: Եւ իրաւ նրան որ տեսայ՝ մտաբերեցի իմ վազուցւան նկարչութեան դասերս: Այն ժամանակ նկատել էի, որ նոր ժամանսակւայ զէմքեր նկարելիս կարելի է զանազան անձշութիւններ անել, մինչև անգամ այս ու այն բանի փոխել, բայց եթէ զէմքի արտայախութիւնը, զէմքի գաղափարը մնացած լինի, այդ անձշութիւններն ու փոփոխութիւնները նմանութեանը ամենեին չեն վնասիլ: Բոլորովին ուրիշ բան է հնադարեան (անտիք) զէմքեր նկատելիս, ամենաշնչին՝ անմիշտ զիծը, ամենաանչին ծառութիւնը ոչնչացնում է զէմքի ներդաշնակութիւնը ու ուրիշ զէմք է գարձնում նրան: Այժմ մի նոր ապացոյց գտայ իմ առաջւան նկատածիս՝ և առուրացի օրինակում: Նրա զէմքի ուսուցքը շատ աննշան էր, ճիշտն ասած ես համարեա չը տեսայ էլ այդ ուսուցքը, որովհետեւ նա յամառութեամբ գարձնում էր իմ կողմը իւր առողջ կիսադէմը, բայց որ աչքերը քիչ ու միշ կարմրած էին ու կոպերը սովորականից մի քիչ աւելի ծանրացել էին, էլ այն՝ իւր ներդաշնակութեամբը կատարեալ զէմքը չէր և շատ տղեղ էր իւր ամենօրեայ գեղեցիկութեան համեմատութեամբ: Ի հարկէ այնպէս արեցի որ և առուրան այդ չը հասկանայ, բայց նա իմ համոյախօսութիւնները մի քիչ անհանգստու-

թեամբ էր լսում, կարծես թէ խիզճը տանջում էր նրան: Անշուշտ  
նրա սկզբունքով ֆլիւսը մահացու մեղք է:

Տարօրինակ սկզբունքներ են, ես իմ Ասուածը: Իմ հոգիս էլ  
անսկասկած հինաւուրց յոյնի հոգի է, բայց իմ մէջ բացի հեթա-  
նոսից մի ուրիշ բան էլ կայ: Լառւրան մի ժամանակ կարող է շատ  
անբախտ լինել իւր փիլիսոփայութեան շնորհիւ: Ես գեռ հասկա-  
նում եմ, որ մարդ կարող է իւր համար կրօն դարձնել զեղեցկու-  
թիւնը ընդհանրապէս, բայց ով որ իւր սեփական զեղեցկութիւնն  
է կրօն դարձնում, իւր համար դժբախտութիւն է պատրաստում:  
Ինչ կրօն է այն կրօնը, որ կարող է խախտել մի հասարակ Փլիւսից  
և կարող է հիմնայատակ լինել քթի վրայ դուրս եկած ովզուկից:

## 25 ապրիլի.

Սակայն պէտք է գնալ Զւիցերիա, որովհետև շոքերը անսաս-  
նելի են դառնում: Բացի ացդ, ժամանակ առժամանակ Աֆրիկայից  
տե՛ղալին արտաշնչութեան նման փչում է Արքունիք: Ճիշտ  
զովացնում է անսպատի այդ շունչը, բայց էլի անտանելի է:

Արքուն Դևիսին սարսափելի վնասում է: Բժիշկը հսկում է  
այժմ, որ նա մորֆիահարբութեան ըլ տայ իրան, ուստի նա երբեմն  
վերին աստիճանի զրգուած է լինում, երբեմն էլ կատարեալ թմրու-  
թիւն է գալիս վրան: Բայց նկատել եմ, որ ամենակատաղած բոսէ-  
ներին անդամ նա վախենում է Լառւրայից ու ինձնից: Ով գիտի,  
արդեօք այդ կիսախելադարի ուղեղում չի սկսում ծագել հալա-  
ծանքի մանիս և արդեօք նա արգէն չի տանջւում կասկածելով թէ  
մենք ուզում ենք նրան սպանել կամ խեղել: Առհասարակ իմ յա-  
րաբերութիւնը գէպի նա ինձ համար իմ գերիս ամենասատր կող-  
մերից մէկն է: Ասում եմ՝ մէկը, որովհետև շատ լաւ հասկանում  
եմ, որ շատ ուրիշ այդպիսի կողմեր էլ կան: Ես Պոշովսկին չէի  
լինիլ, եթէ չը նկատէի, որ այսպէս թէ այնպէս հոգիս ոչ միայն  
մեղկանում է, այլ և արագ ու վճռական կերպով փշանում է այդ  
կնոջ զրկում: Մինչեւ անդամ ասել չեմ կարող թէ որքան զզւանք,  
դասնութիւն ու խղճահարութիւն է պատճառել սկզբից ի վեր ինձ  
այն միտքը, որ ես այդպէս անմիջապէս, այդպէս խկոյն հօրս մա-  
հից յետոյ խորասուզւեցի հաճոյքների ու զգացական կրքերի այդ

զորձանքի մէջ։ Այդ վրդովեցնում է թէ իմ խիղճս և թէ նրբազութիւնս, որ անկասկած ունեմ։ Այնքան անտանելի էր ինձ համար, որ չէի կարողանում գրա մասին գրել։ Այժմ անտարբեր եմ դարձել։ Երբեմն-երբեմն ինքս ինձ յանդիմանութիւն եմ անում, մտածում եմ այդ յանդիմանութիւնների մասին, բայց խկասվէս խիղճս ոչինչ չի զգում։

Անելկացին աշխատում եմ մոռանալ, որովհետեւ նրան լիշելիս սաստիկ տանջուում եմ կամ, աւելի ճիշտն ասած, չեմ կարողանում ինքս ինձ հետ հաշուել, երբ որ մտարերում եմ կեսնքիս այդ Պլոշովում անդի ունեցած միջնադէպքը։ Երբեմն ինձ թւում է թէ ես արժանի չեմ նրան, իսկ երբեմն թէ էշ էի գարձել ու պարզ ի պարզոց ծիծաղելի դեր էի կատարում այդ օրիորդի մօտ, որ ոչինչով չի տարբերում հարիւրաւոր ուրիշ օրիորդներից։ Այդ իմ ինքնասիրութեանս դիպչում է, ուստի և ուսի նման մի բան եմ զգում գէսիր Անելկան։ Այնպէս է լինում, որ մի ժամ Անելկացի վերաբերմամբ մեղաւոր լինելուս գիտակցութիւնը ինձ տհաճութիւն է պատճառում, իսկ մի ուրիշ ժամ արած յանցանքս ինձ ցիմար ու երեխայական բան է թւում։ Առհասարակ ես, այնպէս ինչպէս որ էի Պլոշովում, ինքս ինձ դուր չեմ գալիս ինձ այնպէս ինչպէս այժմ եմ նոյնակս դուր չեմ գալիս ինձ։ Խմ մէջ որոշեալ չափով անհետանում է բարիի ու չարի մէջ եղած տարբերութեան զկացումը, և, որ աւելի է, ես սկսում եմ անտարբեր վերաբերւել այդ զանազանութեանը։ Այդ յառաջանում է ոգուս մի տեսակ մեղկութիւնից, սակայն միւս կողմից այդ մեղկութիւնը փրկում է ինձ, որովհետեւ երբ որ ներքին ալէկոծութիւնը տանջում է ինձ, նա ասում է՝ «Դիցուք թէ այժմ աւելի վատ ես քան առաջ։ լաւ, ինչ անենք որ։ Ինչու պէտք է ինքդ քեզ տանջես այս կամ այն պատճառով»։

Յետոյ իմ մէջ մի ուրիշ փոփոխութիւն էլ եմ տեսնում։ Հետզհետէ սովորել եմ մինչև անգամ այն բանին, որ սկզբում սաստիկ գիպչում էր իմ պատւասիրութեանս—և այժմ աւել կամ պակաս անտարբերութեամբ ապատակում եմ անդամալոյցին։ Մի քանի օրից ի վեր նկատում եմ, որ ինքս ինձ հաղար ու մի բան եմ թոյլ տալիս, որ երբէք չէք համարձակիլ անել եթէ որ Դւիսը այդպէս ֆիզիկա-շէս ու մտաւորապէս ողորմելի արարած չը լինէր, այլ կորիձ,

իւր պատիւն ու սեփականութիւնը պաշապանելու ընդունակ մարդ լինէր։ Արդէն այլ ես նեղութիւն չենք տալիս մեզ ծովը գնալու... Զէի ենթակրում ամենևին որ իմ զգացնութիւնը ացէ կողմիցն էլ կարող է ացդքան բթանալ։ Ճիշտ է ես հեշտ ու հանդիսա կարող եմ ինքս ինձ ասել՝ ինձ ինչ այդ քոնձուտ արևելցին, բայց Աստ ած վկայ, միևնույն ժամանակը շատ անդամ չեմ կարողանում ազատել այն մոքից, որ Խւնոնացի յօնքերով սեահեր ասուածուհիս խիստէն ոչ թէ Խւնոնա պէտք է անւանւի, այդ Յիրցէա<sup>1)</sup> և որ նրա հպաւորութիւնը մարդկանց դարձնում է... — ինչպէս ասենք որ, որքան կարելի, դիցաբանօրէն դուրս դայ... Եւմէցի<sup>2)</sup> ասնիկ։

Խսկ երբ որ ինքս ինձ հարց եմ առաջարկում, թէ ինչիցն է այդ, այնպիսի պատասխան եմ՝ առանում, որ հաւասար է առաջւան հայեացքներից շատերի մնանկութեանը։ Մեր սէրը պարզ ի պարզոց մարմնի սէր է և ոչ հոգու։ Յաճախ մտքովս անցնում է, որ նորաւուրց մարդը չի կարող դրանով բաւականանալ։ Ես ու Լաուրան միայն ասուածների ու անսասունների նման ենք եզել և երբէք՝ մարդկանց։ Խ'այն ասած մեր զգացմունքը մինչև անդամ չի կարելի սէր անւանել, որովհետեւ մէկս միւսի համար թանկագին եակներ չենք, այլ միմիայն տենչալի։ Եթէ որ Լաուրան ուրիշ մարդ լինէր ու ես ուրիշ մարդ լինէի, մենք կարող էինք հարիւրապատիկ աւելի անքախտ լինել, բայց այժմ չէի զգալ, թէ Եւմէցի սանիկների դրութանն եմ հասել։ Ես հասկանում եմ, որ միմիայն ոգի լինել ցանկացող սէրը միայն առեւր կը դառնայ, բայց ոգու բոլորովին զուրկ սէրն էլ միայն լրբութիւն կը լինի։ Ուրիշ հարց է, որ նրանք, որոնց դիտչում է Յիրցէացի գաւազանը, կարող են հաճոյք զգալ լրբութիւնից։

Բայց տարօրինակ է և տիտուր ինձ համար, որ ես, հելլենական տիսպին պատկանողս, այդպիսի բաներ եմ զրում։ Սակայն սկսում եմ սկեպտիկաբար վերաբերել իմ Հելլագացին, մէջս կասկած է ծագում, թէ արդեօք կարելի է ասդրել եղանքի այնպիսի եղանակներով,

<sup>1)</sup> Յունաց դիցաբանութիւնից։ Արեփ և Պերսէիս բաւերժահարախ աղ. չիկը, որ Ողիսնախ ուղեկիցներին խոզ դարձրեց, խսկ Որդիսնախին իրան մի ամբողջ տարի պահնեց իւր մօտ։

<sup>2)</sup> Ողիսնախ խոզաբածը։

որոնցով ապրում էին մարդիկ հին ժամանակները և որոնք անցել — զնացել են. և քանի որ ևս միշտ անկեղծ եմ եղել, գրի եմ անցնում ինչ որ մտածում եմ:

## 30 ապրիլի.

Երեկ յանկարծ հօրաքրոջիցս նամակ ստացայ: Հռոմիցն են ուղարկել ինձ: Երկու շաբաթ սրանից առաջ է գրւած եղել. չեմ իմանում ինչու են այդքան երկար պահել Casia Osoria-ում: Հօրաքրոյս հաւատացած է, որ գնացել եմ Կորֆու, բայց կարծում է, որ պէտք է արդէն վերադարձած լինեմ և գրում է ինձ հետեւալլ.

«Հաս կարօտով ու անհանդառութեամբ տեղեկութիւն ենք սպասում քեզնից: Ես պատաւել եմ, իմ արմատները շատ խոր ու պինդ են բուն գրել հողի մէջ և ամեն մի քամի չի կտրող ինձ ցնցել, բայց Անելիացի վրայ նացելիս մարդուս խիղճը դալիս է: Նա ակներեւ քեզնից նամակի էր սպասում Վիէննացից կամ Հռոմից, և երբ որ տեսաւ որ նամակ չի դալիս, սկսեց անհանգուանալ: Յետոյ, ինչպէս ինքդ էլ զիտես, հօրդ մահը վրայ հասաւ: Ես դիտամբ Անելիացի ներկայութեամբ բարձրածան ասում էի, որ այժմ՝ դու բացի հօրդ մահից ոչ մի ուրիշ բանի մասին չես կարող մտածել, բայց մի քանի շաբաթից յետոյ թմրութիւնիցդ կ'ազատւես ու նորից կը դատնաս դէպի գործունեաց կեանքը: Ես ու Անելիան իրար հետ իբր թէ բաց չենք խօսում, բայց իրար շատ լաւ հասկանում ենք: Տեսայ, որ շատ հանգուացաւ: Ստկայն երբ որ մի ամբողջ ամիս անցկացաւ ու դու մէկ-երկու խօսք էլ է չը գրեցիր մեզ, նորից սկսեց դարդ անել գլխաւորապէս քո առողջութեան համար, բայց անշուշտ և նրա համար, որ այդպէս մուտքել ես մեզ: Իմ սիրաս էլ անհանգիստ էր լինում և ես մի քանի նամակ գրեցի քեզ Կորֆու քունաւում է մեր կեանքը: Գոնէ մի քանի խօսք գրիր, և որ գլխաւորն է, աչքիս լոյս Լէօն, դէն գցիր վրացիցդ անզգացութիւնը ու առաջւան Լէօնը դարձիր: Ես պարզ կը խօսեմ քեզ հետ: Անելիացի դարդի վրայ այն էլ է ազգել, որ նրա մօրը ով որ ասել է,

թէ դու ամբողջ աշխարհին յայտնի ես իբրև թեթևովիկ մարդք Երեակացիր թէ որքան զայրացայ: Յելինան յուսահառուած լսածը յացնել է աղջկանը և այժմ մէկը զլիսացաւից սկի աչք չի բաց անում, միւսն էլ՝ խեղճը դոնիը դցել է, լղարել է ու այնպէս փոխւել է, որ մարդու սիրտ կակծում է տեսնելիս: Բայց այնպէս քաղցր ու հրեշտակի նման բարի արարած չի լինիլ որ Անելկան է: Մօրը չը վշտացնելու համար իրան ուրախ է ձեւացնում, բայց շատ լաւ տեսնում եմ, թէ ինչ օրի է խեղճը ու սիրտս կորառուում է: Ամենաքաղցր որդեակս, ես էլ դրա մասին չէի խօսում քեզ հետ Հռոմում դարդիդ պատճառով, բայց այդ անբախտութիւնը Աստծու կամքիցն է, որի հետ պէտք է հաշուել ու յետ չը մնալ կեանքից: Չես կարող մի բան գրել, որ սրտներս հանգստանաց: Խղճա Անելկացին: Քեզնից ինչ ծածկեմ, իմ սրտիս ամենամեծ բաղձանքն այն է, որ սուզգ վերջանալուց յետոց դու ու Անելկան պասկւէք իրար հետ թէկուզ մէկ կամ երկու տարի անցնելուց յետոց, որովհետեւ իմ կարծիքով Անելկան Ֆենիքս<sup>1)</sup> է: Բայց Ճիշտ ասած, եթէ մինչեւ անգամ իմ փափառս չի կատարւելու, էլի աւելի լաւ կը լինէր, որ մի կերպ մեզ իմաց տայիր այդ: Դու գիտես որ ես երբէք չափազանցնելու սովորութիւն չունեմ և եթէ քեզ գլում եմ այս, այն է պատճառը, որ իսկապէս վախենում եմ Անելկացի առողջութեան համար: Բայցի այդ պէտք է իմանաս, որ մէջ տեղը Անելկացի ապագայի հարցն է: Կրոմիցկին սկսել է շատ շուտ-շուտ յաճախել Յելինացին ու Անելկացին և ակներև բան է, որ որոշեալ գիտաւորութիւններ ունի: Դու գիտես իմ բնութիւնը, ուզում էի աւանց երկար ու բարակ խօսելու տանից վանտել նրան, մանաւանդ որ կասկած եմ տանում թէ նա պէտք է ասած լինի քո թեթևովիկութեան մասին, բայց Յելինան շատ աղաչեց որ շանեմ: Նա բոլորովին յոյսը կտրել է և ամենեին չի հաւատում թէ դու սիրում ես Անելկացին: Ինչ պէտք է անէի: Իսկ եթէ յանկարծ

<sup>1)</sup> Հին եղիակտացիների առասպելներից: Առասպելական թուչուն, որ զգալով մահան զալը, խարովկէր սարքում, ինքն իրան ակտամ էր ու վետու նորից վերածնուում իւր աճիւնից: Եգիստացիները այդ թուչունը համարում էին անմահութեան նշանաբան:

դուրս գայ, որ նրա այդ կասկածը մայրական սրուի ճշգրիտ վկացութիւն է: Որքան կարելի է շուտով պատասխանիր նամակիս, և ընդունիր քո արեովլը միայն երդում ուտող պառափ համբոցին ու օրհնութիւնը: Անելկան իւր ժամանակին ուզում էր քեզ նամակ գրել, յաւակցութիւնը յայտնել, բայց Յելինան թոյլ չը տւեց, որի համար ես նրա հետ կուեցի: Յելինան շատ լաւ կնիկ է, բայց երբեմն բարկութիւնս բերում է: Բոլորը քեզ շատ ու շատ բարե են անում: Խւասառվակու որդին գարեջրի գործարան է հիմնում Պլոշովում: Մի քիչ փող ինքն ուներ, մնացածն էլ ես պարոք տւեցի»:

Առաջին բոպէին ինձ թւում էր, թէ այդ նամակը ինձ վրայ տպաւորութիւն չի գործում. յետոյ սկսեցի զնալ-գալ սենեակում ու տեսայ, որ սխալում եմ: Տպաւորութիւնը բոպէ առ բոպէ սաստկանում էր ու վերջ ի վերջոյ անասելի սաստկութեան հասաւ: Մի ժամ անցած ես զարմացած ինձ ու ինձ ասացի՝ «սատանայ է մոել մէջս ինչ է, ոչ մի ուրիշ բանի վրայ չեմ կարողանում մտածելը: Զարմանալի է, թէ որքան արագութեամբ ամենատարբեր զգացմունքներ էին տիրում ինձ, աջնապէս սլանալով մէկ-մէկի յետեւից կարծես թէ քամին ամսկերի պէս առաջը զցած քշում էր նրանց: Սակայն ինչ աստիճան ջղացին մարդ եմ եղել ես: Սկզբում խանդաղանք զգացի դէպի Անելկան: Այն ամենը, ինչ որ մի քիչ առաջ զգում էի դէպի նա և որ կարծես հոգուս հեռաւոր խորշերում թագնել էր, յանկարծ երես արեց: Գնալ, հանդսառաջնել, գուրգուրել, երջանկացնել — այդ եղաւ իմ առաջին անգիտակցական շարժումը, սրտիս առաջին ձգտումը, որ շատ հեռու էր պարզ ձեւակերպւած կամքից, բայց չափազանց զօրեղ էր: Խակ երբ որ երեւակայեցի նրա արտսաւակալած աշքերը, նրա ձեռները իմ ձեռներիս մէջ, դէպի նա զգացած տենչանքս յարութիւն առաւ իւր բոլոր սաստկութեամբ: Յետոյ մոքովս թուուցիկ կերպով անցաւ համեմատութիւն նրա ու Լառւրայի համար. շատ չարաբաստիկ պէտք է դուրս գար: Առաջին բոպէին այն կեանքը, որ այստեղ վարում էի, ոսկորի նման դէմ առաւ բգումա: Պահանջ զգացի աւելի մաքուր օդի, քան այն, որ այստեղ ծծում եմ, անդորրութեան, քաղցրութեան և մանաւանդ զգացմունքների աղնւութեան: Միւնոյն ժամա-

նակը ինձ ուրախութիւն տիրեց, որ դեռ ոչինչ չեմ կորցրել, որ  
ամեն բան կարելի է ուղղել և որ այդ միսիացն իմ կամքիցն է  
կախւած։ Յանկարծ միտք եկան Կրոմիցկին ու Անելկացի մացրը, որ  
ինձ վրայ հաւաս ջունենալով՝ ակներևաբար նրա կողմն է անցել։  
Նրանց մասին որ սկսեցի մտածել՝ բարկութիւնն եկաւ, որ հետզհետէ  
սաստկանալով խեղղեց բոլոր միւս զգացմնաքներս։ Որքան բանակա-  
նութիւնն աւելի էր ընդունում, որ ախկին Յելինան կառարեալ իրա-  
ւոնք ունի ինձ վրայ յոյս չը գնելու, այնքան աւելի սաստիկ էի  
գէպի նա ոխ զգում, որ համարձակւել է այդպէս թերահաւատու-  
թեամբ վերաբերել ինձ։ Վերջը հասայ կառաղի զայրացման թէ  
իմ և թէ բոլորի գէմ։ Խչ որ մտածում ու զգում էի, բոլորը ամ-  
փոփւեց այս չորս խօսքում՝ «Ճաւ, թող այլպէս լինի»։

Նամակը երէկ ստացայ. այսօր աւելի հանգիստ սրտով ինքս ինձ  
գննելով, զարմանալով տեսնում եմ, որ այդ վիրաւորանքի քէնը այն-  
քան խոր է թափանցել հոգուս մէջ, որ այս բուղէիս աւելի սաստ-  
կացել է քան թուլացել։ Այժմ այդ քէնն է իմ մէջ տիրող զգաց-  
մոնքը։ Ինքս ինձ ասում եմ ամեն բան, ինչ որ կարող է ինքն  
իրան ասել լուրջ մտածող մարդը, բայց էլի չեմ կարողանում այդ  
Կրոմիցկու համար ներել ոչ միայն մօրը այլ և Անելկացին։ Անշուշտ  
Անելկան մի խօսքով կարող էր նրա ոտը կտրել Պլոչովից, իսկ եթէ  
նա այդ չի անում, այդ նրա կողմից զիջումն է մօրը կամ թէ ու-  
րիշ խօսքով նա ինձ զոհում է իւր մօր միգրենին (գլասացաւ)։ Բացի  
այդ Կրոմիցկին վայր է զցում Անելկացին իմ աչքումն, պղծում է  
նրան, ստորացնում, հասցնում է նրան հարմանցու օրիորդի յիմար  
տիպին։ Չեմ կարողանում հանգիստ սրտով խօսել վրա մասին։

Կարելի է ես այսպէս եմ մտածում ու զգում, որովհետեւ սաս-  
տիկ զբաւած եմ. զուցէ իմ ինքնասիրութիւնս չափից զուրս զար-  
գացած է. ես ինձ գիտակցում, տեսնում եմ, կարողանում եմ նա-  
յել ինձ վրայ իբրև մի կողմնակի մարդ, բայց այդ երկուութիւնս  
ամենւին չի օգնում ինձ։ Գնալով աւելի ու աւել եմ տաքանում  
ու զրգուում։ Դրա մասին զրելը անզամ տանջում է ջղերս, ուստի  
վերջ եմ տալիս։

## 1 մակարի.

**Գիշերը** մոտածում էի՝ «գուցէ վաղը աւելի հանդիստ լինի սիրոս»: Ի՞նչ հանդիստ: Գնալով միմիացն ատելութիւն է ծագում իմ մէջ Անելկացի մօր, Անելկացի, հօրաքրոջս ու իմ գէմի: Ամեն մարդու հետ վարւելիս պէտք է յարմարւել նրա ջղերին, իսկ նրանք մոռացել են, որ իմ ջղերս չափազանց նուրբ են: Բայց միմէ ինձ համար լաւ չէ այստեղ՝ Պելիում: Լառուրան հէնց իմանաս միտագաղ մարմար է: Նրա մօտ եղած ժամանակս գոնէ չեմ տանջւում, որովհետև բացի գեղեցկութիւնից նրա մէջ ոչինչ չկայ: Իսկ այդ չափից վեր նուրբ, զգայուն հոդիները ինձ սաստիկ ձանձրացրել են: Թող Կրոմիցկին նրանց միմիթարի:

## 2 մակարի.

**Ես** ինքս այսօր նամակը տարաց պոստը: Նամակիս բովանդակութիւնն այս էր, — ցանկանում՝ եմ պան Կրոմիցկուն բախտաւորութիւն պաննա Անելկացի հետ ու պաննա Անելկացին՝ պան Կրոմիցկուն: Վճռական պատասխան էր ուզում հօրաքրոյս, թող գնայ կարդաց:

## 3 մակարի.

**Մաքովս** անցնում է, մի գուցէ հօրաքրոջս կողմից նամակումը Կրոմիցկու անունը տալլ կանացի զիւանադիսութիւն լինի, մի գուցէ այդ՝ խթանի վեր պէտք է կատարէր իմ վերաբերմամբ: Եթէ այդպէս է, շնորհաւորում եմ հօրաքրոյս նրա մարդ ճանաչելու և ճարպկութեան համար:

## 10 մակարի.

**Անցել** է մի շաբաթ: Ոչինչ չէի զրում, որովհետև շամածի պէս էի: Խիզճս սաստիկ տանջում է ինձ ու սիրտս այրում է կսկըծից: Անելկացին ես երբէք անտարբեր չեմ վերաբերւել և չեմ վերաբերւում: Միտքս են դալիս Հայէտի խօսքերը՝ «քառասուն հազար եղբացը տնտէս չէին կարող սիրել Օֆելիային ինչպէս ես էի սիրում նրանք: Միայն թէ այդ բացականչութիւնը ես կը փոխէի այսպէս՝ «Անելկացին քառասուն հազար Լառուրացից աւելի էի սի-

բում»։ Թարսի նման հէնց իմ ձեռքից պէտք է չարիք հասնէր նրանու երբեմն մխիթարութեան նշոյլ է փայլում ինձ, թէ չարիքը հէնց այն կը լինէր նրա համար, եթէ որ ինձ պէս մարդու հետ պսակւէր, բայց այդ ծիշու չէ։ Եթէ որ նա իմ լինէր, ես նրա համար լաւ մարդ կը լինէի։ Բայց ինձ թունաւորում է այն կասկածը, թէ գուցէ նա Կրոմիցկովն էլ կը բաւականանայ։

Երբ որ մողովս անցնում է այդ, սիրոս տակն ու վրայ է լինում և քիչ է մնում մի ուրիշ այնպէս նամակ էլ գրեմ։

Եղաւ պրծմաւ, — այդ ինձ պէս մարդկանց համար միակ մխիթարութիւնն է, որովհետեւ կարող են ձեռները խաչել ու առաջւաց պէս անշարժ մնալ։ Դուցէ այդ չափազանց թուլութեան ապացոյց է, բայց այդ երկու խօսքը ինձ մի քիչ ափոփում են։

Այժմ կարող եմ աւելի հանգիստ միտք անել։

Գլխիս տալիս եմ ու հարցնում ինքս ինձ, ինչպէս է պատահել, որ մի մարդ, որը ոչ միայն պարծենում է թէ վերին աստիճանի զարգացած ինքնաճանաշութիւն ունի, այլ և խկապէս ունի, — մի քանի օր է ինչ միմայն անգիտակցաբար, բեֆլեկտիւ կերպով է վարւում։ Ել ինչին է պէտք ինքնագիտակցութիւնս, եթէ որ ջղերի մի քիչ սատոիկ զրգուելուց զնում թաղւում է ուղեղի խորշերում և կրաւորական վկայ է դառնում բեֆլեկտիւ զործողութիւնների։ Խնքս ինձ քննելու poste factum (մի բան անելուց յետոյ)։ Չեմ իմաննում զրանից ինչ զուրս կը դայ, բայց քանի որ ուրիշ ոչ մի բան չի մնում ինձ անելու, կ'աշխատեմ զօնէ այդ օգուտը քաղել ինքնագիտակցութիւնից։ Այդպէս ուրեմն՝ ինչու ես վարւեցի այնպէս ինչպէս վարեցի։ Կարելի է այն պատճառով, որ ես իսկապէս զարգացած, զուցէ մինչև անգամ շատ զարգացած մարդ եմ (լեզուս չորանայ, եթէ որ ուզում եմ ինքս ինձ շողաքորթել կամ գովել), — բայց խելացի մարդ չեմ։ Մանաւանդ զուրկ եմ տղամարդու հանգիստ խելքից։ Ջղերիս սանձը չեմ կարողանում քաշել, չափից աւելի զգայուն եմ, ինձ, բանաստեղծի ասելով, կարող է վիրաւորել մինչև անգամ վարդի երկու տակ ծալած թերթիկը։ Իմ խելքիս մէջ ինչ որ կանացի բան կայ։ Կարելի է ես այդ կողմից սկի բացառութիւն չեմ, զուցէ վարտիկ հագնողների մեծ մասը, մանաւանդ մեզնում, հէնց այդ ախպին է պատկանում։ Այդ ինձ համար մեծ

միլիթարութիւն չէ: Այդ տեսակ խելքը կարող է շատ բան հասկանալ, բայց գծւար է մարդուս համար նրանով կառավարւել կեանքում: այդպիսի խելքը անհանգիստ կերպով դէս դէն է ընկնու՞, տատանեում է, ամենանուրբ քամիչով քամում է իւր ամեն մի դիտաւորութիւնը և վերջ ի վերջոց մոլորւում մնում է իրար խճճւած ճանապարհների մէջ: Դրանից նւազում է գործելու ընդունակութիւնը և զարգանում է բնաւորութեան թուլութիւնը, որ մեզնում բնածին ու ընդհանուր պակասութիւն է: Օրինակի համար մի նոր հարց եմ տալիս ինքս ինձ, — եթէ որ հօրաքրոջս նամակում կրօմից կու անունը ամենեին լիշւած չը լինէր, գործը արդեօք ուրիշ վերջ կ'ունենար: Եւ, Ասուած վկաց, չեմ համարձակուում «այս» պատասխանել: Այդքան շուտ չէր լինէլ, ճիշտ է, բայց ով դիտի, աւելի բարեցաջող կը լինէր արդեօք: Թոյլ բնաւորութիւններին պէտք են հազար ու մի հեշտութիւններ, միմիայն զօրեղ հոգիներն են դիմադրութիւնից նոր եռանդ ստանում: Լառւրան, որ մի քանի բաներում մուշկի պէս թափանցող է, երեխ ացդ հասկացել է և գուցէ դրանից է, որ շատ քաղցր էր վարւում ինձ հետ:

Վերջապէս ի՞նչ է երեւում զրանից: Որ ես վասլաս մարդ եմ: Ամենեին: Մի մարդ որ իրան մասին միշտ ճիշտն է ասում առանց խնայելու, այժմ էլ չէր ինացիլ, այդ էլ կասէր, բայց չէ, ամենեին... Զգում եմ, որ առանց երկար ու բարակ մոածելու կարող էի ու զեւորւել հիւսիսացին բեեռը կամ միսախնէր դառնալ ու գնալ Աֆրիկացի խորքերը. մի քիչ անձնանպաստանութիւն, մի քիչ ժառանգական արխարառութիւն կայ մէջս և ես ընդունակ եմ ամենայանդուգն զիտաւորութիւններ իրագործել, ամենավտանգաւոր ձեռնարկութիւններ սկսել: Տեմպերամենոս վառվուն է, շարժունութիւնս այնքան չէ, ինչքան օրինակ Սնեատինսկունը, բայց էլի սովորականից աւելի է:

Բայց երբ որ պէտք է լինում մի կենսական ինդիք վճռել, սկեսադիկականութիւնս ինձ ուժից գցում է, միտքս մոլորւում է հազար ու մի նկատումների, եզրակացութիւնների մէջ, կամքս յենարան չի դանում իւր համար և իմ գործողութիւններս մասամբ կախւած են լինում արտաքին զէոլքերից:

12 մատիսի.

Լառուրացին երբէք սիրելի չեմ եղել, թէև թովւած եմ եղել  
ու մինչեւ այժմ էլ թովւած եմ նրա ֆիզիկական հրապոջներից:  
Գուցէ այդ՝ առաջին անգամից տարօրինակ բան թւի, բայց իսկա-  
պէս բաւական սովորական երևոցի է: Կարելի է մինչեւ անգամ սի-  
րահարւած լինել և չը սիրել: Քանի քանի անգամ դէպք եմ ունե-  
ցել տեսնելու գառն, կծու, փոխագարձ վիրաւորանքներով լի սիրա-  
հարութիւն, որովհետեւ նա հիմնւած չի եղել սիրոց վրաց: Կարծեմ  
արդէն ասել եմ որ Խնամալիսպիները ոչ միայն սիրահարւած են  
իրար վրաց այլ և սասարիկ սիրում են միմիանց. զրանից է, որ նրանք  
իրանք իրանց շատ լաւ են զգում... Այս, զգում եմ, որ էլ կը սիրէի  
Անելիացին ու մենք էլ նրանց նման լաւ կ'ապրէինք... լաւ է սկի  
չը խօսեմ դրա մասին... Գալով Լառուրացին, շատերը սիրահարւած  
կը լիենեն նրա ու մաղերի, նրա արձանացին մարմնածերի, նրա  
յօնքերի, ձայնի, հայեացքի, զլուխը պահելու եղանակի վրաց և  
այլն, ասկայն հաւասարացած եմ, որ երբէք նրան ոչ մի սիրող չի  
եղել: Այդ տարօրինակ կինը զրաւում է դէպի ինքը դրեթէ ան-  
դիմադրելի կերպով, բայց միենոյն ժամանակը և յետ է մղում: Ար-  
դէն ասել եմ, որ բացի զեղեցկութիւնից նրա մէջ ոչինչ չկաց, որով-  
հետեւ նրա արտասովոր խելքն էլ միմիայն առաջին նամիշտի զերն  
է կատարում, որ չոքած նրա զեղեցկութեան առաջ կապում է նրա  
կոտուրները<sup>1)</sup>: Սրանից մի շաբաթ առաջ Լառուրացին տեսայ նորե-  
րումն խեղդւած ձկնորսի երեխացին ողորմութիւն տալիս ու ինքս  
ինձ մտածեցի, — եթէ իմանար, թէ իրան աւելի սաղ կը դար այդ  
երեխացի աչքերը հանելը, հանդիսան ու ուրախ սրտով կը հանէր  
նրա աչքերը: Մարդ զգում է այդ բաները և ահա ինչու կարելի է  
գժւել այդ կնոջ վրաց, բայց անհնար է նրան սիրել: Իսկ նա ամեն  
բան հասկանում է բացի դրանից:

Բայց ինչքան գեղեցիկ է: Երբ որ մի քանի օր սրանից առաջ  
նա ամարանոցի աննդուղներով սրարտէզ էր իջնում շորոր գալով  
իւր հրաշալի աղղոթների վրաց — «ինձ թւում էր, որ վայր կ'ընկնեմ»,

1) Բարձր տանամաններ, որ հաղնում էին լոյն զերասանները:

ինչպէս ասում է Սլովացին։ Միանդամայն երկու ոյժի ազդեցութեան տակ եմ, որոնցից մէկը ձգում է զէպի ինքը, միւսը յետ է մղում։ Ուզում եմ գնալ Զւիցերիա և միւնոյն ժամանակը ուզում եմ վերադառնալ Հառ։ Խեցլ է վերջանալու, չը գիտեմ։ Ոիբն ճիշդ է ասում, թէ «ուզում եմ»-ը միայն դիտակցութեան դրութիւն է և ոչ կամքի գործողութիւն (ակտ)։ ևս պակաս կամքի գործողութիւն է կրթնասկի «ուզում եմ»-ը նօտարիցս նամակ ստացայ, որով ինձ կանչում է Հառմ ժառանգութեանս գործերի համար։ ինչ-որ ձևականութիւններ կան անելու, որոնք ասենք առանց ինձ էլ կարելի կը լինէր գլուխ բերել, եթէ որ անսպառնառ ուզէի չերթալ… Բայց այնու ամենայնիւ այդ պատրասկ է… Մի քանի ժամանակ է Վառացին աւելի չեմ սիրում քան առաջ։ Նա ինքը այդ բանին ամենեին չի նպաստել, որովհետեւ նա միշտ միատեսակ է, իսկ այդ նրանից է այդպէս եղել, որ տժգոհութիւնս իմ վրացից նրա վրայ եմ անցկացրել։ Հոգեկան կո-իւներիս ժամանակ նրա մօտ ոչ միայն, հանգիստ էի վիճառում, այլ և միւնոյն ժամանակը՝ կամովին սոորացումն. այժմ՝ զրա համար ոխ եմ զգում զէպի նաև Այդ իմ ներքին փոթորիկների մասին նա մինչեւ անգամ՝ ոչի չը գիտէր ել։ Նրան ինչ կարող էին հետաքրքրել այդ փոթորիկները, քանի որ չին կարող նրան պէտք գալ զարդարանքի համար։ Միայն այն է նկատել, որ մի աետակ տենդացին դրութեան մէջ եմ ու սովորականից աւելի կարկացիուտ. մի թեթև հարցրեց թէ ինչ է պատճառը, բայց շատ էլ չ'աշխատեց որոշ պատասխան ստանալ։

Գուցէ զէպի նա զգացած տենչանքս յաղթի ու չը գնամ, բայց յամենայն զէպս վաղը կամ հենց այսօր կ'ասեմ նրան որ գնալու եմ։ Ինձ հետաքրքրում է, թէ ինչպէս իշնունի նա այդ տեղեկութիւնը, մանաւանդ նրա համար եմ շատ հետաքրքրում, որ լաւ չեմ կարողանում երեակացել այդ։ Կասկած եմ տանում, որ նա էլ, չը նայեցով որ սաստիկ տաքացած է ինձ վրայ (այնպէս ինչպէս ես եմ տաքացած նրա վրայ), ինձ չի սիրում, —ի հարկէ եթէ նեղութիւն կրում է սիրելու կամ չը սիրելու ում և իցէ։ Մեր հոգիները շատ բանում իրար նման են, սակայն հազար ու մի ներհակ յառկութիւններ էլ ունեն։

Սարսափելի տանջւած եմ։ Զե՞մ կարողանում չը մտածել այն

տպաւորութեան վրայ, որ նամակս գործած կը լինի Պլոշովում: Նարունակ մնածում եմ վրա վրայ, մինչև անդամ և այն ժամանակ, երբ որ Լառուրայի հետ եմ լինում: շարունակ աչքիս առաջին տեսնում եմ Աննիկային ու հօրաքրոջս: Ի՞նչ բախտաւոր է Լառուրան իւր մշտական հանգստութեամբ: Ես ինքս ինձ հետ դժւար եմ կարողանում եօլա գնալ...

Ինքս ինձ միսիթարում եմ մտածելով տեղափոխութեան մասին: Պեշին, չը նայելով որ այսոեղ կան ծովային լողարաններ, սաստիկ գաստրկել է: Նորից մարդ խեղդում է: Ծովը ծով ընկած է առանց շարժելու ալիքները մինչև անդամ ափերի մօտ, կարծես թէ շոքից շունչ չի կարողանում քաշել: Նրեմն-երեմն քամի է բարձրանում, բայց հեղձուցիչ քամի՝ առաջը զցած քշելով սպիտակ փոշու ամպեր, որոնք խիս շերտով ծածկում են արմաւենիների, թղենիների ու մրտենիների տերեւները և փակւած գանդակասփեղկերի (ժալլւեց) միջով թափանցում են մենեակները: Աչքերս ցաւում են; որովհետեւ բոլոր սպատերից լոյսը այնպէս վառ կերպով է արտափայլում, որ ցերեկով չի կարելի նրանց նայել:

Թէկուզ Զւիցերիա թէկուզ Հառու կը գնամ, միայն թէ այսոեղից հեռանամ: Ինձ թւում է, որ ինձ համար ամեն տեղ աւելի լաւ կը լինի քան այսոեղ: Ասենք բոլորս էլ պատրաստում ենք ճանապարհ ընկնելու: Դևիսին չորս-հինգ օր կը լինի արդէն որ չեմ տեսել: Ինձ թւում է, որ այսօր-էգուց կը խելագարւի: Բժիշկն ասում էր, որ խեղճ նրան շարունակ խնդրում է որ կու պրծնեն իրար հետ: Այդ ասում են շատ վառ նշան է:

Հոռմ. Casa Osoria, 18 մայիսի.

Ակներև է որ միայնութեան պէտք ունէի: Սիրոս այնպէս է, ինչպէս որ էր Պելի հասնելուց անմիջապէս յետոյ—միևնոյն ժամանակը համ տիտուր է համ լաւ: Մինչև անդամ այժմ սիրոս աւելի լաւ է քան Պելիում, որովհետեւ չեմ զգում այն անհանդստութիւնը, որ հէնց առաջին օրից ազգում էր ինձ Լառուրայի ընկերութիւնը: Ման եմ գալիս խուլ, մութը տան մէջ, անթիւ բաներ եմ գտնում, որոնք միտքս են բերում հօրս և նրա ցիշատակը նորոգուում է սլրտումս: Նա էլ արդէն մի քիչ կապուտակացել էր ինձ համար, իսկ

այժմ ամեն մի քայլափոխում համովագում եմ՝ նրա վաղեմի, իրական կեանքին: Նրա առանձնասենեակի սեղանի վրաց ընկած են խոշորացնող ապակին, որով նայում էր զանազան առարկաների, բրոնզէ ասեղ-ներ, որոնցով փորածոյ անօթներից հանում էր չորացած հողը, ներկեր, վրձններ, սկսած ձեռագիրներ, հաւաքածուներին վերաբերող նկատողութիւններ, մի խօսքով՝ հազար ու մի մանր-մուր բաներ: Նրբեմն-երբեմն ինձ թւում է, թէ նա ուրիշ տեղ է գնացել միացն և կը վերադառնայ ու նորից կ'սկսի պարապել իւր ամենօրեայ գործերով, իսկ երբ որ այդ պատրանքս փարաւում է ճշմարիս ու խորին վիշտ եմ զդում և սիրում եմ նրան ոչ միայն իբրև միշողութիւն, այլ և իբրև՝ այժմ Campo Santo-ում յաւխանական քնովննջող էակի:

Դրանից է յառաջանում տիրութիւնս, բայց այդ զդացմունքը այնքան մաքուր է այն բոլոր զգացմունքներից, որոնք վերջին ժամանակները ինչ ուզում էին անում էին հետա, որ ես գոհ եմ այժմեան զբութիւնիցս, որովհետեւ ինքս ինձ աւելի լաւ եմ զգում կամ գոնէ այնքան վհացած չեմ զդում, որքան ինձ թւում էր... Նկատել եմ նոյնպէս որ ոչ մի՝ թէկուզ ամենաթունդ դատողութիւնն անգամ չի զրկում մարդութիւնից, որ նրան պատճառում է իւր մէջ որ և իցէ ազնիւ սազմեր տեսնելլս: Որտեղից է մարդկանց այդ անդիմադրելի ու անզսպելի ձգտումը գէպի բարին երբեմն սկսելով յետ տալ այդ կծիկի թելլ շատ հեռու եմ գնում: Փանի որ մեր բանականութիւնը ընդհանուր գոյութեան արամաբանական անդրադարձումն է, զուցէ մեր՝ բարիի մասին ունեցած գաղափարն էլ նմանապէս մի որ և իցէ բացարձակ (աբսոլիւտ) բարիի արտացըրումն է: Իսկ եթէ այդ ճիշտ լինի մարդ կարող է միանգամից վերջ տալ իւր կասկածներին ու բացականչել ոչ միայն «eureka» (գտայ), այլ և «ալէլուխա» (օրէնքից Աստծուն): Վախենում եմ սակայն, որ այդ շէնքս էլ ուրիշ շատերի նման կործանւի, ուստի սիրո չեմ անում կառուցանել: Այդ ասենք աւելի զգում եմ, քան դատողութեամբ ըմբռնում, բայց անշուշտ մի ժամանակ նորից կը դառնամ այդ խնդրին, որովհետեւ հարցը ոչ թէ ոտիցս, այլ հոգուց փուշ հանելու մասին է: Իսկ այժմ չափազանց շարչարւած եմ, սիրոս չափազանց տիսուր է և միեւնոյն ժամանակը չափազանց հանգիստ ու լաւ.

Թւում է ինձ, թէ աշխարհիս երեսին մարդս միակ արարածն է, որ կարողանում է յաճախ իւր կամքին հակառակ վարւել: Դուրս է գալիս որ վաղուց էր սիրաս ուզում Պելիից հեռանալ, բայց օր օրի եաւեից անցնում էր, իսկ ես մնում էի նառած աշնաեղ: Ճանապարհ ընկնելուս նախընթաց օրն էլ դեռ համարեա հաւատացած էի, որ կը մնամ: անակնկալ կերպով ինքը Լառուրան ինձ օդնութեան հասաւ:

Նրան յայտնեցի նօտարից նամակ սուանալս ու գնալու վճիռս միմիայն նրա համար, որ տեսնէի թէ ինչ տպաւորութիւն կը գործի այդ նրա վրայ: Մենք մենակ էինք: Ես սպասում էի նրա կողմից մի որ և է բացականչութիւն, վրդովմունք, «Veto» (արգելումն), բայց ակնկալութիւնս զուր դուրս եկաւ:

Լսելով այդ համբաւը, նա շուռ եկաւ դէպի ինձ, մատները երեսաց իրանց մազերիս մէջ ու երեսա՞երեսին մօտեցնելով հարցրեց. — բայց կը վերադառնամս, չ:

Խաչը, մինչև այժմ էլ ինձ համար հանելուկ է մնացել թէ այդ ինչ էր նշանակում: Արգեօք ենթադրում էր որ ինձ անսպասնառ հարկաւոր է դնալ, թէ վստահ լինելով իւր գեղեցկութեան ոյժի վրայ, ամենեին չէր կասկածում, որ կը վերադառնամ, թէ վերջապէս շատապում էր օգտել ինձ զլսիցը ռադ անելու առիթից, — որովհետեւ այդ տեսակ հարցմունքից յետոց ինձ ոչինչ չէր մնում անելու քան ճանապարհ ընկնել: Հարցնելիս արած փաղաքշական շարժումը մի քիչ հակասում է այդ ենթադրութեանը, որ այնուամենայնիւ ինձ ամենահաւանականն է թւում: Երբեմն ես համարեա հաւատացած եմ լինում, որ նա ուզում էր ինձ ասել՝ «Դու չես ինձ պաշտօնաթող անում, այլ ես՝ քեզք: Մինչև անդամ խոստովանւում եմ, որ եթէ այդ՝ պաշտօնաթողութիւնն էր, Լառուրայի ճարպկութիւնը իսկ որ չը տեսնւած քան է և սաստիկ զարմանալի, մանաւանդ նրանով որ հրաժարեցնելու եղանակը շատ քաղցր ու փաղաքշական էր այնպէս որ ինձ տարակուսանքի մէջ թողեց, թէ արդեօք ձեռ առաւ ինձ թէ ոչ բայց ինքս ինձ խարելու ինչ պէտք ունեմ: Նա իւր հարցով խաղը տարաւ: Գուցէ, ուրիշ ժամանակ իմ ինքնասիրութիւնս դրանից վիրաւորւէր, բայց այժմ այդ ինձ համար նշանակութիւն չունի:

Սակայն այն երեկոն ոչ միայն մեր մէջ սառնութիւն չ'ընկաւ, այլ ընդհակառակը սովորականից աւելի քննոյց էինք վերաբերում՝ իրար։ Նատ ուշ բաժանեցինք իրարից։ Մինչև այժմ էլ աչքիս առաջին աեմսում եմ, ինչպէս նա ձեռքով ճրագի առաջը բանածու աչքերը կախ դցած ճանապարհ է դնում ինձ մինչև դուռը։ Այնքան գեղեցիկ էր նա, որ ափառում էի, որ գնալու եմ։ Միւս օրը նա մնաս բարեւ արեց ինձ հետ երկաթուղու կացարանում։ Թէշվարզերի փունջը մինչև Ձենովա պահել էի։ Զարմանալի կին է։ Քանի հեռանում էի նրանից՝ Փիզիկական կարօտ սասականում էր, բայց և աւելի ու աւելի թեթևութիւն էի զգում։ Մի հանքի եկայ մինչև Հռոմ և այժմ՝ ինձ՝ վանդակից դուրս պրծած թռչունի նման եմ զգում։

## 22 մալիսի.

«Վահագութներից» դրեթէ ոչ ոքի չը գտայ այսուեղ։ Նոքը ցրել է նրանց ամարանոցներն ու սարերը։ Յերեկով փողոցներում շատ քիչ անցորդ է լինում, միմիայն օտարազգիներ են պատահում, մեծ մասամբ Անդիսացիք՝ մնիկնու կեղեխից շինած շղարշապատ սաղաւարտները զլիներին, կարմրագոյն բեղեկէրը (ուղեցոյց) ձեռներին ու անվերջ «Very interesting»-ը (շատ հետաքրքրական է) բերաներին։ Կէսօրին մեր Բաքուենօն այնքան դատարկ է լինում, որ մենաւոր անցորդների ունաձայնը արձագանք է բարձրացնում։ Բայց երեկոյեան բոլոր փողոցներում վլատում է ամբոխը։ Իրիկնառպահերին միշտ մի քիչ տօթ ու ջղային անհանգստութիւն եմ զգում, ուստի դուրս եմ զալիս թարմ օդ ծծելու ու քաշ եմ զալիս մինչև որ հալից ընկնում եմ։ այդ ինձ սաստիկ թեթևութիւն է պատճառում։ Խաճախ երեք-չորս անգամ գնում-գալիս եմ այդ հոյակաղ դարառավովը (տերրաս)։ Այդ ժամանակը այնուեղ շատ սիրահարւած զոյգեր են զբօնում։ Ամանք ման են զալիս թեթևի տւած, զլուխ զլսի կողցրած ու աչքերը կարծես չափից վեր երջանկութիւնից դէպի երկինք բարձրացած, ոմանք էլ նատած են լինում նստարանների վրայ, թաղւած ծառերի մութ սուերում։ Լավտերների գողղոջուն լոյսը այդ խաւարի խորքից երեցնում է

երբեմն բերսալիերի (զինւոր)՝ կիսով չափ վետուրներով ծածկւած կիսադէմը, երբեմն օրիորդի բացգոյնով հազուատը, երբեմն էլ մի բանորի կամ ուսանողի դէմք: Ամեն բոլէ ականջիս հասնում են շշունջներ, երգումներ, տաղեր, կիսաձայն երգեցողութիւն: Այդ ինձ վրայ գարնանային կարնաւալի (բարեկենդան) տպաւորութիւն է դործում և տարօրինակ զւարճութիւն եմ զգում երբ որ կարողանում եմ անհետանալ նրանց բազմութեան մէջ և շնչել նրանց ուրախ ու առողջ մլմնոլորտում: Որքան երջանիկ են, որքան պարզ են: Այդ պարզութիւնը թափանցում է իմ մէջ և աւելի լաւ է հանգստացնում ջղերս քան խլօրալը: Երեկոներին տաք ու պարզ եղանակ է անում, բայց զոլ քամին ամենելին չի գաղարում: Կուսինը բարձրանում է Trinita dei Monti-ի յետեից ու արծաթէ մակոյի նման սահում է մարդկանց այդ մրջիւնանոցի վրայով, սպիտակագոյն ներկելով ծառերի կատարները, տանիքներն ու աշտարակները: Դարաստափի ստորոտում ազմկուում ու փայլվիլում է քաղաքը, իսկ հեռւում արծաթափայլ մշուշի մէջ գծագրում է սուրբ Պետրոսի սև սիլուէտը՝ մի երկրորդ լուսնի պէս սպիտակին տող զմբէթով: Վաղւայ Հռոմը ինձ այսքան գեղեցիկ չէր թւացել: Նորանոր հրապոյրներ եմ գտնում Հռոմում: Ամեն օր ուշ եմ վերապառնում տուն, ու պառկում եմ քնելու գրեթէ երջանիկ այն մտածմունքից, թէ վաղը դարձեալ Հռոմում կը զարթնեմ: Քունս հօ... Զը գիտեմ գուցէ յօդնածութիւնից է, բայց մեռելի պէս եմ քնում, այնպէս որ առաւտոներն էլ զեռ մի տեսակ թմրութիւն է մնում վրաս:

Առաւտները անց եմ կացնում նոտարիս հետո: Երբեմն ինձ համար ցուցակագրում եմ հօրս հաւաքածուները: Հայրս կտակումը այդ հաւաքածուները չի բաշխել Հռոմ քաղաքին, իսկ կտակովը ես լնդհանուր ժառանգ եմ նշանակւած, այնպէս որ այդ էլ իմ սեփականութիւնս է դարձել: Հօրս կամքը կը կատարէի ու առանց տատանւելու կը բաշխէի Հռոմին այդ բոլորը, բայց վախենում եմ, որ հօրաքրօն յորդորանքները հօրս մէջ երկմտութիւն գցած լինեն ու նա գիտմամբ նրա համար կարգադրութիւն արած չը լինի հաւաքածուների մասին, որ մի ժամանակ նրանք կարողանան տարւել հայրենիք: Որ հայրս մտածելիս է եղել հայրենիքի մասին իւր կեանքի վերջին ժամերում՝ երեւում է կտակի շատ պրակներից: Կան

Նոյնպէս մեր հեռու ազգականներին վերաբերեալ մանր պրակներ, իսկ նրանցից մէկը ինձ այնքան սաստիկ յուղեց, որ չեմ կարող ասել: Ահա ացէկակը՝ «Մարդոննայի (Սասսօֆերատօ) վլու իւր կոտակում եմ իմ ապագայ հարսին»:

մակալի 25.

**Քանդակագործ Լուկոմսկին** մի ամիս կը լինի որ սկսել է շինել հօրս հասակաչափ արձաննը այն կիսանդրիի օրինակով, որ մի քանի տարի առաջ ինքը շինել էր: Յաճախ օրամեջի ժամերին գնում եմ նսյելու թէ ինչպէս է առաջ գնում արձանը: Նրա գործանոցը ինձ կարծես մի ուրիշ աշխարհք է տեղափոխում: Այդ արւեստանոցը չարգախի նման մի բան է, վերևից մի հատիկ ահազին պատուհանով, որ նայում է հիւսիս, և այդ պատճառով նա լուսաւորւում է սառը, արեւի ճառագայթներից զուրկ լցոսվ: Երբ որ այնտեղ նստած եմ լինում, ինձ թւում է թէ Հոռոմումը չեմ: Պատրանքը սաստկացնում է ինքը Լուկոմսկին իւր հիւսիսացին մարդու գլխով, շէկ մօրուքով ու միստիկի կապուտակ, մշուշապատ աչքերով: Նրա երկու օգնականները լեհացի են, պարտէզումը կապած երկու շների անունը Կրուկ ու Կուրտա<sup>1)</sup> է, մի խօսքով՝ նրա տունը մի տեսակ հիւսիսացին կզզի է հարաւացին ծովի մէջ: Սիրում եմ այնտեղ զնալ տպաւորութեան բնուրոյնութեան պատճառավ: սիրում եմ նոյնպէս տեսնել Լուկոմսկուն բանելիս: Այդ ժամանակ նրա մէջ ոյժ ու պարզութիւն է լինում: Հետաքրքրական է լինում նա մանաւանդ այն բոպէներին, երբ հեռանում է շինած արձանից լաւ մտիկ տալու համար ու յետոյ յանկարծ նորից մօտենում է, սկսում բանել կարծես յարձակումն զործելով: Նատ տազանդաւոր քանդակագործ է: Հօրս արձաննը աճում է նրա ձեռքերի մէջ և ապշեցնում է կատարեալ նմանութեամբը: Այդ ոչ միայն հօրս պատկերը կը լինի, այլ և գեղարւեատի գործ:

Եթէ գեղեցիկ ձեւերի վրայ սիրահարւած մարդու տիպ կայ— Լուկոմսկին է: Ինձ թւում է, թէ նա մինչև անդամ մտածում է

<sup>1)</sup> Կրուկ լեհերէն կը նշանակի աղուաւ, իսկ կուրտա՝ պոչատ շուն:

Ծ. թարգմ.

յունական քթերի, իրանների, ուսերի ու գլուխների միջոցով, մի խօսքով ոչ թէ գաղափարների, այլ ձեւերի, այն էլ կլասիկական ձեւերի միջոցով։ Արդէն տասնհինգ տարի է որ ապրում է Հռոմում, բայց այնպէս է յաճախում թանգարաններն ու պատկերագրաբանները, կարծես երեկ եկած լինի այստեղ։ Դուքս է զալիս, որ այդ տեսակ սէրը ընդունակ է բոլորովին լիացնել մարդուս կեանքը և դառնալ նրա կրօնը, ասկայն դուցէ այն պայմանով, որ նա էլ դառնայ նրա քուրմը։ Լուկոմսկին այնպիսի ամիսածութիւն է զգում՝ դէպի լաւ կազմւածք ունեցող մարդիկ ինչպէս հին բարեպաշտ մարդիկ զգում են դէպի սուրբերի պատկերները։ Նրանից մէկ օր հարցրեցի, թէ նրա կարծիքով ո՞չ է Հռոմի ամենազեղեցիկ կինը։ Առանց տառանելու պատասխանեց՝ «աիկին Դևիսը» ու իսկոյն սկսեց իւր երկու ձեռքի մեծ-մեծ մասներովլը օգի մէջ նկարել նրա կերպարնքը (Փիգուրա) այնպիսի թեթև ու արտայացտիչ շարժումներով, ինչպէս սովորաբար լինում են արտիստների շարժւմները։ Լուկոմսկին ինքն իւր մէջ վսակւած ու մելամազձուս մարդ է, բայց այդ բուդէին այնպէս կենդանութիւն ստացաւ, որ մինչև անգամ աչքերն էլ կորցրեցին իրանց սովորական միատիկական արտայացութիւնը։ «Այ օրինակ այս, -- կրկնում էր նա նոր-նոր գծեր քաշելով -- կամ այս... նա ոչ միայն Հռոմի, այլ և ամբողջ աշխարհի ամենազեղեցիկ կինն է»։

Մանաւանդ հիացնում է նրան Լառուրայի վիզը։ Ասում է, որ Լառուրան դլուխը բարձրացնելիս՝ վիզը կազմում է դէմքի շարունակութիւնը, ոչ առելի նեղ քան դէմքը, որ շատ հազւադէպ բան է։ Երբեմն միայն Տրանսուերումը կարելի է տեսնել հասարակ դասին պատկանող կանացք ացդպիսի վզերով, բայց այդ աստիճանի կառարեալ՝ երբէք։ Յիրաւի, Լառուրայի մէջ որ և իցէ Փիգիկական պակասութիւն գտնել ցանկացողը գուր ժամանակ կը կորցնի։ Լուկոմսկին այնտեղ հասաւ, որ սկսեց պնդել, թէ այդ տեսակ կանանցը դեռ նրանց կենդանի ժամանակը պէտք է արձան կանգնեցնել Ֆորումում։ Ինչ խօսք որ ես նրան չեմ հակածառում։

29 մալիսի.

Քառանորդութիւնն վերաբերեալ խալական երկար ու բարակ գործավարութիւնը սկսում է ինձ ասպատկացնել։ Ինչպէս այդ մար-

դիկը, շընայելով իրանց բնածին աշխատժութեանք, ամեն զործ գանդաղ են կատարում և ինչքան շատ խօսում են: Խօսելով զլուխա տարել են: Մի քանի ամենանոր ֆրանսիական վէպեր եմ բերել ու ամբողջ օրերով կարդում եմ: Նրանց հեղինակները ինձ վրայ վարժ նկարիչների տպառորութիւն են զործում: Ի՞նչ արագութեամբ ու հասութեամբ է նշանակում: Նրանց մէջ իւրաքանչիւր կերպարանք, որքան ոյժ և քնուրոցնութիւն կայ այդ նկարագրութեան մէջ: Երկասիրելու տեխնիկան դրանից գէնը գնալ չի կարող: Բայց միւս կողմից՝ նրանցում գուրս բերւած մարդկանց մասին պէտք է կրկնեմ արդէն մի անգամ ասածս, թէ նրանք միայն միմանց մարմիններն են սիրում, ել ուրիշ ոչինչ: Այդ ի հարկէ կարող է պատահել իբրև բացառութիւն, բայց որ ամբողջ Ֆրանսիայում ծայրէ ի ծայր վերցրած ոչ ոք ընդունակ չը դանւի ուրիշ տեսակ սիրելու, թող այդ ում ասում են ասեն, ինձ չ'ասեն: Ես Ֆրանսիան շատ լաւ եմ ճանաչում և գիտեմ որ այդ կողմից նա իւր գրականութիւնից լաւ է: Վեպագրութեան այդ շացուցիչ, բէալ ճշգրտութեան յետեւից ընկնելը նրան կեղծ է դարձնում: Մարդ սիրում է անհատին, իսկ անհատը բաղկանում է բացի գէմքից, հայեցքից, արտայայտութիւնից, ձայնից ու կերպարանքից – նոյնպէս և բանականութիւնից, բնաւորութիւնից ու մտածելու եղանակից, մի խօսքով շատ ու շատ մտաւոր ու բարոցական տարրերից: Իմ յարաբերութիւնը դէպի և առւրան ամենալաւ ապացոյց է, որ բացառապէս արտաքին հիացման վրայ հիմնւած զգացմունքը մինչև անգամ արժանի չէ սէր անւանելու: Բայց այդ՝ և առւրան բացառութիւն է:

31 մակեսի.

Երէկ ևուկոմակու հետ միասին նախաճաշեցինք, իսկ երեկոյեան ըստ սովորութեան քաշ էի դալիս Պինչիոյում: Երեւակայութիւնս երբեմն զլիսիս խաղեր է խաղում: Երեւակայութիւն էի թէ Անելկացի հետ թե-թեփ տւած զրօնում ենք: Մենք ման էինք ուալիս, խօսում էինք ինչպէս այդ կ'անեն իրար չափից վեր սիրող մարդիկ: Սիրաս այնպէս լաւ էր, ինչողէս երբէք չէր եղել և առւրացի հետ եղած ժամանակս, բայց և որքան միացնակ զգացի ինձ, երբ որ

երեակայութիւնս զագարեց բանելուց։ Զէի ուզում տուն վերադառնալ։ Գիշերը քունս չէր տանում։ Սարսափելի անպոտող կեանք է իմ կեանքը։ Այդ անընդհատ ինքս իմ մէջ խորասուզելս առաջնորդում է ինձ միմիայն գէպի դատարկութիւն։ Բայց զգում եմ, որ ուրիշ տեսակ կարող էր լինել։ Զարմանում եմ, որ Անելկացի յիշատակը այդ աստիճան կենառունակ է իմ մէջ։ Ինչո՞ւ օրինակ երբէք չեմ երեակայում թէ թե-թեկի տեած զբանում եմ և առերացի հետ, իսկ այժմ էլ, յիշելով նրա անունը, մաքում աւելացնում եմ՝ զլուխը քարը։ Եսա անգամ մաքովս անցնում է, թէ երջանկութեան երկու թեկիցը բռնած էի ու թողեցի որ ձեռիցս դուրս թռչի։

## 2 Հունիսի.

**Վ**ազուց ինձ ոչ ոք այնքան զարմանք չէր պատճառել որքան այսօր Լուկոմսկին։ Միասին գնացինք Կապիտոլիումի թանգարանը։ Նա ինձ զարմացրեց գեռ այնտեղի Աներացի արձանը նայելիս, երբ չորս կողմը պատացնելով նրա շարժական պատւանդանը՝ ասաց ինձ, թէ ինքը նէապոլում զտնաած Պրաքսիտէլի Պաֆսէան աւելի բարձր է դասում, որովհեան նա աւելի ոգեշնչւած է։ Այդ՝ այդպիսի պլաստիկի կողմից աարօրինակ կարծիք էր։ Բայց աւելի անակնկալ բանի վկաց պէտք է լինէի մեռնող գլավիատորի (սուսերամարտ) կամ, ինչպէս նոյնակս ասում են, Գալլի արձանի առաջ։ Լուկոմսկին կէս ժամի ճափ լուռ նայում էր նրա վրայ, իսկ յեսոյ բացականչեց իրար սղմած ատամների արանքից, ինչպէս սովորութիւն ունի խօսելու յուզւած ժամանակը。—Հարիւր անգամ ասւած կը լինի, թէ այդ գլավիատորը սլաւոնական դէմք ունի, —և իրաւ, շատ զարմանալի է... Իմ եղբայրը վարձով է վերցրել Կողլոււեկ կալւածը՝ Սերպացի մօս։ Այսուեղ մի ձիապան կար Միխնա անունով... Անցեալ տարի ձիերը լոզացնելիս խեղպեց... Նրա ու սրա դէմքը կարծես մի ինձոր լինի երկու կէս արած։ Ես այսուեղ շատ անգամ ժամերով կանգնում եմ, որովհեան այդ ինձ հարկաւոր է...

Զէի ուզում ականջներիս հաւասար և զարմանում էի, որ Կապիտոլիումի առաստաղը չի վկչում գլխներիս։ Անըց, Կողմոււեկ, Միխնա, այսուեղ—այս՝ անտիկների ու կլասսիկական ձեւերի աշխարհում—և այն էլ մեմ՝ Լուկոմսկու բերնում։ Իսկոյն բանդա-

կագործի արտաքին կերպարանքի տակից ես նշմարեցի մարդկացին հոգին,— «Այդ էր ուրեմն, բարեկամ, քո պլաստիկ եղածդ, մտածեցի ես ինձ ու ինձ, այզպիսի յոյն ես եղել հա, այզպիսի հոռմայեցի: Ուրեմն զու զալիս ես Գլադիատորին նայելու ոչ միայն նրա ձեւերի համար, այլ և նրա համար, որ նա միտոդ է բերում կողուվեկցի Միխնակին: Այժմ հասկանում եմ թէ ինչ է նշանակում քո սակաւախոսութիւնն ու մելամաղձութիւնը»:

Կուկոմսկին անշուշտ հասկացաւ իմ մոքովս անցածը, որովհետեւ միատիկական աչքերը յառեց զետնին ու սկսեց ընդհատուող ձայնով խօսել՝ կարծես բացատրելով առաջւան ասածը:

— Մարդ չը մեռնի ու Հռոմում ապրի: Գործերս շատ լաւ են զնում... Գանգատուելու իրաւունք չունեմ... Այսուղ մնում եմ, որովհետեւ պէտք է... Բայց հայրենիքի կարօսա ինձ այնպէս է տանջում, կարծես դժոխքում լինեմ... Երբ որ շներս զիշերը պարտէզումը սկսում են հաջել, ուզում եմ պատերը չանգռել, որովհետեւ ինձ թւում է թէ մեր գիւղումն եմ... Ես կը գժւեի, եթէ տարին գոնէ մի անգամ չերթայի հայրենիք: Այժմ էլ շուտով գնալու եմ, որովհետեւ արդէն այտուզս է հասել...

Այդ ասելով նա սկսեց մատով խփել կոկորդին ու շրթունքները հաւաքեց, այնպէս ինչպէս մարդ անում է սուլելիս, որովհետեւ շըրթունքները զողում էին: Այդ համարեա պայթիւնի նման մի բան էր և ինձ ես առաւել զարմանալի թւաց այդ մարդու կողմից այն պատճառով, որ բոլորովին անակնկալ կերպով եղաւ: Յանկարծ իմ սրախս էլ յուզմունք տիրեց, որովհետեւ աչքիս առաջ պարզեց այն ահագին տարբերութիւնը, որ կայ իմ ու այնպիսի մարդկանց մէջ ինչպէս են կուկոմսկին ու Սնեատինսկին: Այս բոպէիս էլ գեռ կարծես մի տեսակ ահով եմ մտածում այդ տարբերութեան մասին: Ամբողջ հորիզոններ կան՝ նրանց համար տեսանելի ու ինձ՝ անմատչելի: Զգացմոնիքի ինչ ահաղին քանակ են կրում իրանց սրտում այդ մարդիկը: Նրանք զրա շնորհիւ կարող են բախտաւոր կամ անբախտ լինել, բայց ինչ էլ լինի՝ նրանք ինձնից հարուստ են. նրանց չի սպառնում ոչ դատարկութիւն, ոչ ունացնութիւն: Նրանցից իւրաքանչիւրը տասը մարդու համար կենսական պաշար ունի: Ես էլ ինձ կարծես մի տեսակ կապւած եմ զգում մեր ժո-

զովրդի հետ, բայց այդ զգացմունքը այնքան անսիջական չէ որքան նրանցը, նա ինձնում չի վառւում ճրագի բոցի նման, նա իմ էութեան մասը չի դարձել: Ինձ ապրելու համար պէտք չէ ոչ մի Կողմովէկ, ոչ մի Միխնա, ոչ էլ Պոշովը. ուրիշ խօսքով ասած, այնուեղ, ուր Կուկոմսկու համար կենարար աղբիւրներ են բղխում, որոնք նրանց կեանքի իմաստ են մասակարարում, այնուղ չոր աւազ եմ տեսնում: Մինչդեռ եթէ նրանք այդ յենարաններն էլ չունենային, էլի կը մնային նրանց համար՝ մէկին—նրա քանդակագործութիւնը, միւսին՝ նրա գրականութիւնը: Գրեթէ անհաւատալի բան է, որ ինձ չափ երջանկութեան համար անհրաժեշտ պայմաններ ունեցող մարդը ոչ միայն բախտաւոր չը լինի, այլ և մինչև անգամ չիմանայ թէ ինչու է ապրում աշխարհիս երեսին: Անկասկած այդ այն պայմանների մեղքն է, որոնց մէջ ես դատիարակել եմ. Հռոմների, Մեցերի, Պարիզների ու դարձեալ Հռոմների մեղքն է. ես մի քիչ նման եմ եղել բուն հողից արմատախիլ արած, բայց օտար հողի մէջ էլ լաւ չը անկւած ծառի. սակայն մասամբ էլ իմ մեղքս է այդ, որովհետեւ ես հարցական նշաններ էի զնում ու փիլխոփայութիւն անում այնուղ, ուր ուրիշները միայն սիրում են: Գրա հետեանքն այն եղաւ, որ փիլխոփայութիւնից ոչինչ դուրս չեկաւ, իսկ սիրաս անբերբիացը, չորացը:

(Կը շաբաշնակուի)

## Ն Ի Է Ր

ՅԱՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Գուշ արտասաւում ես, և քո ծանրավիշտ  
Սրտից լճացած արցունքի տակից  
Փայլում է միտքը բոցոս աչքերիդ—  
Խելօք տրտմութիւն և քնքոյշ թախիծ.

Եւ այդ առաւել զե՞ն ու սիրուն է,  
Թէև ամպամած գիշերւան զրկում  
Փայլակն էլ շողում և ցոլանում է  
Խաղաղ ջրերի խորին յատակում:

92 թ. ապրիլ 5.

## ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԱՌԴՅՈՎԿԱՍՈՒՄ<sup>1)</sup>

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

### II

Մենք կարողացանք մեր անցեալ յօդւածում տեսութեան առանել բամբակի և մետաքսի արդիւնաբերութիւնը, որոնք մեր երկրի արդիւնաբերութեան մէջ անկասկած յարգելի տեղ են բւնում և ժողովրդական հարստութեան համար մօտիկ ապագայում նշանաւոր ֆակտորներ պէտք է կազմեն որպէս և կազմում են ներկայումն էլ:

Եթէ մենք նոյն այդ տեսութիւնը շարունակենք, ամենից առաջ մեզ աչքի է ընկնում երկրիս արդիւնաբերութեան այն ճիւղը, որ իւր խոշորութեամբ բոլոր ուրիշ Անդրկովկասից արտահանեալ արդիւնքներին գերազանցում է: Այդ արդիւնքը, որին մենք այժմս դիմում ենք, նաւթեն է:

Համարձակ կարող ենք ասել, որ նաւթը Անդրկովկասում արդիւնաբերող արդիւնքների շարքում ամենից շատ նպաստել է երկրիս տնտեսական հոչակին: Նաւթի արդիւնաբերութիւնը հետզհետէ մեծանալով՝ շարժումներ յառաջացրեց, որոնք թէ երկրիս կապիտալներին և թէ ժողովրդական աշխատանքին զործադրութեան ձանապարհ բացարին: Եւ սա մի նոր ասպարէզ էր, որի համար գիտութիւնը և մի յացանի փորձառութիւնը անհրաժեշտ պայմաններ են: Ենորհիւ այս պայմանների պակասութեանը առհասարակ կիսակիրթ երկիրները, ուր հարստութեան մի նոր աղբիւր է երեսում, դրաւում

<sup>1)</sup>Տես «Մուլճ» № 4. 1891 թ.:

ևն գէպի իրանց բացի տեղական ոյժերից՝ նոյնպէս և օտար (արդիւնաբերական) ոյժեր։ Վերջինների մասնակցութիւնը աւելի ևս ընդարձակ է, երբ որ նոր երեւացող արդիւնքը սուանում է մի լնդհանուր նշանակութիւն համաշխարհացին սպառման համար։ Նաւթի նկատմամբ մենք հանդիպում ենք մեր երկրում նոյն երեւոյթին, այնպէս որ եթէ սորա արդիւնաբերութիւնը մնար վերապահած լոկ տեղիս ոյժերին, դժւար էր սպասել նաւթի արդիւնաբերութեան զարգացման այն աստիճանը, որի վրաց նա այժմ գտնում է։ Եւ իրաւ մեր վաճառական-կապիտալիստներին սպահասում էին գիտութիւն և փորձ, որոնք պէտք է մեծապէս նոպատէին այս գործի տեխնիկական և առևտրական զարգացմանը։ Հէսց այս պայմանների սպահասութեանը լրացումն տուին օտարները, որոնք մեզ մօտ եկան Եւրոպացից և Առուսիացից օժտւած լինելով ձեռնարկող ոգով, գործնական ընդունակութիւններով և խոշոր կապիտալներով։ Ի պատիւ մեր վաճառական-կապիտալիստների ցիշենք, որ սոքա կարողացան օգտւել օտարների հետ ունեցած շփումից և իւրացրին մի յացնի չափով օտարների զործարանական ընդունակութիւնները և սովորութիւնները։

Նաւթի արդիւնաբերութեան զարգացման ժամանակը սկսւում է իսկապէս 1872 թւականից։ Մինչև յիշեալ թւականը Բագւից նաւթ տւող գրեթէ բոլոր տեղերը կազմում էին տէրութեան սեփականութիւնը։ Խսկ տէրութիւնը տալիս էր իւր այդ նաւթատեղերը կապալով մասնաւոր մարդկանց, որոնք նաւթ էին արդիւնաբերում այնքան, որքան նոքա կարող էին համեմատ այն ժամանակւայ տեխնիկացին և նիւթական միջոցներին։ Սակայն կապալաւութիւնը նոյն խսկ տէրութեանը անյարմար էր թւում և այս գործի արագընթաց ժաւալման և զարգացման դէմ խոչնդուաներ էր դնում։ Համոզւելով այս բանի մէջ, տէրութիւնը սկսեց ծախւէլ իւր նաւթատեղերը մասնաւոր մարդկանց։ 1872 թւականին տէրութիւնը ուներ 390 գետաւատին նաւթատեղեր։ Սոցա ծախւէլուց յետոց տէրութիւնը ստացաւ 2.279.099 ռուբլի, որ դեռ այն ժամանակ զարմանալի չէր թւում։

Երկրիս անուեսական առաջադիմութեան շահերը պահանջում էին, որ այսպիսի մի քայլ անւեր։ Խսկ թէ որքան տէրունական այս

քայլը բարերար ազգեցութիւն ունեցաւ նաւթի արդիւնաբերութեան զարգացման վրայ, այդ կապացուցեն թւերը:

Դեռ 1872 թւականին արդիւնաբերում էր մօտ 1.500.000 սլուդ հում նաւթի բազւի յայսնի նաւթառեղերում: Նոյն թւականներին նաւթի գործածութեան սովորութիւնը ժողովրդի մէջ զեռ նոր էր զարգանում և հետեւաբար երկրիս պահանջը այդ արդիւնքի համար մեծանում էր: Որովհետեւ շուկաներում նաւթի պահանջը առելանում էր, բազւից արդիւնագործողները սկսեցին զորա համեմատ ընդարձակել իրանց արդիւնաբերութիւնը, այնպէս որ վերջինս հասել էր 1873 թ. մինչ 3.951.375 սլուդի: Աւրեմն միայն մի տարում վերոցիշած նաւթի քանակութիւնը աւելի քան կրկնապատկւել էր:

Սակայն նաւթի արդիւնաբերութեան աւելանալը չընդհատ էց, այլ նա տարեցտարի յառաջ գնաց ահազին քայլերով և սուցաւ մի տեսլացին բնաւորութիւն, որ երկրիս համար մի նորութիւն էր: Հենց այս տեսլացին զործունելութեան ժամանակամիջոցում երեւան է զալիս բազւայ արդիւնագործողների համար մի գէպէք, որ սկզբում զեռ անհասկանալի էր թւում, բայց որ յետոյ հասկանալի դարձաւ այն բոլոր մարդկանց համար, որոնք լնդունակ են հասարակ տնտեսական երեցիթներ զիտելու և լմբունելու: Խօսքս այս հասարակ երեցիթի մասին է, որ միշտ ծագում է, երբոր մի որոշ արդիւնաբերութիւնը ժողովրդի պահանջներից անհամեմատ մեծ է: Նոյն բանը նկատելի էր և մեր նաւթի վերաբերութեամբ: Նաւթը շուկաներում մեծ քանակութիւնով զիտած լինելով՝ չէր գրանում իւր համար սպառման ճանապարհները բնական է, որ այս սպառմառով արդիւնքը պէտք է կորցնէր իւր նախկին գինը: Նաւթի մի պուդը, որ ծախտում էր 45 կուպէկով, ընկաւ յանկարծ մինչ 2 կոսէկի: Բայց նաւթի այդ տագնապը չէր կարող երկար տևել, որովհետեւ թէ երկրիս սպառելու ընդունակութիւնը և թէ արտասահմանի պահանջը նաւթի վերաբերմամբ շուտով սկսեցին դարձեալ աւելանալ: Լաւ հասկանալով նմանօրինակ առեւտրական հանգամանքների հետևանքները, բազւայ արդիւնաբերողները շարունակում էին նաւթի նորանոր ազբիւրները որոնել, որոնք իրօք տալիս էին արդիւնք ահազին քանակութիւնով: Որքան նոր ազբիւրները հարուստ և առատ էին, նոյնքան և նաւթառեղերի դները առհասարակ աւե-

լանում էին: Մի գեսեառին նաւթառեղը, որ արդեւ 1824—1875 թ.  
մօտաւորապէս 1000 բուրլի, գնահատում էր արդէն 1880 թ.  
մինչ 24.000 բուրլի:

Եթէ մենք կանգ առնենք 1888 թւականի վրայ, մենք կը տես-  
նենք, որ այս տարին արդիւնաբերում է հում նաւթ աւելի  
քան 190,000,000 պուդ: Հում նաւթից առաջած զանազան տե-  
սակների արդիւնքները հասնում էին նոյն 1888 թ. 50,240,143,  
պուդի, որից արտահանուում է 28.841.339 պուդ արտասահման,  
իսկ մնացած 21,398,804 պուդ գործ է ածում Անդրկովկասի  
և Ռուսիայի մէջ: Խոկապէս հաշուում էն, որ վերջին տարինե-  
րում մաքրած նաւթի  $\frac{2}{3}$  արտահանուում է զանազան երկիր-  
ներ, այն ինչ  $\frac{1}{3}$  սպառում էն Ռուսիան Կովկասի հետ: Այս բոլոր  
նաւթը արդիւնաբերուում է մի հրապարակի վրայ, որի տարածու-  
թիւնը պարունակում է  $2\frac{1}{2}$  միլիոն քարակուսի սաժէն: Երբոր  
մենք կարգում ենք այն  $\frac{1}{3}$  թիւը մաքրած նաւթի, որ սպառում  
է մի տարւայ մէջ Ռուսիան, մէր առջև մի խնդիր է յարուցւում:  
Բէք արգե՞օք Ռուսիան չէր կարող աւելի ևս սպառել: Զէ որ Ռու-  
սիայի 100 միլիոնաւոր ազգաքնակութիւնը մեծ սպահնչ պիտի ցոյց  
տար այս անգին արդիւնքի համար: Աչ ոք չի կարող հերքել, որ  
այդ պահանջը իրան զգացնել է տալիս խիստ կերպով. միայն թէ,  
այդ պահանջին բաւարարութիւնն տալու միջոցներ չը կան: Միջոց-  
ների պակասութիւնը արտայացուում է երկաթէ ճանապարհների  
սպակասութեան մէջ: Եթէ սոքա ամենուրեք Ռուսիացում շատանսա-  
ցին, այն ժամանակ նաւթի և այլ արդիւնքների սպառումն էլ կը շա-  
տանար, որովհետև այդ միջոցներով այդ արդիւնքը հեշտութեանը կը թա-  
փանցէր ժողովրդական ամեն տեսակ խաւերի գործածութեան մէջ:

Վերը յիշած նաւթի արդիւնաբերութիւնը 1872 մինչ 1888,  
ինչպէս տեսնում էք, բազմապատկում է: Աա, ի հարկէ, մի սպա-  
ցոյց է, որ երկիրը տնտեսապէս հարստացել է:

Հետաքրքիր է իմանալ՝ կան արգե՞օք մեր երկրում արդիւնա-  
բերութեան այլ ճիւղեր, որոնք մեզ օրաւուր զարդանալու նոյն-  
պիտի ապացույցներ տային ապացուցէին: Ի հարկէ կը գտնեն այդպիտի

ճիւղեր, որոնց զարգացումը սակայն գեռ ևս չի արած այնպիսի քաղցր, որպէս զի մենք կարողանանք վստահութեամբ, բացարձա՞լ սնդել թէ երկիրը անտեսավէս հարստացել է: Թէև միւս կողմից անհերքելի է, որ երկիրս արդիւնաբերութեան մի քանի, մանաւանդ զիւղատնտեսական բնաւորութիւն կրող, ճիւղերը՝ զանտելով արդիւնաբերութեան նպաստող պայմաններում, լաւ արդիւնքներ են տալիս և խոսուանում են ապագայում աւելի ևս զարգանալ: Ես ճիւղերի արդիւնաբերութեան բարձր աստիճաններին հասնելու համար հին և նահավետական աշխատանքի ձևերը բոլորովին աննպաստ են: Հարկաւոր են մշտկւած աշխատանք, մեքենայական արւեստի գործադրութիւն և վերջադէս կապիտալների կենտրոնացումն ցիշեալ ճիւղերի ծննդավայրերում: Միայն այս միջոցների գործադրութեամբ կարելի է հասնել ցանկացած նպատակին և յուսալ, որ երկրիս արդիւնաբերութեան ճիւղերի մօտիկ ապագան ապահոված կը լինի: Բայց և այնպէս այդ ճիւղերի ներկայ դրութիւնն էլ դրաւում է մեր ուշադրութիւնը և պահանջում է, որ մենք դոցա վրայ կանդ առնենք:

Մեզ թւում է, որ մեզ հետաքրքրող այդ ճիւղերի մէջ տէքի է ընկնում նաև ծխախոսը, որի պահանջը անկասկած աւելանում է:

Մինչեւ 1873 թ. ծխախոսի արդիւնաբերութիւնը գտնուում էր շատ անբաւարար դրութեան մէջ: 1873 թւականից նա սկսում է զարգանալ: Զարգացման գլխաւոր շարժառիթը պէտք է վերագրել մաքսին, որ դրւեց 1873 թ. Թիւրքիայից ներմուծւող ծխախոսի վրայ: Մաքսը վերցնուում էր 2 բուրլի մի պուդ ծխախոտից: Ի հարկէ սոսկ մաքսադրութիւնը չէր ունենալ սովասած հետեւանքը, եթէ երկրիս հողացին և կլիմացին բարեցածող պայմանները նպաստած չը լինէին: Մաքսադրութիւնը միայն մի միջոց էր ծխախոտի արագիւնաբերութիւնը երկրումն խրախուսելու: Նորհիւ այս օրէնսդրական միջոցի, սկսեցին մեզանում ցանել թրքական և ամերիկական ծխախոտի սերմերը, որոնք բաւականին լաւ արդիւնք տւին: Խակ շարունակ փորձերը, որ անւում էին մինչ 1877 թ. ցոյց տւին նմանապէս որ երկրում ծխախոտի արդիւնաբերութիւնը շատ շահաւէտ է որ և մեր ստացած արդիւնքը կարող է նոյն իսկ իւր

որպիսութեամբ մըցել ներմուծւող թրքական ծխախոտի հետ։ Սա մի իրողութիւն էր, որի առջև տէրութիւնը չէր կարող անտարբեր մնալ։ Տէրութիւնը շտապեց մաքսը գարձեալ բարձրացնել։ Այն 2 րուբլին, որ զբւում էր մի պուդ ներմուծւող ծխախոտի վրայ, բարձրացրեց տէրութիւնը մինչ 14 րուբլու։ Ահա մօտաւորապէս այն հանդամանքները, որոնց շորհիւ մեզանում սկսեցին 1877 թւից աւելի ընդարձակօրէն զբաղւել ծխախոտի արդիւնաբերութիւնով։

1877-ից մինչ 1884 թ. մեզ պակասում են ճշտագոյն վիճակագրական թւերը իմանալու թէ որ աստիճան յառաջ էր գնացել այդ ժամանակում ծխախոտի արգիւնաբերութիւնը։ Բայց մենք ունենք ճիշդ տեղեկութիւններ, որ վերաբերում են 1884—85 և 86 թւականներին։ Արևելեան Անդրկովկասի տնկարաններում մի դեսետինը տալիս էր 1884 թւին մօտ 67 պուդ ծխախոտ, իսկ 1886-ին նա տալիս էր արդէն 75—100 պուդ։ Համարեա թէ նման ֆակտերին մենք հանդիպում ենք արևելեան Անդրկովկասում։ Որպէս զի մենք մի կատարեալ պատկեր սուանանք երկրիս ծխախոտի արդիւնաբերութեան մասին, վերցնենք այդ նորատակի համար ամբողջութիւն պարունակող թւեր։

Ամբողջ Անդրկովկասում ծխախոտի տնկարանների թիւը հասնում էր 1884 թւին 9,449, որոնք պարունակում էին 1,659 դեսետին<sup>1)</sup>։ Եօթ տարուց յետոց այսինքն 1891 թւականին տնկարանների թիւը եղած է 17,418, պարունակելով 1.819 դեսետին տարածութիւն։ Տնկարանների քանակութեան և հողի տարածութեան հետ աւելանում է, ի հարկէ, և արգիւնաբերութիւնը։ Այսպէս 1884 թւականին սոսացւել էր 101,252 պուդ, իսկ 1891 թւականին սոսացւել էր 116,923 պուդ ծխախոտ։ Այդ ծխախոտի քանակութեան մեծ մասը արտահանում է առհասարակ Ռուսիա, որուեղից իբրև պատրաստի ապրանք (պապիրոսի ձեռով) մի յայտնի քանակութեամբ կրկին վերադառնում է մեզ մօտ ծախւելու համար։

<sup>1)</sup> Դեսետինը 2400 քառակուսի սաժէն տարածութիւնն է, ալսինքն մի տեղ որի լայնութիւնը 40 սաժէն է, երկարութիւնը՝ 60 սաժէն (մի սաժէնը=3 արշինի, իսկ արշինը=10/14 մետր, այսինքն 10 մետրը=14 արշինի)։

Մեր ծխախոտը շատ չնչին կերպով է արտահանելում արտասահման, որովհետեւ նա չի կարողանում բաւարարութիւն տալ արտասահմանցիների ճաշակին և պահանջներին։ Արտասահմանեան շուկաները պահանջում են մեզանից ծխախոտի բարձր և թանկ սորտերը, որ մենք չենք կարողանում արդիւնաբերել, ոչ այն պատճառով, որ հողացին պայմանները գորան չեն աջակցում, այլ սուկնորա համար, որ մեր արդիւնագործողները չեն կատարելագործում ծխախոտի արդիւնաբերութեան արւեստի մէջ։

Անդրկովկասի նահանգներից՝ Քութայիսինը և Թիֆլիսինը արդիւնաբերում են ծխախոտի բարձր սորտերը։ Առաջինը տւել էր 1891 թ. 54, 525 պուդ ծխախոտ բարձր տեսակի, երկրորդ նահանգը նոյն թւականին առացել էր 26,044 պուդ բարձր սորտի։ Անդրկովկասի մնացած աեղերում առացւել է ծխախոտ ցածր սորտի։ Մի քանի փորձերից յետոյ համոզւել են, որ կարելի է պատրաստել ծխախոտ բարձր սորտի Անդրկովկասի շատ աեղերում։ Արդ, եթէ հնարաւորութիւն կայ այս հետեւանքին հասնելու, ի՞նչու ուրեմն չեն զիմում ծխախոտի ընտիր սորտերի արդիւնաբերութեանը։ Յոլոր խընդիրը կախւած է երեւում արդիւնաբերողների խելամութիւնից և ցանկութիւնից՝ երկրիս արդիւնաբերութեան շահերը լուրջ կերպով պաշտպանելու։ Եւ մենք այդ շահերը պաշտպանեած կը տեսնենք, երբոր մեր արդիւնաբերողները կ'աշխատեն ուսումնասիրել ծխախոտի արդիւնաբերութեան խելացի եղանակները և ձեւերը՝ թէ հումնիւթառատօրէն սոսնալու։ և թէ ապրանք լաւ պատրաստելու նպատակով։ Միայն այս դէպքում կարելի է յուսալ, որ արդիւնքը կ'արտահանելի ուրիշ երկիրներ, որովհետեւ միայն այդ գէպքում բաւարարութիւն տւած կը լինենք օտարների պահանջներին։

---

Մի այլ գիւղատնտեսական արդիւնք, որ Անդրկովկասում հարստութեան աղբեւր է հանդիսանում, դա գինին է։ Յոյս կայ, որ մեր գինեղործութիւնը բարեփոխելով իւր արդիւնաբերութեան պայմանները՝ կը ստեղծի մի մշտական կապ Խուսիացի և արտասահմանեան շուկաների հետ։ Անդրկովկասի գինին անկասկած ընդունակ է նշանաւոր տեղ բռնելու այն արտահանւելիք արդիւնքների շարքում, որոնք

մեզ խոստանում են ամրացնել երկրիս առևետրական յարաբերութիւնները Ռուսիացի և ուրիշ երկրների հետ։ Յայտնի է, որ Կովկասի գինին արտահանում է Ռուսիա արգեն ամեն տարի, իսկ արտասահման գեռ ևս միայն բայց ուղղվեամբ, թէև Կովկասի գինին մի յայտնի համբաւ է վայելու ք օտար երկրներում։

Խաղողի այզիները պարունակում են Անդրկովկասում 72,296 գետահանին, որից ստացւում է տարեկան 10,960,000 վեդրօ գինի։ Ամենից շատ գինի արդիւնաբերում է Քութայիսի նահանգը, ուր տարեկան քանակութիւնը հասնում է 4,900,000 վեդրօ։ Յետոյ հերթը գալիս է Թիֆլիսի նահանգին, որ տալիս է մի տարւայ մէջ մօտ 3,700,000 վեդրօ գինի։ Երևանեան նահանգը արդիւնաբերում է մօտ 1,000,000 վեդրօ գինի։ Վերջապէ Գանձակի և Տագւայ նահանգներից իւրաքանչիւրը տալիս է տարեկան մօտաւորապէս 500,000 վեդրօ։

Տեղիս և օտար մասնագէտ-գինեգործները քանիցս անգամ հետազոտել են Կովկասի գինիները և սոցա արդիւնաբերութեան պայմանները և եկել են այն եղբակացութեան, որ Կովկասի գինիները օժտւած են լաւ յատկութիւններով և կարող են Եւրոպա արտահանել, եթէ նոքա եւրոպական ճաշակի համեմատ պատրաստենա Ասկայն Կովկասի գինեգործութիւնը գետ անոյն է այսպիսի պահանջին բաւարարութիւն տալու և չի էլ կարող շուտով այդ նստատիկին հասնել, քանի որ նա միջնոցներ չունի դորան հարկաւոր պատրաստութեամբ պաշարելու։ Հարկաւոր են մեծամեծ նկուղներ, գինեգործական կատարելագործւած մեքենաներ, լաբորատորիաներ գինիներ քննելու համար և այլ պարագաներ։ Այս տեսակ ձեռնարկութիւնները ենթադրում են կապիտալ և գիտութիւն։ Այս վերջին ժամանակներում դուք կը հանդիպէք գինեգործական զիտելիքներով պաշարւած ինտելիհենո մասնագէտներին։ Բայց սոցա գիտելիքները չեն գտնում գործադրութիւն։ Մեր աւանդապահ աշգետէր-գինեգործները չունին ոչ կապիտալ, ոչ էլ ձեռնարկող ողի և համարձակութիւն նորագոյն խելացի սկզբունքներով գինեգործութեամբ պարապելու, մասնակից անելով այս բանին ինտել-

<sup>1)</sup> Մի վեդրօ պարունակում է 16 լիչ

լիգենտ պատրաստի ոյժերը։ Միեւնոյն ժամանակ յացտնի է, որ գաւառներում վարկացին պայմանները դունուում են վատթար դրութեան մէջ և կրում են վաշխառուական բնաւորութիւն։ Ակներև է, որ այսպիսի հանգամանքներում զիւղատնտեսական արդիւնաբերութիւնը չի յառաջադիմիլ ցանկացած ուղղութեամբ։ Արդէն հասել է այն ժամանակը, երբ ցրւած և առանձնացած ուժերով գործելը մեծ մասամբ անպառուղ է մնում տնտեսական ասպարէզներում։ Երկրիս տնտեսական շահերը պահանջում են, որ մենք գործենք հաւաքական-ընկերական ոյժերով։ Եթէ մեր գինեդործ արդիւնաբերողները միացնէին իրանց կաղիտաները և այս ձեռով սահմանէին առևտրական և արդիւնաբերական ընկերութիւններ, այն ժամանակ սոքա կը կարողանային մեծ համարձակութեամբ և վստահութեամբ դիմել նորանոր ձեռնարկութիւններին։ Գործունէութեան այս ձեռով արդիւնաբերողները ձեռք կը բերեն լայն վարկացին ընդունակութիւններ՝ աջակցելով միևնոյն ժամանակ նոր վարկացին հաստատութիւնների հիմնադրութեանը։ Եւ այսպէս մեր գինեդործները ձեռք բերելով մի ապահով դիրք՝ կը փրկւեն այն վաշխառուական վարկից, որ նրանց վրաց իշխում է։

---

Անդրկովկասի որ կողմն էլ գնաք, գուք կը հանդիպէք հարստութեան առաստ աղքեհւրներին, որոնց շահագործութիւնը դառնուում է հետզհետէ օտարների սեպհականութիւնը։ Վերցնենք, ի միջի այլոց, պատուատակ (СОЛОДКОВЫЙ քօրեն), որի գոյութեան մասին մեր երկրացիները գաղափար անգամ չ'ունէին։ Օտար վաճառականները որոնելով մեր երկրում այս արմատի ծննդավայրը՝ գտան սորան և սկսեցին առանց տատանման գործարաններ բանալ։ Պատուատակի երեւան գալու պատութիւնը երկար չէ 1878 թւին ցոյները եկան առաջին անգամ Գանձակի նահանգը և միսելով 100 հազար բուրլուց աւելի՝ հիմնեցին մի գործարան պատուատակի արմատը հաւաքելու և արտասահման ուղարկելու։ Սոցա գործը այնքան յաջողակ և շահաւէտ էր, որ սա չէր կարող չը գրաւել ուրիշ եւրոպական կապիտալիստների ուշագրութիւնը։ Եկան մեզ մօտ նոյնպէս անդլիացիք և յատկացրին խոշոր գումարներ յիշեալ արմատի արդիւնաբե-

բութեանը։ Մի երկու տարի գործելուց յետոց օտար գործարանատէրերը ստացան մեծամեծ օգուտներ, որոնց համար գրաւական են ստորև բերած թւերը։

Պատուտակ ստանալու տեղերն են դվասւորապէս Բագւայ և Դանձակի նահանգի մի քանի գաւառները։ Այս տեղերում վերը յիշած երկու գործարանատէրերը հաւաքել էին 1889 թ. մօտ 1.000.000 պուդ հումանարան արմատ։ Մի տարուց յետոց 1890 թ. սոյա արդիւնաբերութիւնը հասել էր 2.200.500 պուդի, որ ասել է թէ աւելի քան կրինապատկւել էր։ Միայն յոյների գործարանը արտահանել էր 1889 թ. 240,000 պուդ, 1890 թ.—250,000 պուդ։ Իսկ 1887 թ. մինչ 1890, այսինքն չորս տարւայ ժամանակում նոյն գործարանը արտահանել էր 730,000 պուդ հումանարան այսուեղ, որ արդիւնքը ուղարկում է Եւրոպա չորացնելուց յետոց։ Եւրոպայում հանում են պատուտափից մի տեսակ հեղուկ, որ գործ է ածւում՝ զեղեր և նամանաւանդ սև գարեջուր պատրաստելու համար։ Զը մոռանաք, որ արդիւնքը չորանալուց յետոց՝ կորցնում է իւր նախկին կշիռ։ Հետեւաբար այն միլիոնաւոր ստացած արդիւնքի մի մասը անցացնանում է գործարանատէրերի համար ապարդիւն կերպով։ Այսու ամենայնիւ օդուոր այնքան մեծ է, որ այս կորուսոր աննշան է երեսում։ Արդ եթէ այս արդիւնքի արդիւնաբերութեան օգուտները համանում են օտարներին, մեր առջև խնդիր է ծագում թէ որ աստիճան օտարների գործունէութիւնը նպաստաւոր է մեր երկրի տնտեսական բարօրութեանը։ Թէև մեր աշխատանքի և հարատութեան մի մասը կորչում է երկրին համար, բայց և այնպէս չի կարելի ուրանալ, որ մենք անման չենք օտարների ստացած օգուտներին։ Տարեկան արտահանումն միայն չորացրած արմատի համանում է ընդհանրապէս 300,000 պուդի, որից իւրաքանչիւրը արժենում է գործարանատէրերին 70 կոտէկ մինչև վերջնական արտահանելը։ Ուրեմն 200,000 բուբուց աւելի մնում է մեր երկրին իբրև օգուտ։

Այժմս միևնոյն գործարանատէրերը սկսել են պատրաստութիւն անել՝ հուման նիւթից իսկական հեղուկ ստանալու, աչքի առաջ ունենալով թէ աշխատանքի աժանութիւնը մեր երկրի

ծննդավայրերում և թէ պատրաստի առղքանքի վաճառքան յարմարութիւնները արտասահմանեան շուկաներում:

Բացի յիշածներից մենք ունենք մեր երկրում արդիւնաբերութեան այլ ճիւղեր, որոնց արդիւնքները, կարծում ենք, կարող են մօտիկ ուշագրութեան արժանանալ տիեզերական շուկաներում: Սոցալնումը մի աղաղակող ցանկութիւն է: Աերցրէք օրինակ բուրդը որի մասին մենք չենք կարող շատ տարածւել, որովհեան դորա մասին գետ ևս մեզ նիւթեր պակասում են: Ում չէ յաջոնի, որ բուրդը վազուց ի վեր արտահանուում է Անդրկովկասից: Սակայն բուրդի առեւտրի նահապետական ձևերը փչացնում են մասամբ ապրանքի յատկութիւնը և մասամբ էլ խանդարում են առեւտրի զարգացմանը: Անդրկովկասում մօտաւորապէս 5,000,000 զլուխ ոչխար կայ: Եթէ ամեն մի ոչխարը միջին թուով 4 ֆունա բուրդ տարւայ մէջ, մենք կը ստանանք 20,000,000 ֆունս կամ 500,000 պուդ: Մի պուդ անլւայ բուրդը արժէ 5 մինչ 6 բուրլի, այնպէս որ երկիրը կը տար մի տարւայ մէջ 3,000,000 բուրլու արդիւնքը Ունենալով բնութիւնից տւած արածելու արօտառեղեր՝ ոչխարապահութիւնը մեզանում տակաւին չի զարգանում: Սա չի զարգանում, որովհետև մենք չունինք ոչ պատրաստի մարդիկ և ոչ էլ զորան հարկաւոր միջոցներ աջապիսի շահաւեհ գործին նւիրւելու:

Գալով պղնձին, որ արդէն վազուց տեղ է բռնում Անդրկովկասի հանքային արդիւնքների շարքում, պէտք է խոստավանւենք, որ մեր տեղացի կապիտալիստները գետ մի նշմարելի դեր չեն կատարած պղնձի արդիւնաբերութեան զարգացման համար: Այն ինչ որ կատարում է այս վերաբերութեամբ, դորա համար էլ պէտք է շնորհապարս լինել զիստաւորապէս եւրոպացիների աշխատանքին (գերմանացի եղբացներ Սիմենս, Գետաբեկում, Գանձակի նահանգում): 1884 թւին արդիւնահանւած էր մեզանում 87,545 պուդ պղնձ,

իսկ 1887 թ. 112.859 պուդ:

Բնութիւնը, կրկնում ենք, օժտել է մեզ հարստութիւններով, որոնցից մենք օգտական չենք. հէնց մասնանիշ անենք երկրիս

քազմառեսակ պատուղների վրաց։ Անդրկովկասի արևելեան և արեմոտեան կողմերում գանւում են անհուն տարածութեամբ այզիներ, որոնք տալիս են շատ լաւ պատուղներ։ Մասածում են արգեջք մերերկրացիները, որոնք իբրև թէ գործեր են որոնում և չեն գտնում, չոր և սկահւած մրգեր պատրաստելու գործարաններ բանալ։ Օրինակ Ամերիկայում 3000 բնակիչ ունեցող տեղեր կան, որոնք մրգեր են պատրաստում տասնեակ միլիոն ֆրանկ արժողութեամբ։ Մեզանում գիւղանուեական ընկերութեան նախաձեռնութեամբ փորձեր արւեցին Թիֆլիսի այգեբանական ուսումնարանում չոր մրգեր պատրաստելու և այս փորձերը յաջողութիւն ունեցան։<sup>1)</sup>

Ով որ ձեւնարկում է մի նոր արգիւնաբերութեան, նու պէտք է ձիսի իւր կապիտալը և աշխատանքը լրջութեամբ գործ գնելու այն սկզբունքների հիման վրաց, որ գիտութիւնը և փորձը մշակել են։ Մեր անհամբեր վաճառական կապիտալիստները ընդհակառակը նայում են իւրաքանչիւր գործի վրաց վաշխառուական աչքերով։ Այսա կիրքը՝ շուտով հարստանալով՝ մի տեսակ մոլութիւն է դարձել, որ անպայման կերպով խանգարում է լուրջ և օրինաւոր գործերի հաստատելուն և միւս կողմից վաճառական մարդկանց փոխադարձ հաւատոի զարգացման և ծաւալմանը։ Մեծ մասամբ մեզանում փոխադարձ հաւատոր բոլորովին բացակայում է, որ յետաձգում է նորանոր գործերի հաստատութիւնը։ Մենք կարծում ենք, որ հնարք կայ ներկայ հանգամանքների ծանրութիւնից մի օր ազատելու։ Մենք կը համենք այդ օրին միայն այն ժամանակ, երբ որ մենք սփռւած կը տեսնենք Անդրկովկասեան զանազան տեղերում տարրական և միջնակարգ տեխնիկական, գիւղանուեսական և առեւտրական ուսումնարաններ, երբոր սոքա մեր ժողովրդի արդինաբերական ոյժերը կը բազմացնեն, տալով մեզ մի նոր պատրաստի սերունդ երկրիս անտեսական գործունէութեան համար։ Ի հարկե հողային արդիւնաբերական ոյժերը և կապիտալը առաջ-

<sup>1)</sup> Չոր մրգերի մասին տես «Մուրճ» 1889 թ. № 11, լողւած Հ. Աղոմնեանի։

նակարդ գործոններ են մի երկրի տնտեսական բարօրութեան համար։  
Բայց քանի որ ժողովրդի արդինաբերական ոյժերը չեն աւելանալ,  
քանի որ, կարծ ասենք, զիտութիւնով պաշարւած մարդիկ չեն շա-  
տանալ, մենք անընդունակ կը լինենք հողի ոյժերից օդուելու և մեր  
ունեցած կապիտալները գործադրելու՝ ժամանակակից պահանջների  
համեմատ, և մենք կը մնանք միշտ կախւած օտար կապիտալիսնե-  
րից, որոնք մեզ վրայ իշխում են, որովհետեւ նոքա մեզ առնեն բա-  
նով գերազանցում են։

# ՄԻԶԱՏԱԿԵՐ ԲՈՅՍԵՐԸ

ԱՊՄՈՒՀԵԼ, ԲԱԼԱԴՆԵԱՆԻ

Ամենքը գիտեն, որ բոլսերը և անասունները՝ թէս կենդանի օրգանիզմներ են և ունեն շատ նմանութիւն իրանց կեանքի գլխաւոր մոմենտներում, բայց միա կողմից կան մի քանի որոշ գծեր, որոնցով բոլսերը զանազանում են անասուններից։ Ամենանշանաւորն է համարւում գիտութեան մէջ այն տարրերութիւնը, որը նկատում է անասունների և բուսերի կերակրւելու մէջ։

Անասունների համար հարկաւոր են միտ, կաթ, օսլաչ (քրախմալ), շաքար, խոզ, մի խօսքով հարկաւոր են բարդ քիմիական կազմութիւն ունեցող նիւթեր, բոլսերը՝ ընդհակառակը՝ կերակրւում են հասարակ հանքալին նիւթերուն։

Տերենների օգնութեամբ բոլսերը կլանում են օդի մէջ գտնող ածխաթթւատը, խոզ մնացած կարեսոր հանքալին նիւթերը թափանցում են ջրի հետ բոլսերի արմատների մէջ գետնիցը։

Եթէ այդ հանքալին նիւթերի տեղը բոլսերին տանք միտ, օսլաչ կամ կաթ, բոլսերը ոչ միայն չեն զարդանալ այլ և շուտով կը մեռնեն սովորութիւնից։

Այս ընդհանուր օրէնք է, որը ընդունում են բոլոր գիտնականները։ Առաջ բնագիտները համոզւած էին, որ այդ օրէնքը անողական է, չունի բայցառութիւնից։

Հասկանալի է, թէ ինչ մած զարմանք պիտի չարուցանէր ուսումնականները կանների ըլջանում Դարւինի այն զեկուցումը, որ արւեց 1874 թվին և որի մէջ նա ասկացուցել է, որ կան անասունների պէս կերակրւող բոլսեր։

Դարւինի ասելով այդ բոլոները կերակրւում են մսով, ձուով, այդ դեռ բաւական չէ նոքա որսում են զանազան միջատներ և ուտում են նրանց։ Հենց այդ պատճառով նրանք անւանեցան միջատակեր բոլսեր։

Այժմ գտնւած են մօտ 30 միջատակեր բոլսեր, որոնցից մի քանիտ հետ ցանկանում եմ ծանօթացնել ընթերցողին։

\*  
\* \*

Ամերիկացում ապրում է մի բոս, որին դիտնականները տևել են Dionaea muscipula (ճանձ ուստղ Դիօնանէա) անունը. Երբ առաջին անդամ տեսնում էք այդ բոսը, նա սկզբում ոչնչով չի դրաւում ձեր ուշապրո-թիւնը. դա մի փոքրիկ կանաչ բոս է, որի տերմեները հաւաքւած միասին բոլորաձև կպած են բունի (օւենու) ներքին մասում Բայց եթէ մենք ուշագրութեամբ զիտենք Dionaea muscipula'ի տերմեները, անշուշտ կը տևանենք, որ վերջինները տարբերաւում են մեզ ծանօթ բոլսերի տե-րմեներից:

Առհասարակ պիտի ասեմ, որ միջատակեր բոլսերը որառամ են մի-ջատներ իրանց տերմեների օգնութեամբ, այդ պատճառով նոցա տերմեները չարմարեցրած են այդ գործողութեան համար.

Ճանձակեր Դիօնէալի տերմեր բազկացած է երկու մասերից, ոլոնք միախում են իրար հետ աճնպէս, որ նրանց մէջ կազմաւում է անկիւն. Ազ-պիտով այդ բոսի տերմեր տափարակ չէ, այլ իւր ձեռով մի փոքր նմանում է մեր ձեռքերին այն գրութեան մէջ, երբ մենք միացնելով երկու ձեռ-քերը ցանկանում ենք նրանցով ջուր վերցնել մի որ և է ամանից:

Տերեւի ներքին մակերեսովիթը ունի զարմանալի զգացնութիւն, բաւա-կան է մի փոքր զրդուել նրան, որ տերմեր երկու մասերը շարժւեն, մօտե-նան իրար և ամուռ կազին մէկը միւսին:

Նթէ այդ բոսի տերեւի վերաէ զցէք մի որ և է անմարակի բան, օրինակ ապակիի կառոր, քար, տերմեր երկու մասերը կը կազմն իրար՝ ամուռ սեղմելով իրանց մէջ ապակիի կամ քարի կառորը. Բայց չը կարո-ղանալով մարսել, օգտեւել քարիցը կամ ապակիիցը՝ տերմեր շուստով սկսում է բացւել.

Ազապէս է պատահում, երբ տերեւի վերաէ ընկնում է մի որ և է մի-ջատ. այս գէպքում տերմեր փակւելով էլ շուստ չէ բացւում. Միջատը մնում է սեղմած տերմեր երկու մասերի մէջ. «Երբեմն նոքա (տերեւի երկու մա-սերը) աճնպիսի ուժով հուսպ են տալիս բռնւած միջատին, որ նրա կեր-պարանքը պարզ գծագրուամ է փակւած տերմերի դրասի կողմից» <sup>1)</sup>:

Տերեւ փակւած մնում է մի քանի օր. այդ ժամանակի ընթացքում նա ծծում է միջատից բոլոր հիւթերը, որոնք կարող են մարտել՝ թողնե-լով միան անպէտք մասերը. Եւ իրաւ, երբ տերմեր բացւում է, նրա մէջ մնացած են լինում միան միջատի թեսերը, չշափովները...

Ճանձակեր Դիօնէան կերակրուամ է ոչ թէ միան միջատներով, այլ և մոտիւ եփած ձըսով. Այս բանը ապացուցեց Դարւինը փորձերով:

Ազգպիտով կասկած չը կաց որ Dionaea muscipula'ն կերակրուամ անսպէս՝ ինչպէս մի որ և է կենդանի,

Բայց մեր զարմանքը կրկնապատկում է, երբ լսում ենք այս հարցին վերաբերեալ մանրամասնութիւնները։ Բանը նրանում է, որ միաը, ձուն և միւս նողնանման նիւթերը մարտում են կենդանիների ստամոքսում շնորհիւ մի հեղուկի, որը, զուրա թափակելով ստամոքսի պատերից, խառնում է կերակրի հետ։ Ազդ հեղուկը պ ե պսին են անւանում։ Երբ մի որ և է պատճառով պեսպինի քանակութիւնը պակասում է, զրա համեմատ թուլանում է և կենդանիների մարտողութիւնը։

Ուրեմն կենդանիների օրգանիզմը չի կարող մարտել նրան, մինչև որ նա չը փոփոխվի պեսպինի ազդեցութեան տակ։

Խակ միջատակեր բոցմերը, ունին արդեօք նրանք նոյնպէս մի որ և է հեղուկ իրանց մարմնի մէջ կերակուրը մարաեցնելու համար։ Դարպինի հետազոտութիւնները ցուց տվին, որ վերովիշեալ բուսերը այս բանում էլ կատարեալ նմանութիւն ունին կենդանիների հետ։ Եթե բուսը բռնում է մի որ և է միջատ և փակում նրան տերեի մէջ, վերջինից սկսում է զուրա թափեւի մի հեղուկ, որի ազդեցութեան տակ փոփոխուում և մարտում է միջատի մարմինը։ Ազդ հեղուկը իւր չատկութիւններով ահազին նմանութիւն ունի վերովիշեալ պեսպինի հետ։

Ուրեմն Dionaea muscicula'ի տերերը ոչ միան միջատներ բռնելու գործիք է, այլ և մի օրգան է, որի մէջ կատարում է բուսի կերակրի մարտողութիւնը։

Պիտուրտուրդի շրջակալքում գտնուում է մեծ քանակութեամբ մի ուրիշ միջատակեր բուս—Drosera rotundifolia, որի տերմները ունին չ չանակածեն տեսք և ծածկւած են երկար թելք նման աւելւածներով (սրսածուկ)։ Մի տերեի վերաէ լինում են մօտաւրապէս 200 ալդ տեսակ աւելւածքներ։ Ամեն մի աւելւածք վերջանում է զնդակածեն ծալուի, որից հասում է մի ինչ որ թանձր, կպչող հեղուկ։

Հենց որ մի անզգուշ միջատ նստում է Drosera'ի տերեի վերաէ, նա խոկուն կպչում է թանձր հեղուկին։ Քանի շատ ջանք է գործում միջատը թակարդից աղատուելու համար, անընքան աւելի ու աւելի է խրում հեղուկի մէջ։ Խակ տերեի շշափուկները (աղդպէս են անւանում վերովիշեալ աւելւածքները), զրգուելով միջատի անհնաղանդութիւնից, սկսում են աւելի ու աւելի շատ զուրս թափեւ կպչող հեղուկը։ Ազդ գեռ բաւական չէ, միջատից հեռու գտնուզ շշափուկներն էլ շտառվ սկսում են կռանալ, թեքուել դէպի մըջատը, որը շրջապատուում է շշափուկների զնդակածեն գլուխներով և թաւալւում նրանցից հոսող թանձր հեղուկի մէջ։

Ծծելով միջատի մարմինից բոլոր հիւթերը և թողնելով անպէտք մասերը, շշափուկները նորից լաւ ձրացնում են իրանց զլուխներ, ու ուզուում են՝ սպասնելով նոր որսի։

Քննելով շշափուկներից հոսող հեղուկը դարւինը տեսաւ, որ նա անընքան նման է կենդանիների պեսպինին, որ դժւարութեամբ է ջոկւում

վերջինից: Ավտոմազ Տրօսերա'ի հեղուկը երկու նշանակութիւն ունի, նա թէ միջոց է միջատներ որսալու համար, և թէ ծառալում է որպէս պեղսին, վաստիլով և զիւրամարտութիւն անելով միջատների մարմինը:

Աւելի ևս տարօրինակ է կազմւած „Nepenthes destillatoria“ կոչւած միջատակեր բուսի տերեք: Մարդ մնում է ասլշած տեսնելով այդ բուսի նկարը (Nepenthes'ը մեր կողմերի բուս չէ): Տերեների տեղ բուսից կազմ են բազմաթիւ սափորներ (ցրուցք). բանից դուրս է զալիս, որ այդ սափորները Nepenthes'ի տերեներն են, ուրիշ ոչինչ: Միան այդ տերեները անպէս փոխւել են, որ նրանց դժւար է ճանաչել: Սափորի վերեին կազմ է մը սուանձին տևելածք, որը ծառալում է իբրև ծածկով (երապեկ): Կողսկելով սափորի մուտքը կարիք եղած ժամանակը:

Այդ նկարագրութիւնից հեշտ է իմանալ թէ ինչ միջոց է զործ դնում Nepenthes-ը միջատներ բռնելու ժամանակ. սափորանման տերեները ծառալում են իբրև թակարգներ միջատների համար: Երբ սափորի բնրանքը բաց է, միջատները հեշտութեամբ մտնում են նրա մէջ, և միանգամ մոռնելուց իւսով էլ ազատուելու հնար չը կատ նրանց համար: Այն զլունականները, որոնք ուստամենալիքնեն ան այդ բուսը, սպատմում են, որ սափորի մէջ միջատները մտնում են մնուած միջատներ:

Վերջինների մարմինը մարսելու համար Nepenthes նոյնպէս արտադրում է մի հեղուկ, որը անքան նման է կենդանիների պեղսինին, որ տուցել է «բուսական պեղսինի» անունը:

Ես կը բաւականանամ այդ մը քանի միջատակեր բուսերի նկարագրութիւնով, որովհեած մնացածները նմանում են նրանց թէ իրանց տերեներով, և թէ միջատներ որսալու ու նրանցով կերպարուելու միջոցներով:

## ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈՒԱՆ

ՑԵ 1. Ի Ք Ս Կ

Զեռնարկելով ուստմասսիրելու նատուրալիստ բոմանը, մենք կանգ ենք առնում շփոթւած։ Այս զործը բարձր չէ արգեօք մեր ոյժերից։ Ահա քանի ամիսներ է, ինչ քրքրում եմ ծանօթութիւններիս կոյտերը, դասաւորում եմ նրանց, լրացնում նկատածս թերութիւնները... Բայց բաւական է արդեօք այսքանը, հասկացել եմ արգեօք նատուրալիստ գործոցի վեհ դրականական ուսմունքը, ըմբռնել եմ արգեօք նրա բազմութիւ թերութիւնները?

Նատուրալիստ գործոցը մի վիթխարի շենք է, որը կանգնեցրած է զարիս դրական հսկաների ուսերին։ – Բալզակի, Ֆլորերի, Գոնկուրների և Չոլաի։ Մի ահագին սանդուխու բարձրացնում է մեզ տասնութերորդ զարի կեղծ-դասական գրականութիւնից մինչեւ իրական պալատի շեմքը, անցնելով բոմանտիսմի վրա։

Աքանչանում ենք և միւնոցն ժամանակ շփոթւում մօտենալով այս տիտաննեան գործին, որի ահուելի մեծութեան առաջ ընկճուում է մարդուս գտասհութիւնը։

Այս բազմայարկանի վիթխարի կառուցւածքը իւր ահագին աշտարակներով, որնց գագաթը ճեղքում է ամպերը, ծածկում է մեր աչքերից դարիս հորիզոնը իւր լայնանիստ ակառաժեաց պատերով, իւր հսկայական սիւներով և կամարներով, կարծես, դարերի աւելիչ ողուն արհամարհել է ուղում նա։ Նրա զերբնական ճարտարապեսները, կարծես, անմահութեան աշտարակներ էին կամենում։ կանգնեցնել։

Եւ այս վեհ շենքը ներքեից վերև քննելիս, մենք նկատում՝

Ենք, որ յարկից-յարկ ճարտարապետութիւնը նրբանում է, կառարելագործում:

Մինչդեռ ներքին յարկում գլխաւոր ճարտարապետական գծերի խառնուրդը ցոյց է տալիս, որ ճարտարապետը գեռ, կարծես, տառանման մէջ էր իւր շինւածքի ստիլը որոշելու համար, մինչդեռ այստեղ շինութեան նիւթերը անփառութիւնով են գործ գրւած—ապառաժի բեկորները մարմարինի և զրանիտի կողքին, —վերին յարկերում հետզհետէ կառուցւածքը աւելի ներգաշնականում է, ստիլը պարզապէս հաստատում է, նիւթերը միաձևանում են, քանդակները ու զարդարանքները աւելի ճոխանում և աւելի բնորոշում: Ընդհանուր շէնքը աւելի շքեղանում ու նրբանում է:

Խոկ ներսը... Այս մի լաբեւրինթոս է, որուեղ եռում է իսկական կեանքը, որտեղ յանկարծ բացւում է մեր առաջ մարդուս անդադար գործունէութեան, նրա տանջանկների ու երջանկութեան, նրա տառապանքների, քրանքի և արիւնի տեսարանը: Մարդը, իսկական շոշափելի մարդը, մարդը ամեն դասակարգի, թագտորից մինչև մուրացկանը, մարդը իւր ոսկորներով ու մկաններով, իւր հինգ զգացարանքներով և ուղեղով, իւր աստւածաշին ու դժոխացին կրքերով, իւր ասաքինի ու գարշելի գործերով,—մի ապշեցնող, թռվիչ խլառումն, կրքերի յաւիտենական ընդհարումն, կեանքի կուի մշտնջենական տագնապը!...

---

Մեր գլխաւոր նպատակն է ուսումնասիրել այստեղ Էմիլ Զոլաի գործը: Սակայն նրան լաւ հասկանալու ու գնահատելու համար անհրաժեշտ է մի ակնարկ զցել Բալզակի, Ֆոնկուրների և ուրիշների գործերի վրա, որովհետեւ այս վերջինների ջանքով է հիմնւել ու զարգացել նասուրալիստ զպրոցը, և Զոլան ինքը այս մեծ հեղինակներին իւր ուսուցիչներն է անւանում:

Երբ Զոլան զբականական ասպարէզ մտաւ, նասուրալիստ շէնքը արդէն բարձրացրել էր իւր հսկայական գլուխը դէպի երկինք և իւր յաղթական թերի տակ ջախջախում էր բռնանալիսի անհիմն պալսուը:

Բալզակից սկսած մինչև Զոլան իւրաքանչիւր նասուրալիստ վի-

պասան իրանից մի նոր կատարելազործութիւն է մոյքել բոմանի մէջ, նրանցից ամեն մէկը մի փառաւոր տեղ է բռնում այժմեան րոմանի պատմութեան մէջ։ Մենք կ'աշխատենք ցոյց տալ իւրաքանչիւրի խաղացած գերը։

Այսպէս մենք կը պատմենք, թէ ինչպէս հիմնւեց նասուբալլաս դպրոցը, ինչ փոփոխութիւնների ենթարկւեց նրա ուսմունքը, որպէս զի հասկանալի լինի Չոլաի գործը։

Մենք կամենում ենք իսկոյն և եթ զգուշացնել «Մուրճ»-ի ընթերցողին, որ առ այժմ մեր նարատամկն է մի ամփոփ և, մեր հասկացողութեան համեմատ, ճիշտ տեղեկութիւն տալ նասուբալլաս բոմանի մասին։

Մենք չենք գնահատում, այլ միայն մեկնում ենք, վերապահելով մեր կարծիքը դրական բոմանի արժանաւորութիւնների և պահասութիւնների մասին այն դէպքին, երբ ձեռ կ'առնենք «Հոգեբանական դպրոցի» պատմութիւնը։

### ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈՆ ԵՒ ԲԱԼԶԱԿԻ

Վիկտոր Հիւգօն իրրե բոմանտիոմի հայրը, — նրա ուսմունքը, նրա ապրեցութիւնը մեր դարի զրականութեան վրա, — Բալզակը, — նրա հակեացքը բոմանտիոմի վրա, — Միջավագրի (օրեда, milieu) ուսումնասիրութիւնը, — Բալզակի զլատառը զործերը, — «Ակեանքի Նկարագրեր», — Բալզակ և Շեքսպիր, — Արքակ Լիր և Խօսեն Գրանդէ, — Ընդհանուր ակնարկ Բալզակի գործունեութեան վրա։

La passion, c'est l'excès,  
C'est le mal.

Balzac.

Տամնիններորդ դարի շէմքին մի հակայ է կանդնած, որին մանկութիւնից վիճակւած էր թագաւորել մեր դարի զրականական աշխարում։ Նրա զօրեղ շունչը պէտք է անցնէր մի շարք սերունդների վրայով մինչև մեր ժամանակները։ Անասնա Փանտազիա, կախարդիչ, յափշուակող լիզու — ահա այն անդիմադրելի զէնքերը, որնցով Վիկտոր Հիւգօն մեր դարի առաջին կիսի զրական ասուածը դարձաւ։ Այս ենանդ անդ էր լուսեղին պասկը ճակատին։ Փսանհինդ տարեկան հասակուց նա ժամանակակից գրակա-

նութեան գլուխ անցաւ և հիմնեց բոմանտիկ դպրոցը։ Այս մի արտասովոր ողեւորու մն էր, մի յափշտակումն, որը մղում էր երիտասարդներին դէպի Պարիզ, Հիւզօնի գահին երկրսպագելու։ 1830—1848 թւականներին Հիւզօն իւր փառքի դադաթնակէտին էր հասած։

Սակայն բոմանտիկ ուղղութեան հիմնելը մի մարդու դործ չէր, թէկուզ այդ մարդը Հիւզօն ինքը լինէր։ Խնչումն և ամեն մի բնական երեսյթ, նա կախոց-կամաց էր որոշւել։ Վ. Հիւզօն երեան եկան իրեւ այդ ուղղութեան մարմնացումն, նրան էր վիճակւած իւր հակացական ուսերի վրա կրել բոմանտիստի անհասասա շէնքը։

Բոմանտիստի ուսմունքը անկասկած մի յափշտակող ուսմունք էր։ Մեր կեզառու և ցաւալից աշխարից հեռացած, բոմանտիկ բանաստեղծը և վիպասանը շրջում էր ամպերի մէջ, որտեղ երեակայցութիւնով մի նոր աշխար էր առեղծում։ Այս երեակայցական աշխարը մեր երկրի հետ միայն հեռաւոր նմանութիւն ունէր։ Ամեն ինչ տարբեր էր այնաեղ։ Մենք, որ մասել ենք կեանքի մէջ, ճանաչել ենք մարդկանց, այնաեղ մի բոլորովին անծանօթ շրջանի մէջ ենք ընկնում։ Այնաեղ բնութիւնը աւելի շքեղ է, ծաղիկներն աւելի հոսաւետ, մարդիկ առասպելական հոկաներ են.—երկնքի հրեշտակներ, կամ գտուսալին հրէշներ։ Մարդկացին զործերն էլ կրում են իրանց վրա այս իդէալացման կնիքը։ Քանի որ նրանց հերոսները անբնական, շինծու անձնաւորութիւններ էին, սրանց զործերն էլ ոլիսի շինծու, անբնական լինէին։ Մեր առօրեաչ զբաղժունքները այս հսկաների արժանաւ որութիւնից ցած էին,—կարծէս բոմանտիկ գրողները մի հիւանդ բորբոքման մէջ իրանց հայեացքը ասողերին էին սեւուած և չին զիջանում մի ակնարկ զցել իրանց հսկայական ոտերի տակ խլուսող կեանքի վրա։ Այսուզից մնացել է ֆրանսիական դարձւածը. „cela tient du roman“ (աս բոմանի է նմանում), երբ կամենում են ասել, թէ այս ինչ բան անհաւատալի է։ Բոմանտիկ վիպասանները իրանք էլ այս լաւ գիտէին և ժորժ Զանդը ասում է. „La vie ressemble plus à un roman que le roman à la vie“ (կեանքը աւելի է նմանում բոմանին, քանի թէ բոմանը կեանքին)։ Այս է պատճառը, որ հին շկոլաի բոմանիստները՝ Վ. Հիւզօն, Եօժէն-Սիւյր, Դիւյմա-հայքը և այլն երբեմնապէս միայն վայր են դալիս իրանց իդէալական բարձրութիւններից և կարծէս

վախիլսելով, ամաչելով մի երկու էջ խական կեանքի նկարագիր տալիս...

Ընդհանրապէս ամեն ինչ շինծու էր այս բոմաններում. միջավայրը (milieu, среда) շինծու, հերոսները շինծու, այսինքն հեղինակի երևակացութեան պառող: Եւ, քանի որ հեղինակը իւր նկարագրած շրջանը ինքն էր ստեղծում և ոչ թէ խականից վերցնում; հասկանալի է, որ գրողի եւսը իւր կրքերով և իդէալներով պիտի անշուշտ թափանցէր ամեն մէջ էջի միջից: Հեղինակի անձնաւորութիւնը նրա խիւալը, նրա կրքերը, ինչպէս ասում են, կարմիր թելով անցնում էին բանաստեղծութեան մէջ: Բոմանտիկ հեղինակը անկարող է ստուասրուութիւնով զրել մի ամենաաննշան բան անգամ: Նա անդադար հիացման մէջ է և նրա բորբոքւած ուղեղը ամեն ինչ խիւալացնում է: Այս այն լիրիսմն է, որը, ինչպէս իրաւացի նկատում է նորագոյն կրիտիկոսներից մէկը, ամփոփում էր ոչ միայն բոմանը, այլ և կրիտիկան, այլ և պատմութիւնը: Միշել (Michélet) իւր բաղմահասոր ովատմութեան մէջ մի հրաշալի բանաստեղծ է ձեւանում, և ով որ կարդացել է նրա «Յեղափոխութեան պատմութիւնը», լաւ գիտէ, որքան բանաստեղծացրած են վաստերը, և հետեւաբար աղաւազւած, որքան եսական է այս ամբողջ գրւածքը:

Բոմանտիկ գրականութեան անօրինակ յաջողութիւնը բացատըրւում է այս ոգեսորութիւնով և խիւալացումով: Նոյն խակ ոգեսորութիւնը և խիւալացումն, այն ինչ որ կոչում է լիրիսմ, պիտի տապալէին բոմանտիսմի շնչքը:

---

Տանիններորդ դարը գիտութեան դար է: Գիտնական հետազոտութիւնների մեթոդ, այսինքն ճիշտ գիտական և փորձնական սիստեմը, պիտի իշխէին գովրութեան վրա ևս, ինչպէս իշխում էին արդէն գիտութեան մէջ: Նոր սերունդը սնւած էր ճիշտ-գրական ոգով և նրա դորժնական խելքը չէր կարող բաւականացնալ երեւակայականով: Նա խական ուսումնասիրութեան պահանջ էր զգում, բայց եղբայր նման մի կախարդական շրջանի մէջ էր ընկել նա, որտեղից թէև ցանկանում էր, բայց չէր վստահանում դուրս դալ:

Վիկոոր Հիւգօն հիսպնոսել էր իւր դարբ:

Ամբողջ գրական աշխարը խոնարհւում էր այս կոլոսի առաջ։ շնորհ նրա ոււած պրոգրամից աններելի յանցանք էր։ Սերունդները կրթւում էին Հիւգօի զպրոցում, որի ուսմունքը աստւածային յայտնութեան պէս ընդունւած էր և պաշտւած։ Ժամանակակից կրիստոնէրը հրաժարում էին քննտդատել բոմանուխումի ուղղութիւնը և նրա պարագլիսի երկերը։ Ըոմանտխամը մի արեգակ էր, որին միայն չոփեցոք և աչքերը խուփ կարելի էր մօտենալ, որպէս զի մարդ չը կուրանար նրա նառագայթներից։

Այս ընդհանուր թովչութեան մէջ մի ուրիշ հակաց կամաց բարձրացնում էր իւր գլուխը խաւարի միջից և մի նոր լապտեր էր վառում, որի գես ազօտ լոյսը դնալով պիտի պայծառանար ու խաւարեցնէր բոմանուխումի փայլը։

Այս նասուրալիստ բոմանի հայր Բալզակն էր, որը չէր կարողանում անվրդով նայել սխալ դպրոցի ահսելի զարգացման վրա և առաջինն եղաւ, որ հանդզնեց ձայն բարձրացնել երեսուն թւականների գրականական աստծու դէմ ու դատապարտել նրա ուղղութիւնը։

Բալզակը իւր մասապղ հասակից սկսած անընդհատ հալածւել էր իւր պարտաստէրերից։ Նա զրում էր իւր սկարաքերը վճարելու համար։ Այսպիսով «Մարդկութեան կոմեդիաի» հեղինակը, կարելի է ասել, մանկութիւնից ընկած էր կեանքի կուի մէջ և հանդիման էր եղել նրա պահանջներին։ Նա վազօրօք ընկաւ կեանքի հնոցը, որի միջից մարդ գուրս է գալիս աւելի գործնական։ Հանդիպելով զանազան դասակարգի պատկանող անձերի, ընկնելով զանազան շըրջանների մէջ, Բալզակը մօտ ծանօթացաւ առօրեայ կեանքի հետ, որի ուսումնասիրութեանը նա պիտի նւիրէր իւր ահազին տազանդը։ Եւ գարիս այս մեծ վիպասանը, արհամարելով ժամանակակիցների հայհոյանքը և վայր ի վերոյ զրպարտութիւնները, առանց աղմուկի ամեն օր աւելի և աւելի ամրացնում էր իւր դպրոցի շէնքը։ Եւ ճշմարիտ որ Բալզակը նոր բոմանի սկարագլուխը դարձաւ։

Նրա մաքով անցնում էր արգեօք, որ իւր այս մանրակրկիտ և յաճախ տախտկալի «Կեանքի նկարագրերով» նա ապազայ զրականութեան նշանաբանն էր տալիս...

Նրա գրական խելքը մերժում էր այն անմարս դարմանը, որով անխնայաբար կերակրում էին ժամանակակից սերնդին։ Նա բողոքեց րոմանատիսմի զգայնութեան չափազանցման դէմ, ուստարակեց Հիւգօի անբնական, հակադիտնական ուղղութիւնը և մի շարք բոմաններով ցոյց տւեց, որ վիստասանի պարտքն է գրական նիւթեր ժողովել։ 1830 թ. Հիւգօն լոյս ընծացեց իւր հոչակաւոր Հերնանի (Hernani) դրաման, որը իւր անբնական, շինծու դրութիւններով, հրէշացին առասպելական հերոսներով, իւր անմարսելի, փքուն մենախօսութիւններով բեմ էր հաննել րոմանատիսմը իւր բոլոր պակասութիւնների հետ։ Բալզակը չը կարողացաւ զսպել իւր զայրոյթը և համարեա կրքով է յարձակում այս դրամայի վրա ու ցոյց տալիս նրա անբնականութիւնը։ Եւ մինչդեռ Վ. Հիւգօն սաւառնում էր երեակայական աշխարում, Բալզակը համեստաբար իւր «կեանքի նիւթերն» էր ժողովում։ Հետեւելով գիտութեան մեթոդին, մեծ րոմանիստը մացրեց վէպի մէջ խիստ գիտական սիստեմը։ Նա առաջինը եղաւ, որ նայեց իւր շուրջը, մօտ ծանօթացաւ շրջապառող իրերին և անձերին, հասկացաւ, որ, դարիս գիտնական ողուն հետեւելով, պէտք է նկարագրել միայն այն, ինչ որ զննեած ու քննւած է։

«Երկար ժամանակ, ասում է Բալզակը իւր «Եւայի դուստր» րոմանի յառաջաբանի մէջ, հեղինակը (նա իւր մասին միշտ երրորդ դէմքով է խօսում) կարծում էր, որ իզուր էր գեղարւեստով և գիտութիւնով պարապում։ Սակայն այժմ օրէցօր նա համոզւում է, որ սիստել է, որ ամեն մի խղճմասաւոր աշխատանք վաղթէ ուշ պիտի վարձառրէի... Հասարակութիւնը չը գիտէ, թէ որ-շափ աշխատանք է հարկաւոր հեղինակին ճշմարիտը իւր հետեւանքներով երեան հանելու ու թէ որքան համբերութիւնով ժողոված դիսու մներ են թագցրած այն առ երես աննշան ածականների տակ, որոնք հաղարից մէկի ուշադրութիւնը միայն կարող են գրաւել։ Կան սպառկերներ, որոնց մէջ մի որ և է նախադասութիւն մի ամբողջ գիշերւայ աշխատութեան, կամ բազմաթիւ հասորների ընթերցման վաստակն է։ Խնչ զիտէք, թէ բոլոր էջերն էլ այդպէս չեն գրւած»...

## III

Այս վիստասանի գրւածքներից ակներեւ է, որ նա հետաքրքրուում էր ժամանակակից բնադիտութեան զարգացումով: Նա մի առանձին յափշտակումով է խօսում մեծ բնագէտ և կենդանաբան Կիւլիկի մասին, որին «գարիս ամենասքանչելի բանաստեղծն է», կոչում, որովհետև նա իւր բնածոյ (fossile) կենդանաբանութիւնով բիւրաւոր գարերի մեռած կեանքը կենդանացրեց:

Հիմնւելով Ասմարկի, Սենտ-Հիլերի կարծիքի վրա, թէ շրջավայրի (սրճար) ազգեցութիւնը վոփոխում է կենդանու և մարդու ֆիզիկական և հոգեկան աշխարը, նա աշխատեց բարձրացնել նկարագրութեան նշանակութիւնը, որպէս զի հասկանալի լինեն հերոսների գործերը:

Եւ իրական րոմանիստը ցանկացաւ նկարագրել մի աշբողջ պատմական շրջան, նա ցանկացաւ «նկարագրել երկիրը, մարդկանց, ցոյց տալ օտարներին» Ֆրանսիաի ամենաշքեղ քաղաքները և գիւղերը, պատմել տաճնիններորդ գարի հին և նոր շնչերի մասին, բացատրել այն երեք կառավարչական ձևերը, որոնք այս ցիտուն տարւաց ընթացքում (1889 մինչև 1840 թ.) առանձին կերպարանքեն տւել կահ-կարասիքին, բնակութեան և այլն: «Այսպիսով, աւելացնում է հեղինակը, 1850-ին ընթերցողը կը հասկանայ, թէ ինչ է եղել Պարիզը միապեսութեան ներքոյ»:

«Փեռի Գորիօի» հեղինակը մեծ համեստութիւն է անում, 1850 թիւը դնելով: Նրա տենչանքը աւելի մեծ էր.—Նա կը ցանկանար, որ իւր գործը ցւեխեան կանգուն մնայ:

«Պարիզի կեանքի պատկերներ», «Պաւառուական կեանքի պատկերներ», «Մասնաւոր կեանքի պատկերներ», «Զինւորական կեանքի պատկերներ»—ահան այն վերնագրերը, որոնց տակ հեղինակը մեզ մի շարք էտիւզներ է տալիւր Բալզակը կեանքի նիւթեր է ժողովում, ինչպէս ինքն էլ խօսավանում է: Նա կը գարսի ացդ նիւթերը ահազին քառածալ հասորների մէջ, իւրաքանչիւրը 600 էջից բաղկացած: Այս մի հում նիւթ է, որից պատմաբանը, հնագէտը և հոգեբանը պիտի որոշ գաղափար կազմեն նկարագրած ժամանակի շրջանի մասին: Եւ,

վասահ իւր արդար հայեացքի վրա, Բալզակը Հիւգօի գլուխ-գործոցներին իւր զլուխ-գործոցներն է զիմազրում և բոմանտիսմի առևնափայլուն միջոցն՝ իւր ամենալուրջ բոմանները լոյս ընծայում; Այս մի կուիւ էր երկու հակաների մէջ, կեանքի և մահւան խնդիր էր:

Պատերազմի ելքը պիտի որոշէր ապագայ գրականութեան ուղղութիւնը:

Բալզակը յաղթեց:

Նրա 30-ական թւականներին գրած բազմաթիւ բոմանները այնպիսի մի հակառիսուղ են ժամանակակից բոմանտիկ վէպերին, որ մարդ ճշմարիտ որ ապշում է այս դրողի վասահութեան վրա, որով նա մի գրչի շարժումնվ ոտի տակ է տալիս թագաւորող գրական ձևերը: Կան պատկերներ, որոնք մինչև այսօր էլ մնում են, իբրև գրական բոմանի կառարելատիսուղ:

Մի որ և է գրողի գործը քննելիս, հեշտ է որոշել նրա ամենաընտիր գրւածքը, որին մէնք զլուխ-գործեց ենք անւանում: Բայց Բալզակի էտիւ զնիքը բոլորն էլ արժանաւորութիւններով և պակասութիւններով լի են: Այս ինչ բոմանում այս ինչ պատկերն հրաշալի է, այս միւսը աւելի թոյզ: Ծնդհանրապէս նրա մի որ և է բոհնը բազկացած է մի շարք պատկերներից, որոնք երբեմն կազ չունեն միմեւանց հետ, որոնք օրինակ ուղղակի պատմում են, և ընդհանրապէս վէպերի հիւսածքը չափազանց պարզ է: — մի յատկութիւն, որը խիզոյն զանազանում է նոր գպրոցը հինից, որի բոմաններում զլատառը վեր էր խաղում արկածների բարդումն:

Սակայն կան և բոմաններ, որոնք կառարեալ տեղեկութիւն են տալիս մեզ որոշեալ դաստիարգի կեանքի մասին: Ֆեռի Գորիոն (Le père Goriot) ներկայացնում է մեզ Պարիզի պանսիոնների ներքին կեանքը, La femme Supéreure-ի մէջ հեղինակը նկարագրում է իւր ժամանակւայ գիւտանականութիւնը, Les chouans-ի մէջ պատերազմական կեանքը և այլն:

Մի բան զարմացնում է լնթերցողին այս առար հասորները թերթելիս, Բալզակի վէպերի մէծ մասը կապւած են միմեանց հետ, զոնէ գործող անձերի միջոցով: Միհենոյն անձնաւորութիւնները անցնում են համարեա բոլոր բոմաններում, շրջապատած մի շարք

ու րիշ անձերով, որոնց մենք արդէն պատահել ենք առաջիկայ գրքերում՝ կամ յետոյ կը պատահենք։ Այս անձնաւորութիւններից շատերի հետ ծանօթանում ենք «Քեռի Գորիօ» (Le père Goriot) բոմանի մէջ, Վ.Պէտի պահսիռնում, որը կատարեալ լուսանկար է Պարիզի աղքատիկ պահսիռների։

Այստեղ ինքը խեղճ Քեռի Գորիօն է, որին երբեմն ացցելում են նրա երկու աղջիկները՝ բարսնուհի դը Նիւսինժէն և կոմսուհի դը Ռեսո։ Այստեղ է սկսում իւր արշաւանքը գէպի հարատութիւնը և փառքը քսան տարեկան ուսանող եօմէն դը Շատինիսկը։ Այստեղ են յացնի եղեռնագործ, աքսորից վախած Վոորէնը, ապագայ հուչակաւոր բժիշկ Բիանշոնը և ուրիշները։ Այստեղից, իբրև կենտրոնից, կը ցրւեն այս զործող անձերը տամանաւոր բոմաններում և կը շրջապատեն իրանց նորանոր անձնաւորութիւններով։

«Սրանով նրա «Տարքի էտիւդները» նմանում է նեղ անցքերի մի հիւսւածքի, որոնց կարելի է պատահել հանքերում կամ կասակոմբներում։ Մարդ կորչում՝ է այնտեղ և այլ ևս ճանապարհ զի գտնում վերագառնալու, իսկ եթէ մի կերպով յետ է գալիս, ոչ մի որոշ բան չի բերում իւր հետ»։ Այսպէս է ասում Սէնտ-Ֆէւը (Sainte-Beuve), գարիս ամենամեծ կրիտիկոսներից մէկը։

Ինչ էր ուզում անել Բալզակը իւր օտարութիւնական մենք լաւ չենք ըմբռնում։ Ասում են, որ նա ցանկանում էր կապել մի-մեանց հետ իւր բազմաթիւ «կեանքի նկարագրերը», որպէս զի իւր ժամանակայ ֆրանսիաի ամբողջ պատկերը տայ։ Եթէ այդ էր նրա ձգումն, ակներև է, որ նպատակին չը հասաւ։

Մի ուրիշ ենթաղրութիւն ներելի է։

Հիմնելով իւր պաշտելի զիտնական թէօրիաի վրա, թէ կենդանիները փոխուում են միջավայրի ազդեցութեան ներքոյ, մեծ վիպասանը գուցէ կամեցաւ ցոյց տալ զանազան շրջանների ներգործութիւնը իւր հերոսների վրա։ Ցնորական բաղձանք, որի լուծմանը հաղիւ թէ մօսեցել էր նա։

Ամենահաւանական ենթաղրութիւնը գուցէ այն է, որ ինչպէս մի քանիսը պնդում են, «Եօմ են Դրանդիէ ի» հեղինակը այսպէս է վարւել առանց նպատակի և մասդրութիւն չի ունեցել կապել իւր վէպերը միմեանց հետ։

## IV

Վերին աստիճանի հետաքրքրական է Բալզակի հերոսների ուսումնասիրութիւնը:

Նրա գլխաւոր գործող անձերը բացառական, կամ աւելի ճիշդ ասած՝ հաւաքական տիպեր են, որոնց մի խօսքով կարելի է բնորոշել, — նրանք Նեքսափիրեան տիպեր են:

Դարիս ամենահեղինակաւոր կրիտիկոսներից մէկը, Տէնը, հիացումով է յիշում Բալզակի անունը: Աւրոսպական գրականութեան մէջ նրան հաւասար միայն Նեքսափիրին է գանում:

Եւ ճշմարիս որ այս երկու հեղինակներն էլ տիպը մի տեսակ են կարծես հասկացել: Երկուսն էլ իրանց ստեղծած անձերի մէջ մի մեծ շարժառիթ են դնում, որը պիտի զեկավարի նրանց գործունեութեանը:

Այն, ինչ որ Նեքսափիրը դրահացի մէջն արեց, Բալզակը կամեցաւ վեպի մէջ իրագործել:

Նետաքրքիր է համեմատել այս երկու զրոյների համանման տիպերը: Այդպիսի տիպեր մի քանիսը կան:

Նեքսափիրի Արքայ Լիրին կարող ենք զիմաղբել Քեռի Գորիօին և Շէցլոկին - Եօժեն Գրանդիէին:

Քեռի Գորիօն ապրում է մի աղքատ տան մէջ - տիկին Վուլքէնի սպասիսնում: Նա վերմիշէլի առեարի մէջ մեծ զումարներ է աշխատած և այդ բոլորը զոհած է իւր երկու աղջիկներին, որոնցից մէկին կոչս դը Ռեստօի հետ է ամուսնացրած, միւսը բարոն դը Նիւսինժէնի: Երկու աղջիկների տներն էլ ճոխ արիստոկրատ սալոններ են, որոնց մէջ հաւաքւում է բարձր դասակարգը ու որտեղ ուրեմն գուեհիկ ծեր Գորիօնին մուտքը արգելւած է: Սակայն, շը նացելով արագքին ճոխութեանը, երկու քոյքերն էլ սաստիկ անբախտ են, մէկը կողմնակի սիրահարութեան պատճառով, միւսը՝ որ վասյարաբերութիւններ ունի իւր ամուսնու հետ: Քեռի Գորիօն մի արտաստոր սիրով պաշտում է իւր երկու զաւակներին: Այս սէրը մի կիրք է, որը մոռացնել է առլիս հօրը՝ զաւակների անշնորհակալութիւնը: Այս սէրը ծերունու կեանքի միակ նեցուկն է գանում, նրան է նւիրել խեղձը իւր հոգու բոլոր ոյժերը:

Քեռի Գորիօն իրան մի վոքրիկ գումար էր սկահել և յօյս ունէր այս զբամի տոկոսով ապրել մինչեւ մահ։ Բայց աղջիկները պահանջներ ունին, մեկը իւր սիրականի պարտքերը վճարելու համար, որպէս զի վրկի նրան բանտից, միւսը իւր սիրականի համար կացարան վարձելու և այլն։ Եւ ծերունին երջանկութիւն է համարում իւր զբամագլխից կարել՝ զաւակների այս անվայել հաճոյքներին բաւականութիւն տալու համար։ Քեռի Գորիօնի կացարանը գնալով փոքրանում է և էժանանում...

Այս անսանձ հայրական սէրը այն տատիճան է հանում, որ ծերունի Գորիօն համոզում է, ազաշում է նոյն պահասինում ապրող ուսանող Բաստինիակին սիրահարական յարաբերութիւններ սկսել իւր աղջիկներից մէկի հետ, որպէս զի նա «մի քանի երջանիկ բուպէներ անցկացնի»։ Այդ նպաստակի համար նա իւր վերջին փողերն է ծախսում, արծաթեղիններն է ծախում, որ սիրահարների համար մի սիրուն բնիկ սարգի։ Քեռի Գորիօն հիւանդանում է։ Իժիշկը արգելում է նրան գուրս գալ անից, բայց նրա ականջով է ընկնում, որ աղջիկներից մէկը բալի հագուստ է կարել տւել, իսկ ամուսինը չի կամենում վճարել։ Ծեր Գորիօն ջարզում է իւր վերջին արծաթէ զգալները, հաւաքում է ինչ որ ունի մինչեւ վերջին կոտէկը և լրացնում է վճարելու գումարը։ Այս, որչափ երջանիկ է նա, որ իւր աղջիկը ետ չի մնալ բալի և ամենազեղցցիկը կը լինի այսուեղ!

Բայց հիւանդութիւնը սաստկանում է, դեղի և ուտելիքի վորդ չկաց, ծերունին մի կեղաստ, նեղ, մութ խցի մէջ, կեղտոս անկողնու մէջ մեռնում է։ Երկու քոյզերը բացակաց են և, չը նայելով Բաստինիակի ինսդրանքին, չեն գալիս իրանց հօր աչքերը խփելու։ Մինչեւ վերջին շունչը ողորմելի հայրը սպասում է իւր աղջիկներին, իբրև Աստծու ամենամեծ պարգևի... աղքատիկ դագաղի ետելից երկու ուսանող և մի ծառաց են զնում... Թաղման ծախսը այս ուսանողներն են անում...

Մենք չենք կասկածում, որ եթէ Շեքսպիրը Բալզակի ժամանակն ապրէր, նա Արքայ Լիրի վոխարէն Քեռի Գորիօն կը սուեղծէր... Նոյնը կարելի է ասել Եօժէն Գրանդէի մասին, որը նաստուշացների Վենետիկի վաճառականն է։

Յօժէն Գրանդէն մի հարուստ զաւառական կալւածատէր է, որի կալւածները օրէցօր լայնանում են, ի հարկէ ամեն տեսակ միջոցներով, իսկ ոսկիները աճում: Չը նայելով իւր բազմաթիւ միլիոններին, Գրանդէն ժլատի կատերալատիպ է, որը ճարպի մոմ է վառում, ձմեռը օրերով կրակ չի անում; սանդուխտի խալաւած, փթած տախտակները ինքն է կարկատում և իւր կնոջ ու միակ դստեր գրոշները գողանում: Նա հանդիսան հոգով թոյլ է տալիս, որ իւր եղբայրը սնունիանաց և այն րոպէին, երբ այդ եղբայրը անձնասպանութիւն է գործում; Գրանդէն պաղարիւն իւր սանտիմների ետևից է ընկած: Այս ինքնասապան եղբօրորդուն մի բաժակ սուրճն անգամ ինայում է, և այս երիտասարդի հայրենական մի քանի ոսկեղինները գնում է նրանից, հաշւելով, որ օգուտ կ'ունենաց:

Այսուեղ մի տեսարան կաց, որը անկասկած աւելի զեղարւեստական է, քան թէ Շեքսպիրի դրամացի այն տեսիլու, որի մէջ Շեքսպիր դանակը սրում է, որ իւր պարտասէրից խոստացած փունտ միսը կտրի:

Գրանդէի եղբօրորդին և դուստրը սիրահարւում են միմեանց վրա: Յօժէնին (աղջիկը) իւր կոպէկ-կոպէկ հաւաքած փողերը տալիս է իւր սիրահարին, որը պէտք է Հնդկաստան գնա, իսկ սա յանձնում է նրան իւր ամենաթանկազին գանձը,—իւր մօր զարդերը: Հայրը իմանում է իւր դստեր մեծանողութիւնը և կատաղած ու իրան մոռացած ամիսներով բանդարկած է սպահում խեղճ աղջկան և հրամայում է, որ ցամաք հաց և ջուր միացն տան, չը նայելով իւր կնոջ կսկծի ձայնին և հիւանդութեանը:

Բացց այդ գեռ ոչինչ: Մի օր Գրանդէն ներս է մտնում այն րոպէին, երբ Յօժէնին բաց էր արել այս գանձը և դիառումնը սիրով: Ժլատի սարսափիկի կիրքը բորբոքում է.— Նա վրա է համնում այս ոսկիներին, վերցնում է գանակը և, անուշադիր իւր հիւանդ կնոջ և կիսակենդան աղջկայ յուսահատական ճիչերին, պաղատանքներին, ուղում է կորզել զարդերը, որ տանի վաճառի: «Ի սէր Արարէին, ի սէր այն ամենին, ինչոր սուրբ է քեզ համար», գոչում է ձեռքերը կոտրասելով խեղճ Յօժէնին, «նա ինձ պահ է տել այդ, այդ իմ կեանքից թանգ է, սպասիր ինձ առաջ»: Հրէշային հայրը խուլ է:

— «Դու ինձ սպանել ես արդէն, գոնէ խղճաց միակ զաւակիդ», աղաչում է անկողնու միջից մեռնող կինը: — Ոչինչ:

Այս զարհուրելի բոսկին, Եօժէնին մի ուրիշ դանակ է վերցնում, դէմ է անում իւր կրծքին և յուսահատութիւնից համարեա խելագարւած դուռում է.

—Հայր, եթէ գու ձեռ տաս աչդ ոսկուն, ես այս դանակը կուրծքս կը խրեմ...

Այսպիսի զարհուրելի էջեր ես սակաւ եմ կարգացել:

Ես շտապում եմ կանգ առնել:

Բալզակի գործը ահազին է, այս յօդւածի փոքր ծաւալը թոյլ չի տալիս մեզ աւելի մանրամասն քննել նրան:

Սակայն մեր նպատակի համար կարեոր է մի քանի խօսք ևս ասել նրա ստիլի և զրելու ձեփ մասին:

Բալզակի ըստմանն երը սուբյեկտ գրւածքն էր են:

Համարեա բոլոր սպատկերների մէջ մենք սպատահում ենք հեղինակին, որը մեզ բացատրութիւններ է տալիս, նոր տեղեկութիւններ է հազորում, հերոսների գործերը և հոգեկան յուզմունքները մեխնում և աչն: Ընթերցողը զգում է, որ վիպասանը այնտեղ է, թափնւած գործող անձերի քամակին և ամեն բոսկ պատրաստ է առաջ գում մեզ հարկ եղած տեղեկութիւնները սալու:

Իսկ ինչ վերաբերում է նրա լեզւին, պէտք է ասել, որ նա չի աշխատում կոկել իւր նախադասութիւնները և առհասարակ քիչ ուշ է դարձնում լեզւի ճոխութեան վրա: Այս կէտում նա նմանում է մի ուրիշ մեծ գրողի—Սաենդալին, որ Բալզակի ժամանակակիցն էր:

## V

Ամփոփենք մեր ասածը:

Բալզակը աշխատեց մտցնել գրականութեան մէջ գիտութեան զարգացման երկու անհրաժեշտ գործօնները.—զիտումն և փորձ:

Այսպիսով նա աշխատեց ուսումնասիրել իւր նկարագրած շրջանները, որպէս զի մեզ «կեանքի սպատկերներ» տայ: Այս շրջանների մէջ նա դրեց իւր հերոսներին՝ ուժեղ, հաւաքական<sup>1)</sup> անձեր, որոնք պիտի գործեն միջավայրի ազդեցութեան ներքոյ: Նա մի հսկայական իղձ ուներ.—փոփոխել իւր անձերի վիզիկական

<sup>1)</sup> Յետու մենք կը բացատրենք, թէ ինչեն համանում հաւաքական ալա ան տիպեր ասելով:

և մասւոր աշխարը զանազան շրջանների աղբեցութեան ներքոյ, հետևելով ժամանակակից լնագէտների թէօրիաին, որով կենդանին միջավայրի արդիւնք է դառնում:

Նոչ և իցէ, «Փիլիսոփայական Զրոցների» հեղինակը չը բաւականացաւ մի շրջանով: Նա աշխատեց լնդարձակել իւր «կեանքի ուսումնասիրութիւնը», տալ մեզ պատկերներ Պարիզի և գաւառների մասնաւոր և զինւորական կեանքերից: Այսպիսով նա անխափր մտնում է Ֆրանսիաի ժամանակակից հասարակութեան բոլոր խաւերը իւր լուսանկարները վերցնելու համար:

Նրա տենչանքն էր այս մանր պատկերներից մի ժողովածու կազմել,—ժողովածու, որը թերթելով ասլազայ սերունդները ծանօթանացին ֆրանսիաի քաղաքական կեանքի հետ... Այս մի վստահ ուղեղի ցնորք էր, որը մի զարմանալի զարկ պիտի տար իրական զրականութեան զարգացմանը:

Բալզակի անունը ոսկէ տառերով վրոշմած կը մնայ ՏԿ դարի գրականութեան յաղթակամարի ճակատին: Այս մեծ մարդը տասկացեց բոմանտիսմը և նրա բեկորների վրա կառուցեց գրական, կամ աւելի ճիշտ ասած, գիտական վիպասանութեան վիթխարի պալառը:

Այս արտասովոր տաղանդի նշանակութիւնը մեր դարի գրականութեան վրա այնչափ մեծ է, որ առանց նրան անլարելի է երեւակայել անդամ արդի ֆրանսիական բոմանի այս վիթխարի զարգացումն:

Նա ինքը լաւ էր ըմբռնում իւր գործի մեծութիւնը, երբ ասում էր. «Չորս մարդ պէտք է ահազին ներգործութիւն ունենան այս (առաջին) կիսադաշտում: Նապոլէոնը, Կիւտիէս, Օ-Կոննէլլ. ես կը կամենացի չորրորդը լինելու:

Եւ այս մարդը երկու իղձ է ունեցել իւր աղմկալից կեանքում,—վճարել իւր անվերջանալի պարտքերը և Ֆրանսիական Պիտութիւնների Ակադեմիան մտնել:

Առաջինը նա իրագործեց, որովհետեւ այդ նրանից էր կախած, իսկ երկրորդը մերժեց նրան մարդկացին ազերախտութիւնը!...

## Գ Բ Ա Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Եղիշեի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՅՅ ըստ Անձևացեաց օրինակի: Ծա-  
նօթութիւններով և հայ-ռուսերէն բառագրքով ի լոյս ընծայեց ու-  
սուցիչ Լազարեան ճեմարանի արևելեան լեզւաց Խ. Յովհաննիսեանց:  
Մոսկւա, 1892 թ. Ա-Զ եր. յառաջաբան, 9—182 եր. բնագիր,  
183—242 եր. ծանօթութիւններ, 243—391 եր. բառագիրք:

Յառաջաբանի մէջ հեղինակը  
նկատում է, թէ ամինչև արժմոչ մինը  
հայոց (դասական) հեղինակներից  
ծանօթութիւններով, բառագրքով ճո-  
խացրած լարմարացրած չէ աշակերտ-  
ների գործածութեան համար: Այս  
զդացի սպակատորը լրացնելու դի-  
տաւորութեամբ, առաջին (?) փորձը,  
թէն մեծ երկիւղածութեամբ՝ կատա-  
րում ենք չնաշխարհիկ նղիշեի պատ-  
մութեան վրայ, որ կարդացւում է  
ոչ միայն Լազարեան ճեմարանում,  
այլ և հայոց միւս ուսումնարաննե-  
րում ևս»:

Բոլորովին համաձայնելով պէ. հե-  
ղինակի վերողիշեալ նկատողութեան,  
թէ դասարանական գործածութեան  
լարմարեցրած դասական հեղինակ-  
ներ զրեթէ չունինք՝ մենք տրամա-  
դիր էինք մեծ ուրախութեամբ ող-  
ջունել նղիշի այս հրատարակու-  
թինը, որ մի փորձ է լրում տալու է այսակոյ և այլն: Բնագրի այս

վիշեալ պակասութեան, սակայն  
փոքր ի շատէ ծանօթանալով այդ  
աշխատութեան հանդամանքներին  
պէտք է ցաւելով լարմարենք, «որ  
այս առաջին փորձը լաջողած չէ»:

Բուն բնագրիը պէ. հեղինակն ա-  
մենին չէ մշակել դասարանական  
գործածութեան համար: Նա վերցրել  
անվտակիս և ամբողջ արտատպել է  
Անձեւացեաց ծանօթ օրինակը, որի  
մի քանի տապագրութիւնները արդէն  
կան և տարածածւած են ուսումնա-  
րաններում: Պր. հեղինակը բնագրի  
ստորաններում ակեցրել է Վենետի-  
կեան հրատարակութեան տարբեր  
ընթերցւածները և շատ անգամ  
աշապիսի նկատողութիւններ: «այս-  
տեղ պակաս է քեզ»: «աստ ա-  
ծակին բառը պակաս է»: «պակաս  
է պատեղ՝ պաջողեցաւ տէ բռւ-  
թիւնն նորա»: «գլորէր պակաս  
թիւնը, որ մի փորձ է լրում տալու է այսակոյ և այլն: Բնագրի այս

միակ «մշակումը» մենք մասամբ ան-  
նպատակազարմար ենք գտնում դա-  
սարան ական հրատարակութեան  
համար և մտամբ սիսալ մտածում-  
թեան արդիւնք. Այս աշակերտը, որ  
զրաբար լեզուն պիտի գեռ սովորի,  
Եղիշէն դասարանում կարդալով՝ ան-  
շուշտ չէ կարող հետաքրքրուել Եղի-  
շի բնագրի ընթերցւածներով. սա  
նորա թէ լեզուի գիտութեան և թէ  
զարգացման չափից բարձր է: Ըն-  
թերցւածները նշանակութիւն ունին  
մատենագիրն ուսումնասիրո-  
ղին համար. և այս գեպքում շատ  
անբաւական է բերել միան վենետ-  
կեան հրատարակութեան ընթերց-  
ւածները, մինչեւոչ ոչ միան Եղիշի  
բազմաթիւ ձևուագիրներն, այլ նուն  
իսկ այլ և այլ տապարութիւնները  
մեծաքանակ ընթերցւածներ են մա-  
տակարարում, երբեմն շատ հետա-  
քրքրական: Խոկ «ապաւեզ պակաս  
է...» նկատողութիւնները վարանման  
մէջ են ձգում ընթերցովին, մանա-  
ւանդ աշակերտին Յիրաւի, եթէ պ.  
հեղինակը համոզած է, թէ «գելոցը  
և տապալէր երկդիմի մտօք» խոս-  
քում (Կրկն 21) պակաս է գլորէ ր  
բառը՝ ինչու չէ զրել այդ բառը  
ընագրի մէջ՝ զելոցը, գլորէ ր և  
տապալէր երկդիմի մտօք»: Խոկ եթէ  
խղճել է և չէ վաստանել Անձեացեաց  
օրինակն ողղագրել ուրիշ օրինակ-  
ների ընթերցւածներով՝ անբացա-  
տրել կը մնայ պակաս է բառի  
զործածութիւնը: Անձեացեաց օրի-  
նակն վիրաւի համեմատաբար լաւա-  
գայն ընթերցւածներ ունի. բայց սա  
չէ նշանակում, թէ նա ամեն բանում  
ամենալազն և անթերին է. բազմա-

թիւ ուրիշ օրինակների և ձեռապիր-  
ների միաբան վկացւթիւնը իրա-  
ւունք պէտք է տան հրատարակողին՝  
բնագրի մէջ մտցնել փոփոխութիւն-  
ներ ընդուժմ Անձեացեաց օրինակն։  
Ի հարկէ սորա համար հարկաւոր է  
Եղիշէի լեզուի, ոճի հմուտ ուսում-  
նասիրութիւն և բազմաթիւ օրինակ-  
ների ձզրիտ բազմատութիւն, որ,  
ինչպէս երեսում է, պ. հեղինակը չէ  
արել:

Սորա վոխանակ պ. հեղինակը  
զանց է արել բնագրի քերականա-  
կան և ոճաբանական մշակումը, որ  
անհրաժեշտ և ամենակարևորն է դա-  
սարանական գործածութեան չատ-  
կացւած դասական հեղինակի համար։  
Գրաբարը զադարել է կենդանի լե-  
զու վիճակուց. մենք պէտք ունինք  
նրան սովորել հեղինակների ընթեր-  
ցանութեամբ, բառարանների և քե-  
րականութեան օժանդակութեամբ։  
Բայց չայտնի է, որ հեղինակներից  
շատերը՝ և սոցա մէջ Եղիշէն գլուխ-  
ուր աեղերից մէկն է բանում—ունին  
գործածած անպիսի նախադասու-  
թիւններ, պարբերութիւններ, ան-  
պիսի զարձածքներ, անպիսի քե-  
րականական ձեեր, որոնք ոչ մի բա-  
ռարան և քերականութիւն չեն կա-  
րող բացատրել: Դեռ աւելին ասենք.  
նոքա չաճախ գործ են ածում ան-  
պիսի ձեեր, որ զբարարի քերական-  
ութեան և ընդհանուր քերականա-  
կան տեսակներից ապօրինի, նուն խոկ  
սիսալ են: Աչա աչսպիսի մի դասա-  
կան հեղինակ տրւում է աշակերտի  
ձեսքը, որ կարդաչ, հասկանակ, ըն-  
տելանակ գրաբարին և օրինակ վեր-  
ցնէ նրանից: Բայց աշակերտը կար-

դում է՝ և չի հասկանում շատ աեղիր. նա լսճախ գալթակդում է, հանդիպելով քերականական խորթիւնը չի գտնում իւր սովորած քերականութեան մէջ. Հաստ անգամ ուսուցիչը զժգոն կը մնայ աշակերտից՝ եթէ սա իւրացնելով Նղիշէի կամ ուրիշ մասենագրի մի բանի հախաղասութիւնը՝ հետեւելու վնի նորան իւր շարադրութեան մէջ. Զէ որ դասարար ամսարաստած մասենագրի մշակման մէջ առաջին տեղը պէտք է բռնէր անսպիսի հաստածների լուսաբանութիւնը—մեկնել մութիւնութիւնը, բացատրել բառի չառուկ, անսովոր գործածութիւնը աւսինչ տեղում, քերականական խրթութիւնները պարզել, խորթութիւններն ու սխալները նշանակելու թէ որչափ շատ են անսպիսի բացատրութիւնների պէտք ունեցող հաստածներ՝ երեսմէ հետապակ օրինակներից, որ քաղել ենք Նղիշէի առաջին երկու եղանակներից միան (որ ամբողջի մի քառորդն էլ չէ կազմում):

«Ոչ քանձին կարուութիւն երկրաւոր առաստ կիսութեանդ լրաման». «առ ինչ արդեօք հրամակեսցես (,) քան եթէ հրամակեցիս լաւագունացն». «բաղամ ինչ է սրբութիւն աստար լինել անօրութեան»). «ո՛ռք կամեսցի՝ ընդունի իբրե զնահաստակ առաքինի» (Երես 10). «ընկալաք պհամականի լաննախանձ քուրդ բարուց բնութեանդ» (12). «հրովարտակ եհաս լոշիսարհն Հալոց, ի Վրաց և Աղուանից» և ի Լիֆնաց...» (15). «Դունդ կազմէր ի Հալոց մեծաց

զագատ և զաղատորդի» (Երես 16). «բայց սական թէպէտ և նոքա... լութ զուարձութեամբ ինսդալին՝ արտաքին տեսիլն կարի ողորմ էր» (Եր. 25, Նոտն և Եր. 26). «փութաւը ( ) որ ինչ ի մտին էր՝ զի վագվաղակի կատարեսցի» (Եր. 20). «ուստի այս ամենան գանձ ելանէ՝ զիմարդ չեն կացցէ աշխարհն Հալաստանեաց» (Եր. 27). «իբրե տեսին թէ այսու ամենանիւ չը կարացաք ձանձրացուցանել» (Եր. 27 և բաջ). «ոչ միան ձեռին չը զնի, այլ և ոչ ընդ միտս ուրուռ հարկանի, ոչ միան ընդ մարմնականաց՝ այլ և ընդ անմարմնն հրեշտակացն» (Եր. 32). «Փիւրմէ հնդկութենէն» (Եր. 34). «Պիւրատար ի վականջս ամենեցուն» (Եր. 35). «աման ի ամուճն է առ» (Եր. 40). «զոր և ձեր ոմն քաջ վիմասնոցն ասաց», «զանցաւորք լանցանացն ամօթալից». «ըմպել ըմպէ գան» (Եր. 36). «եթէ առ մարդիկ այս պաշտի, ի ձեռն թագաւորական վիճակին խրատուն խուամ տանել իւրումիշնանութեանն» (38).<sup>1)</sup> «ոչ ումնիք թողացուցից ի մեծամուճ հարւածոցն» (41). «Հառաջքան զգործ պատերազմին հասանել ( ) զգալ իսկ առ նա մեծի շնորհակալութեան համարէր». «ոչ մի ինչ

<sup>1)</sup> Այս նախադասութիւնը սխալէ թարգմանել և պ. Գուկասեան (Եր. 51). պ. Յովհաննիսեանի բառարանովն էլ անկարելի է ուղիղ թարգմանել. Սա նշանակում է. «եթէ մարդոց մէջ սովորական է, որ զատաւորը թագաւորից ստացած արտօնութեամբ պատմի միջոցով կառավարում է իւր իշխանութիւնը»:

լալոցանէ ամեննեին ինչ ոչ լիշեաց»։ Նեթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն։ Վիւրաքանչիւր ծունդ նմա ոչ կրկնես-ձիք» (43)։ Սոքա միան ան մթու-թիւններն են, որ մեր կարծիքով աշակերտը իւր ուժով չէ կարող բա-ցատրել. տարափում չը կաչ, որ աշա-կերտը շատ աւելի կը գտնէ այսպիսի տեղեր վերոլիշեալ էջերում։ Խակ ահա օրինակներ քերականական խորթու-թիւնների և սխալների, որոնք աշա-կերտին պէտք է անշուշո զալթակ-զեցնեն։ «Պամենաճն մըրկածին օղովքդ անց ան ի ց ե մ ք» (11). «աւր մի Անատոլ անուն... առաքեաց առ նա» «իր ոք զի ի հուր բորբոքեալ ւա-ւելլով բազում նիւթու փառտից» (13). «որթամ արդելուս և փա-կես զամեննեսեան՝ կատար ի ն խորհուրդք կամաց քոց..., և աթիրես զու երկրին Քուշանաց և Յոնք խակ ոչ ելան են ընդ քո իշխանու-թիւնդ» (15 և չաջ.)։ «Տ ա ն ե ա լ ի բաց զակերտաթիւնն՝ ընդուն է ք զիթիու մահու» (18). «զի՞նչ հատուա-ցուք մեք աստաւածոցն, որ ոչ ոք կարաց ելանել ընդդէմ մեր» (23 և չաջ.)։ «աւ ւ ս ր չ ա մ ե ն ա ւ ի ն ի վե-րաց»։ «աշխարհագիր առնելով ամե-նաւ ի ը կ ի բ ն հ ա լ ո ց» (26). վասն թղի միու ուտ ելու ի ծառոցն՝ Աս-տուած զմահ արար» (28)։ «զարիկե-րական իշխանութիւնդ» (1) զոր աւ-անդեալ է զմա ՅԱստուածոց» (31)։ «Աստուծու լալոնի է ան գործք մարդկան» (32)։ «չար արժան է ասել թագաւորին» (եր, 33) և նմա անելք Աստուած չնարթի ասելու» (34)։ «և ի ը ր ե ոչ եթէ լոտար գո-բութինէ չարի ինչ ընկալաւ ու րուք

զալատիմս պատուհասին» (եր, 34)<sup>1)</sup>։ «ազարէս խառնեալ են տարերքս աչա» (35). «երեւցաւ ալոց բազ-մաց (,) աւելի քան չինդ հարիւ-րոցն» (39), «ոչ վոխանակնմք ընդ Յիսուսի Քրիստոսի, որ չիք ալ Աստուած բաց ի նոմանէ» (40). և «աամ անցուցանել ընդ անձանա-պարն տեղիս, որ և բազումք ի ձէնչ չերթալն ստավիսցին» (46). «ամե-նան (,) որ ինչ և առես՝ վազիա-զակի կատարի» (41). «մեք նորա մահամբն չաւ ի տեն ական մահ-անէն ապրեսցուք» (40). «զունդ կազմին, որ զնոսա շիօթակ արաս-ցեն» (47). «զաւս ամենաճ որ ասու-ցաք» (5):

Այս օրինակները դեռ պէտք է բազմապատկենք չորս կամ հինգ ան-գամ, որպէս զի ունենանք նմանորի-նակ տեղերի քանակութիւնն ամ-բողջ բնագրում. մասունորից բազ-մապատկենք զննէ չորս անդամ՝ որ-պէս զի ստանանք խմական քանա-կութիւնն ան տեղերի, որոնք աշա-կեր աթի համար բացատրելու կարիք կաչ Հեղինակի առաջին գործը պէտք է լինէր աչս անհրաժեշտ լու-սարանութիւնները տալ առունց որ-ունց գիրքն, իբրև զասարանական ձեռնարկ, կորցնում է իւր նշանա-կութիւնը Երանի թէ նա աչքի ա-ռաջ ունեցած և հետեած լինէր Հ. Թոռնիանի աշխատասիրած «Հատըն-տիր ընթերցւածք ի մատինագրու-

<sup>1)</sup> Երեխի հարկաւոր է բառերի տեղափոխութեամք կարդալ. «և ոչ եթէ իրրե լոտար ինչ զօրութենէ չարի ուրուք ընկալաւ...»։

թեանց նախնեաց» (Վիեննա, 1866 և 1891) գեղեցիկ ձեռնարկին, որ իւր բազմաթիւ՝ բնագրի լուսաբանութիւններով լիրակի օգտակար ծառադումիւն է մասուցանում աշակերտին։ Առանց այս կարեոր մշակման դրքի բնագիրը մնում է մի լոկարտասպութիւն, առանց որ և է լարմարութիւն առելցնելու դասարանական գործածութեան համար։

Բայց իրեւ լոկ արտասպութիւն է՝ բնագիրը շատ չաճախ մնալունչում է ուղղագրութեան դժմ։ Եթէ ուղղագրութեան սիրալները զատապարտելի են որ և է գրւածքի մէջ՝ աններելի են դառնում զատալանական ձեռնարկում։ Ամեն մի բառ, ամեն մի խօսք, որ աշակերտի աչքի տակից պիտի անցնի՝ պէտք է նորան առաջնորդէ զէպի դիտութիւն, դէպի ճշմարիտը, զէպի ուղղը։ Որ և է սխալ, որ կարող է զիւրաւ տպաւորւել աշակերտի տախուրա բառ ուղեղում՝ շատ դժւար կը լինի այնուհետեւ հանել նորա զիլսից։ ուրեմն մանկավարժական տեսակէտից՝ յանցանք է ուղղագրական սխալներով խնորդած մի զիրք տալ աշակերտի ձեռքը։ Խոկ մեր քննած գիրքը այս կողմից առատ նիւթ է մատակարարում ամեն տեսակի սխալ ուղղագրութեան՝ տպագրական վրիսակների, սխալ (աւելորդ, պակաս, անձիշտ) կէտագրութեան և անզրագէտ տողագարձների։ Ահա մի քանի օրինակ, որ վերջնում ենք դարձեալ գրքի 9—50 երեսներից (առաջին երկու եղանակներից)։ Տառասիալնիր (բացի նոցանից, որոնք ոլ, հեղինակը ցուց է տւել իւր գրքի վերջում)։ կամակա-

բութեան (10) սկըսցուք, կըուժը (12—ուրիշ հազարաւոր անգամներ, նաև որտեղ պէտք է՝ ալդ ը զիրը չէ դորձածւած), մողք (մոդքն՝ 14), իմտի էին (16), իդինիդ (86), մննք (36), ի կամ (ի կամն՝ 37), զկողմանց (կողմանցու՝ 39), բայր ամենալի (բայր ամենալինի վերաւում՝ 40), նոնպէս և 53 երեսում՝ մասց մոռագութիւններութիւն։

Մսալ կէտագրութիւն, «Եթէ հարկանեն» (՝ չզգանո). «գասպականելի մարմինդ զէշաքարչ արարեալ (՝ իրեւ զազիր մեռելութի ի բաց ընկեցեալ» (14). «պանդիման լինէին փութով կատարել զէրամաննո» (16). «փութով լանդիման լինէին, թէ փութով կատարելին զէրամանն բայսնի չէ»). «վարէին լուսարութիւն (՝ չաղնաւական պատառն անսարգեալու»։ «ընդունէին զամնենան չարչամանն զամնան վասն մնծի լուսուն (՝ որ առաջու պատրաստեալն կայ) (25). որ չարաբերականով երկրորդական նախաղասութիւնը միշտ առանց ստորակէտի), «գովին զմա՞ն և պարսաւն զինանս, անարգեն զծուունդում մարդու, և զովին զամնորդութիւն» (29. ինչ պատճառ կայ որ մի տեղում բութ լինի, —զմա՞ն խոկ միւս տեղում ստորակէտ - մարդու)։ «Եթէ զմա՞ն (՝ չար աստւածն արալ» (34). «պականէ, յանւանէ» (42, և միւնուն երեսում զարձեալ չականէ յանւանէ, առանց ստորակէտի, որ առաջնից լու է), «զորժամ ի հայոց ապուձի ի դուռն երթալը (՝ ի ձեռն պատւառի զօրապլիսի ուրուք, ալք ընդ առաջ լոկէր» (43—լութի պակաս և ստորակէտի աւելորդ լինելու պատ-

ձառով միտքն ալպալում է). (մի,  
ի մարդկանէ) (45.—պէտք էր՝ մի ոք  
ոք ի մարդկանէ):

Անդրագէտ տողադարձ, մարտ-  
նչէր (12), եկ-եալ (14), լրջ.-մտու-  
թեամբ, խորհ.-դուլք, արար.-եալ (16),  
ձալլն.-դուլք (17), ծճնդ.-եամն (33),  
բարեր.-արութեանց (40), որդ.-եաց  
(42), հալեց եալք, հարկ.-աւ (44),  
հնար-ից, խոց-եալ (47) և ալճն և ալն:

Բնագրի մասին վերջացնում են ք  
մեր խօսքը, զանց առնելով կանգ  
առնել այս կէտին վերաց թէ որչափ  
անդաջող ընտրութիւնն է Եղիշէի պատ-  
մութի մոր՝ իրեւ դասարանական  
ձեռնարկ՝ գրաբար ստորելու համար.  
Նողապէս թէ որչափ անհնապատակա-  
չարմար է ամը ողջ գրւածքը դնել  
աշակերտի առաջ, որի համար շատ  
տեղ անհնասկանալի պիտի մեաչ, շատ  
տեղ անհնասաքրիքական է, շատ բան  
կրկնւած և ձանձրացուցիչ տեղ տեղ  
էլ ոչ պատշաճաւոր (զոնէ փոքրերի  
համար):

Ծանօթութիւնների մասին շատ  
բան չունինք ասելու: Կոցանից մե-  
ծագոյն մասը տեղեկութիւններ են  
գաւառների, ազգերի և ուրիշ լա-  
տուկ անտենների մասին. փոքր  
մասը՝ պատմական բացատրութիւն-  
ներ, մի-երկու հատ էլ լիզւագիտա-  
կան նկատողութիւններ: Այս ծանօ-  
թութիւններն, ինչպէս ինքը հեղի-  
նակն էլ բացնում է՝ քաղւած են  
ինձինեանի, Ալիշանի, Պատկանեանի  
և ուրիշ գիտական ներկայական մաս-  
ինքնական մասին մեջ բերել Եկանինի  
թարգմանութիւնը, որով Աեր-

տեղ պատահում են անձշոռութիւն-  
ներ, սխալներ, հնացած կարծիքներ.  
աչսպէս, օրինակ, հեղինակն Արշա-  
կունեաց միթղը դնում է 149 թ.  
նվ., (երես 183.—գոնէ պէտք էր  
մէջ բերել Պատկանեանի կարծիքն  
այս նիւթի վերաբերութիւններ, Մատեր.  
դլա. արմ. շլու, ՎԱՊ., II, Երես  
49—64). նաւասարդ ամիսը, նորս  
կարծիքավ, «միսւելով լուվափ 11-ից,  
սմում է մինչև օգոստոսի 10-ը» (Եր.  
195.—նա մոռանում է, որ հայոց  
հին տամարը շարժական լինելով հա-  
ւասարզը կարող էր սկսել տարւակ  
365 օրից ամին մէկումն էլ, լուվափն,  
տունիսին, մապիսին և ալն, մինչև  
մեծ շրջանը բոլորելով կրկին դար  
համնէր իւր սկսած տեղը). նա  
ասում է, թէ Ատրապատականի հաչերը  
Վարդանի չաղթութիւններից ոգեսր-  
ւելով ոտքի են ենում (Պարսկաս-  
տանում) և սկսում են քանդել տա-  
րուչանները (Եր. 202.—մինչդեռ Եղի-  
շէի խօսքերը շատ պարզ ցուց են  
տալիս, թէ այդ բանն անողները  
տեղացի հակերը չէին, այլ Հայոս-  
տանից Ատրապատական չարձակւած  
խմբեր). Սեր (աւելի լաւ է Սերա)  
անունը բացատրելու համար բաւա-  
կան է համարում մէջ բերել Եկանինի  
թարգմանութիւնը, որով Աեր-  
Տիրա-Ասորիք (Եր. 203.—մինչդեռ  
Խորենացու աշխարհագրութեան մէջ  
Սիւափա անունը (լունարկն Սէռա)  
և ուրիշ շատ բառեր ցուց են տալիս,  
թէ Սեր կամ Սերա՝ քաղաք է եղել  
Զինատուանի արենելեան կողմը—  
Պատկ. Արմ. Գեօրգ. Եր. 83—84).  
նա շարունակում է գեռ Խորենացու  
հետ մեզ հաւատացնել, թէ Փառա-

լուս անունը ծագել է Փառոխից, Սղկունիք՝ Սլաքից, Դիմաքուան նշանակում է Դիմակիսեան և ալին (207, 214, 212). Ոստան ի կ բառի նշանակութեան մասին շատ մուժե և անձիշտ հասկացողութիւն ունի (209). Սեպաւէ բառի նշանակութիւնը «ճա չը դիտէ» (209.—բայց արժեր դիտնալ Ն. Մառի տւած սրամիտ և գոհացուցիչ բացատրութիւնն ալս բառի). Նորա համար՝ «դաշնոց թղթի ծագումն մինչև աժմ կասկածելի» (204—Կ. Ա. Շահնազարեան, Գուտաշմիտ, Ա. Տաշեան, Բ. Սարգսիսեան և ալին լուլորովին կարող էին վարատել ալս հնագարեան կասկածը, որոնք արդէն երգել են ալդ թղթի վաւերականութիւնն և ապացուցել, թէ նա մի կեղծիք է Կիլիկեան ժամանակներից): Եւ ալն:

Ծանօթութիւնների մասին էլ պէտք է նկատենք, որ հեղինակը զանց է արել լուսարանել նոցա մէջ բնադրի բովանդակութիւնը, մատենագրի տրամաբանելու եղանակը, նորա մտքերի չաջորդութիւնը, ոճը և ալին, որոնք լիզուն ուսումնասիրելու համար—որին խակապիչներած է ալս աշխատութիւնը—աւելի կարենը են, քան այն աշխարհագրական և պատմական, երբեմն նոյն խակ աւելորդ ծանօթութիւնները, որոնք աւելի հետաքրքրական են Եղիշէի զիրքն իբրև պատմութիւն ուսումնասիրողին: Վերցրէք Եղիշէի ընծալականը («Յալոմ չեւթն զլուխա» մինչև վերջը), քրիստոնեանների լանդիմանութիւնն ուրացեալ հակ նախարարներին (Ա. արդապետք

էիք առաքելականն քարոզութեանցնոց), հայ հոգեսրականների դիմազրութեան որաշմունքը («Յալոմ ժամանակի ափուցան», Վեոնդի դիմազրութեան ազգեցութիւնը հայերի վերակ («Եւ իստ ալոր տագնապի»): և ալին և ալին—սորա եթէ չը բացատրեն՝ աշակերտին անհասկանալի կը մեալ նոցա ն է ր ք ի ն նշանակութիւնն և ովքը, երբեմն նաև արտաքին նշանակութիւնը, խակ երր բացի այն որ նորա աչքերը կրակ կամ արտասուք կցատեն՝ կը մրտնէ, թէ ինչ է ոճը ինչպէս իմաստները մի քանի երեսներ շարունակ ներքին կամքերով շաղկապւած են միմեանց հետ, ինչ է կանոնաւոր տրամաբանութիւնը, ինչպէս լեզուն, ճարտար զրչի տակ, կարող է կենդանանալ, համոզել, ոգերել սքանչացնել, Բնապրի ալս տեսակ բացատրութիւնը (բազօրԵ), որ ամենազգագացուցիչ կրթութիւններից մէկն է անուես է արած գասարանական գործածութեան չատկացրած ալս հրատարակութեան մէջ՝ Նոյնպէս զանց է արել հեղինակը ցուց տալ այն աղբիւրները, որոնցից մատենապիրն հաստածներ է փոխ առնում իւր պատմութեան մէջ՝ շատ անգամ: Դեռ չենք խօսում քննական ծանօթութիւնների մասին, որոնց նպատակը պէտք է մինէր բացատրել մատենապիրի աղաւաղւած ընթերցւածները, համեմատել նորա աւանդածը ուրիշ աղբիւրների հետ, որոշել իրականն երեսակալականից, ովատմականը հուետորականից և ալն, որոնք պակաս զարդացուցիչ չեն հասակաւոր աշակերտի համար և նա-

խապատրաստում են նրան՝ անկախ, անհախապաշտեալ, աչալուրջ և բազմակողմանի վերաբերութեան դէպի մտունազրական երեսթները և առհասարակ դէպի կեանքը:

Բայց ալսուամենացնիւ՝ ծանօթութիւնները համենատաբար աւելի լաւ են, կամ ճիշտն ասելով՝ նւազ թերի են, քան գրքի առաջին և երրորդ մասերը:

Բառազիրքը կազմում է հեղինակի զվարար աշխատութիւնը և գրքի ամենահետաքրքրական մասը: Հեղինակն ալսուեղ ամփոփել է Եղիշէի պատմութեան մէջ պատահած բառերը, բացատրել է նոցա նշանակութիւնը ռուսերէն լեզուվ. շատ բառերի մօս զրել է արմատները՝ սանսկրիտ, պահլաւիկ, պարավիկ և լան լեզուներով. շատ բառերի տակէլ էլ բերել է բերել հատածները Եղիշէի պատմութիւնից, երբեմն նաև Խորենացուց (և իրանից շարադրւած), որոնք և թարգմանել է ռուսերէն Եթէ ալս բառարանը դոհացուցիչ լինէր ծրագրի և մշակման կողմից աճապիսի մեծ և չնորհակալութեան արժանի գործ և մեր լեզվին ու գրականութեան պիտանի երկ կը լինէր՝ որ մոռացնել կտար զրքի միւս թերութիւնները: Դժբախասարար նա ամենաթերին, ամենապակասաւորն է գրքի միւս մասերից, ոչ միան բազմաթիւ բառերի կիսատ ու սիսալբացատրութեամբ, ազ և ընդհանուր ուղղութեան, ծրագրի կողմից: Նախ և առաջ մեզ համար անհասկանապի է գրաբար բառերը ռուսերէն թարգմանելը, և ոչ աշխարհաբար: Եթէ հեղինակն իւր աշխատութիւնը ձեռ-

նարկել է մեր ուսումնաբանների պիտուքը լրացնելու համար (լառաջարան, Ա.) նա պէտք է գիտնար, որ մեր ուսումնաբանների աշակերտներին աշխարհաբարն աւելի մատչելի է, քան ռուսերէնը, ալինքն նորաշխարհաբարը ռուսերէնից լաւ են հասկանում, ուրեմն ինքն ըստ ինքեան պարզ է, որ տնծանօթը պէտք էր բացատրել ամենածանօթ լեզուվ և ոչ աճապիսի լեզուվ, որ երբեմն նունչափակ անծանօթ է նոցա: Աշխարհաբար բացատրելը մի ուրիշ անհամեմատ օգուտ էլ ունի, որ աշակերտը դիտակցորդէն կը ճանաչէ զրաբարի և աշխարհաբարի տարրերութիւնը բառերի և գարձաւածքների մէջ, նա կը հասկանալ բառերի կեանքի ընթացքը, աստիճանաբար վախիսութիւնը դարերի ընթացքում նշանակութեան և ձեմի կողմից. նորա համար կը պարզէի բառի ներկայ, գրաբարից տարբեր նշանակութեան գաղտնիքը. նա դիտակցաբար կը հասկանալ բառը նորա ամբողջ, հին և նոր նշանակութեուրի: Աւելորդ է ասել, թէ որչափ օգտակար և ցանկալի է աճապիսի դիտակցական, զարդացուղական ըլքունողութիւնը լեզվի համար, որից պէտք է զրկվի այս բառարանը գործածողը: Բայց ենթադրյանք մի բոպէ, թէ հեղինակն աչքի առաջ է ունեցել աճապիսի աշակերտներ, որոնք աշխարհաբարը դիտեն—ալս ենթադրութեամբ նորա զիրքը մեր ուսումնաբանների, շեմքից ալ ևս ներս մտնել կարող չէ—ենթադրյանք, որ նա զիրքը կազմել է օտարազգինների համար (համալսարանների, գուցէ և լազարեան

ձեմարանի ուսանողներին համար). բայց այս դէպքում թնչ խորհուրդ ունին ծանօթութիւնները աշխարհաբար լեզուի, չ որ զոքա անմատչելի կը մեան ալովիսի ընթերցաղներին:

Նոյնչափ գրեթէ անհասկանալի է մեզ համար՝ շատ հայերէն բառերի համեմատութիւնը արևելեան և լունարէն լեզուների հետ. Եթէ հեղինակը մտաղըւել է կազմել սոսուզարանական բառարան—զարձեալ կրկնում ենք՝ բարձրագուն ուսումնարանների ուսանողներին համար—թնչ խորհուրդ կաւ հայերէն բառերի մի մասը բացատրել իրեն համացեզ վերոգիշեալ օտար լեզուներին, իսկ մեծագոյն մասը, որ նոյնչափ լարընչութիւն ունի՝ անտես անել: Միթիէ հարիւր չէր բացատրել նաև՝ աղ ալվին, աչ, ալը, աշկարակ, բաստեռն, ընմամ, թագաւոր, հմուտ, հզօր, հող, զամբար, մարտ, մեհեան, նահատակ, նկարեմ, ննջեմ, շաբաթ, պաշարեմ, պատկանդարան, պատգամ, ռամիկ, ռաբբի, սամոզ, վատախտարակ, տղակ քահանակ, քոր, քորեպիսկոպոս, քոսկ, քրաֆիկար և ուրիշ բազմաթիւ բառեր. Միթէ հարկաւոր չէր սոսուզաբանութեան մէջ առաջին տեղը տալ հայերէն բառերի կազմութիւն, որով թէ նոցա նախնական նշանակութիւնը աշկարակ կերեւ, և թէ ուսանողը լեզուի կազմութեան մասին անսպիսի լայն գաղափար, ընդարձակ հայեացք կը ստանար, որ չեն կարող տալ հարիւրաւոր բառերի զուգագրութիւնը սահմանը և այլ արմատների հետ. Կակ ալսպէս պատահական կերպով մի քանի բառերի բառեւութիւնը:

Ները թողնելը՝ ոչ մի նպատակի չի հասցնէ:

Այն հատւածները Եղիշեից, որ հեղինակը բառարանում զետեղել և թարգմանել է՝ նորից մեր զարմանքն ու տարակուսանքն են շարժում: Նոցա ամենամեծ սասը աչնքան պարզ է թէ շարագրութեան և թէ խմասով կողմից՝ որ պէտք չունի բացատրելու. խոկ փոքր մասը, որ այս կամ այն կերպով մութ է՝ ալնքան հեռաւոր (երբեմն ոխալ) թարգմանութեամբ է բացատրւած, որ սովորողին աւելի կը չփոթէ, քան նորա տարակովը կը վարատէ, Հեղինակը կարծես նպատակ է ունեցել որ աշակերտը գեղեցիկ ուսումներէն ոճով<sup>1)</sup> թարգմանէ այդ հատւածները, քան ճիշտ հասկանակ նոցա նշանակութիւնը: Բաւականանանք մի քանի օրինակներով: «Եթէ չէր մեր աճապարեալ և ի վախուսա դարձեալ միում ի մէնջ ոչ տակն ապրել». (Ա. Ճ ապար բ. մ.): «Ճի մի ալպատենքն իկեալ բառնալցին զուկերս գոյան»: (Ա. Է անդ են): «Օրէնք ասուածալին կացեն թագաւոր ի վերակ ամենանի (,), և ի նմին օրինաց ընկալցին լանցաւորք զարտիժո զատապարութեան»: «Ա. ուտւածալին»: «Եւ հրաման սաստիւ գոնապանացն առնէին, եթէ ոք լարենը առ մեզ գացցէ՝ թողցեն, խոկ լարեմլից լարեմուտս անսմաց լիցի հանապարհ»: (Ա. բ ե հ լ ք): Սոքա ոչ մի

<sup>1)</sup> Մեր նպատակից դուրս լինելով մենք չենք խօսի, թէ որքան գեղեցիկ ուսումներէն ոճով են այդ թարգմանութիւնները:

Են, և հազիւ մի տառներորդն օդ  
տակար:

Ակա ընդհանուր նկատողակիթիւն-  
ներից էտոյ երբ գալիս ենք առան-  
ձին բառերի մշակութեան քննու-  
թեան վարանման մէջ ենք ընդհում:   
Քննել բառարանն ալս տեսակիտից՝  
կը նշանակէր նորա ծաւալով մի  
գրածք շարադրել, խոկ չքննել՝ առ-  
կաբելի է, Ալպքանը միան ասենք,  
թէ շատ քիչ են ան բառերը, որոնց  
թարգմանութիւնը գոհացուցիչ լինի:  
Խոկ կիսատ և սիսալ բացարաւած  
բառեր, բառերի անսղիսի նշանա-  
կութիւններ, որ նոքա չունին Եղի-  
շի մէջ. բառեր և ոճեր, որ պակա-  
սում են բառարանում, խոկ լնա-  
գրում կան, և ընդհակառակն, որ  
բնափում չկան և բառարանում լուս  
են ընկել, բառերի նշանակութիւն-  
ների խառն ի խուն զասաւորու-  
թիւն, առանց տրամաբանական հե-  
տենգութեան նոյսա մէջ տառասիսալ-  
ներ և ալյն և ալյն—որչափ կամնանք  
կը դանէք ալս բառարանում: Հարիւ-  
րաւորներից մենք մի քանի նմուշ-  
ներ միան կը բերենք:

Հետինեալ բառերում՝ պակաս են  
փակագծերի մէջ ցոց տւած նշանա-  
կութիւնները՝ անձն (ինքն), գելում  
(չկոքական նշանակութիւննը), խմա-  
նամ (կրաւորականը), խրատ (պա-  
տիժ), համար (հաշիւ—օտքեթ), հրա-  
ման (կարգադրութիւն), պաշտեմ  
(դործածել սովորութիւն ունենալ),  
տուն (կրաւածք):

Հետեւալ բառերում սխալ են  
փակագծւած նշանակութիւնները,  
երկեամ (Ճայքհօճիկնայ), ըստ (սե-  
ռակ ան ով նշանակում է համե-

մաս), հրամանատար (повелитель—համեմատեցէք՝ հաղարապեա, որ նոյն նշանակութիւնն ունի), ձուլդ. (растопка, расплавливаніе металловъ), ձենձեր (смрадъ), ծն անդր (сохрани Боже).

Հետեւալ բառերում վակագծւած նշանակութիւնները աշխարհարարինն են, իսկ Եղիշէի մէջ չը կան. ապրիմ (житъ), կնքառ (отецъ крестный), կնքել (крестить), բարսկ (тонкий, нѣжный), սեպհական (собственный).

Հետեւալ բառերը և ոճերը պակասում են բառարանում, թէպէտ Եղիշէի մէջ կան. անարփ (ոչ-арხեաց ցեղից), անդերձապետ, ապարանութիւն, ապատ, առանձինն, ապարասանել, առաւել, ընդդէմ (մակրտ), հոչակ, անձամբ անձին առնելու ընդ գրով արկանել, ի վերին երեսու, փակտ ընկենուլ.

Հետեւալ բառերը բնագրում չը կան (ալ Վենեալիկի հրատարակութեան ընթերցւածների մէջ, որոնք սական հեղինակը չէ գևոնելի իւր բնագրում). ապարթանել պարմակել:

Հետեւալ բառերն իրանց ձեւրով անսովոր և սխալ են, որ մուծել է հեղինակն իւր բառարանում առանց զոնէ ցուց տալու, թէ որտեղ են նոքա գործածւած Եղիշէի մէջ, ապրեմ, բերկեմ, երևո, արդիւն, ընպեմ, օդի, (աչծիք ամեննեխն չը կայ):

Իսկ բառի մի քանի նշանակութիւններն ընդհանրապէս զասաւորւած են խառն ի խուռն. ոչ մի նշանով ցուց չէ տրած նոցա աստիճանարար ընդլանումը, մասնաւոր կամ ընդհանուր առումը, բուն կամ փո-

խարերական գործածութիւնը. Վերցրէք, օրինակ, Առադասա—брачное ложе, завѣса, покрывало, парусъ, флагъ. ինչու ոչ զավեսа, парусъ, завѣса для отданенія ложа поворачныхъ, \*брачное ложе. Զուգ, ածական, == равный, парный, подобный, совокупный. ինչու ոչ՝ Զուգ, գուական, пара, Զուգ, տժ., парный,\*соответственныи. Դառնութիւն — желчь, горечь. горесть, щѣкость, жестокость. ինչուոչ горесть, горечь,\*жестокость. Մարտակից—союзникъ, вѣагъ, не-пріятель. ինչու ոչ совокупно борю-թійся: Վենդանան:ալ— возстать (?) ожить, воскреснуть. ինչու ոչ ожить: Եւ ազն և ազն:

Զենք կարող անսեղ ցուց չը տալ և բառարանի մէջ սպրզած տառութիւնները (նոյն իսկ բառազլուսւիներում). Գետնախչունեալ, հաչելմ (==հա-ջելմ), մողելց դանդաղում (փոխանակ՝ գանդաղալիմ). իսկ բառերի շարքում՝ անխափ, գեշաքարչ առանձինն, մատակերամ (մատաղերամ), վշեցէք (վշիցէք), մնաս (երկու մնագամ, փոխանակ՝ վեսաս), են (էին), ատանջուկանութիւն (ատանջականութեան) և ազն:

Ամիսինելով մեր հարեանցի և կար-ձառօս նկատողութիւնները՝ մենք ցաւով սրտի պէտք է խոսա-վանինք, որ ազս գիրքը, չը նայելով հեղինակի բարփ ցանկութեան և զործ-դրած մի քանի տարւակ աշխատու-թեան՝ խոչոր պակասութիւններ ու-նենալով թէ ընդհանուր ուղղութեան և թէ մանրամասնութիւնների մէջ չէ կարող հոտնել հեղինակի առա-ջադրած նպատակին, ալսինքն ձեռ-

Նարիկ լինել մեր ուսումնաբանների գործածելով՝ կարող են տեղ տեղ  
աշակերտներին։ Նա շատ թէ քիչ օպաւել նորա ժանոթութիւններից և  
կարող է պիտանի լինել ուսուցիչ-  
ների համար, որոնք զգուշութեամբ

դործածելով՝ կարող են տեղ տեղ  
օպաւել նորա ժանոթութիւններից և  
բառարանից։

Առ. Առևելականց։

ԹԱՅԿՈ, «Քիմիա» 36 նկարներով (առարրական ձևունարկների սերիա).  
Թարգմանեց Ա. Մելիք-Ալլահվերդեան։ Հրատ. Թիֆլ. Հայոց գրքերի  
Հրատ. Բնկ. Գինն է 40 կոպ.։

Երբ դեռ մեր թեմական ուսում-  
նաբաններում չէ զառաւանդւում քի-  
միա և ուրեմն անմիջապէս ժողովրդի  
հետ շփառ ինտելիգենցիան՝ մեր  
ծխական ուսուցիչները և քահանանա-  
ներն էլ զարկ են մնում քիմիալից  
ամենատարական և անհրաժեշտ տե-  
ղեկութիւններ ստանալուց, — Հրա-  
տարակչական ընկերութեան արածը  
ալէտք է նկատվի իբրև մի շատ ժա-  
մանակաշրմար և օգտակար գործ։  
Ազգ զործը մի բարոնի եւրոպական  
գիտնականի<sup>1)</sup> քիմիալի հանրա-  
մատչելի ձեռնարկի թարգմանու-  
թիւնն է, որ նպատակ ունի ծանօ-  
թացնել ընթերցողին կրակի, ողի,  
ջրի և հողի հետ։ Թէ ինչ բան է  
կրակը, թէ ինչ է օղը և ինչ աղղե-  
ցութիւն ունեն կենդանիները և բու-  
սերը նորա վերակ, թէ ինչ զանա-  
զանութիւն կա ծովի և աղբիւրի

ջրի, կոշտ և կակուղ ջրի մէջ և աւճ-  
և ալզ, — ոռքա այնպիսի հարցեր են,  
որոնց մասին եթէ ոչ ամբողջ ժո-  
ղովրդին, գէթ նորա առաջնորդնե-  
րին (ուսուցիչներին և քահանանե-  
րին) մի քանի անհրաժեշտ տեղե-  
կութիւններ հաղորդելու պարտաւո-  
րութիւնը վաղուց է որ ծանրանում  
էր մեր բարձրագոյն կրթութիւն  
ստացած ինտելիգենցիալի վերակ  
Ահա այդ պարտաւորութիւնն է որ  
կատարել է Հրատարակչական ընկե-  
րութիւնը, Բայց ըստ մեղ զրբացի  
հրատարակելով գեռ չէ կարելի քանը  
վերջացած համարել. ձիշտ է, Ռոս-  
կոի քիմիան անքան մատչելի է,  
փորձերը անքան տարրական որ  
փոքր ի շատէ նախապատրաստած  
ընթերցողը բաւականին բան կարող  
է քաղել նրանից, բայց փորձնական  
գիտակիւնները առհասարակ և քի-  
միան առանձնապէս, որքան որ տաղո-  
կացուցիչ և դժւար ըմբանելի են մե-  
ռուծ զրքում, անքան զրաւիչ և  
պարող են կենդանի խօսքի միջոցով  
աւանդմալս և փորձերով բացարձ-  
վում Այս պատճառով ցանկալի է,  
որ քանի դեռ մեր թեմական գպրոց-

<sup>1)</sup> Հենրի Բակօ (Henry Enfield Roscoe), անգլիացի քիմիկոս, ծնւած 1833 թ., Լոնդոնում, 1858-ից պրո-  
ֆեսոր Մանչեստերում, զինէլ է՝ արք-  
միալի համառօտ զանագիրքու, արք-  
միալի ընդարձակ դասադիրքու։

Ծան. Խմբ.

ներում քիմիակի առանձին դասեր չը կան՝ բնագիտութեան ուսուցիչները լանձն առնեին կարդալ մի այլպիսի փոքրիկ կուրս բարձր դասարանների աշակերտաներին, ցոց տալով հարկաւոր փորձերը։ Մենք հաւատացած ենք, որ եթէ այդ ուսուցիչները իրանց զասերին լատկացած ժամերը զարդարեն չ'ուղենալով, ամբողջ տարւակ ընթացքում միքանի ոչ-դասական ժամեր նշանակեն այդ նպատակով, աշակերտները ուրախութիւնմբ կը լսեն և նպատակը իրագործած կը լինի։ Խնչ առել կ'ուզի որ ուսումնարաններից դուրս էլ կարելի է իրագործել այս առաջարկութիւնը, նաև մանաւանդ որ հարկաւոր փորձերը մեծածախսերիցը և դժւարներիցը չեն։

Թարգմանութեան արժանաւորութիւնների և պակասութիւնների մասին խօսելուց առաջ անկարելի է մատնացոց չ'անել մի սխալ սլրինցիպի վրաց թարգմանիչը, որպէս երեսում է, ուզում է հետեւել Միխիթարեաններին դիտական տերմինների նկատմամբ։ Թէ որքան անտեղի է արդէն ընդունած և վաղուց գործածական դարձած օտար բառերի տեղ գործ ածել նորահնար, բայց մինուն ժամանակը նոցնքան անհասկանալի հարկերէն արմատներից կազմած բառեր, այդ մասին մենք մեր կարծիքը լաւանել ենք հ. Գաֆտանի «Տարրաբանութեան» առիթով («Մուրճ» 1892 № 4)։ Միթէ օրինակ աւելի հասկանալի է մի որ և է «լուսածին» քան մեղ լուսորիս լաւանի փոսփորը, «ծորին» քան փլուսոր, կամ խնչ կարիք կատ ամենին

լաւանի և հասկանալի «կարառն» խօսքի տեղ դնել անվաստ և անհասկանալի «առարաթուղթ»<sup>1)</sup> քանի որ այդ «առարաթուղթը» հասկանալի անելու համար կողքին դնում է կարգոն (ալտինք կարտոն=carton)։ Բայց Միխիթարեաններից ընդունելով նորակազմ բառեր ուր որ նորանք պէտք չեն, թարգմանիչը չէ օգտաել նոյն Միխիթարեանների կաղմած մի այլ բառով, երբ նա մի մեծ ծառակութիւն արած կը լինէր իրան, ազատ պահելով մի խոչոր սիսալից։ Բայց ատրեմ ասածո, վաղուց արդէն լաւանի է, որ alliage'ը (ռո. ըլվան) հասարակ խառնուրդ չէ (mélange=ուռւս. ըմես), այլ զանազան տում է այս վերջինից իւր լատկութիւններով։ Արդ այդ alliage'ի համար Միխիթարեանները գործ են ածում կարագօտ բառը և զորանով որոշում են alliage'ը mélange'ից։ առաջինը կարագօտ է, իսկ երկրորդը խառնուրդը Եւ հէնց հարկաւոր էլ է, անպայման հարկաւոր է զանազաններ մէկը միւսից, քանի որ նոյն բանը չեն նշանակում alliage և mélange կամ ըլվան և ըմես բառերը։

Սխալ է թարգմանւած զրքուկի հէնց առաջին նախադասութիւնը՝ կրակ, օդ, ջուր, հող, — ահաւասիկ չորս մարմիննուն...։ Մի ուրիշ տեղ էլ (եր. 65) կրկնելով թէ կրակը պարզ մարմին է, խկոն և եթ թարգմանիչը

<sup>1)</sup> Քաջերունու «Բառգիրք արևատարից և դիտութեանց» carton թարգմանում է քարդէն, իսկ «առարաթուղթ» մինչև անգամ իբրև նորահնար բառ։ Էլ չէ բերում։

Հլում է իւր աղջ սխալ կարծիքը, աւելացնելով թէ պատակն աչն տաքութիւնն է, որը... և այն, Ռւբեմն դուքս է գալիս որ տաքութիւնը մարմին է (!)...

Մի անգամ էլ ճիշտ թարգմանութիւնն է սխալմոնքի պատճառ դարձել նոյն սխալը կայ և ուստիքն թարգմանութեան մէջ, որից ըստ երեսութիւն և թարգմանւած է հայերէնը: Մեր խօսքը երես 24-ում «տաքութեան քանակութեան» վերաբերեալ դաստիարակութեան մասին է, որ հիմնովին ծուռ է:

Հեղինակը երեխ խօսում է բարդ մարմինների ալսափէս կոչւած «կազմմելու տաքութեան» մասին (теплота образованаия), խոլ ուստի թարգմանիչը, որին հետեւելով և պ. Մելքոնավերդեանը, երկրորդ տերմինի անդ առաջինն են զրել ալսինքն «կազմմելու տաքութիւնը» շփոթել է «տաքութեան քանակութեան» հետ: Յամինայն զէպս աղջ կոտրը իւր այժմեան թարգմանութիւնով այնքան անհատկանալի է որ կարելի էր առանց խղճի խալթոցի բոլորովն զուրս ձգել:

Յետո՞յ Հապատարնայ սպիրտъ (ammoniaque liquide) թարգմանիչը ընդունել է գազի տեղ, և թարգմանում է անհաղթական գազ: բայց բայսին է որ այդ մարմինը գազ չէ, այլ հեղուկ:

Թարգմանութեան անշտութիւններից վշաստակենք մի ուշադրութեան արժանի կուրիօզ: 114 երեսում թարգմանիչը իրանից աւելացրել է մի նախադասութիւն, որ չը կայ բնագրում և աղջ նախադա-

սութիւնը թիւրիմացութեան արդասիք է: Խօսքը «կալիոնի երկաթախաժուկի» մասին է որի համար աւած է թէ «այս աղջը շատ վտանգաւոր թուն է»—մինչդեռ «այդ աղջը» վտանգաւոր թուն չէ: Շատ վտանգաւոր թուն է մի ուրիշ աղ—կալիոնի ցիանատը (խաժատ են թարգմանուած Մխիթարեանները) և աղջ է, ըստ երևութիւն, վերովիշեալ թիւրիմացութեան սկասածառը:

Մի քանի խօսք էլ թարգմանութեան լեզվի մասին և մենք վերջացրած՝ կարող ենք համարել մեր ասելքը Ռոսկոփ հայերէն թարգմանութեան մասին: Ընդհանրապէս լեզուն հասկանալի և կոկ է, բայց և աչնպէս պատահում են անցածող խօսքեր և գարձւածներ, որոնցից մի անմէկը առաջ կը բերենք: Օրինակ մի քանի տեղ կարգում ենք թէ այս ինչ կամ այն ինչ մարմինը աղատ վիճակով չէ գտնուում բնութեան մէջ, աւելի լաւ է «աղատ գրութեան մէջ» ասել:

Վերջապէս ուղղագրութեան մէջ չէ պահպանւած միաձեռւթիւն, երբեմն «վ» է ընդունւած և երբեմն «ւ», «ալրվում է» և «ալրւում է» և այլ ախաղիսի հակասութիւններ: Սըրբագրութիւնն էլ անխման է արւած: Թէպէս և զրքի սկսբում դրւած է ուղղելիք վրիպակների ցանկը, բայց էլլի մնացել են չ'ուղղած բաւականին սխալներ, որ համբակներին կորող են մոլորեցնել: օր, ցինկի նշանը Fն է տպւած փոխանակ ՀՌ և այլն:

Միեւնար Տէր-Անդրէսուն

## Նոր ստացւած գրքեր

- 1) ԼԵՒՈՆԵԱՆ, Գ. Զ.—«Հայ աշուղներ», Հրատար. «Շիրակ» գրավաճառանոցին. Աղեքսանդրապոլի տպարան Սահմեանցի, 1892 թ., գինն է 20 կոպէկ.
- 2) ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ. — «Ժողովրդի կրթութեան դործը մեզանում»: Մոսկա, տպ. Բարիսուղարեանցի, գինն է 20 կոպէկ:
- 3) ՀԱՇԻՒ Հայուձեաց Բարեգործական Ընկենութեան Թիֆլիսում վասն 1891 ամի. Տասներորդ տարի. Թիֆլ., տպ. Շարաձէի, 1892 թ.:
- 4) ՏՈՒՐՔԵՆԵԽ, Ի. Ա.—«Յաղթական սիրու երպը»: Թարգման. օր. Մարիամ Մատինեան. Թիֆլիս, տպարան Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 30 կոպէկ:
- 5) ՍԱՆԴԱԼ. — «Փոքրիկ աստղ»: Վէպ.—Մոսկա, տպ. Մ. Բարիսուղարեանցի, 1892 թ., գինն է 1 րուբլի:
- 6) ՏԱՇԵԱՆ, Հ. ՅԱԿՈԲՈՍ վարդապետ, Մխիթարեան ուխտէն.— «Ուսումնասիրութիւնք Ստոն. Կալիսթենեալ Վարուց Աղեքսանդրի»: Աղավին գրադարան № 5.—Վիեննա, Մխիթարեան տպարան, 1892 թ., գինն է 3 ֆրանկ:
- 7) ՏԱՄՆԱՄԵԱԿ Թիֆլիսի Հայուձեաց Բարեգործական Ընկերութեան (1882 մարտի 7—1892 մարտի 7-ը). Десятилѣтіе Армянского женскаго благотворительного Общества въ Тифлисѣ.—Թիֆլիս, տպ. Արօր Տ. Նազարեանցի, 1892 թ.:

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Այն մեծ ուշադրութիւնը, որով ամբողջ հասարակութիւնը հետևում էր ս. Էջմիածնում կատարւող ընտրութիւնների ներկայ մայիսի սկզբներին, և այն գօրեղ արձագանքը որ տրւեց մայիսի 5-ին Խրիմեան Հայրիկին միաժան ընտրելլ - գեռ ևս երկար օրեր կլանեց ամեն հետաքրքրութիւն դէպի որ և իցէ ուրիշ եղելութիւն, որ սովորական ամիսներում կարող էր աչքի ընկնել: Այդ սրատնառով այս անգամ՝ Ներքին տեսութեան համար դլխաւոր խօսքը պէտք է տալ Էջմիածնի թղթակիցներին: Ներկայ համարում «Մուրճ»-ը տալիս է մի լիակատար պատմութիւն այդ ընտրութիւնների, թարգմանութէն տրտառպելով ռասաց „Քաեկազ“ (Կաւկազ) լրագրում լոյս տեսած չորս «Նամակներ Էջմիածնից» թղթակցութիւնները, որոնք իւր ժամանակին ամենայն իրաւամբ մեծ ուշադրութիւն դարձրին իրանց վերաց, և միւնոյն ժամանակ «Մուրճ»-ը տալիս է իւր յատուկ թղթակցի ձեռքով գրւած (Ականատես ստորագրութեամբ) վերին աստիճանի հետաքրքրական նկարագիրը, որը սակայն, հանգամանքների բերմունքով, պէտք է մնայ միայն որպէս մի կաոր ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան պատմութեան: Կաւկազ թերթից արտատպածը իւր ամբողջութեամբ ներկայացնում է ընտրութիւնների ընդհանուր և բաւականին յաջող նկարագիրը. մեր թղթակցի դրւածքը հետաքրքրում է կուսակցական ներքին կոփեների աւելի ճիշդ նկարագրով և մի քանի աչքի ընկնող անձնաւորութիւնների լնորոշ գծերը պատկերացնելով:

Խրիմեան Հայրիկին միաձայն և իրը առաջին կաթողիկոսական թեկնածու ընտրելու լուրը աննկարագրելի՛ ցնծութիւն պատճառեց ժողովրդին և այն ամենքին, որոնց համար թանկ են ժողովրդական շահերը։ Պատել թէ այդ գոհունակութիւնը ընդհանուր էր և հաւասար նաև բոլոր կուսակցութիւնների համար, — կը նշանակի մոռանալ բոլորը, ինչ յայտնի բանակներում ասւել ու գրւել է մինչ մայիսի 5-ը, և մասամբ նոցն իսկ մայիսի 5-ից յետոյ<sup>1)</sup>։ Այդ հանգամանքը աւելի էլ մեծ նշանակութիւն է տալիս կատարւած իրողութեան, որովհետեւ Խրիմեան Հայրիկի ընտրութիւնը դրանով շոշափելի կերպով գաղափարի յազթանակի նշանակութիւն է ստանում, գաղափարի, դէպի որը հաւասար վերաբերմունք չեն կարող ունենալ և յառաջդիմականները և յետադէմ-պահպանողականները։

Այն, ինչ այս անդամւաց ընտրութիւններին մի առանձին փայլ և նշանակութիւն տւեց, այդ՝ տաճկահայերի մասնակցութիւնն էր, որպէս և պէտք է լինէր մեր հին օրէնքների ոգու և Պոլոժենիէլի համաձայն, բայց որը չէր կատարւել ներկայ գարում։

Թէ որքան դժւար դեր էր վիճակւած տաճկահայերին էջմիածնում կատարել և որքան դեռ ևս հայկական ոգի պէտք է ապրէր նոցա մէջ բուն ազգային մի ընտրութիւն կատարելու համար, այդ ինքն ըստ ինքեան շատ պարզ է...»

---

Տաճկահայերի մեր երկիրը գալը անշուշտ իւր հետևանքները կ'ունենայ։ Մի աւելի սերտ կապ, որ պէտք է գոյութիւն ունենայ նոցա ու մեր մէջ, ահա մի խնդիր, որին մի նոր զարկ տւեցին ներկայ կաթողիկոսական ընտրութիւնները։ Դա մի անհրաժեշտ խնդիր է, ծանրակշիռ խնդիր, որովհետեւ զորանով պէտք է պայմանաւորւի մեր իրար հասկանալու ընդունակութիւնը։ Տաճկահայ պատգամաւորների ներկայութիւնը մեր երկրում ակներեւ ցոյց տւեց, որ եթէ

<sup>1)</sup> Այդ բանակի օրկաններից մէկը, «Նոր Դար»-ը, որ ամենամօտ լարերութիւնների մէջ էր բոլոր հակառակ պատգամաւորների հետ, դեռ ևս ընտրութիւններից յետոյ յախանց, թէ Խրիմեանին ընտրեցին որպէս ժողովրդից ամենասիրածին, իսկ Խղմիրլեանին՝ որպէս յարագութուն կաթողիկոսացուի։

մենք գեռ. ևս չենք կորցրել այն ընդհանուր զդացմունքը, որը կարող է մարմնանալ մի այնպիսի ակնյացնի մեծ անձնաւորութեան մէջ, ինչպիսին է մի Խրիստեան, բայց նոցա և մեր կեանքի պայմանները այնքան տարբեր են, որ այն միակ բանից դուրս՝ մենք կարող ենք իրար բոլորովին չը հասկանալ: Տաճկահայ պատգամաւորներից ամենախնտելիքնեներից մէկը, որը իւր ընդհանուր գառողողութիւններով ամենից մօտ կարող էր համարւել մեր գաղափարներին, ամենայն լրջութեամբ սնդում էր թէ իրը Կովկասի հայերը 30 առարով աւելի չետ են տաճկահայերից. և ինչու. որովհետև 30 տարուց դէս նոքա սահմանադրական ազգ են: Մեր խորին յարդանքը յայտնելով այն ջանքերի համար, որոնց արդիւնքը եղել է տաճկահայերի սահմանադրութիւնը, ես չեմ կարող սակայն չասել, որ դորանով միայն չի կարելի ամեն ինչ ձեռք բերած համարել. տաճկահայերին կարծես միանդամացն անհասկանալի է այն, ինչ մոտաւոր կողմից կատարւում է մեզանում՝ դպրոցների, մամուլի և գրականութեան միջոցով, որ բոլորը միասին առեղծում է մի յառաջդիմական սերունդ, սերա կերպով կապւած ժողովրդի և հողի հետ, որ ե զլիաւոր գրաւականն է այդ շարժման արդիւնաւորութեան: Ես չեմ ուզում շափականցնել ձեռք բերածը, բայց անկասկած է որ բեղմնաւոր գործունենիութեան համար մեզանում մի աւելի համերաշխ սերնդի առողջ սերմեր կան, քան Տաճկաստանում, և որ տաճկահայերի սահմանադրութիւնը որքան էլ թանկագին լինի, բայց նա միակ չի կարող մաքառել բուն հայրենիքում՝ տիրող խղճութեան և խաւարի դէմ:

Այսպէս կամ այնպէս Կովկասի հայերի բարոյական ներդործութիւնը Տաճկա-Հայաստանի վերայ անհրաժեշտ է: Որպէս զի տաճկահայերը մեզ հետ ընդհանուր տեսակեաններ ունենան այլ և այլ իննդիրների վերայ, պէտք է որ Տաճկա-Հայաստանի գիւղերում ու քաղաքներում կազմեն մերին նման ինտելիգենցիայի շրջաններ: Եւ ես ահա դանում եմ, որ այդ կարելի է զլիաւորապէս նրանով, որ տաճկահայերի դպրոցներում գլխաւոր գործող անձերը լինեն Կովկասի հայերից:

Մեր մամուլը այդ կողմից կարող է անշուշտ մի յայտնի գեր կատարել. բայց Թիւրքիայի նման մի տէրութեան գաւառական

Խորքերում հակողութիւնը այնքան մեծ է տոպւած թերթերի և զբքերի վերաց և այնքան մեծ կասկածով են վերաբերում դեպի այլ երկիրներից սասացող հրատարակութիւնները, որ դեռ ևս զուր կը լինի մեծ յոյսեր զնել այդ ֆակտորի վերայ: Պետական հանգամանքները այնպէս չեն որ կարելի լինի յոյսեր տաճել թէ մեր թերթերը կարող են շոշափելի քանակով Թիւրքիայում տարածել: Այսոեղ հարկաւոր են կենդանի մարդիկ, և ոչ ոք առ այժմ այնքան լաւ հանգամանքի մէջ չի կարող լինել այդ գործը կատարելու, որքան ուսուցիչը:

Բարեբաղդաբար այդպիսի մի հոսանքի սկզբնաւորութիւններ կան այժմ: Տրապիզոնի հայոց վարժարանը կիսակովկասեան բնաւորութիւն ունի արդէն, շնորհիւ ացր ուսումնարանում իշխող ուսուցական տարրի, որի համար միայն շնորհաւորել կարելի է Տրապիզոնի հասարակութիւնը: Զմիւռնիացի մասին չեմ խօսում, չը նայած որ այնակազի վարժարանի տեսուչը Կովկասեան հայերից հմուտ մանկավարժ է, Զմիւռնիան շատ է հեռու հայրենիքի աղբեցութիւնից: Աւելի մեծ յոյսեր կարելի զնել Եջմիածնի հեմարանում ուսանող տաճկահայերի վերաց, որոնք կը վերաբառնան և հայրենիքում կը գործեն թէ որպէս ուսուցիչներ՝ և թէ որպէս հոգեուրականներ:

Ահա այդպիսով երբ Տաճկա-Հայաստանի գլխաւոր կէտերում թափանցած կը լինի մեր կուլտուրական հոսանքը և ինտելիգենցիայի տեղական շրջաններ կազմուած կը լինեն, այն ժամանակ թերեւս կարելի լինի յուսալ որ սահմաններով իրարից անջատած աղդի մասերը իրար աւելի կը հասկանան, քան նոքա այժմ են հասկանում, այժմեանի չափ ենթարկւած չը լինելով Պոլսի հասարակաց կարծիքներին. այն ժամանակ Կովկասի հայերի յառաջդիմական քայլերը աւելի շուա կարող են ներգործել Տաճկա-Հայաստանի ազգաբնակութեան վերաց, և մեր մամուլը և գրականութիւնն էլ մինչ այժմ դեռ ևս չը տեսնած ծաւալում կը սաանաց սահմանից դինը, և նոյն խոկ այժմեաց սահմանազրութիւնը աւելի լաւ դործիք կը կարողանայ ծառայել յառաջդիմութեան գործի համար, քան նա այժմ է ծառայում:

Կաթողիկոսական պահի վերայ մի Խրիստոն առելի քան ով և  
իցէ ուրիշը կոչւած է զարկ տալ այս կարգի մոքերի իրազործման:

Մարտի համարից ընթերցողը տեսաւ թէ ինչ դրութեան մէջ էր հայոց թատրոնական խնդիրը այդ ամսում; Նա տեսաւ որ թատրոնական գործը շարունակելու համար սկզբունքների կոիւ է ծագել թատերասէր հասարակութեան մէջ և որ մի մասը անսպայման ուզում էր որ թատրոնը գեռ ևս շարունակելի անցեալ տարւայ հիմունքների վերայ; Անցեալ տարի նւիրատու անձերը, առանց որ և է ճնշման ում և իցէ կողմից, ժողովի գումարւեցին և ընտրեցին կոմիտետ մի տարի թատրոնը կառավարելու համար. նոյնը պահանջում էին նոքա նաև այս տարւայ համար: Բայց այդ բանին դէմ կացան անցեալ սեզոնի կոմիտետի անդամները, որոնք, գուրս գալով իրանց իրաւունքների սահմանից, ինքնազլուխ կերպով որոշեցին այլ ևս սոորագրութեան չը դիմել պահեստի գումար կազմելու համար, հետևապէս ժողով չը տալ որ նոր նորատութիւնների վերայ հիմնած ընդհանուր ժողովներ կայանան. մի խօսքով նոքա չուզեցին այլ ևս ընդհանուր հասարակութիւն ճանաչել: Այդ ամենում նախկին կոմիտետի անդամներին աջակից եղաւ իշխան նապոլէօն Ամատունին, որի համար իրաւամբ կարելի է ասել, որ նա Հայոց Դրամատիկական Ակումբը իւր մի ափի մէջ է տեսնում: Շարունակ խօսելով այդ խեղճ ակումբի անունից, նա, առաջին անյաջող փորձից յետոյ, կազմեց մի երկրորդ անդամ ընդհանուր ժողով, մացիսի Յ-ին, ուր իւր պրինցիպների համաձայն և իւր կողմնակիցների միաբերան հաւանութեամբ, նոյն իսկ հակառակ տւած յայտարարութեան՝ ընտրութիւն կատարել տւեց, երբ, հրաւիրաթղթերի համաձայն, այս օրը միայն նախկին կոմիտետից հաշիւներ ընդունելու համար պէտք է հաւաքւէին: Ոչ մի բողոք չը կարողացաւ տղղել ժողովականների մեծամասնութեան վերայ, բացի նախկին կոմիտետի մի անդամից (պ. Ա. Հեջուրեան), որը հրաժարւելով հրաժարւեց իւր նախկին ընկերակիցների հետ ընդհանուր գործ ունենալ:

Այսպիսով դալ  $189^2/3$  թ. սեզոնին թատրոնի գործը կը կրի ոչ այն լայն հասարակական բնաւորութիւնը, այլ կը համարւի մի որոշ

Խմբի պատասխանաւութեան վերաց բարձած մի գործ։ Հասարակութիւնը իւր թերահաւասառութիւնը դէպի նոր կոմիտեու և անհամակրութիւնը դէպի կատարւած իրողութիւնը ցոյց ուեց նոյն հէնց ընտրութեան օրը, աւելի քան կիսով չափ դատարկ պահելով թատրոնական դահլիճը, չը նայած որ այդ օրը ներկայացումն արւում էր յօդուո թատրոնական ֆոնդին։ Երբէք մի գործ չի եղել աւելի լաւ ճանապարհի վերաց, որքան հասարակական բնաւորութիւն կրող հայկական թատրոնի գործը, որը սակայն հազիւ հիմնւած՝ արդէն հանդիպեց հակահասարակական տարրերի աւերիչ հոսանքին։

ԼՈՒՍԻՆԻ

## ՆԱՄԱԿՆԵՐ ԷԶՄԻԱԾՆԻՑ

Լջմիածին, 3 մայսի.

Եւս ևս երբէք ալստեղ չի եղել ալսպիսի ժողով, ասում են ծերերը:  
Ոչ միայն վանքի բոլոր սենեակները լիքն են, այլ և Վաղարշապատ զիւ-  
զում ամեն մի տան մէջ նորեկներ կան, Ֆողովուրդ շատ է եկել միայն  
ընտրութիւններին նաևելու համար. եկտրոների մէջ կան մինչև անգամ եր-  
կու ֆրանսիացի ճամբորդներ: Բայց ներկայ ընտրութիւնների գլխաւոր  
տարբերութիւնը նախկիններից՝ թուրքահաջ պատգամաւորների գեռ ևս  
չեղած քանակութիւնն է, այն է մօտ քաւասուն հովի, որոնց ներկալու-  
թիւնը մի բոլորովին նոր կերպարանք է տալիս ալստեղ եռացող կուսակ-  
ցական մաքառման և ընտրողական հաշիւններին: Բայց դորա մասին դեռ  
չետոք, իսկ այժմ կը սկսեմ հանդիսաւոր պատարագի նկարագրութիւնից,  
որով սկսւեցին ընտրութիւնները:

Ժամ մօտ 9-ին ալսօր բոլոր պատգամաւորները, ինչպէս աշխարհա-  
կանները նովնակէս և հոգեւորականները հաւաքւեցին վեհարանի ընդունա-  
րանը, որտեղից ուղեւորւեցին վանքը ուղեկցութեամբ սինոդի պրոկուրորի,  
որպէս նաև մարմնաւոր իշխանութեամ առանձին ներկալացուցիչ գաղտնի  
խորհրդական Պիրիթի: Օրէնքով հանդէսը պէտք է ընթանաց հացմնի կար-  
գով, որը մանրամասնօրէն որոշւած է հոգեւորական ընտրողների համար,  
իսկ աշխարհականների համար ասւած է միանց «ըստ աւագութեան քա-  
ղաքների»: Բայց որովհետեւ դա զժւար ըմբռնելի նշան է, այդ պատճառով  
պատգամաւորները զնում էին ինչպէս պատահէր, միան թէ երկու-երկու  
Բայց հոգեւորական ընտրողներն էլ լիակատար կերպով չը պահպանեցին  
որոշած կարգը: Վեհարանից դէպի վանքը ընթանալու ժամանակ երկու  
կողմերից խոճւած էր ժողովուրդը, որը ուղեկցում էր ընտրողներին՝ «կեցցէ  
Խրիմնան Հայրիկ» գոչումով. շատերը դէպի անցնողներն էին մեկնում նորա  
լուսանկարը: Լջմիածնի վանքը հին, շատ նորոգւած և ամեննեին ոչ շքեղ մի  
շինութիւն է. ներքին դասաւորութիւնով և չափաւորով մի վոքքը նմանում  
է Մոսկավի Ռւսակնակի սորութիւն: Գլխաւոր գմբէթը նոյնպէս հանգչում է  
չորս սիւների վերաէ, միան թէ ոչ գլանաձև, այլ քառանկիւնի դուրս

ցցւած կողերով. բոլոր պատերը և սիմերը, սկսած մի չափուի բարձրութիւնից, նոյնպէս նկարներով են զարդարւած—սուրբերի և սրբազնն պատմութեան դէպքերի նկաշներով. միան թէ ոսկին բացակալում է և նկարչութեան ոճը նորագոյն է և ոչ անքան խիստ ուրուն. Արեւելեան պատի երկանութեամբ իկոնոստասի նման բան է շնուած, բայց սեղանը նորա առաջն է<sup>1)</sup> և միանդաման նման է կաթողիկանին. Մայր տաճարի առանձնաբառկութիւնը, որ փոքր չափով կրկնում է Հռոմի ս. Պիտրոս վանքի առանձնաբառկութիւնը, ամելի փոքրիկ սեղաննէ հնագարեան, չսա նշանաւոր ծածկի տակ, որ պահպանւում են չորս սիմերով, տաճարի մէջ տեղում վերսպիշեալ չորս զիլիստոր սիմերի մէջ, և որ կոչում է կաթողիկոսական աթոռ. Սիւների մէջ տարածութիւնը բաժանւած է վանդակակապատով և նշանակւած է բնտրողների և փոքրաթիւ պատւաւոր այցելուների համար. Մեծ սեղանի առաջ ձախ կողմում (?) զրւած է սուզի քօղի տակ կաթողիկոսի աթոռը նորա նշաններով (խաչը, խորը, գաւազանները), սե-

ֆամասացութիւնը շատ հանդիսաւոր էր Պատարազը մատուցանում՝ էր եպիսկոպոս Ազւանեան, բայց նորա անձնական մասնակցութիւնը ընդհանուրի մէջ անհիատ էր անցնում: Երդեցողների մեծ խումբը, սպիտակ շապիկներ հագած կարմիր օձիքներով և թեքերով ամբողջ ժամանակ երգում էր. Զը նաևած մի փոքր միաձնութեան և երբեմն սուր ձայներին, խմբի երգեցողութիւնը շատ կանոնաւոր էր և ազգեցիկ: Նշանաւոր է որ երգում են հին նոտաններով. մի քանի տիրացուներ բռնած էին արծաթէ քշոցներ, սրսնցից կախ էին արտած լոժոժներ և մի քանի աղօթքներ երգելու ժամանակ չարժում էին: Բոլորը միասին վերցրած դուրս էր գալիս վերին աստիճանի փառահեղ և գեղեցիկ, աճնվէս որ թիւրքահայերից մի քանիսը, որոնք առաջն անդամն էին ներկայ գանւում ալդտեղ, չէին կարողանում արտասուրը ծածկել խիստ զգածւլուց: Պատարազը վերջանալուց վետ բոլոր ներկայ եղած եալիսկոսուները ծածկեցին սովորել չուրջաւոներ և, կիսաշրջան կազմելով պատրիարքական աթոռի շուրջը, մազմանք կատարեցին թագուոր-կալսեր և ամբողջ օգոստավիառտան կեանքի համար: Աչքի ընկաւ որ ծնրագրութեան ժամանակ բոլոր օտարահապատակ պատգամաւորները ծունկ չոքեցին, որ, ինչպէս ասացին՝ առաջ չէր լինում: Մաղթանքից լեսող սկսեց երգեցումը աշխարհական պատգամաւորների: Նորա բոլորը կանգնեցին զահի առաջ և կրկնեցին երգման խօսքերը որ կարդում էր քահանան<sup>2)</sup>: Դրանով և վերջացաւ

<sup>1)</sup> Սիւալ է. ալլ աթոռը գտնում է աջակողմնան վետեի սիմի մօտ, մինչզեռ չորս զիլիստոր սիմերի մէջ տեղում գտնում է ոչ թէ աթոռը, այլ իջման սեղանը:

<sup>2)</sup> Ալդ սխալ է. երգեցնողը եղել է ինքը տեղակալը սրբ. Արևմիա եպիսկոպոսը, Քահանակ էջմիածնի վանքում չը կա:

Ծանօթ. խմբ.

սուաջին օրւակ պաշտօնական գործը, բայց հէնց ալդ ժամանակ մկնեց պատգամաւորների խսկական գործը:

Բայնը նրանումն է որ կուսակցութիւնների կոփւը ամենասաստիկ է և կատարում է մասնաւոր խորհրդակցութիւնների մէջ: Երէկ առաւօտ (մաէլիսի 2-ին) մեծ խորհուրդ կար աշխարհական պատգամաւորների՝ նախազահութեամբ կ: Պոլիի թեմի պատգամաւոր Կիւմիւշկերտեանի: Երէկ երկկողման կար մի ուրիշ խորհուրդ Ռուսաստանի և Պարսկաստանի բոլոր աշխարհական թէ հողեոր պատգամաւորների: Բայցի դորանից չարունակ վինում են մասնաւոր ժողովներ և բանակցութիւններ: Ամենքին ալժմ լուզող գլխաւոր խոնդիրը սա է թուլ կը տան տաճկահաչ պատգամաւորները, որոնք մեծամասնութիւնն են կազմում, որ քառանուն ցուցակի մէջ, որ վաղը պէտք է կազմելի, զէթ մի հոգի մտնի Ռուսաստանի լուսաւորչական հոգեորականներից: Աբսեղացի պատգամաւորների մեծ մասը ալդ պահանջում են, բայց տաճկահաչ եւլորները մինչ ալժմ չեն համաձակնում<sup>1)</sup>:

Թիւրքիակի եպիսկոպոսներից թեկնածուներ են առաջարկում՝ Խրիմեան, Աշըգեան և Խզիւրեան: չորրորդ թեկնածուն դեռ ես չի պարզւած: Խոսում են Սահակ եպիսկոպոսի և մատումբ Ստեփաննոսի մասին (Ներկամիղիակի առաջնորդ): Թիւրքիակի պատգամաւորներից մի քանիսը առաջարկում են չորրորդ թեկնածու Շամախու թեմի<sup>2)</sup> առաջնորդ: Մեսրոպ արքեպիսկոպոսին, իբր վերջին զիջումներ Առանձին ջանքեր են լինում առաջացնելու համար Աշըգեանի թեկնածութիւնը, բայց մեծ ընդզիմադրութեան է հանդիպում: Ինչ վերաբերում է Խրիմեանին՝ երկու կուսակցութիւններու էլ նորան մի տեսակ առաջին թեկնածու են առաջարկում, բայց շատերի լեզուում, մանաւանդ Աշըգեանի կողմնակիցների կող-

<sup>1)</sup> Ալդպէս արտապաշտելով իրողութիւնը սխալ է ներկալացւած: Ռուսաստանի պատգամաւորներից և ոչ մէկը անսակող անո գաղափարը չի ունեցել, որ ցանկի մէջ անպատճառ մի հոգի ռուսաստանցի լինի: Ոչ ոք նոցանից, որոնք ցանկացել են զիցուք Սեղրակեան եպիսկոպոսին ցանկի մէջ դնել, չն մտածել զորանով պահանձնել Ու ուստատ նի հաւ հոգեորականութեան պատիւը, ալ նոքա ցանկացել են դորանով իրանց խսկական համոզմունքը արտապատել բոլոր հոգեորականների մէջ իրանց կարծիքով ամենաարժանաւորների մասին: Նոքա առանց վարանելու իրանք կ'առաջարկէին միմիան: Տաճկաստանի եպիսկոպոսներին իբր թեկնածուների, եթէ իրանց կարծիքով նոքա լինէին անպահման արժանաւորագունները: Խրիմեանին որ առաջարկել են «մերունք», նոքա երբէք չեն մտածել նորա որ երկրացի լինելու մասին: Նույսպէս իւր ժամանակին հպատակութեան ինվիրը ամեննեին մտքներով էլ չի անց կացել երբ Ներսէո պատրիարքին առաջարկում էին թեկնածու:

Ծանօթ. Խմբ.

<sup>2)</sup> Սիւալմամբ տպւած է Շուշւաչ առաջնորդ:

Ծանօթ. Խմբ.

մից, ալդ առիթով քիչ անկեղծութիւն է հնչում: Իսկ Ռուսաստանի եպիսկոպոսներից առաջարկում են Արիստակէս Սևդրակեանին և առզակալ Երեմիակին, բայց հազիւ թէ նոքա լուրջ շանսեր ունենան ընկնել նոյն իսկ քառանուն ցուցակի մէջ: Սական իրերի դրութիւնը ամեն բոլիք փոփուտում է, կարող են լինել անապասելի համաձայնութիւններ, և դեռ չի կարելի աչժմեանից վերջնականապէս որոշել թէ ինչպէս կը բաժանամն կուսակցութիւնները և նոյն ոչինը: Յամենան զեպս խնդիրը կը վճռի աւելի վաղ քան այս տաղերը կ'երևան ընթերցողների առաջ, բայց նոքա կարող են հակելի ծառալիք ընարութիւնների առաջին օրը իշխող հասնակների:

Եղանակը ցուրտ է և ամպոտ, մէկը պատել է հորիզոնը և արգելում է հսկակ-գեղեցկին՝ Մասիսին՝ տեսնել թէ ինչպէս են իրարանցնում և լուգ-ւում և կուտում խեղճ գաճաճները՝ մարդիկ՝ նորա ուների տակ:

### Էջմիածին, 4 մայիսի (ուամակ երկրորդ)

Օրէկւաչնամակը ուղարկելով ես շատ աշխատեցի, որ դէպքեր չը թողնեմ աչքից: բայց ափսոս, ալսանեղ աճնքան տպաւորութիւններ են ստացում, որ վերջինները բոլորովին չետ են մղում նախկինները: Բայց սական ես ալսօր կրկին նոյն դրութեան մէջն եմ: Բանը նրանումն է որ պատու ալսուելոց գնում է շաբաթը երեք անգամ, և այն էլ շատ գանդաղ: Մինչ ալժմ ալսուեղ դեռ չեն ստացւել Թիֆլիսի թերթերը որ ես իմ դուրս գալու օրւակ առաւտար կարդացել էի, և սական ես արդէն երեք գիշեր եմ անցկացրել ալսուեղ և դեռ Երեանում մի օր մնացի:

Աջմմ անցնում եմ ընթերցողների համար երեխ ամենահետաքրքրական մասին, որ ընարութիւնների ներքին պատմութիւնն է: Կարծեմ անցեալ նամակում գրեցի որ շարունակ մասնաւոր խորհուրդներ և կուսակցութիւնների մէջ բանակցութիւններ են լինում: Ամսիս Յ-ին ալդ խորհուրդները շարունակեցին, որպէս ասում են, մինչ գիշերւակ ժամ երեք: Մի բաղմանարդ ժողովում կուսակցութիւնները համաձայնութեան էին եկել, կնքւած բոլոր ներկաւ եղածների ստորագրութիւններով: Վճռած էր երկու կողմից հրաժարել այն թեկնածուներից, որոնք թերևս ամենաթանկադինն են իրանց կուսակցութիւնների համար, բայց որոնք հակառակ կողմից մանաւանդ ուժեղ ընդդիմապրութիւններում էին հանդիպում: Անկասկած է որ երկու կողմերից էլ զոհաբերութիւնը մեծ է: Թիֆլիսի ընթերցողները գիտեն թէ մեզանում ամենից ուժեղ կուսակցութիւնը որքան պինդ էր բռնած մի քանի թեկնածութիւններից <sup>1)</sup>: Պակաս ուժեղ չեն

<sup>1)</sup> Ակնարկութիւնն Արիստակէս և պիտիսկոպոս Սևդրակեանի կուսակցութիւնների վերաբ:

նաև Աշըղիամնի համար զողծողները. երեսում է որ թիւրքաց պատգամաւորների մէջ, որոնց թով էր տրամած ապառեղ գալու, ընտրողութիւնն էր արւած՝ ոչ առանց դիտաւորութիւնն որպա թեկնածութիւնը ապահովելու համար<sup>1)</sup>, և լատկապիս նորա օգտին պրոպագանդա անելու համար այստեղ էր ուզարկւած նոյն խակ իրաւ. Կ. Պոլսի պատրիարքի՝ ներկաւացուցիչը՝ Մալաքիա եպիսկոպոս Օրմանեան:

Այդ բացասական համաձայնութեան համնելուց լետոկ սկսեցին չարս թեկնածուների ցանկը կազմել: Նորա մէջ մտան, բացի Խրիմեանից, երեք հոգի՝ 1) եպիսկոպոս Մատթէոս Խղմիրլեան, որը զվաճառապէս չաւտնի է երկու դէպքի առիթով. Եղիպտոսի թեմի առաջնորդ եղած ժամանակ նա պաշտպանեց հոգևորականութեան իրաւունքները հոգեորդ կալքերի խնդրում, որ չարուցել էին տեղական իշխանութիւնները. խակ աւելի չիտոյ նա եկել էր լշմիածին համոզվեալ կաթողիկոս Գէորգի մօտ լանձնարարութեամբ Կ. Պոլսի համոզուցեալ պատրիարք Ներսէսի, Բերլինի դաշնադրութեան մի քանի յօդւածները չուտով իրավուրծելու նպատակով ընդհանուր հողասարութիւն անելու համար, որ սական Գէորգ կաթողիկոսը չ'ընդունեց.

<sup>1)</sup> Կաւկազի խմբագիր պ. Ն. Միլիստինի ակս տողերը վերաբերեալ թիւրքահազ պատգամաւորներին մեզ թւում են ճշմարտութեան ոչ բոլորպին համապատասխան. մեր ստացած տպաւորութիւնների համաձայն՝ ակսպէս առած երդեւալ աշըղեանականներ տաճկահազ աշխարհ ական պատգամաւորների մէջ չը կալին և, եթէ չենք սիսալուսմ՝ նոյն խակ տաճկահազ հոգևորական պատգամաւորների մէջ աշըղեանականներ թերես լինէին 4—5 հոգի և ոչ աւելի: Բացի կար ապալիսի հանդամանք՝ Կովկասեան մասուցի մի մասը՝ «Արձաղանք» և «Նոր-Դար», և Կ. Պոլսի թերթերից մտնաւանդ «Արենելք»-ը և միւս կորմից այդ թերթերի կուսակցութեան մասնաւոր նամակագրութիւնները անքան կարողացել էին լեզուցին այժմեալ անդամակալութեան օրերով պատահած դէպքերի բնաւորութիւնը, որ, կարելի է համարձակ ասել՝ տեղակալ Երեմիա եպ. և Արիստակէս եպ. Սեղմարակեան թիւրքահաների աչքում ընդհանրապէս վաս մտքով երկիւլալի անձնաւորութիւններ էին ճանաչւած, մինչև որ այդ պատգամաւորներից աւելի բարեմիտները իրանց կարծիքները արմատապէս չը փոխեցին անդն ու տեղը իրանց լսածնները վերստուգութեան ենթարկելով: Ահա միան չնորհէւ այդ հանգամանքների թիւրքահազ պատգամաւորների ահագին միծամանութիւնը, առանց մնձ երկրպագուները լինելու և մինչև իսկ հակառակ լինելով Աշըղեան պատրիարքին, հաշտում էին սորա թեկնածութեան հետ, եթէ միան գտնմէր մէկը որ քաջութիւն ունենար այդ թեկնածութիւնը հրապարակապէս պաշտպանելու: Եւ ահա մէկը՝ նոյն պատրիարքի ներկալացուցիչ Մալաքիա եպ. Օրմաննեանն էր, որի հեղինակութիւնը սական բաւականացանի մնձ չէր չեզօքացնելու համար անդորմը ընդդիմապրութիւնը, որ արւեց Աշըղեանի թեկնածութեան դէմուսահազ և պարսկահազ աշխարհական պատգամաւորների, սինողի անդամների միծամանութեան և միարանութեան ներկալացուցիչների կողմից:

2) Խորէն եալ. Միսիթարեան, Երուսաղէմի միաբանութիւնից, որ արդէն տասն երկու տարի է Եղեսակի (Ուռհա) առաջնորդն է, և 3) տեղակալ Երուսաղէմի պատրիարքի Երեմիա եալ. Տէր-Ասհակեան, Կապին նաև ազլ կանդիդուներ, որոնց մասին առաջ առելի էին խօսում, քան այս երկու վերջինների մասին, բայց ցուցակի մէջ նոքա չը մտան ազլ և ազլ պատճառներով: Սահակ եալ. Խապաէեան, Երուսաղէմի թեմի հոգեորակեան ներկալացուցիչը առաջ վիշտում էր որպէս թիկնածուներից մէկը, բայց նա չը կարողացաւ անձամբ նպաստաւոր տպաւորութիւն գործել իւր վարուդութեան մի փոքր առած ձեւերով: Խնչ և է, ցանկը կազմեսց: Թիւրքահազ պատղամաւորների նշանաւոր մասը սական ալդ ժամանակ առանձին ժողով ունէր, և համոզցնել նորան որ ընդունեց կադացած համաձայնութիւնը շատ դժւար էր: Արիստակէս եալ. և տեղակալ Երեմիան ցանկութիւնն իսպանցին որ նոցա անունները ըոլորալին չ'արտասանւէին վիշեալ թիկնածուների չարքում: Արտղիսով տարածանութիւնները որ սալունում էին քանդել ձեռք բերած համաձայնութիւնը, հեռացւեցին, չնորհիւ ալդ եպիսկոպոսների անշահասել վարժունքին<sup>1)</sup>:

Վանքի եկեղեցում դարսած էին երկար սեղաններ երեսները զէպի Միածնի իջման տաճարը: Եկեղենին պատրաստած էին տեղեր 66 ընտրազների համար, բարձրագույն իշխանութեան ներկաջացուցիչ գաղանի խորհրդական ն. և. Պրիրիլի, պրոկուրորի և քարտուղարների համար, և երեսաց որ նեղւածք էր ազդքան հոգու համար: Բացի ներկայ եղողներից, օրէնքի համաձայն, ոչ ոք կողմնակի անձերից չը թուլ տրւեց ներս մտնել եկեղեցու մէջ նիստի անողութեան ամբողջ ընթացքում և զուռը միաց փակւած: Նիստը բաւական ուշ սկսւեց, ան է տանուամէկից քառորդ ժամ պակաս, որովհետեւ ամեն ինչ պատրաստ չէր եկեղեցում և ամենքը իւր ժամանակին չէկան: Հաղորդում եմ մանրամատնութիւններ ներկայ եղածների բերանից:

Նիստը սկսւեց ազօթքով: ապա նախագահող Երեմիա եպիսկոպոսը

<sup>1)</sup>) Մենք կ'առէինք՝ չնորհիւ ալդ եպիսկոպոսների խելացի հեռաւութեան: Եւ իրօք, ամեն բանից երեսում է որ նոքա, իրանց դէմ ունենալով գրեթէ, բոլոր տաճկահաջ պատրամաւրներին և Ուռւսաստանի հոգեոր ու աշխարհական պատղամաւրներից մի թէն փոքրադոցն մասը, բոլորալին չը պէտք է լաջողէին ընկնել քառանուն ցանկի մէջ, բացի եթէ թիւրքահակերը ուղենապին քաղաքավարութեան դործ կատարել Բայց եթէ թիւրքահակերը հարկադրւէին ալդ քաջն անելու, նոյցա մէջ կ'ուժեղանար Աշբքեանին ցանկացող սրատպամաւրների ձախը, և Աշըգեան նոխնպէս կ'ընկնէր ցանկի մէջ, իսկ զորա հեռեանքը անհաշվի կը լինէր: Արտղիսով Արիստակէս եալ. Սեղբակեան և Երեմիա եալ. հրաժարութելով անձնադիւ ոչինչ չը կորցրին, բայց զորանով մէծապէս նպաստեցին Աշբքեանին հեռացնելուն:

քարող խօսեց. զորանից լետու կարդացւեց վարարարութիւնը բարձրագոն (մարմառաւոր) իշխանութեան ներկազացուցչի նշանակելու և նիստի բացման մասին, որից լետու սկսւեցին ընտրութիւնները. Կրտսեր թեմը Պարսկա-Հնդկականը համարւելով՝ նորա աշխարհական պատղամառը ալ. Համբարձում Առաքելեանը առաջինը վերկացաւ<sup>1)</sup> և արտասանեց հետեւալ ճառը.

Համաձաւն այն ազատութեան, որ օրէնքը և մասնաւորապէս նոյն օրէնքի 16-րդ օդւածը տալիս է լիուլի ժողովս ամեն մի անդամին, ըստ իւր ուղիղ համացողութեան և ըստ մաքուր խզձի մոտց արտասանալու իւր կարծիքը չորս աւագագոն թեկնածուների մասին, որոնք պիտի հա-

<sup>1)</sup> Յակոնի է որ օրէնքի համաձաւն կաթողիկոսացուների քւէարկութեան ժամանակի առաջին քւէն կամ առաջին ձանը սկատկանում է Հայաստանեաց եկեղեցու վարչական թեմերից կրտսերագոյնի ներկայացուցչին. Պարսկա-Հնդկական թեմը սակայն, ոչ թէ կրտսերագոյնն է, այլ Հայաստանեաց եկեղեցու բոլոր 53 թեմերի մէջ (որոնցից 45-ը Թիւրքիայում, 1-ը Խուսիայում, 2-ը Պարսկաստանում և Հնդկաստանում) այն թեմը վեցերորդն է (Երևանի, Երևանազէմի, Պոլսի, Տևոստարիալի և Թիֆլիսի թեմերից լետու): Պր. Հ. Առաքելեանցը իւր «Նամակ Խմբագրին» գրւածքով, տպւած „Կաեզմ“ 1892 թ. № 133 բացատրեց որ կրտսերից սկսելու կարգը պահպանում է միայն քւէ արկութեան միջոցներուց, բայց որ ամեն մի ուրիշն էլ իրաւունք անի քւէարկութիւնից առաջ ճառախօսել կարծիք լայնել առաջարկութիւններ անել:

Այսպէս կամ անսպէս, պ. Առաքելեանցի ճառի վերաէ մենք պէտք է նաևինք որպէս արտակազմութիւն նախապատրաստական ժողովներում կարչացրած համաձանութեան՝ չորս կաթողիկոսական թեմնածուների վերաբերմամբ, և ոչ որպէս մը անկախ առաջարկութեան միջար: Այդ առիթով աւելորդ չէ վշտառակելը, որպէս Առաքելեանցը մը ապահ գրութեամբ, ուղղած Պարսկա-Հնդկաստանի թեմի իրան ընտրողներին, մատիսի Յից առաջ, առաջարկել էր ընտրել իրին առաջին և երկրորդ կաթողիկոսացոներ կամ Խրիմնան Հայրիկին և Գրիգորիս եպ. Ալէաթճեանին և կամ Խրիմնան Հայրիկին և Արիստակէս եպ. Աղղրակեանին:

Այդ ամենը ի նկատի առաջ մենք իրաւունք ենք համարում Պարսկա-Հնդկաստան թեմի ներկայացուցիչ որ. Առաքելեանցին գէթ թեթե կերպով նկատել որ, իւր անունից առաջարկելով քառանուն ցանկը, որ և միաձայն ընդունեց, առ նազն անհամեստութիւն է բանեցրել Մեզ համար միանդաման անբացարկելի է մնում մի ալսպիսի հակասական վարժունք՝ ընտրութիւնից առաջ առաջարկել մէկի տեղ և րկու ցուցակ (Խրիմնան-Անդրակեան և Խրիմնան-Ալէաթճեան), աչնունետե այդ փոխել և Համագումար ժողովին առաջարկել մի երրորդ ցուցակ՝ Խրիմնան-Խղմիրլեան, և այդ ամենից լետու էլի իրաւունք համարել իւր խոկ անունից առաջարկածներից երկրորդին՝ Խղմիրլեանին՝ ոչ ընտրեմա քւէ ատալ...

մարտեն իրիս արժանաւորագոյն անձինք բարձրանալու Ա. Կուսաւորչի Գահի վրայ, ստորագրեալու, իանուն և ի կողման, համայն հայ ժողովրդի Պարսկաստանի և Հնդկաստանի, կառաջարկեամ իրիս աւագագոյն ընտրելիներ զԱմենապոտիւ Տէր-Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան, մանանեալն Հալդիկ, Գերապատիւ Տէր-Մատթէոս եպիսկոպոս Խզմիրեան, Գերապատիւ Տէր-Խորէն եպիսկ. Խխիթարեան և զերապատիւ Տէր Երևմիա եպիսկոպոս Տէր-Մահակեան, Ցեղապահ պատր Երևանցիմի:

«Ընդհանուր հայ ազգի փափակոյն և իրձն է Խրիմեանին տեսնել Հակ-  
րապետ, սրովինուս ո. Լուսաւորչի, ո. Ներսէսի, ո. Ամանկի և ո. Մես-  
րովի Գահի վրայ պիտի բազմի մի անձն, որ իւր անձի մէջ ամփոփէ այն  
բոլոր բարեմատութիւնները և բատկութիւնները, որոնց պատճառով մեր  
Աւաքելական ո. եկեղեցին ի շարս ազգալին անզուզական զործիչների և  
եկեղեցւու սուրբերի է զասել այդ երանելի Հալքապետներին. Խրիմեան՝  
հայր է հասարակաց, ո. Աւետարանի և ո. Առաքելոց հարազատ տշակերտ  
է, իւր անձն՝ իւր հոտի բարորութեան և փրկութեան վրայ զնող քաջ  
հոլիւ. Նա վարձկան չէ, Նա սիմոնական չէ, Նա հալրենի ո. եկեղեցւու  
օրէնքները, կանոնները արծաթութեամբ փափոխողը չէ. Նրա համար  
չը կաէ իշխան, հարուստ, տէր, մէծ, քաղաքացի, գլուխական, տղէտ, ուսեալ.  
այլ Նրա մնծ հոգու, սրտի և մոռքի առաջ պատկերացած է միայն հայ ժո-  
ղովուրդ, ժողովուրդ, որի բարուխական, մտաւոր և կրօնական պահանջ-  
ներին Նա պիտի վաւթեամբ բաւարարութիւն տակ. Ա. Կուսաւորչի, Ներ-  
սէսի, Մահակի Գահը պիտի բարձրանայ, իւր կոչման ամենաբարձր զա-  
գաթնակէտին պիտի հասնէ, երբ Խրիմեան Հալդիկ բազմէ Նրա վրայ. Նրա  
անխարդախ, անկաշառ, մաքուր հողին պիտի լուսաւորէ Ս. Էջմիածնի  
վանքը և Հայաստան աշխարհը. Նրա բարուխական զօրութիւնը ուժ, թի  
պիտի տաէ մնդ՝ լինել մազրենի եկեղեցւու հարազատ զաւակներ, լինել  
ազնիւ, շտակ քաղաքացիներ և ոչ թէ այս և ան փարախը թափառող-  
ներ. Նրա անցեալ զործունէութիւնը, Նրա վարած զանազան պաշտօն-  
ները, այն հանգամանքը, որ Նա նախ և առաջ զուտ հոգեօրական և հա-  
ւատացող, կատարեալ հաւատացող բարուխական և օրինական մարդ է, կա-  
տարեալ հաւատ ևն տալիս ինձ, որ հաջոց եկեղեցին և հայ ազգը նրա-  
հովհանքութեան օրով պիտի պահծառանաէ բարուխէս. նա գիտէ բոլո-  
րովին օրինական շաւզի մէջ պահնել, տալ զՎահսերն կախեր և զԱստուծոն  
Աստուծու:

«Խրիմեանից լետու քառանուն ցանկը լրացնելու համար իրիս ար-  
ժանաւորագոյն անձինք նկատում են Մատթէոս եպիսկոպոս Խզմիրեան,  
Խորէն եպիսկ. Խխիթարեան և Երեմիա եպիսկ. Տէր-Մահակեան, որոնց  
ունեցած բարեմատութիւնները նոչնակէս լաբոնի և զԱստուծոն:

«Ա. Հարք, պարոններ, այս սուրբ տաճարի մէջ զումարած Ազ-  
գալին վհճաժողովը ահազին պատմական նշանակութիւն պիտի ունենալ.

ակոր ամբողջ հայ ազգի աշքը լառած է ալստեղ ալս Ա. Սեղանին, ուր Միածին Որդին իջած է»:

Այդ ճառը վերջացնելուց լեռոց բոլոր պատղամաւորները ոտի կանգնեցին և, ձեռները բարձրացնելով, միաձան համաձանութիւն ցոյց տվին վերոբիշեալ կարծիքի հետ:

Դորանից կետու Բրաւապի թեմի աշխարհական պատղամաւոր պ. Աբգար Յովհաննիսեան հարցրեց պրոկուրարիին<sup>1)</sup>, պէտք է արդեօք իւրաքանչիւրին առանձին հարցնել, թէ բաւական է ամենքից միասին լայտնած միաձան կարծիքը Պրոկուրորը ընդունեց, որ օրէնքի պահանջը բաւականաչափ կատարւած է և որ մնաւմ է միան սառորագրել:

Երբ որ պրոկուրորը սկսեց կարդալ նորա կազմած կարծառու արձանագրութիւնը, հակածառութիւն ծագեց: Թիւրքահայ պատղամաւորներից մի քանիսը տժգոհութիւն լայտնեցին, որ արձանագրութիւնը ոսերէն է զրւած և պահանջեցին որ հակերէնը կազմէի և կամ գոնէ ոսէրէնից թարգմանւի, որ զորա տակը ստորագրեն: Պրոկուրոր Խ. Խ. Կանչելի պատասխանեց թէ օրէնքը պահանջում է, որ կարծիքները անպատճառ պրոկուրորը պէտք է զրի առնի և որ նա բաւականաչափ չը դիտէ հակերէն որ ուզզակի հակերէն զրի, բայց որ ալդ չի խանգարում անմիջապէս հակերէն թարգմանութիւնը անել և որ պատղամաւորները կարող են դորան էլ ստորագրել, բայց որ պաշտօնական գոկումենա կարող է համարւել միան իւր զրած և հաստատած արձանագրութիւնը: Արխատակէն եսկ. Սեղբակեան հէնց ազտեղ սկսեց թարգմանել. մի քանի վչճերից կետք ընդհանուր համաձայնութիւն կալացաւ և պրոկուրորի կազմած արձանագրութիւնը բոլոր նիրկաց եղողները ստորագրեցին: Սական ազտեղ էլ մի փոքր միջաղէպք պատահեց: Թիւրքիահայ հողեւոր պատղամաւորներից մէկը՝ Խոլտամեան, Կուտինացի ներկայացուցիչը, ստորագրելու ժամանակ ուզեց նշանակել թէ չորրորդ կանդիդատ նա, Նրուսաղէմի պատրիարքի սեղապահի տեղ, կը ցանկար առաջարկել պատրիարք Աշքեանին: Միւս պատղամաւորները զժւարութեամբ կարողացան համոզել նորան, թէ աչժմ արդէն ուշ է նոր թեկնածութիւն գնել. վերջապէս նա համաձանեց և ստորագրեց արձանագրութիւնը:

Թիֆլիսի թեմական առաջնորդ Մամբրէ եպիսկոպոսը շատ հիւանդ դրութեան մէջ է: Չը նայած դորան նա անպատճառ ուզեց մասնակցել ընտրութիւններին: Անկարող լինելով հանդիսաւոր ուղևորութեան մասնակցել՝ նա կանխօրէն տեղ գրաւեց սեղանին, բայց սալուած եղաւ թող-

<sup>1)</sup> Պր. Աբգար Յովհաննիսեան, ուսաց «Կաւկազ» (№ 432) լրագրի խմբագրին ուղղած նամակով լայտարարեց, որ ազգ հարցմունքը նա տեղ է ոչ պրոկուրորին, առ նախագահ տեղակալ Երևանիա եպիսկոպոսին:

նել և կեղեցին նիստը վաճէւրուց առաջ չէնց որ արձանազրութիւնը ստորագրեց:

Ընդամենը մասնակցեցին 66 ընտրովներ, որոնցից եօթը հոգեորականներ ներկապայացին էին երկ-երկու թեմերի բայց վերջնիններից երկուոք իրանց ստորագրութեան մէջ վշատակեցին միան մի-մի թեմերի մասին, անպէս որ իրօք մասնակցեցին այդ ժողովին 71 ձան:

Գրաւոր ձաններ ստուգարկեցին թւով 14: Դոցա մէջ Աշըգեանի համար 6, Խրիմնանի համար 5, Երտուաղէմի պատրիարք Յարութիւնի համար 3, Սիփթարեանի, Օրմանեանի և Վեռնդ Շիշմանեանի համար 2, Կղմիրւանի, Մելքիուհէկ Մուրադեանի և Կէորդ Տէր-Սուքեանեանի համար մի-մի ձան. Խուսաստանի պատրիարքներից զրաւոր ձան ուղարկել էր միան Աստրախանի թեմական սուաջնորդ Սուկենեան:

Բայց մուտքի մօտ խոնւած բազմութեան մէջ մնած լուզմունք էր տիրում: Երբ Մամբէէ եպ, զուրս եկաւ եկեղեցոց և բարձի եղաւ թէ ցուցակը անցկացաւ, այդ լուզմունքը բերկութիւն դառտւ: Վերջապէս բացեցին եկեղեցու գոհները, և պատպամատրները զուրս եկան: Առաջի զնուամէ էր տեղակալ Երեմիան և բարի Ժայռով ժողովրդի հարցական աղաղակներին պատասխանում էր նշաններով և «Հայրիկ, Հայրիկ» խոսքերով:

Այսպիսով այնքան լուզումներ, վէճներ և թերահաւատութիւն յարուցանող ընտրովութիւնների առաջին գործողութիւնը վերջացաւ հաշու և խաղաղ, պարմանատրաւած ցուցակի միաձան ընդունելութիւնով, այսինքն փոխադարձ զիջումներով: Վաւելցնեմ որ ընտրութիւնները անցան ամենակատարեալ կարգով, չը նաև ընտրողների բազմութեան, որպիսին երբէք չէր եղած: Կոսակցութիւնների բուռն կոհիւը, բոլոր հաշիւնները, մանեօվները և այն վերջացել էին աւելի վազ գեռ ևս մասնաւոր ժողովներում, իսկ եկեղեցում և ամենքից լարգուզ սրբառեղի հանդիսաւոր և պատկառելի սարք ու կարգի ազդեցութեան տակ՝ թշնամութիւնը և անվտահութիւնը որպէս երեսում է անզի տւին հանդիսաւ և դիտակցական պարտակատարութեան: Այս առիթով չի կարելի բոլոր մասնակիցներին չը գովել ան պատրաստականութեան համար, որպէս նորքա զո՞ն բերին մասնաւոր ձգտումները ընդհանուր նպատակի համար և որով հրաժարակցին շատ վիճելի թեկնածութիւններից ոչ միան վազօրօք համոզւած կուսակիցները, այլ և իրանք թեկնածու ենթադրւած սրբազնները:

### Եջմիածին, 5 մայիսի (Խամակ երրորդ)

Թէև երէկ երեկուեան հսկածանութեան նման մի բան կարացաւ իբր վերջնական թեկնածուներ Խրիմնան և Խպմիրլեան ընտրելու մասին, բայց այսօր առաւտ ընտրութիւններից առաջ երկու կուսակցութիւնների մէջ փոխադարձ անվտահութիւն էր երեսում:

Մի կողմից վախենում էին, թէ հակառակ կուսակցութիւնը, որ պարտութիւն էր կրել սպատրիարք Խորէն Աշըգեանի թեկնածութիւնը չաջողցնելու խնդրում, կ'աշխատէր բոլոր ուժը թափել Խղմիրլեանի համար, զորա հետ միասին և երկու վերջին կանգիպատճերից մէկին կարելին չափ չառ ձաներով ընտրել իսկ Խրիմեանը կը թողնէի չորսի ցանկի մէջ, ինչպէս այլ եղաւ 1884—1885 թւականներին<sup>1)</sup>: Միւս կուսակցութիւնը ընդհակառակ կարկած ունէր, թէ հակառակ կուսակցութիւնը կ'աշխատէ չանցկացնել Խղմիրլեանին որպէս կաթողիկոսական դահի թեկնածու:

Բայց ան կարգը, որով աղջ օրը կատարում է ձանատութիւնը, հեշտացնում է ացպիսի խաղերը: Չան տալը կատարում է բաց կերպով և բոլոր ընտրադները մէկը միւսից լեռու ստորագրում են ընտրողական թերթը, անպէս որ իւրաքանչիւրը կարող է տեսնել թէ առաջարկւած անձը որքան ձախն է տուացել մինչև հերթը իրան հասնելը: բացի զորանից չաջորդ թեկնածուի թերթը ձախարկութեան է ենթարկւում, երբ նախորդ ձախարկութեան արդինքը արդէն լաւարարուած է: Շնորհիւ աղդ կարգին բաց ասպարեզ է բացում ան բանի համար, ինչ սպնւականների ընտրութիւններում կոչում է թեկնածութիւնը փոխադրել (որեօքայտ համագութեան ամսինքն ընտրելով մէկին մեծաքանակ մեծամասնութեամբ՝ միւսին տուլ աւելի շատ ձախները<sup>2)</sup>):

Վկեղեցին միասին զնալու համար ընտրադները հաւաքում են Ահ. հարանի ընդունարանում, երբ ամենքը ներկայ են, նոյսա ընդ առաջ է զնում բարձրագուն իշխանութեան ներկայացուցիչը, որ նշանակուծ է ընտրութիւններին ներկայ լինելու համար, և այն ժամանակ ամենքը ուղիորսում են դէպի վանքը: Երբ պատղամաւրների մեծադոյն մասը արդէն հաւաքում էր, նոցանից մէկը, պ. Աբգար Յովհաննիսեան սկսեց առաջարկել, որ թեկնածուները ենթարկեն ձախատութեան, նոյն կարգով, ինչպէս որ ձախներն են տրում, ալինքն ոկտելով կրտսերից<sup>3)</sup>, ալսպի-

<sup>1)</sup> „Կավազъ“ (Կառլալ) լրագրում սխալմամբ առւած է՝ 1883 և 1884 թւական:

<sup>2)</sup> Անու ամենանիւ մենք համարում ենք կաթողիկոսական ընտրութեան ընդունուած ձեզ բոլոր ուրիշ եղանակներից լաւագոյնը՝ դիմակցականութեան տեսակետից:

Ծանօթ, Խմբ.

<sup>3)</sup> Աբգար Յովհաննիսեան, իւր նոյն նամակում ուսուց «կառկաղ» լրագրին (№ 132), խօսելով իրան վերագրած սխալ կոմ իրը թէ սխալ լուրերի մասին, չի հերքում «կառկաղ» լրագրի նրան վերագրած այդ սովորը, այլ ասում է միան, թէ «ևս ացպիսի առաջարկութիւն ժողովին չում արել» և այդ առիթով պարձանքով լիշեցնում է թէ ինչ առաջարկութիւններ որ նա արել է ժողովին, վերջինս ընդունել է, և որ ուրեմն ժողովը չըր կարող ընդպիմադրել մի առաջարկութեան, որ նա չի

սով Խրիմեանի ընտրողական թերթը կը լինէր վերջինը, մինչդեռ սովորակես ընդունւած կարգով, նախկին օրը ընդունւած ցուցակի համաձայնք նա պէտք է առաջինը լինէր: Անմիջապէս լսացին տաք հակածառութիւններ և մեղադրանքներ, թէ այդ առաջարկութիւնն սպատակն է Խրիմեանի ընտրութիւնը խանգարել: Վէճը բարձրածայն էր, և լուրը ժաղովվայից սիրւած թիւնածուին սեացնելու մասին կաջակի արագութեամբ թափանցեց զաւթում խոնւած ամբոխի մէջ, որին քիչ լուզմունք չը պատճառեց:

Ճիշտ ժամ 9 ընտրողները եկան մտյր եկեղեցին և փակեցին. Նոյս իտեղից խոհեւցին դռների մօտ ամբոխի առաջին կարգերը և հակեցին դռներին, պատուին, պատուաններին, աշխատելով լսել կամ դռնէ զաշկել թէ ինչ է կատարուամ ներաք. ոստիկանութեանը դժւարութեամբ լա-ջուղեց նոյս հեռացնել եկեղեցու մուտքի մօտից:

Առաջարարակ ժողովուրդը, որ ընտրութիւնների ժամանակ խոնչած է վրանքի գալթում, հետաքրքրելի տևարան է ներկայացնում: Ամենից բաղմաթիւըն է նա առաւազը, և մանաւանդ ժամ 2-ի մօսերքը, երբ սպասում են ընտրողների գովար գալուն. նիստի ժամանակ նա մի փոքր նաշում է, բայց էլի բաղմաթիւ է: Ազտեղ կան ամեն զասակարգի մարդիկը բայց ամենից շատ են Վաղարշապատի բնակիչները, Երևանի քաղաքացիները և հարեան գիւղերի գիւղացիները, քիչ չեն նաև ինտելիգենտ մարդիկ, մինչև անսպամ կանաչը, որ եկել են ընտրութիւններին ներկայ վիճելու: Ամբոխի մէջ ողենորութիւն է իշխում, երեսում է որ եկեղեցու պատուի վետեր կաչացող նիստերի եկը իւրաքանչիւրին հետաքրքրում է, չարունակ խօսում են, աչքի են անցնում ընտրողների անւանական ցուցակը, գումարում են հաւանական ձախները այս կամ այն թիկնածուի և այլն: Եւ այդ բոլորով կրկնում եմ որ դրադամ են հասարակ մարդիկ:

Ազդ ամբոխի մէջ իւր վերաց առանձին ուշադրութիւն է դարձնում ցիլինդրը հազին մի պարսն։ Դա ամերիկական պատգամաւոր Սերաֆիեանն է, Ամերիկակի հայոց համայնքը թեմ չի կազմում և այդ պատճառով ժողովին մասնակցեց համար չը կարողացաւ մէկին ուղարկել։ բայց նորա ներկայացուցիչը որ դուրանից առաջ Պարտկաստան էր գնացել Շահին ինչ-որ մի ուղերձ մատուցանելու համար, եկաւ Էջմիածին, ուր գործօն

արեւ: «Աւելիաց» լրագրի խմբագրական առաջնորդողում պ. Յովհաննի սեանի նամակի ազգ տողերին տրւած է ալսափսի արդար պատաման թէ «բոլորովին ճիշդ է որ ալդափսի առաջարկութիւն չի արել ժողովին նիսախ ժամանակ մայր-Եկեղեցում, և ուրեմն ժօղովը չէր կարող այն շնորհունել. բայց անհասկած է, որ նո՞ւն միտքը որ նամակագիրը (Յովհաննիսեան) արծարծել է ժողովից առաջ և եկեղեցուց գուր ու զանազան կաղմերից հանդիպակեց հակածառութիւնների; որոնցից մտու շարունակել էլ աւելի լամառելը միանգումայն ամելորդ ջանք կը վիճէր. և հենց այդ է որ հաղորդել է «Աւելիաց» լրագրութեան:

մասնակցութիւն ունեցաւ խորհուրդների և ազիտացիալի մէջ։ Նորա ամբողջ տեսքը և ձեւը ներկալացնում են մի հետաքրքրական խառնուրդ տաճկաստանցի մի փոքր ճնշած հալի և անկախ ու չքաշող հանկիի։ Նա շատ շրառով ամբոխի սիրելին դարձաւ և այս ամբոխին նա իւր ցիլինդրով մի քիչ միտինգի բնաւութիւն տևեց։ Ազոր լուս տեսան Համբարձում Առաքելեանցի երեկաւ ճառի տպւած թերթերը որ իրարից խլելով ձեռք էին բերում և նոյց պատճառով այնպիսի իրարանցում եղաւ, որ ոստիկանութեանը դժւարութեամբ լաջողւեց կարու հաստատել։ Ամերիկացին, ձեռք բերելով նոյցնից մի բոլորովին արտրւած թերթ, բարձրացաւ մի ինչ որ քարի վերակ և սկսեց բարձր ճառ խօսել բազմաթիւ ունկնդիրներին։

Ազոր սպասում էին թէ նիտոը շատ երկար կը տեի, դորա համար նա սկսեց ծիչդ ժամ 9-ին, որպին առ միտին համաձան նա պէտք է ժամ 2-ին վերջացած լինի։ Առանձին վիճաբանութիւններ չեն սպասում, բայց միմիան ստորագրելու մնանական գործը կը պահանջէր մի քանի ժամ։ Խնքներդ դատեցէք, Բոլոր պատգամատքները թւով մօտ 70 հոգի էին, որոնք չորս թեկնածուների համար ձախն պէտք է տալին, սոցանից ամեն մէկը առաջարկում էր առանձին թերթի վերակ որի վերակ ամեն մի պատգամատքի ձախն գրում էր պրոկուրատը և ստորագրուում ընտրողի կողմից։ Թերթերը մէկը միտի էնտելից են ստորագրուում։ Երբ բոլոր ձայների համագումարը կատարւած է, կազմուում է առանձին ցուցակ ցուցմունքով թէ որքան ձախն է ստացել ամեն մի թեկնածու։ Ազ բոլորը կազմում է մի քանի հարիւր ստորագրութիւն, որ կատարւում է անողատմառ ըստ աւագութեան (կրառեր թեմից դէպի վերը) և գրում են շատ զանդաղ, և զեռ կարգում էլ են իրանցից առաջ գրածները։

Երբ պատգամատքները զբաղւած էին ազ զործով, իսկ ահազին հասարակութիւնը զուրաց հնաւանքին էր սպասում, երկնքում կատարեց մի հազւագելու օղարտնական երեսի։ Արեգակի շուրջը լիակատար ծիածան կազմեց։ Ազ բոլոր օրերը եղանակը ամպատ էր և անձրեալին, բայց այսօր մի փոքր պարզւեց, արեգակը երեսաց և կապատ երկնքի վրաւով անցնուած էին բաւական սակաւ պարզ ամպեր։ Երեսովի ժամանակ արեգակը ծածկած էր թափանցիկ ամպատ, անպես որ նորա վերակ ուղիղ նաշելը աչք էր ցաւացնուած։ Աչքին երեացող արեգակից 8—10 գիտմատր հեռաւորութեամբ երեսաց լուս սպիտակ չըջանակ, որ կարելի էր ամբողջապէս ահսնել աչքերին գլաւի պահելով՝ արեգակին դէմ զնելու համար։ Ազ չըջանակը ունէր ծիածանի բոլոր զուները։ Ազդ չըջանակի և արեգակի մէջ տարածութիւնը մի փոքր աւելի մութն էր երեսում քան երկնքի մնացած մասը։ Որովհեան ազ ժամանակ արեգակը կանգնած էր իւր ամենամեծ բարձրութեան վերակ, ամբողջ երեակը թւում էր որպէս մի ահազին

պատկ համարեաւ ուղղակի վանքի վերաց Նըմութը սկսեց կյարից քիչ վետ և վերջացաւ ժամը 1-ից քիչ պակաս, և ծխածանը նւազում էր կամաց կամաց, առաջ մեկ կողմից, վետու միւս կողմերից Նբուզիթի ամրող տեսդութիւնը մօտ երեք քառորդ ժամ էր, չետու երբ պատղամատրները դուրս եկան եկեղեցուց, նոցաւ պատամածներից երեաց որ ուղնու մօտ աղ ժամանակ սարազբառմ էր Խրիմեանի ընտրողական թերթը. Հեշտ է հասկանալ թէ ինչ սպատութիւն թուզու աղ ժողովրդի վերաց, որը առանց ան էլ արամագիր է իւր ժադրութական հավեճ ուրբ համարել.

Ընտրողական ժաղովը վերջացաւ մօտ  $2\frac{1}{2}$  ժամին. Հետևանքը, այսինքն Խրիմեանի և Կղմիրիանի ընտրութիւնը մի կերպ առաջուց էլ չականի եղաւ<sup>1)</sup>: Դուրս եկող պատղամատրներին ժողովրդի մասսան ընդպառաջ և ուղեկցեց մինչև Ահարանը ցնծութեան ձաներով և գդակները օգում խաղացնելով, աղ առ իմով առանձին օւացիաներ սարքեցին տեղակալ Խրիմիա եղիսկութափուն:

գուցէ ոչ մի անդամ էլ շատերը գործ չունենան ամենայն Հայաց Կաթողիկոսի հետ։ Այժմ հասարակաց շահի պաշտպաններին մնում է բոլոր ովքերը լարել, առնեն ջանք գործ դնել, որ Աշղեանի անունը հանչփ թեկնածուների ցանկից և դրանով հնար լինի ազատել Տաճկատանի հոգեստրական պատգամաւորների մեծամասնութիւնը և ոչ սոկաներին նոցն իսկ աշխարհական պատգամաւորներից գաղթակղիչ և փորձալց գրութիւնից, փափելով ազգին բոցն Աշղեանականների միակ հանապարհը։ Կոքա անզօր կը լինեն, երբ տախողականութիւնը տաճկառակ պատգամաւորների վերաբերմամբ կը վերանաց, երիտ կողմն էլ այս բանը լու համարնում են և ակժմ աղջ ուղղութեամբ են գործում։ Մի կողմը աշխատում է Աշղեանին անպատճառ ցանկի մէջ ձգել, իսկ միւս կողմը այս ընտրութեան մէջ ամենալատանդաւորը հէնց աղդ է համարում և բոլոր հակա-Աշղեանական ովքերը իրանց առաջին, բաց ամենամեծ, ջանքը պատեղ են գործ դնելու։ Աշղեանական խումբը զեռ առանց հրամանատարի է։ Օրմանեան եալիսկոպս և Արգար Յովհաննիսեան, աշխարհական պատգամաւոր Բրուսայի, զեռ չեն հասել Ռով կարող է առանց ժպիտի կարդալ «Արգար Յովհաննիսիսան պատգամաւոր Բրուսայի»։ ով էր աղդ հողատարը, Բրուսան ընտրած էր արդին Տիգրան էֆ. Կիւմիւշկէրանին, բայց եւր Տիգրանի ընտրութեան գոյմը համում է Կ. Պոլոս, և ահա պ. Արգար Յովհաննիսիսանը խմոխ և եթ դաւնում է պատգամաւոր Բրուսայի որքան խնամատարութիւնն, որքան հոգտարութիւնն, որքան հեռատեսութիւնն Տիգրանի եք պատասխանին և ով էր աղդ կարեկից հոգտարը, զարմանալի բան, ինչ հարց, որ դնում են՝ պատասխանը նոցն է դալիս և զրա համար աւելորդ ենք համարում կրկնողութիւններ անել ընթերցողն էլ փոքր ինչ հեռատեսութիւնն արէաք է ունենալ, բայց անկարելի է անձնատելի թողնել Բրուսայի գաւառական ժողովի գոյմի սրարկեցութիւնը և հնապանզութիւնը, ում համար հրամանում են, նրան էլ ընտրում է, առաջարկել էին Կիւմիւշկէրանին, նրան էին ընտրել, Ամեն մի ընտրող ժողով դրանով իւր պարտքը լրացրած պէտք է համարէր, բայց համեստ և դէպի մեծը երկիւզած Բրուսան ալզոլէս չէ, նրան չանկարծ, անսպասելի կերպով առում են՝ անորից ընտրութիւն արէք և ընտրեցէք պ. Արգար Յովհաննիսիսանինո, և համեստ Բրուսան առանց հարց տալու թէ առաջին ընտրութիւնը եթէ ընտրութիւն չէր հապա խօս կազմում է իւր պատկառելի խորհուրդը և ընտրում է ակժմ ոչ իւր գաւառացու և ոչ մէկին ամբողջ Տաճկատանից, այլ անպատի մարզու, որի անունը առաջին անդամն է լուսում։ և այս ընտրութիւնը կարող էր լինել միայն հեռագրութ, հաղորդակցութեան միւս միջոցները բոլորավին անզօր էին այս գէպքում, անքան կարծ էր ժամանակամիջոցը, զուր հեռագիրը ութերորդ հրաշալցիքը չէ համարում, քանի որ միայն ապրիլի 22-ին վճռեց պ. Յովհաննիսիսանի պատգամաւորական գործը Թիֆլիսում։ թէ ինչպէս այս կարծ

ժամանակում կատարեց Բրուսան իւր ընտրութիւնը, մարդ մնում է զար-  
մացած: Խեղճ, խեղճ Բրուսան, մինչև ալժմ չէինք ճանաչում քեզ, լու էր,  
որ մնալիր քո անվագութեան մէջ քո բոլոր ընտրողական ժողովներով,  
քան թէ այդ տեսակ վիճակի համեմելի:

Կիւմիւշկէրտանին Բրուսակի ձանի կորուսը զգալի չը պէտք է  
լինի. ասում են, որ այդ մարզը մի քանի ծանչեր ևս ունի. անշուշտ այդ  
ձաները բանձնւած կը վինեն նրան մի որոշ անձնաւորութեան քէ տալու  
նպատակով, ում համար է բերած եղել Կիւմիւշկէրտան այդ ձաները,  
մէնք չետու կը տեսնենք, բայց բանը նրանումն է, որ Կիւմիւշկէրտան էֆ-  
մի անախորժ հիասթափում պէտք է զդաք: Մազաքազաքի սրատամաւորը  
և նրան ընտրողները չեն խմացիլ, որ նա բացի երկուսից աւելի ձան չէ  
կարող ստանալ, բայց ևս առաւել անախորժ պէտք է թւի այդ տիտոր  
ճշմարտութիւնը նրա համար, ով որ պէտք է ստանար այդ ձաները:

Առ ալժմ եկած աշխարհնական պատրամաւորներից հենց սկզբից  
լայնի աստիճանի վստահութիւն են ներչնչում Խոստաթուի պատրամաւոր  
բժ. Նէլուուղեանը և Զմիւռնիու պատրամաւոր պ. Գարեգին Յովի. Բարա-  
ղեան: Սոքա մնեց հետաքրքրութեամբ են զլազւած գործերի զրութեան  
ուսումնասիրութեամբ, ուզում են պարզել իրանց Մակար կաթողիկոսի  
ժամանակակ և ալժմաւայ ուզզութիւնները, նունպէս և ճեմարանում տիրող  
ներկաւ ուզզութիւնը: Զարմանալով են վերաբերուսւմ, խմանում են, որ  
նախկին րէժիսը շարունակ ձգտել է սահմանափակել կրթութեան ծաւալը  
ի վեաս բնագիտական և մաթեմատիկական առարկաների, և որքան  
կարող է կրամասել ուսանողների թիւը, զարժնելով ճեմարանը մի փոքր  
գիշերօթիկ պանոիծն, միենողն ժամանակ անելով նրա վերաս անսպիսի  
ծախք, որը ունին հարիւրաւոր սաներով ուսումնարանները. Այս, շատ  
բան կաէ զարմանալու մեր տաճկատանցիների համար, միսոն այդ չէ որ  
ճեմարանի սահմանափակ կրթութիւն ստացող աշակերտը աւելի թանկ է  
նստում Մայր-Աթուին, ալպինքն ազգին, քան եթէ նա ուսանէր  
թերլինում, ի հարկէ ոչ ճեմարանի ծրագրով: Սոյս համար կարելի է ասել,  
որ կ'իմանան վերջ ի վերջոց որ սուս բարեպաշների զոռումը զուսմբը  
ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ վախ իրանց հրէշաւոր գործերի հասարակութեան  
առաջ բացւելու պատճառով և իրանց անարժսն զերի մշտական կորատեան,  
թող տեսնեն, թէ որքան վերքերով ծածկուած է համազգավին Մայր-Աթուը,  
թող իմանան թէ ինչպէս հաւ զիւղերը լցւած են տղէտ և անարժան քա-  
հանաներով, թող տեսնեն, թէ ինչպէս Մայր-Աթուի ընդարձակ կալւած-  
ները անսպուղ և ապարդիւն մնացած են եղել ժողովրդի համար, զառնա-  
լով ասպարէզ բացատական և վնասակար ովերի: Ո՛չ. Տաճկատանի աշ-  
խարհական պատրամաւորների գալուստը լուսու նշաններ տարածեց մոալ  
մինուլուտի մէջ, թէ ու զրանցից մի քանիւսը ամբողջ ժամանակ լուս և  
մոալ զրաղւած են սուրճի գործածութեամբ: Այդ որը եկել են և Ոու-

սատուանի պատգամաւորներից մի քանիսը՝ որ Աթարէդեան Արցախի պատգամաւորը, Լալավնան. Շամախու պատգամաւորը, նոցնպէս և Պարսկաստանի և Հնդկաստանի պատգամաւորը, որ Համբարձում Առաքելեանը:

Ուսասաստանի պատգամաւորները անշուշտ մեծ զեր պէտք է խաղան ալս ընտրութեան ժամանակ. սոքա գործերի դրամթեան հետ լաւ ծանօթ են. սոքա արդէն գայլը դառի և գառը գայլի տեղ չեն ընդունում. այդ բաւական չէ. կարող կը վիճեն տաճկաստանցիների աչքերն էլ լրանալ, որ նոքա ևս աչդ գրութեան մէջ չընկնեն: Աշխարհական պատգամաւորները պէտք է վճռեն ալս ընտրութիւնը, չը նաև լով որ թւով հոգեւորականներից քիչ են: Սրանք անձնական հաշվաներ չեն կարող ունենալ այս դեպքում, բացի մի քանիսից. բաւական է վիշել Բրուսալի պատգամաւորի տարօրինակ ընտրութիւնը:

Ապրիլ 30: Հոգեւորական և աշխարհական պատգամաւորները անընդհատ գալիս են. ինչ թւով կը վերջանալ ամբողջը զեռ չը գիտենք. ինչպէս երեսում է ժողովը թփ կողմից նշանաւոր և արտաքու կարգի է լինելու, խոկ պարտք կատարելու կողմից—լետով կը տեսնենք: Նորեկների թւում առանձնապէս աչքի է ընկնում Տրապիզոնի պատգամաւոր Յարութիւն էֆ. Շահրիկեանը. սա իւր զաղափարներով և լրջմտութեամբ տեղի փոշեցնում է Խուսաստանի Խնաելվագինցիալ առաջնակարու ներկազացուցիչներին. անկարելի է ուրախութիւնը չը զգալ տեսնելով, որ Տաճկաստանի հասարակութիւնը զուրկ չէ խկապես լուսամիտ և չառաջաղեմ անձնաւորութիւններից հակառակ մինչև այժմ եղած թիւր կարծիքներին: Տաճկաստանցի պատգամաւորները միտնուգամացն ընդմիշտ պէտք է հերքեն նրանց մասին եղած չափազանց անհնապատ կարծիքը: Շահրիկեանը զեռ երիտասարդ է, լուրջ և մտածող դիմքով, խօսում է համոզեցուցիչ և սրամիա փաստերով, առանց որ և է փքուն խօսք գործածելու. անկարելի է որ սա մեծ ազգեցութիւն չունենակիցների վերաբ:

Ալսօր առաւօտեան լավտնի եղաւ Նիկոմիդիու պատգամաւորների գալուստը, որ տեղի է ունեցել նախընթաց գիշերը: Սանկաննոս եպիսկոպոսին ընդառաջ էին քնացել մինչև Փալրաքար բաւականաշափ թւով մարդկեկ սրտեղ սպասել էին նորին սրբազնութեան մինչև գիշերւաէ ժամի 10: Տաճկաստանի հոգեւոր պատգամաւորներից ամենից լաւ համբաւ ունեցողը Սանկաննոս եպիսկոպոսն է: Սորա մասին համոզմնենք կայ, որ ոչ թէ ինքը միան ներբարար կը վերաբերվի ընտրութեան գործում, այլ և բարեբար ազդեցութիւն կոնենալ իւր համաերկրացի հոգեւորական ընտրողների վերաբ Նինելով գաղափարական և անշահասէր, նաև միեմուն ժամանակ գիշուղ և գորեղ կամք ունի: Արտաքին տալաւորութիւնը սրբազնի խիստ գոհացուցիչ է: Նրանում նկատուում է սաստիկ անտարբերութիւնն զեպի արտաքինը և ձեւականը. նորուն նաջելու մարդ ակտմալից մտածում է, որ ալս մարդու մէջ մանր և սովորական կրքերը ոչ մի զեր չեն կա-

տարսում: Այդ հանգամանքով պէտք է բացարկել նորա անպաճով և պարզ շարժմանքները և խօսակցութեան ձևերը: Այն ինչ որ ուրիշների համար արտասառվոր է, նրա խօսակցութիւնների սովորութեան նիւթն են: Ծանր հասարակական խնդիրներ են, ինչպէս երեսում է, միշտ զբաղեցնում նրան: Սորա հետն է և Նիկոմիովիտ աշխարհական սպասգամաւորը՝ Գասպար էֆ. Գասպարեան, որ մի խոտաղէմ և նահապետական մարդ է, բայց իւր հսմոզմունքներով և ձգտումներով արժանի բնկեր իւր առաջնորդի, Եղուր խօսակցութիւնների և բարաբերութիւնների յամանակ միւսները չափանի աստիճանի «բոլլատիկա կընեն»: Այս երկուսն են միախն, որ ուզզակի և պարզ զիմումն են խնդիրն և վճռողապէս չափանում են իրանց համոզմունքը, որի վերաէ անկարող է ազգել ոչ մի օտար հանգամանք: Նախաղէս կարելի է ասել, որ այս երկուար ազդեցութիւնը տաճկաստանոցիների վերաբերմամբ զգալի պէտք է լինի:

Նկատուամ է, որ տաճկաստանցի պատգամաւորները խուսափելու են ոռասասանցի եպիսկոպոսի թեկնածութիւն դնելուց: Այս տեսակ վերաբերման մէջ բարզ հաշիւներ կան: Նրանց մէջ նորա, որոնք բաղձում են անպատճառ իրազործել Խրիմեանի կաթողիկոսութիւնը, անհրաժեշտ են համարում, որ Ռուսաստանից երկրորդը չը մնի. թէպէտ այդ տեսակ ծրագրի պարագլուխները համակրում են Ռուսաստանի հէնց այն եպիսկոպոսներին, որոնց թեկնածութիւնը չափունի աստիճանի հաւանականութիւննի, անի է Երեմիա և Արիստակէս եպիսկոպոսների: Պատգամամաւորները արդէն սկսել են միմնանց հետ ծանօթանալ և զգալով ժամանակի կարծութիւնը, տագնապով զբաղւած են ընտրողական կազմակերպութեամբ: Համամիտ ոչենք արդէն սկսում են համախմբելու, այժմ արդէն կարելի է տեսնել, թէ ինչ մրցող աարքեր կան:

Այսօր առաջին անգամ մինչև ակժմ եկած աշխարհական պատգամաւորները մաքերի փոխանակութեան համար խմբւեցին և այդ առաջին բանակցութիւններից պարզեց որ Տաճկաստանի և մեր աշխարհական պատգամաւորների մէջ ընտրելիների մասին փոխադարձ զիջումներով կտրող է համերաշխութիւն կատանալ: Նոյնպէս այդ ժողովում խմացւած տեղեկութիւններից չափուեց, որ Տաճկաստանի հոգևոր պատգամաւորները ձախն են տալու Աշքղեանին: Այսպիսով ուրեմն մթութիւն ու անկախութիւնը անկախանում է և, լաւ թէ վաստ, իրերի խսկակմն զբութիւնը պարզւում է: աբովետես գործիչները կ'իմանան, թէ ինչ հանգամանքների մէջ են: Ուրախալին այն է, որ արդէն կարելի է նախատեսել, որ աշխարհական պատգամաւորները մի ուժեղ կենդրոն կը կազմեն, որը չնորիւ իւր բարուական և մտաւոր առաւելութիւններին՝ առաջին գործող ոչքը՝ պէտք է լինի այս ընտրութեան ժամանակ և միանալով հոգեռական ընտրողների ընակիր մասի հետ, որը խմբւած է Երեմիա և Արիստակէս եպիսկոպոսների շուրջը, կը վճռի թէ թեկնածուների և թէ ընարկմիների հարցը:

Այս խմբին հակառակ ուժը բազկանում է միմիավ Աշղեանականներից և առաջին կոփուք պէտք է լինի ալդ անձնաւորութեան համար, որից լետոչ դեռ չէ կարելի նախատեսել Աշղեանականների առադաչ ծրագիրը: Թերեւ իրանք էլ ալդ բանը պարզած չը լինեն, ալիսինքն ինչ պէտք է անել՝ Աշղեանի գործը տանել տառուց փոտք: Աշխեան Աշղեանականները շատ նման են 1885 թւականի Մակարին ընտրողներին և մասամբ էլ նոյն անձինքներից բազկացած: Դոքա շարունակ աշխատում են ծածկել իրանց ծրագիրը և շատ անգամ հակառակորդին թակարդ ձգելու համար հակա- Աշղեանական մատքեր են լավանում, բայց որովհետեւ գործ ունին փորձառու և լաւ հակառակորդի հետ, իրանց վարունքով բացի ծիծառ էարուցանե- լուց՝ ուրիշ նպատակի չեն ծառալում. զոցա խիսկանութիւնն էլ առ ալժմ գժւար է որոշել: Դրանցից աւելի որոշ է և ճամաչւում է ան մասը, որը բազկացած է Ռուսաստանի հոգեորական ընտրողներից: Վերջիններիս մա- սին կարելի է ասել որ լամառ կերպով պէտք է ձգան ալդ նպատակի համար, աւելի զօրաւոր պատճառներ ունենալով քան թէ Տաճկաստանի հոգեորականները: Պատգամաւորների գալը անընդհատ շարունակում է: ապօր եկաւ և Տգիսիսի պատգամաւոր պ. Գրիգոր Արծրունին, որը ան- շուշտ պէտք է ամէլացնի աշխարհական պատգամաւորների եռանդը և ար- դարացնի համերաշխութեան գործը ընտրելիների վերաբերմամբ բոլոր հա- կա-Աշղեանականների մէջ: Ոչ ոք չէ կասկածում Տգիսիսի պատգամաւորի դերի մասին ալս գործում, չնորհիւ նորա հեղինակութեան, որ ունի հասա- րակութեան մէջ:

Եջմիածնում արտասովոր և ալեկոծ կեանք է գուացել: բոլոր ճանա- պարզները անընդհատ մարզիկ են բերում ապատեղ. կազմւում է մի մեծ և բազմաթեսակ ամբոխ, որը լուզւած և լարւած հետեւում է ընտրողական բոլոր զործադրութիւններին: Այլ ևս գժւար է բացառապէս պատգամաւոր- ների զալաւեանը հետեւ, մէկ մէկու իմասեց, բաղմաթիւ և փոփոխւող տպաւորութիւնների մէջ անհնարին է ալդ կատարել:

Ալսօր երեկոնքան կաջացաւ մի նշանաւոր ժողով բազկացած Ռուս- ստանանի և Պարտկաստանի աշխարհական պատգամաւորներից և միաբա- նութեան ներկայացուցիչներից, բացի վերոշիշեալ Յովհաննէս վարդապետ Դպիր-Վարդաննեանի և Յովհաննէս եպիսկոպոս Տաթեացուց: Ազգեղ պարզ- ւեց որ միաբանութեան ընարելիներն են՝ սուածին՝ անպաման Խրիմնան, իսկ Ռուսաստանից (? խմբո) Երեմիա և Արխատակէս եպիսկոպոնները: Ազդ ժո- ղովում իմացեց նոյնպէս, որ Երեմիա և Արխատակէս եպիսկոպոսները պատ- րաստ են հրաժարել թեկնածութիւնից Խրիմնանի լաջողութեան համար և Աշղեանին միանգաման ընդմիշտ նոյն իսկ 4-ի ցուցակից բոլորովին հա- նելու համար: Մեր աշխարհական պատգամաւորները ան է Ռուսաստանի և Պարտկաստանի (վերջիններս երկուուն էլ ուստաստանցիներ են – Ատր- պատականի՝ Մելիք-Ազարեան, Խոպահանի՝ Հնողկաստանի՝ Համբարձում

Առաքելիան) բոլորն էլ անսպազման Խրիստեանական և հակա-Աշղեանա-կան. Խրիմեանի ընտրութիւնը չաջողացնելու և Աշղեանի անունը մէջտեղից վերցնելու ջանք չեն խնացում: Առանձին տչքի է ընկնում իւր եռանդում և առանց հանգտոփի գործունելում ամբ պարագաների հետ արդէն ծանօթ, շարունակ բանակցում է տաճկաստանցիների միաբանութեան, իւր ընկերակիցների հետ. որա մասին կարելի է ասել, որ նրա աշխատանքը և չարչարանքը, այս կամ այն անջարմարութիւնը, մի բարէ անդամ չեն ասատանեցնում. երբէք չէ կարելի նրան պատահել հանդիստ դրաթեան մէջ, միշտ շտապում է ընտրութեան վերաբերութեամբ ամեն բանի էլ հասնել նատ գործունեալ էին նոնչիչ Արցախի պատգամաւոր պ. Ներսէս Աթարեցեանը: Երեանի պատգամաւոր պ. Ռուբէն Հասան-Զալակեանը, որը իրաւացի կերպիւ մեծ վարկ ու հեղինակութիւն ունի, առանձին ներդրծական դեր չի կատարում. նա, որին կը վաչելէր պարագլուխներից մէկը գառնալ ամ գործում, կարծեա, խուսափում է ալդ գերից: Եւ փոխանակ աղղելու գործերի ընթացքի վերակ լուր բուռն միջամութեամբ, նա ինքը կարծես զիտող և ուսումնասիրող է հանդիսանամբ. գուցէ չարգելի պատճառներ ունէր այդ խկապէս պատկառելի անձնաւորութիւնը իւր ալդ տեսակ չարաբերութիւնների նկատմամբ. մենք այդ չը զիտենք, մենք նկարագրում ենք աչն, ինչ որ զիտել ենք: Նա ինքը ասում է, որ իւր ծրագիրը արգէն չափարարած է լրագրով, և որից նա մի քալ չի շեղւելու Բայց և անպէս նոցն իսկ ալդ ծրագրում մնալով, անհրաժեշտ էր ամելի եռանդունէութիւն:

Պր. Դրիգոր Արծրունին, ինչպէս և պէտք էր սպասել, մեծ տակտով և խոնհումութեամբ է տանում գործը, շարունակ հետեւելով նրա բոլոր ելեկջներին:

Մայիսի 1: Ակաօր մի ցոլիչ և ուրախալի լուր տարածւեց, թէ Տաճկա-Հալաստանի ներքին գաւառների ներկադայցուցիչները գալիս են, և որ բարձրացած Արաքսը նրանց չէ թողնում անցնել, և ստիպւած են սպասել միախն 18 վերատ հեռու լինելով էջմիածնից: Ամեն. տեղակալը Լառն արեղակն ընդուած ուղարկեց, կարգադրելով ամեն միջոցներ գործ դնել պատգամաւորներին անցկացնելու համար: Կողմնակի մարդկի չառաջ գնացողներ եղան, ամբողջ օրը առաւօտից սպասողական դրութեան մէջ անցաւ, երեկոն հասաւ, բայց պատգամաւորները չերինացին: Վերջապէս տխուր ճշմարտութիւնը պարզեց, որ լուրը ստորդ էր: Բայց ստուգւում է կը զրում հոգեոր և աշխարհական պատգամաւորների գալուստը. վերջինս ներկադայցիչ է և Մուշի թեմի: Ուրեմն Մուշ և կը զրում հոգեոր ամենանշանաւորները կը մասնակցեն ամ ընտրութեանը: Տաճկաստանցի հոգեոր պատգամաւորները ներքին զաւանների պատգա-մաւորների չը գալու կամ ուշանալու պատճառը այսպէս են բացարում:

Աշղեան պատրիարքը, ցանկանալով իրադրելի անել տաճկաստանցոց մասնակցութիւնը կաթողիկոսական ընտրութեան մէջ, անհրաժեշտութեան մէջ է գտնւած եղել սակաւաթիւ գնացողների ցուցակ ներկազայցնել սաճկաց կատավարութիւնը, թուլութեան համար Բաց մենք զարմանում ենք, ինչու նորին սրբազնութիւնը այդ ցուցակը կազմելիս զլխաւորապէս աչքի առաջ է ունեցել Անաստովակի և Ռումինիակի դաշտականութիւնները, խոպառ մոռացած լինելով բուն Հայաստանը, Նոյն պատգամաւորները ասում են, որ պատրիարքի միջամտութեամբ վերջերս տեղեկութիւն ունեն, որ մնացածներին էլ թուլութիւն է տրւած, Բաց կը հասնեն արդիօք աչք թուլութիւն ստացողները, թէ ոչ, ընտրութեան օրը: Այդ թուլութիւնից հնար կունենան օգտելու միան սահմանակից գաւառները, ինչպէս և խոկապէս լինելու է: Էրզրումինն արդէն ճանապարհին են և գուցէ մինչև մագիսը Յը հասնեն. Ալաշկերտինն էլ թերես զան, բաց մնացածները ոչ մի գործադրութիւն չեն կարող անել աչք անազան թուլութիւնից: Խոկ Խապաչեան եղիսկոպոսը մի ուրիշ պատճառ էլ էր ակնարկում, ցանկանալով նրան միակը դարձնել. իւր թէ Սինոդը բաւականաչափ վագրոք չէր ուզարկել հրաւիրագրերը: Բաց աչք պատճառը միան զարմանք պատճառեց լուղիներին, նույնիմերից մինչև մակիս քիչ էր, որ բոլոր գաւառները տեղեկանալին և ընտրութիւնն անէնն Աչք պատճառը անհիմն է և այն խոկամն փաստը աչքի առաջ ունենալով, որ պատղամաւրներ չեն եկել ոչ թէ որովհետեւ չեն ընտրւած մինչև ամժմ, այլ որովհետեւ թուլութիւն չեն ստանում վերը լիշած հանգամանքների շնորհիւ: Ալպէն ազատեղ է և պ. Արքար Յովհաննիսեանը, Բրաւակի տարօրինակ ձեռք ընտրւած պատգամաւորը:

Զարմանալի բան, երբ որ պ. Արքար Յովհաննիսեանի զալսուեան լուրը տարածւեց, ընդհանուրին անողիսի զգացմունք տիրեց, որպիսին զգում են այն ժամանակ, երբ խմացում է, որ հօտի մէջ գալ է մաել: Բոլոր բացասական ողերի համար կազմակերպիչ և զեկավար եկաւ, լայտնի է, որ աչք տիրուր զերում մեր հասարակական կեանքում բաւական ժամանակ է, որ պ. Արքար Յովհաննիսեանը իւր երկրորդը չունի: Այդ բաւական չէ, որ նա Աշղեանին է ցանկանում, նորա հետ միասին նա դնում է և Խրիմնեանի թեկնածութիւնը: Նթէ չը լինէր ամենալատը՝ տղամի տեսակ հեղնութիւն և չարախնդութիւն պէտք էր համարել մեր ժողովրդի վերաբերմամբ, բաց ալստեղ աւելի գործնական հանգամանք կաէ քան թէ լոկ չարախնդութիւնը: Պարոն Յովհաննիսեանը Խրիմնեանի մէջ երկու իրան նողառակազմար կողմ է գոնոււ: առաջին գեկելով նորա թեկնածութիւնը, նա ուղում է իրան ցուց տալ ժողովրդին համերաշխ, լաւ համոզւած լինելով, որ հակառակ վարմունքը նրան շատ թանգ կը նւարի և երկրորդ, որ ամենալին ուրիշներն է, նրա համախոժների համոզմամբ Խրիմնեանը կ'ապահովացնի Աշղեանի կաթողիկոսացումը: Որ պ. Արքար Յով-

համնիսկանը Խրիմեանի անունը տաղով իրրե կաթուղիկոսացուի հակառակ ցանկութիւն ունի նորա վերաբերմամբ, զա արդէն պարզում է և անկարելի կը լինի ծածկել փաստերի թէկուզ ամենախորամանկ նենդութեամբ, որի մէջ «Արձագանք»-ը առանձին հմտութիւն ունի:

Ազօր տեղի ունեցաւ մի նոր ժողով աշխարհական 17 պատգամատրների՝ Նախագահութեամբ Տիգրան էֆ. Կիւմուշկերաւեանիւ և Պոլսում զուցէ Կիւմուշկերաւեանի վերալ շատ լուսեր զրած լինեն, բայց զժւար թէ նա իրազործի: Նա անտարբեր և չը հետաքրքրւած է երեսոմ այս գործում: Աւելի ուխտաւորի քան թէ պատգամաւորի տպաւորութիւն է անում: Նրան ընտրելու ժամանակ, բայց նրա հարատութիւնը, զժւար թէ այլ տարգելի հանգամանք աչքի առաջ ունեցած լինէին, Աշղեանի վերաբերմամբ, բոլոր հանգամանքներից կարիլի է ենթաղրեց որ լուսնի պարտաւորութիւն պէտք է որ զրւած լինէր նրա վերաբ: Ազգ ժողովի նպատակն էր նախագծել և ընտրելիների ցանկը միահամուռ խորհրդակցութեամբ:

Խրիմեանի մասին տաճկաստանցիները մինչեւ ապաւող գալը զուցէ տռանձնապիս մտածած էլ չը լինէին, մինչեւ անդամ առում են, որ Խղմիրլեանին գերադասելիս են եղել նրանից, զիտաւորութիւն ունենալով նրա հետ զնել և Աշղեանին: Բայց Խուսասատն մանելով նոքա համոզեցին, որ Ժողովրդի միակ ցանկալին Խրիմեանն է: Հետեւաբար նոցա ոչ պատիւ կը բերեր, և ոչ էլ մի որ և իցէ հաշիւ կարող էր լինել ազգի ընդհանուր ձգտման հակառակել: Պէտք է խոսաւոլանած, որ աշխարհական պատգամաւորները ընդհանրապիս իրանց զիրքին արժանի են հանդիսանալու և ի գերեւ չեն համելու ազգի իրանց վերակ ունեցած վտահութիւնը: Նրանց մէջ շատ քէրը կան, ինչպէս Բրուսակի պատգամաւորը, որ ազ ժողովից առաջ խորհրդակցել էր Կիւմուշկերաւեանի հետ՝ համաձայնութիւնն իրաց: Նելու միապն առ երես, երեխ Կիւմուշկերաւեանին թիւրիմացութեամբ թունդ Աշղեանական կարծելով: Կիւմուշկերաւեանը, մեր կարծիքով, խկապէս ոչ ոքի կուսակից չէ: Հարուստ մարդ է, ընտրել են, նա էլ եկել է: Աշղեանի համար երեխ մտածել է՝ հնարաւորութիւն լինի, ձան կը տամ, եթէ ոչ առանձին նրա համար զլուխ պատահելու չնմ: Ազգ ժողովաւմ Խրիմեանին ընդունեցին բոլորը միաւանուն: Վիճաբանութիւնն ծագեց երկրորդ թեկնածուի մասին: Խուսասատնի պատգամաւորների մեծամասնութիւնը պնդում էր Սեղբակեանի վերայ, առաջ ընթելով նորա արժանաւորութիւնները—սնչահասիրութիւնը, վարչութեան տաղանդը և ուրիշներից բարձր կրթութիւնը, նմանապէս և ժողովրդականութիւնը: Կիւմուշկերաւեանը պատասխանում է, որ մինչեւ այս տարի իրաւ է, որ Սեղբակեանցը առւսասատնցի եպիսկոպոսներից ամենամտղովլականն էր և իրանց մէջ, բայց այս տարի այնքան լուրեր և զրաբարսութիւններ տեղացին նորա մասին, որ նրանց մէջ մի տեսակ հակառակ հոսանք է զուացել նրա դէմ, այն մտքով, որ իրը

թէ նա Հայաստանեալց ևկեղեցու վերափոխող կարող է լինել Ազդ բանին պ. Արծրունին պատասխանում է, որ Սեղրակեանը մի կէտ անդամ չի համաձայնիլ փոխել Հայաստանեալց ևկեղեցու դաւանաբանական մասուց, ալզ նրա ծգառամք կազանում է նրանում, որ բարձրացնի ևկեղեցին իւր աշխատան ողբարի վիճակից, անհնարին անելով տղիտ և անարժան անձնաւորութեանց հոգեսրական կոչում ստանալը, բարւոքել գիւղական ևկեղեցականների վիճակը, տալ համայնքներին արժանաւոր հովիւներ, բարւոքել տառամեսարանների դրութիւնը, աւելի մօտեցնելով նրանց ժամանակի պահանջներին, մասնագէտների և ձեռնհաս մարտկերանց միջոցով կառավարել վաճքի ընդունակ կալւոծները և բարւոքել տմբողջ անտեսութեան կազմակերպութիւնը. Տաճկաստանցիք բարսնում են, որ այդ միենանց ժամանակ և իրանց ցանկացածն է. բայց նորից պնդում են, որ եթէ իրանցից պահանջում է որ Աշղեանին ցանկից հանեն, ոռւսաստանցիներն եւ չը պիտի դնեն Սեղրակեանի թեկնածութիւնը. Ազդ պահանջը մենք ոչնչով չենք կարող բացատրել, եթէ ոչ նրանսամ, որ տաճկաստանցիները ի սրտէ չը ցանկանալով Աշղեանին, բայց նրան ձուն տալու անհրաժեշտութեան մէջ զանւելով, ուղում էին մի շոշափելի պատճառ բառաջ բերելով դուրս գալին այդ նեղ զրութիւնից, թէ նրանք ոռւսաստանցիների ծանր զիջման խօնաբենով իւրանք ևս տափաւած զիջսում արին. Նրանցից ոմանք չէին թագցնում և այս տեսակ միտք, որ Խրիմեանի կաթողիկոսացման համար Սեղրակեանը կարող է զօրել մրցող հանդիսանալ. Նոքա առաջարկում էին իրեք երկրորդ՝ Ազմիրլեան Մատթէոս հպիսկոպոսին. Դպիրլեանը թէպէտք քիչ ծանօթ է, ոռւսաստանցիներին, բայց եղած կարծիքը ի նորաստ նորա է, հետեաբար նրան զարձնելով երկլուրդ թեկնածու, ընտրաւթիւնը պէտք է լաջող համարել. Որոշ վճիռ չը կայցնելով ցրում է ժողովը, բայց նրան մասնակցալները զուրս են դալիս այն համոզմամբ, որ Խրիմեանից վետով Դպիրլեանը ամենահուանական թեկնածուն է:

Աշղեանի հարցը համարեա վերջացած էր, որ սրբ. Օրինանեանը նոր եկաւ: Ան գործը, որի համար նա ուղանալով գալիս էր Յսափորից, նա զեւճանապարհին էր, որ տարմց: Նորա վերաէ շատ լավեր էր դրւած. նա զեռ զործ չը տեսած վարձատրութիւն էր տացած մինչև անդամ՝ օման նեան շամիչն ստանալով: Պատրիարքը մեծ ջաճքեր է գործ դրել նրան ուղարկելու: Համար, բայց ամենից քիչ օգուստ բերողը նա եկաւ: Մեր կարծիքով շատ չափազանցրած կարծիքը են ունիցել ազս կղերականի վերաէ: Նա թէն վերին ասսիմանի ձկուն և լարմարուղ բնաւութիւն ունի, բայց համոզեցուցիչ և զրաւիչ ոչ մի լավկութիւն: Կաթողիկ ևկեղեցաց, իւր նախին կրթաբանից, նա ներշնչւել է հանդամոնքներից ամեն կերպ օգուտելու ձգտումով, բայց համապատասխան բնդունակութիւններով օգտագործ մնելով մնում է միայն լոկ ալզ վախաղով, որը շատ հեշտ է թափան-

ցում, չը նաէկըով նրա բազմատեսակ շարժումներին և բառերի անվերջ կոտակումներին: Խօսալու ժամանակ նա աշխատում է բառերի անձրև տեղալ և աղղափառվ շփոթեցնել հակառակորդին և տուա հերքելնորս կարծիքը, բայց ադր խաղով նա կարողանում է զրաւել միայն ծալրավեղ միամիտներին: Դժւար թէ ազ աստւածաբանը կարողանալ համողել հաղերին, որ նրանց համար ամենալաւ կաթողիկոսացուն Աշըգեանն է, թէպէտ չափազմնց մեծ համողմւնք ունի իւր մտառը կարողութեան մասին, այն աստիճան, որ կարող է երկու միմեանց հերքող զաղափարներից իւրաքանչիւրի ճշմարտութիւնը, նախծ իւր ցանկութեան, ապացուցաննել: 1887 և 1888 թւականներին ճեմարանում աստւածաբարանութեան ուսուցիչ վնելով՝ ասելիս է եղել իւր աշակերտներին, «ասանկ ալ կապացուցանիմ, անանկ ալ»: Օրմաննեանի գալով Աշըգեանի հարցը նորից բարձրացաւ. բայց նա այժմ զործ կունենալ կազմակերպւած մեծամասնութեան հետ: Եթէ նրա թեկնածութիւնը որ և է կերպով հնարաւոր զառնաւ, այդ կարող է վնել միայն հակառակորդի սխալի կամ միամոռութեան պատճառով: Կիւմուշկերանեանը, որ արդէն համաձայնել էր Աշըգեանին ցանկից հանելու առաջարկութեանը, Օրմաննեանի գալուց փետու պնդում է, թէ «աբատու համար Աշըգեանին պէտք է զէթ չորրորդը անցնուլ»: Դժւար թէ միս աշխարհականներից աղղպէս մտածողներ վնեն, բայց Երուսաղէմի պատգամաւորը, որը կարծեն Խապակեանի ուրբականը վնի, երբէք չը կտրւելով նրանից: Այս մարդու մտմին ոչինչ չի կարելի ասել. հաստատ չափոնի չչ, արդեօք, նա ընդունակ է այս ծանր հանդամանքների մէջ ունական դասողութիւն ունենալ որպիշտու ոչ մի կողմից չչ չափուում: Արտաքին տպաւրութիւնով այս զեռ շատ երիտասարդ պատղամաւորը փշեցնում է Ռուսաստանի վուստանցի փոքր ինչ կրթւած դործակատարի:

Այսօր անսպասելի կերպով տեղս ժամանեց Ալաշկերտի հողմորական պատգամաւորը առաջնորդի կողմից նշանակւած Եօնջալու գիւղի Տէր-Յովհաննէս քահանան իւր հետը բերելով Վաղարշապատի բնակիչ պ. Ս. Ենգիբարիանին Ալաշկերտի պատգամաւոր ընտրած վնելու մասին վկայութիւն: Տէր-Յովհաննէսը մի վերին աստիճանի համակրելի անձնուորութիւն է: Մարդ զարմանում է թէ ինչպէս Ալաշկերտի սպանիչ միջնորդութիւն է գեռ կարող են առաջ գալ աղղպիսի ընաւորութիւններ: Որքան զօրեղ է հայկական աղդի կենսական ովքը, ինչպէս մի քանի բոլոր, նա կարողանում է և ապառաժի մէջ արմատ ձգել և ածել: Իւր բարձր հասակով գրաւիչ դէմքով, պարզ և անմեղ հայեացքով Տէր-Յովհաննէսը խմբն աշքի է ընկնում: Բայց ազ մեղմ և զրաւիչ ապաւորութիւն անող դէմքի մէջ, խորը զիտելիս, երեսում է և երկաթեալ կամքի արտակարութիւն: Վերին աստիճանի պարզ և անպատճէ է խօսում, բայց նրա խօսացածի թէ Ֆէթը և ինչ ոլասմելու ձեւ զգացնում են լսողին: Սպանիչ պայմանների

մէջ մեծացած աչս մարդը իւր լուսամտութեամբ և ձգտումների աղնւութեամբ որքան սաստիկ կոնտրաստ է ներկազայնում աշտեղ ժողովածների ոչ սականների հետ, որոնք օժտւած են և ընդունակութիւններով և եւրապական զիստութիւններով, բայց որոնք վաղուց չը գիտեն ինչ բան է ճշմարիտ խօսալը, ինչ բան է հասարակաց վիճակի համար ցաւը և տանչանքը, թէ և շարունակ աչդ է նրանց փքուն խօսքերի նիւթը:

ԱԿԱՆԱՏԵՍԵՑ:

ԱՐԻՍՏՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ԵԼԱՏԱՑՈՅՑԸ 1892 թ.

(Ча́лгын ағд. дүйн. Сириянарынан-Джизийе. Приложение къ Вѣстнику Финансовъ и Промышленности 1892 г., № 150 № 8471 г. 6 рев.):

| Ոռութեան    | Ե Լ Ք                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | Ոռութեան                                                                                                          |
|-------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 247.824.688 | Պետական պարտքերի վճարման<br>համար Ազգ թւումն են<br>Ասկով վճարելիք պետական պարտքերի 0%.<br>Ասկով վճարելիք պետական պարտքերի<br>պարտքաշէջը . . . . .<br>Թղթաղրամով վճարելիք պետական պարտքերի 0%.<br>Թղթաղրամով վճարելիք պետական պարտքերի պարտքաշէջը . . . . .<br>Բարձրագույն պետական հաստատութիւնն են բարձրագույն պետական հաստա-                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          | 92.125.205<br>7.485.209<br>116.572.227<br>27.071.770                                                              |
| 2.106.411   | Բարձրագույն պետական հաստա-                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |                                                                                                                   |
| 11.405.154  | Ա. Սինոգ.<br>Ազգ թւումն է<br>Քաղաքական և գլուղական քահանաներին<br>և միախօնարներին. . . . .<br>Կայսերական տան մինիստրու-                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 6.351.421                                                                                                         |
| 10.560.000  | թիւն<br>Ա. Շամաքին գործերի մինիստրու-                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |                                                                                                                   |
| 4.812.412   | թիւն<br>Ազգ թւումն են<br>Դեսպանատները և միախաները. . . . .<br>Կուրսի զանազանութիւնն և բանկիրագին<br>ծախքեր. . . . .<br>Զինւորական մինիստրութիւնն<br>Ծովաչին<br>Ֆինանսների . . . . .<br>Ազգ թւումն են<br>Արքունական պալատաներ . . . . .<br>» գանձարաններ . . . . .<br>Կենսաթոշակներ բոլոր մինիստրութիւնն<br>և վարչութիւններին . . . . .<br>Նսկաստներ անկարող զինւորներին . . . . .<br>Նսկաստներ ակցիօններական ընկերութիւն-<br>ներին . . . . .<br>Նսկաստներ կամաւոր նաւատորմիովն. . . . .<br>Նսկաստներ երկաթուղաքին ընկերութիւն-<br>ներին զուտ արդիւնքի ապահովութեան հա-<br>մար. . . . .<br>Կովկասի մաքսա-սահմանակին զօրքի<br>վրա . . . . . 3.511<br>Բաքուկի տեխնիկական կոմիտեակին. 10.809<br>Պետական կալւածների մինիստրութիւնն<br>ըստ<br>Բերքին գործերի մինիստրութիւնն<br>Ազգ թւումն են | 1.211.800<br>1.553.571<br>2.919.804<br>3.203.084<br>29.400.000<br>4.955.000<br>1.546.393<br>600.000<br>18.027.477 |
| 228.907.132 |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                   |
| 47.882.233  |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                   |
| 119.008.304 |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                   |
| 24.539.715  |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                   |
| 80.972.998  |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                   |

Ոռութիւն

## Մ Ա Կ Տ Փ

Ոռութիւն

|             |                                                              |            |
|-------------|--------------------------------------------------------------|------------|
|             | Անդրկովկաս. ծխահարկ . . . . .                                | 2.213.282  |
|             | )) Զինւորական ծառակութեամն<br>փոխարէն. . . . .               | 543.440    |
|             | Առևտորական և զործարանա-<br>կան վկալաթղթերից 156.028          |            |
|             | )) Թամբաքփ առևտորի վկալա-<br>թղթերից. . . . .                | 8.102      |
|             | Մաքսավին հաստատութիւն-<br>ներից . . . . .                    | 2.400.000  |
| 39.090.526  | Պետական կալւածների մինիստ-<br>րութիւն:                       |            |
|             | Ավտ գումարի մէջ է՝ Թիֆլիսի ուպրա-<br>վակից . . . . .         | 1.450      |
| 40.093.841  | Ներքին գործերի մինիստրութիւն:                                |            |
|             | Ավտ թւումն են՝<br>Նամակադրոշմ, բանդերուլ . . . . .           | 11.570.000 |
|             | Պարբերական մամուլից . . . . .                                | 1.050.000  |
|             | Հեռազրական արդիւնք . . . . .                                 | 10.550.000 |
| 2.938.350   | Ժողովրդական լուսաւորութեան<br>մինիստրութիւն:                 |            |
| 74.536.826  | Ճանապարհների հազորդակցու-<br>թեան մինիստրութիւն:             |            |
|             | Ավտ թւումն է՝<br>Անդրկովկ. երկաթ. . . . .                    | 16.516.000 |
| 2.368.230   | Արդարադատական մինիստրու-<br>թիւն:                            |            |
|             | Ավտ թւումն է՝<br>Սենատի տպարանից . . . . .                   | 906.000    |
| 74.710      | Պետական կոնտրոլ.                                             |            |
| 230.792     | Պետ. ձիապահութիւն:                                           |            |
| 886.544.325 | Արտակարգ հասութներ:                                          |            |
| 4.490.366   | Ավտ թւումն է՝ պատերազմական վարձատր.<br>Տաճկաստանից . . . . . | 3.187.139  |
| 74.268.375  | 1891 թ. 3% ոսկու փոխառութիւնից:<br>Գումար                    |            |
| 965.303.066 |                                                              |            |

| Ռուբլի      | Ե Լ Փ                                                                     | Ռուբլի                                |
|-------------|---------------------------------------------------------------------------|---------------------------------------|
|             | Հայ լուսաւորչական<br>թեան . . . . .                                       | հողեսրականու<br>թեան . . . . . 14.204 |
|             | Կաթողիկ հոգեսրականութեան . . . . .                                        | 1.548.991                             |
|             | Վւետարանական . . . . .                                                    | 119.725                               |
|             | Մահմետական . . . . .                                                      | 50.955                                |
|             | Արտակարդ և դադա. ծախքեր . . . . .                                         | 1.189.796                             |
|             | Կովկասի կառավարչապետը, նրա օգնա-<br>կանը և գեներալ նահանգապետներ. 238.216 |                                       |
|             | Կովկասի նահանգապետները, դիւանական<br>և տնտ. . . . . 2.461.185             |                                       |
|             | Կովկասի ժողովրդական զինուորական վար-<br>չութիւնը. . . . . 603.518         |                                       |
|             | Կովկ. միլիցիանի վրա . . . . . 214.669                                     |                                       |
| 21.868.914  | Ժողովրդական լուսաւորութ. մի-<br>նիստր:                                    |                                       |
|             | Ազդ թւումն են:                                                            | 3.280.679                             |
|             | 9 համալսարանների վրա. . . . .                                             | 240.900                               |
|             | Համալսարան. ոտիպենդիաններ . . . . .                                       | 5.153.332                             |
|             | Գիմնազիանների և միջնակարդ ուսումնա-<br>րանների վրա. . . . .               |                                       |
|             | Բէալական և արդինաբերական ուսում-<br>նարանների վրա. . . . .                | 2.196.101                             |
|             | Գաւառական քաղ. ուսումնարան. վրա. . .                                      | 1.715.946                             |
|             | Ծխական և տար. ուսումնարան. վրա . .                                        | 373.305                               |
|             | Ժողովրդ. ուսումնարան. վրա. . . . .                                        | 1.790.269                             |
|             | Ճեմարանների վրա . . . . .                                                 | 1.239.348                             |
|             | Կովկասեան ուսումնար. շրջանի հաստա-<br>տութ. համար. . . . . 7.800          |                                       |
| 63.653.051  | Ճանապարհութեան հաղորդակց. մի-<br>նիստրութիւն:                             |                                       |
|             | Ազդ թւումն է:                                                             |                                       |
|             | Անդրկովկասեան երկաթ. վրա՝ 5.985.598                                       |                                       |
|             | Ռազմավիրական ճանապարհի համար հողի<br>արժեքը. . . . . 19.603               |                                       |
| 24.574.192  | Արդարադատ. մինիստրութիւն:                                                 |                                       |
| 4.284.162   | Պետական կոնտրոլ:                                                          |                                       |
|             | Ազդ թւումն է Անդրկովկ. կոնտրոլ 122.385                                    |                                       |
| 1.268.695   | Պետական ձիապահութիւն:                                                     |                                       |
| 893.668.066 | Արտակարդ ծախքեր. Ազդ թւումն է՝                                            |                                       |
| 71.635.000  | Մասնաւոր անձերից ցիտարնվագունները<br>գնելու համար. . . . . 760.000        |                                       |
|             | Բաթումի նաւահանգիստը կառուցանելու<br>համար. . . . . 535.500               |                                       |
|             | Վերասպառազինումն. . . . .                                                 |                                       |
| 965.303.066 | Գումար                                                                    | 20.140.000                            |

## ԹՈՒՍԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Պետական ելմտացոյցը 1892 թ., Պետական տռեւրական հաշվեկշխաք 1891 թ.: Սովոր 17 ներքին նահանգներում: Օժանդական թիւներ և նպաստներ: Սովոր թէ կազմութիւն: Նոեմբարան և զեմստուօ: Խարգախութիւններ հայի առեւտուքի մէջ: Հասարակական աշխատութիւններ: Բժիշկների թիւը Խուսասանում: Հոգեորութումնարանները Խուսասանում: Անհատի իրաւունքների պաշտպանութիւնը և դատաստանական գործերը Խուսասանում 1861—1871: Առաջարկաները Խուսաստանում:

«Խուսական քրոնիկ» վերնագրի տակ մենք կ'աշխատենք կարելին չափ սլարբերաբար, գէթ ամիսը մի անգամ, «Մուրճ»-ի ընթերցողներին հազորդել ուսական կեանքին վերաբերեալ կարեորագոյն ֆակտերը, պետական, տնտեսական, սոցիալական, գրական սփերաներից, ձգտելով այդպիսով մեր կարողութեան չափ լրացնել «Մուրճ»-ի մէջ ան պակասը, որի կարեորութիւնը ամսագրի խմբագրութիւնը վալուց զգացել է: Սօկանք առ տեսութիւնը ան բանից, որ, թէ՛ միաւն չոր թւերի միջոցով, իւր մէջ պարունակում է Խուսաստանի բովանդակ կեանքը: Դա սկսական ելմտացուցն է:

Ահա 1892 թ. Պետական համառօտ ելմտացոյցը, որի մանրամասնութիւնը գտնում է նախընթաց երեսի վրա.

Սովորական հասութեներ . . . 886.544,325 ռուբլի

Արտակարգ հասութեներ . . . 4.490,366 »

Երկուարի գումարն է . . . 891.034,691 ռուբլի

Սովորական ծախքեր . . . 893.668,066 »

Արտակարգ . . . . . 71.635,000 »

Ծախքերի գումարն է . . . 965.303,066 ռուբլի

Այսպիսով ելքից հանելով մոտքը կը ստանանք 74.268,375 ռուբլու մի բաց (ՃԵՓԱՎԱՐ) ներկայ տարւակ համար:

Վթէ համեմատելու լինենք այս թւերը նախորդ տարիների հաշւեկիոների հետ կը տեսնենք որ ներկայ տարւաչ բացը զգալի կերպով խոշորացնել է:

|      |     |              |            |            |
|------|-----|--------------|------------|------------|
| 1889 | թ.  | պակասը . . . | 24.320,059 | ռուբլի էր, |
| 1890 | թ.  | " . . .      | 42.738,348 | "          |
| 1891 | թ.  | " . . .      | 53.794,812 | ռ. և       |
| 1892 | թվն | սպասում է .  | 74.268,375 | ռ.         |

Մինչդու 1890 թ. պետական հասովթների գումարը հասնում էր 905 միլիոն ռուբլու և 1891 թ.՝ 908½ միլիոն ներկայ տարւանը առաջինից 14 միլ. ռուբլով է պակաս և երկրորդից 17½ միլ. ռուբլով: Բայց եթէ աւելացնենք այդ թւերի վրա այն 20 միլ. ռ. որ մացրած է աւաշին անգամ ներկայ տարւաչ հասովթների մէջ իր սպասող հասովթ պետութեան ձեռքը անցած մի քանի երկաթուղիներից <sup>1)</sup>—այն ժամանակ այդ թւերը կը դառնան՝ առաջինը 34 միլ. և երկրորդը 37½ միլ.: Եւ այս ահագին զանազանութիւնը առաջ է եկել նրանից որ սովոր ճարակել է Ուռաստանի ներքին զաւտոները, որոնցից և սպասում է հասովթների այս պակասը:

Զը նակած այն հանգամանքին, որ այս նախահաշիւը (նման իւրաքանչերին) կազմած է տեղեակ հաստատութիւնների ձեռքով, այն է ֆինանսների մինհոտութիւնից, Պետական կոնտրոլից և Պետական խորհրդի պետական էկոնոմիկակի դեպարտամենտի կողմից,—այնու ամենանիւ հարց է թէ մինչ որ ատորման ստորգ է իրագործելու այս նախահաշիւը. և իրաւ փորձը ցուց է տեսլ որ նախընթաց նախահաշիւներից շատ շատերը բոլորովին հակառակ ելք են ոճեցնել քան ինչ նախագծած է եղել: Ազապէս օրինակի համար 1888 թվին նախատեսած էր սովորական հասովթներից 4 միլիոնի մի բաց, մինչզեռ տարւաչ վերջում 58 միլիոնի աւելուրդ մի գումար գոյացաւ. 1889 թվին նախատեսած 4½ միլիոն ամերոդ գումարի փոխարէն ստացաց 69 միլիոն, իսկ 1890 թվի 1½ միլիոնի փոխարէն գոյացաւ 66 միլիոն: Այս իրողութիւնները պարզ ցուց են տալիս, որ նախահաշիւնները ճշգագէս չեն իրազործում:

Ներկայ սովոր տարւաչ պետական նախահաշիւը անցեալ 1890 տարւաչ (երբ զեռ սովոր չէր լատնել) հետ համեմատելիս նկատում է խոշոր պակամուներ հետեւալ Յ կարգի հասովթների. առաջին նախկին կալւածատէրերի, (պօմենակի) և նախկին պետական գիւղացիների հողեր եւս գնելու վճարներից (վեկոպնակ ոլատեյո), երկրորդ՝ խմբչքեղէնից և վերջապէս մաքսերից:

Առաջին կարգի՝ այն է հողեր եւս գնելու վճարների հասովթը հաշւած էր

1) Կուբոկ—Խարելով—Ազովի և Ալեքսանդրովի և Ալեքսանդրովի և Ալեքսանդրովի:

1890 թվն 88 միլիոն ռուբլի, 1891 թ.—98 միլիոն, խակներկաև 1892 թ. համար հաշւած է միմիան 74 միլ. ռուբլի: Երկրորդ կարգի հասովթները՝ աճն է խմբէքեղնինը պակասակցրած է մինչև  $242\frac{1}{2}$  միլ. ռ. (26 միլիոնով պակաս քան 1890 թ.) և վերջապէս մաքսերից 31 միլ. ռ. պակաս է սպասուամ քան 1891-ին այն է 111 մ. ռ. (1891—142 միլ.): Նախահաշչի ակտ զգուշութիւնը շատերը չափազանց հն գտնում՝ կարծելով որ 17 սովեալ նահանգները ալզափիսի ահազին պակասներ չեն պատճառիլ, եթէ աչքի առնելի որ այդ նահանգներում մինչև օրս նպաստի համար բաժանւած 140 միլ. գումարի մի մասը էլի ետ կը գաէ պետութեան զանձարանը:

Համեմատաբար անցեալ տարւակ նախահաշչի հետ աւելացած են՝ ֆոփակին մինխստութեան հաշում 7 միլ. ռ., Ներքին գործերի մինխստութիւն հաշում՝  $4\frac{1}{2}$  միլ., Ռանապարհների հաղորդակցութեան մինխստը. հաշում՝ 7 միլ., Արդարադասութեան մինխստը. հաշում մօտ 2 միլ. ռ. Պետական պարտքերի տոկոսների վճարը հաշւած է 248 միլ. ռուբ. մինչզեռ 1890 թ. այդ գումարը համում էր  $261\frac{1}{2}$  միլ. իսկ 1887 նոյն գումարը հասել էր իր գագաթնակէտին այն է 281 միլ. ռ., 33 միլ. ռուբլու խնազութիւնը առաջ է եկել զիսաւրապէս այն հանդամանքից, որ պետութեան տոկոսի չափաը իջեցրւած է վերջին երկու երեք տարւակ կոնսերսիափի<sup>1)</sup> շնորհիւ:

Պետական ծախքերի տարեցտարի աճող գումարները ծածկելու համար տէրութիւնը վերջին տարիներս զիմում էր զանազան միջոցների առանց որ և է մի բացի (կամ թեթև մի բացով) պետական հաշեկշիւը փակելու համար:

1879 թ. մաքսերի հասովթը հասնում էր մօտ 61 միլ. ռ.: Ազ տարւանից տեղի են ունեցել մի շարք նոր կարգադրութիւնները, որոնց շնորհիւ մաքսերը աւելացրած են մինչև ներկաւ տարւակ սկիզբը մօտ  $60\frac{1}{2}$ %. Սական թւերը պարզ ցուց են տալիս որ մաքսալին հասովթները այդ չափարով չեն առաջ գնացել—այլ շատ պակաս: Այսպէս

1880 թ. դրանք հասել էին . . . 65 մ. ռուբլու

1889 թ. " " " . . . 80 մ. "

1890 թ. " " " . . .  $82\frac{1}{2}$  մ. "

Ասել է թէ միմիան մօտ  $25\frac{1}{2}$ % (այն է  $17\frac{1}{2}$  մ.):

1883 թ. առաջին անգամ նշանակւած տուրքը ձրի (նէրներով, ժառանգաբար) ձեռք բերւող կազքերից—1890 թվն հասել էր 4 միլ. ռուբլու

<sup>1)</sup> Կոնվերսիա—այն գործողութիւնն է որով տէրութիւնը եւր պարտքերի տոկոսների չափաը իջեցնում է: (Օրինակ՝ եթէ պարտք էր վերցրել  $50\frac{1}{2}$ -ով, նայտարարում է որ այսուհետեւ նոյն այլ պարտքը նա վճարելու է  $4\frac{1}{2}-4\frac{1}{2}$  կամ աւելի պակաս):

1885 նշանակւած նոր 5% տուրքը առկոսարեր թղթերի առկոսներից—1890 թվին հասաւ 11½ մ. ո. և ալճ:

Արտակարգ ծախքերը ծածկում են սովորական հասովթներից—քանի որ արտակարգ հասովթներ սպասում են միմիայն մօտ 4½ մ. ո.:

Ներկայ տարւում կը սպասուի աչն պահեստի գումարը որ գտնուում էր Պետական զանձարանում (Գոսудարственное казначейство) և որը՝ հաւաքւելով 1888/90 տարիների միջոցին՝ հասել էր 219 մ. պատկառելի գումարի: Ազդ գումարից է տրւած օժանդակութիւն սովետ նահանգներին անցեալ տարի մօտ 70 միլ., և ներկայ 92 թ. պիտի տրւի նոյնքան: Նոյն 219 մ. վերովիշեալ պահեստից պիտի ծածկել թէ անցեալ տարւակ եղած և թէ ներկայ տարւակ սպասելի բացերը:

\*  
\* \*

Անցնենք այժմ Ռուսաստանի պատմէո ասած առևտրական հաշւեկշռին: Քայլ նախ երկու խօսքալ իշեցնենք որ մի որ և է երկրի արդիւնաբերութիւնները և արդիւնաբարծութիւնները համայնարհավին շուկանի հետ կապելու, չարաբերութիւնների մէջ զնելու համար կան երկու ուղղութիւններ, երկու սիստեմներ: Մրանցից մէկը չենուում է աղաս մրցումի վրա—միւրը մաքսերի օգնութեան է դիմում: Երկու սիստեմներն էլ ունեցել են և շրունակում են ունենալ իրանց պաշտպանները:

Ռուսաստանը զեկավարուում է երկրոդ սիստեմով, աղմինքն զիմում է մաքսերի՝ «ազգապին» արդիւնաբարծութիւնը ոտի վրա զնելու և ոտի վրա պահպաննելու համար:

Արդ՝ 1891 թ. (բացի զեկատեմբեր ամիսը) համաւուսական առևտուրը արտասահմանի հետ հետեւալ թւերավ է արտադաշտել, ապրանք և արտահանւած 682 միլ. ռուբլու: իսկ ներմուծւած է միմիայն 342 մ. ռուբլու:

Աթէ հաւատանք պրոտեկցիոնիստներին (մաքսականներին) պիտի եղբակացնենք պատմէո որովհետեւ Ռուսաստանը անցեալ 91 թ. 340 մ. ո. աւելի (682—342) է ստացել ծախած և առած ապրանքներից, ուրիմն նաաւզդ գումարով հարտաշցել է, ազդ գումարը Ռուսաստանի մէջ է մնացել և որ ուրեմն Ռուսաստանի տնտեսուկան գրաւթիւնը հիանալի է:

Արգեօք սիմանք չէ ամ եզրակացութիւնը որ անում են ամենախն սիրով պրոտեկցիոնիստները: Պրոտեկցիոնիստների հոկառակորդները ասում են՝ վիշեցք 1875 թ. երբ Ռուսաստանը ներմուծել էր 140—150 միլ. ռուբլու աւելորդ ապրանքներ, քանի ծախել էր և սական ազդ թվու թղթագրամ ռուբլու արժողութիւնը սա էր՝ 1 ռ. 15 կ. թիմթաղրամ միջին թուլ արմէր 1 ռ. ոսկի: Սորու հակառակ վիշեցք 1888 թիւը երբ արտահանւածի և ներմուծւածի տարրերութիւնը լոգուտ առաջինի հասել էր 400 մ. ո. և ալնուամնառնիւ 1 ռ. 72 կ. թղթաղրամը արմէր 1 ռ. ոսկի:

Եթէ պրոտեկցիոնիստների ազգ գրութիւնը՝ թէ երկիրը աղքատանում է եթէ աւելի մեծ գումարի է ապրանք ներմոծում քան արտահանում՝ ուղղով է, ձիչով է—ասպա Ֆրանսիան և Անգլիան վաղուց արդէն պիտի չբացած լինէին: 1885 թւից մինչև 1890 Ֆրանսիան օտար երկիրներից ներմուծնել է  $20\frac{1}{2}$  միլիարդ ֆրանկի ապրանք, իսկ արտահաննել է  $16\frac{1}{2}$  միլիարդ ֆրանկի: Եթէ միան այս թւերով գոհանալինք, պիտի եղբակացնէինք թէ Ֆրանսիան աղքատացնել է կորցնելով ծ տարում և միլիարդ, մինչեւ ապանի է որ թանգարին մետախներ ներմուծել և մնացել են Ֆրանսիացում վերջին ծ տարիներում վախտում միլիոն ֆրանկ աւելի քան արտահաննել:

Նոյնը ներկազացնում է Անգլիան, բայց աւելի խոշոր թւերով, ներմուծածի և արտահանածի տարբերութիւնը համեստ է ամենայն տարի մօտ և միլիարդ պատկառելի մի գումարի: Այս պերճախոս թւերը ապացուցնում են որ սիալ է պրոտեկցիոնիստների այն ոկզունքը, որով նրանք մաքսերի ոչտով արգելում և զժւարացնում են օտար ապրանքների մի երկրի մէջ մտնելը՝ կարծելով թէ դրանց վճարելիք արժեքները կը մնան երկրի մէջ և երկիրը հէնց զբանով կը հարստանաւ: Կարծես ներմուծած ապրանքները հէնց որ նրանց արժեքը վճարելոց և արձանագրւեց «Առեալական հաշվեկշռի» մէջ—կորցրին իրանց արժողութիւնը. կարծես թէ հաշվի է առնւում ոչ թէ արժեքը ոճնկացն իրը, ապրանքը, այլ միմիան նրան ձեռք բերելու արժողութիւնը: Եւ եթէ Անգլիան, օրինակի համար ներմուծում է և միլիարդով աւելի ապրանք, կարծես նա վճարում է այդ և միլիարդը և փոխարինը ոչինչ չէ տանում. կարծես թէ ազգ և միլիարդի ապրանքը զբովի արժողութիւն է և ոչ թէ և միլիարդ ֆրանկի արժուութիւն...

Պրատեկցիոնիստ մաքսասէրները դիմում են մաքսի ոչ թէ միան տեղական արդիւնագործութիւնը ոտքի կանոննեցնելու և ոտքի վրա պահպանելու համար, այլ նաև այն դէպքերում երբ հարկաւոր է այդ «առեալական հաշվեկշռը» «գաջող գրութեան մէջ» սպահանել:

Օրինակի համար, օտար շաքարի վրա մաքսը աչնքան բարձր է, որ տեղականը արդէն կարգի է ընկել և Ռուսաստանում օրինակելի զործարաններում օրինակելի շաքար է պատրաստում:

Կարմիր էր կարծել որ համելով իրանց նպատակին, որ է զարգացնել տեղական արդիւնագործութիւնը, մաքսերը կը թեթեացնելին կամ խոպառ կը վերացնէին: Քառ լիցին մաքսերը պահպանում են, բայց որպէս զի արտահանութիւն լինի (առեալական հաշվեկշռում արտահանած զումարները խոչորացնելու մտքով), շաքարի զործարանատէրներին վերադանում է նրանցից չօգուտ պետական գանձարանի ստացած ակցիզը—եթէ այդ զործարանատէրները արտահանելու լինեն իրանց շաքարից օտար երկիրներ ներկայ տարւայ համար այդ նպատակին չառկացրած է  $3\frac{1}{2}$  միլիոն ռուբլի և այդ զումարով օտար երկացըիք աւելի էժան շա-

քար կը ստանան քան Ռուսաստանի բնակիչները. Ասել է թէ Ռուսաստանի գործարանատերերը ներկայումս տիրապետող սիստեմի հովանառութեամբ աշխատում են բարեդորձական նպատակով, այն է օտարներին աւելի էժան շաքար մատակարարել քան իրա Ռուսաստանի սեփական նպատակներին. Մինչդեռ մաքսերը միջոց են աւել շաքարագործարանատէրերը, որոնք իրար հրում օգտավում են օտարները և շաքարագործարանատէրերը, որոնք իրար հետ պալմանաւորելով թէ շաքարի գինը նշանակելում է թէ շաքարի որոշ քանակութիւնը պատրաստելում՝ դառնում են այդ գործի մենաշնորհը վայելողները, մոնոպոլիստները. Մինչդեռ անկանոնած է որ եթէ շաքարի ակցիզը չափաւոր կերպով պակասացնեէր—շաքարի արդիւնադործութիւնը չէր վտանգուիլ, Ռուսաստանի բնակիչները աւելի էժան շաքար կ'ունենալին, իսկ գործարանատէրերը իրանք օտար շուկաներ կ'որոնէին. Ասկան պրատեկցիոնիստները ակտորւակ օրո գորեկ են և այդ է պատճառը որ նոյն ձեր ուղում են չարմարեցնել նաև բամբակեղենի վրա, այն է վերադարձնել գործարանատէրերին բամբակի համար ներմուծելիու վճարած մաքսը—եթէ նրանք արտահանելու վիճեն օտար երկիրներ այն բամբակից յարակած չիթ և այլ նման ապրանքներ...

Ռուսաստանի 17<sup>2)</sup> ներքին սովետ նահանգների դրութիւնը վազոց լայնի է ամբողջ աշխարհին:

Ալվի ալսպէս ասած ամենաթունդ ժամանակը երբ սովետականերին օդնութեան ձևոք էին կարկառում թէ Ամերիկակալից, թէ Ֆրանսիակալից, թէ Անգլիակալից, երբ Ռուսաստանի բոլոր փոքր ի շատէ մեծ քաղաքներում պարահանդէսներ, ներկալացումներ էին սարգւում ի նպաստ սովետակաների, երբ ուստի գործիչներից շատ շատերը անձամբ գնացին սովետ նահանգները անձամբ օդնութեան գործը կանոնաւորելու և սոցա թեսում կ'են ծովառութիւնը իւր զաւակներով, երբ նոյն իսկ հայ ուսանողները հետեւլով ընդհանուրի հոսանքին և օրինակ առնելով ուստ ամսագիրների հրասարակութիւններից լողուած սովետականերին<sup>3)</sup> կամեցան իրանց լուման ևս աւելացնել այդ բարի

1) Անշերու է նորեքս վախճանւած շաքարանագործատէր Խարբիտանենկօ՞ն որը 40 միլիոն ռուբլու կարողութիւն թողեց իւր ժառանգներին:

2) Աըսնք են՝ Վ. ոքոնեժի, Վ. ետակայի, Կոզանի, Կուրսկի, Նիժեգորոդի, Օքեն-բուրզի, Օքլովի, Պենզայի, Պերմի, Ռեզովսկի, Սամարայի, Սուրատովի, Սիմբերսկի, Տամբովի, Տուլովսկի, Տուլայի և Ա. Փինովի նահանգները.

3) Այդ նպատակով էր հրատարակւոծ „Կիևսկի Շօրունկերը“ որի կազմում մասնակցեցին և օտարները՝ Լուի, Ջախեր Մազուր, Եթերս, Նորդաստ, Աէրդէ

Նպաստակի համար մտածելով մի ժողովածու հրատարակել՝ այդ կրիտիկական բոպէին Պետերբուրգի «Նովոստի» լրազիրը համարձակութիւն ունեցաւ եղած սովոր անւանել «առւր կերպարանք առած սպարադիական կարոսութիւն», ի՞նչ ասել կոսի որ սա վիճաբանութեան և բանակուլի խնդիր գարձաւ Այս հարցի հետ միաժամանակ հրապարակի վրա դրւեց և շտեմարանների խնդիրը լրազիրները որոնում էին սովոր պատճառները և այս բանում մեղադրութիւն գտնում և զեմստաօն, որի պարտականութիւնն էրից մէկն է շտեմարաններ ունենալ, իսկ շտեմարաններում հայ՝ անակնկալ սովոր առաջին առնելու համար:

Սական բանից դուրս է գալիս որ մամուլի պահպանողական մասը լարձակելով զեմստուօի վրա իրեն ազգատիմանների ջանքերի մի արդիւնքի՝ իսկապէս երևան հանուեց որ ազդ գործը շատ անմիջիթար է կազմակերպւած: Իրաւ է զեմստուօններին է յանձնաւած շահմարանների գործը — սական ներկալ հանգամանքների մէջ զեմստուօի ուսպաւան փող բաժանելով գիւղացիներին՝ վերջիններիս ընդհանուր երաշխաւորութեան դրաւականով (բրցօայ պորուկ) — նոյն իսկ հունձի ամենալաջող տարիններում չի կարողանում ետ ստանալ փոխ աւած ցորենները: Այս մոքով շատ զեմստաօններ զիմնել էին վարչութեան, բայց գործացուցիչ պատասխաններ ստանալով հանդերձ — իրանց նպատակին չեն հասել և ցրւած փողերը ետ չեն եկել Ուրեմն զեմստուօն պարտաւորւած լինելով շտեմարանական գործում՝ զորկ է անհրաժեշտ լշխանութիւնից ի կասար ածելու իւր պարտաւորութիւնները լուսվեամբ: Զեմստաօն կարող էր տեղեկացնել վարչութեան թէ ամրարները դաստարկ են և նա աեզեկացրել է:

Գաւառական (յնձնեայ) ոստիկանութիւնը նահանգապետի ուղղակի իշխանութեան հնթարկւած լինելով՝ ամենից առաջ ջանում է ժողովներ պետական տուրքերը և հաստիմները, իսկ զեմստաօնների կարգադրութիւնները իրեն մի ոչ ուղղակի իշխանութեան — ոստիկանութիւնը չի աշխատում կատարելու: Մայս 5.ի հեռագիրների համաձան առաջարկւած է նահանգապետներին ճիշտ տեղեկութիւններ հաղորդել թէ արդեօք իրանց լշխանութեան լանձնաւած նահանգները որքան տեղական ցորենի պաշտոն:

Վերը մենք վշեցինք Այս Տոլստոյի անձնական մասնակցութիւնը սովեալներին օգնելու գործում: Այս թւեր նորա գործունէութեան վերաբերմամբ: Ոուս նովատուններից մինչև այս տարւակ ապրիլի 12-ը նա ստացել է 96.560 րուբլի: Բայց այդ ստացել է նա Ամերիկակայից մօտ 28,000 Անգլիակայից մօտ 16.000, Ֆրանսիակայից 759 ր.,

և ուրիշները: Նմանօրինակ ժողովածուներ են հոգածարակել Ռусская Мысль, Русская Жизнь, Русский Вестникութիւնները: Այս վերջնինի ձեռնարկութիւնից արդենք հասաւ 18.000 ռուբլի:

ընդամենը 142.597 բուրլի, Ազգ գումարից նա մասել է 110.414 բուրլի, հիմնելով 187 ճաշարաններ զիմաւորապէս Տուլի, Քեաղանի և մասամբ Սամարի նահանգներում:

Սովորաներին օգնելու նպատակով կազմւած ընկերութիւններից վիշենք Խարկովի «Նղբայրութիւն» (Երաժեռութեան) անսանւածք, որը սովորաներին ձրի կերակրում է իւր անդամներից տուցած ամսական մօտ 1000 ռ. գումարով որի համար իւրաքանչիւր ընկեր պարտաւոր է ներս բերել ընկերութեան դրամարկղը կամ ամսական ամենապակասը 2 ռ., կամ թղթախաղում տարածից 50%/<sub>o</sub>, թամբաքուի և խմիչկեղինի տածից 25%/<sub>o</sub>, թատրոնական վճարից 10%/<sub>o</sub> և կոնֆեկտի ծախքից 5%/<sub>o</sub>:

\*  
\* \*

17 նահանգների արտասովոր տառապեալ դրութիւնը ապացուցներ է քերել վաճառականների առասպեկտական աղանութեան: Ընթերցողը լրագիրներից խմացած կը լինի այն սկանզաների մասին որ տեղի են ունեցել Պիտուրուրդի դուռավում, — բայց երեխ չէ խմացել որ Պինզա նահանգի համար զնւած հացի վատ և կեղծած չատկութեան առիթով՝ կաղմել են 148 արձանադրութիւններ:

Սովորան նահանգներին դրամով օգնելու համար վճռեց և արդէն զլուխ են քերւում հասարակական աշխատութիւններ (օնութեան քարտական բաժնեական մշակութիւն (քարտական անսառների, հասարակ և խըճուղակին ճանապարհների բարելաւութիւն, 100 եկեղեցների երկու էլեւատորների<sup>1)</sup> և մի քանի արհեստական ջրամբարների կառուցումը: Ումանք քննադատներով սովորաներին օգնելու ակա միջոցները, հաշւում են որ վիշեալ բոլոր ձեռնարկութիւնները, արժողութեամբ մօտ 10 միլ. ռուբլի՝ աշխատանք կտան 218 հազար բանւորի (իրանց 65 հազար ձիերի հետ) և որ դրանց ձեռքը կը հասնի ընդհանուր արժողութեան հազիւթէ 10%/<sub>o</sub> և որ ամելի լաւ կը լինէր կամ 10 միլիոնը ուղղակի բաժանել 30 միլ. բնակիչ ունեցող 17 սովետ նահանգներին, կամ թէ այդ ձեռնարկութիւններից միան օգտաւէտները ընտրել և անապաղ կատարել տալ նահանգական գենստօնների ուղրաւանների պատասխանատութեան ներքով:

1) Էլեւատոր կոչւում է ցորենի համար առանձին կերպով, այլ և այլ սորտերի համար յարմարեցրած և առեւթի կենտրոնական տեղերում՝ կառուցւած հասարակական ամելաբներ, որուն ընդունում է ցոր ենը և ծախելուց տուաջ նորա տիրոջ տրւում է ապրանքի արժողութեան մի մասը իրեւ փոխատութիւն: Էլեւատորի միջոցով կառավարութիւնը օգնութեան է զալիս արդիւնաբերողներին սոցա աղաւու համար վաշխառուների Հանկերից:

Սովոր մասին խօսքը վերջացնելու համար վշտնք որ, բայցի 12 միլիօնանոց երկու վիճակախաղութիւններից, կազմւած էր նաև մի առանձին կոմիտէտ նւէրնուր ընդունելու համար՝ նախագտահութեամբ թաղաժառանգի:

\*  
\* \*

Բժշկական գեղարտամենտի ամենաճն տարի հրատարակած պաշտոնական ցուցակից երեսում է որ 1890 թ. Ռուսաստանի բոլոր բժիշկների թիւը համառում էր 18.694: Սական անցեալ 91 թ. ընդունւած վիճակով մինոր ձև ցուցակներ կազմելու երեսաց որ բժիշկների թիւը ամբաղջ Ռուսաստանի մէջ ոչ առելի է քան 12.185: Լրացիքները այդ նոր ցուցակի մէջ շատ բժիշկների անուններ չը գտնելով՝ սապացուցեցին զրանով նոր ցուցակի անկատարութիւնը: Եթէ ընդունելու վիճնենք սական բժիշկների թիւը 18 հազար, առել է թէ Ռուսաստանում (100 միլիօն բնակիչ ենթադրելով) 18 բժիշկ է ընկնում 100 հազար հոգու վրա:

Եթէ վշտնակ 18 հազարից դուրս գանք միահն քաղաքներում ապրող բժիշկների թիւը, կը տեսնենք որ գիւղացին ազգաբնակութեան մէջ 18. բժիշկ երբէք չի հասել 100 հազար մարդու:

Եթէ համեմատելու վիճնենք եւրոպական ազգերի հետ եղած վիճակագրական թւերի համաձայն<sup>1)</sup> կ'երեսակ որ ամենամիերջին տեղը Ռուսաստանին է պարկանում:

Ալոգէս՝ հարիւր հազար հոգու հասնում են՝

|                |       |      |   |   |   |   |   |          |
|----------------|-------|------|---|---|---|---|---|----------|
| Եւրոպարիակում. | .     | .    | . | . | . | . | . | 75 բժիշկ |
| Խոտավարում.    | .     | .    | . | . | . | . | . | 60 "     |
| Անդլիակում.    | .     | .    | . | . | . | . | . | 58 "     |
| Հուլանդիակում. | .     | .    | . | . | . | . | . | 43 "     |
| Բելգիակում.    | .     | .    | . | . | . | . | . | 42 "     |
| Ֆրանսիակում.   | .     | .    | . | . | . | . | . | 39 "     |
| Գերմանիակում   | և     |      |   |   |   |   |   |          |
| Աւստրիակում    | {     |      |   |   |   |   |   | 32 "     |
| Սպանիակում.    | .     | .    | . | . | . | . | . | 31 "     |
| Հունգարիակում. | .     | .    | . | . | . | . | . | 24 "     |
| Ռուսաստանում՝  | միջին | թափ. | . | . | . | . | . | 15 "     |

Դնենք ակտուղ նաև մի ուրիշ աղիւսակ, այն է ըստ տարածութիւնների, որից զարձեալ կ'երեսակ որ վերջին տեղը պատկանում է Ռուսաստանին: 1 բժշկին համառում է՝

<sup>1)</sup> Bulletin de l'Institut international de statistique.

|                                    |      |                                  |
|------------------------------------|------|----------------------------------|
| Բելլիալում.                        | 13   | քառակուսի կիլոմետր <sup>1)</sup> |
| Անդլիալում <sup>2)</sup>           | 16   | " "                              |
| Իտալիալում <sup>3)</sup>           |      | " "                              |
| Հոլլանդիալում.                     | 18   | " "                              |
| Շեքսարիալում.                      | 19   | " "                              |
| Գերմանիալում.                      | 31   | " "                              |
| Աւստրիալում.                       | 41   | " "                              |
| Սպանիալում.                        | 96   | " "                              |
| Եւրոպ. Ոռուսաստանում <sup>2)</sup> | 368  | " "                              |
| Ամբողջ Ոռուսաստանում <sup>3)</sup> | 1496 | " "                              |

թէ այսպէս թէ այնպէս Ոռուսաստանը բանում է ամենասլեքջին տեղը և խօսուր է այն զանգատը թէ բժշկների մրցաւմը շատ շատ է: Խոկովթիւնը սա է որ բժիշկները անհաւասար կերպով են փաւած առաւելապէս կենաւ, բոնանութ քաղաքներում և զանց առնելով գիւղերը և աւանները:

\* \* \*

1891 թ. վերջերքում հրատարակւած հայւետութիւնից երեսում է որ՝ ոռուս ծխական հոգեսոր ուսումնարանների թիւը համառ էր  $8\frac{1}{2}$  հազարի՝ 300 հազար աշակերտներով:

Այս թւերին կից եթէ զնհնք ամերող Ոռուսաստանի բոլոր տարրական ուսումնարանների թիւը, այն է մօտ 39 հազար, ուր ուսանում են մօտ 1 միլիոն երեխալ, կարելի է եզրակացնել որ հոգ. ուսումնարանների թիւը =  $\frac{1}{3}$  նուանողների թիւը =  $\frac{1}{3}$  ընդհանուր թւերի:

Հողեսոր լշխանութեան հոկովամիեան տակ են նաև  $9\frac{1}{2}$  հազար գրա- գիւղութեան ուսումնաբաններ (школо գրատու) 173 հազար երեխաններով: Ազնուհեան նողն իշխանութեան հոկովամիեան տակ են միջին և բարձրա- գոյն ուսումնարաններից՝ 4 ակադեմիա՝ 789 ուսանողներով և 55 սեմինա- րիաներ 16 հազար ուսանողներով և 181 հոգեսոր ուսումնարաններ մօտ 29 հազար աշակերտներով:

\* \* \*

1861 թից մինչև 1870 դասաստանական հետեւալ վլճակազբա- կան թւեր են հրատարակւած նորերում <sup>4)</sup> Ոռուսաստանի հին և նոր դա-

1) Կիլոմետր = 1000 մետրի,  $1\frac{1}{10}$  արշեն = 1 մետրի:

2) Սքա տարածութիւնն է 4,846,000 ք. վերսա = 5,515,000 քառ. կիլոմետր:

3) Եւրոպական և Ասիական Ոռուսաստանի տարածութիւնը = 19,713,000 քառ. վերսա = 22,434,000 քառ. կիլոմետր:

4) В. Новаковский: Опытъ подведенія итоговъ уголовн. статистики 1861—1871 г. г.

տարանների գործունէութեան մասին։ Այդ 10 տարւակ ժամանակամիջուցում դատի էին կանչւած 354 հազար անձեր, որոնք մեղադրում էին կեանքի առողջութեան, ազատութեան, պատվի գէմ ոճիր գործած լինելու համար։ Այս թւից դատապարտել են 85 հազար հոգի։ Մասնաւոր մեխականութեան գէմ ոճապործների թիւն էր 1.161 հազար, որոնցից դատապարտել են 278 հազար։ Մասնաւոր վիրաւորանքի գէմ մեղադրածների թիւը եղել է 183 հազար, որոնցից դատապարտել են 37 հազար։ Կանանց պատվի և ողջախոհութեան գէմ մեղադրածներ էին 15 հազար, որոնցից դատապարտել են միայն 2 հազարը։

Այդ թւերից երեսում է 1) որ դատապարտւածները կազմում են համեմատաբար մի աննշան տոկոս դատի ենթարկածների ընդհանուր թվից և 2) որ պատվի գէմ ոճիր գործածների դատապարտւածների տոկոսը աւելի քիչ է քան սեփականութեան, առողջութեան և կեանքի գէմ ոճիր գործածների։ Այսինքն պատվի գէմ ոճիր գործածներից մեղադրւել են  $13\frac{1}{2}\%$ , կեանքի գէմ— $23\frac{1}{2}\%$ , սեփականութեան գէմ— $24\%$ ։

Դալով առհասարակ դատի ենթարկածների մեծ թւին համեմատաբար քիչ դատապարտւածների չափսի հետ—պէտք է ասել որ ռուսաց դատապատճեական վերնորոգումը չը տարածւեց նախնական քննութեան (предварительное следствие) վրա։ Ռուսաց տօֆմեան օրէնքների համաձայն նախնական քննութեան ժամանակ մարդիկ դրկած են պաշտպաններ ունենալու իրաւունքից՝ ասել է թէ միայն դատարանումն է բարոնում նրանց անմեղութիւնը։ Ռուսաց մամուլը դարձրել է կառավարութեան ուշադրութիւնը վերուիշեալ հանգամանքի վրա։

\*  
\* \*

Նորագոյն վիճակագրական թւերից երեսում է որ ամբողջ Ռուսաստանի մուրացկանների թիւը հաշւած է մօտ 300 հազար, և որ սրանցից 158 հազարը՝ տեղական իշխանութիւնների վկանութեամբ՝ արժանի են ապաստանմալու։ Ընդհանուր թվից տամներորդական մասը, այն է մօտ 30 հազարը ընկնում են միմիայն Մոսկվային և սրա նահանդին։

# ԵՐԱԺԷՏԱԿԱՆ ՆԱՍՏՈՂՈՒԹԻՒՆԵՐ

ԳԲ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

## III

Ոչ մի տարի Յիֆլիսում չենք ունեցել այնքան համերգական երեկոներ, որքան այս տարի և այդ երեկոներ չաճախողների թիւն էլ այս տարի անցեալ տարիներից անհամեմատ մեծ էր։ Հասարակութիւնը ուրախութեամբ էր չաճախում այդ համերգական երեկոները, ուշադրութեամբ չում էր և մինչև անգամ պահանջում կրկնելու մը քանի Նօնն (կտորները)։ Մի խօսքով համերգական երեկոները հասարակութեանը դուր եկան և այդ ամենի համար պէտք է չնորհակալ լինել պ. Խաղովիտովի Խւանտիյն, որը լանձն առաւ անգարձ կազմակերպել հինգ համերգական երեկոներ մեծ պատի ընթացքում։

Այդ կոնցերաներում կատարում էին զանազան պիեսներ, ինչպէս զասական, նոյնպէս և ժամանակակից բէտքառուարից։ Խրիմ սովորութեան տիկ, Ռէնտիլովա, պարտներ՝ Սարաջեւ, Կուչին, Պրետման և ուրիշները։ Յու մանրամանարար չեմ քննազատելու բոլոր կատարւած կատրները, նոյնպէս մանրամանաբար յոյ կանգ առնիլ բոլոր սովորութեան տիկ արժանաւորութիւնների վրա։ Այսքանը միան կատեմ, որ տիկ Ռէնտիլովան լաւ նւազող է, կատարելուզործւած մեքանիկական առջեւութեամբ և որ առհասարակ նրա խաղը ամփափ մի տպաւրութիւն է թողնում, միան մի բան աչքի է բնկնում. այդ նրա կառրուեն է ածելու ժամանակ։ Տիկինը անհամեմատ աւելի մեծ տպաւրութիւն կը գործէր, եթէ կարողանար իրան հանդիսան և չնորհակի պահել դաշնամուրի առջեւ, ինչպէս այդ պահանջում է զանամուրի նորագոյն շկոլան։ Պր. Սարաջեւը հիանալի վիօլոնչելիստ է և լաւ երաժիշտ, ախտոս միան, որ նրա գործիքը երգեմն ճանչում է, բայց դա հենց իրա զորմիքի մողն է և ոչ նրա տիրած։ Պր. Կուչինը, աեր Աստուած! միթէ կարելի է նրան ջութակահար ու լիստ անւանել։ Ճշմարիտ է նա լաւ մեքանիկա ունի,

հիանալի ջութակ, բայց ապդ ամենը այն չէ, ինչ որ հարիտոր է, նա զուրկ է ամենազլվաւորից, նա չունի այն ինչ որ անհրաժեշտ է ջութակահարին—նա տո՞ն (ՏՕՒԹԵ) չունի: Այդ պատճառով նրա խաղը վերին աստիճանի թուլ է և չը կատարելագործւած, թէև տէինիքական ակսակիւթից մաքուր է: Նրա խաղը մէջ մի ինչ որ պակաս է, ոչ լիսով, ո դոհայնող ապաւորութիւն թողնելով: Նրա խաղը կարծես մի ինչ որ լաւ բանի արձականքը լինի, կամ թուլ առւերը:

Պ. որ Մատիրոսիկի և Պրետման... բայց լաւ է, որ ես նրանց մասին ոչինչ չասեմ, որովհետեւ ազմու աշխարհիս երեսին անքան շատ են զաշնամուրի վրաէ լաւ նւազողները, որ նւագել այդ պարսների որիս և solo ընմ զուրս զալ կոնցերտներում—մի քիչ բիսկի բան է:

Գուցէ ընթերցողները կամենան լուկ նաև նւագածու Բալտենեւի մասին, որը կարծես եկել էր Թիֆլիս չատկապէս երկու անշաջող կոնցերտներ տալու համար՝ սակայն անցնենք գործին:

Այդ կոնցերտներում կատարւած դրամծներից առ անձին ուշագրութեան են արժանի Մոցարտի, Շումանի և Շուբերտի սիմֆոնիաները, Բիզեի «l'Arlesienne» սիւլիան<sup>1)</sup>, «Միլֆների պարը» և «Հանգարական քայլերգը» (մարտ) հեղինակութիւն Բէրլիօզի:

Մոցարտը, Շուբերտը, Շումանը և նոյն իոկ ինքը մեծն Բեթհովենը երաժշտական հակացի-Յոհանն Սեբաստիան Բախի չաջորդներն են, որը վախճանել է մօտ 150 տարի սրանից առաջ: Կըսաժառական զրողներից առաջինն է եղել Մոցարտը, ամենավերջինը (կամ ամենանորագոնը) Շումանը: Այդ է պատճառը, որ Մոցարտի դրամծների մեծ մասը այժմ ոչ թէ գոհունակութեամբ, ալ նոյն իոկ չը կամութեամբ է լսում, այն ինչ Շումանի հեղինակութիւնները մինչեւ անգամ լսու երաժշտներին երբեմն անհասկանալի են թւում: Բանը պարզ է: Մոցարտը աչքի առաջ ուներ զլիսաւորապէս Բախին, այն ինչ Բեթհովենը միտհաւասար օպտում էր Բախից և Մոցարտից: Շուբերտը աւելի բախաւոր գոհուեց՝ բնութեամբ բոմանտիք լինելով նա ըմբունեց Մոցարտին բառով վաւելչութիւնը և չնորհալիութիւնը և Բեթհովենի մոքերի բնածին հարաստութիւնը և խորութիւնը և ալդ ամենը հաշտեցրեց իւր կուսական բոմանտիքական բնութեամն մէջ: Խակ Շումանը, Բախի և Շուբերտի ամենաթունակ պաշտովը լինելով՝ կատարեալ իրաւամբ պիտի համարվ գերմանական բոմանտիմի խկական ներկայացուցիչը:

Ի հարկէ, վերովիշեալ համերգական կոնցերտներում ամենաին չը

<sup>1)</sup> Սիւլիան անւանւում է այնպիսի նւազախոմբագին մի դրամծք, որը բաղկացած է առանձին փոքրիկ մասերից, որոնք իրար հետ կապւած են մի ընդհանուր զաղավարով:

պահպանւած պատմական հևտեղութիւնը։ Աւ թնչակէս էր կարող պահ-պահւած լինել։

Առ այժմ մենք նրանով էլ պիտի բաւականանաք, որ Թիֆլսում բացի օպերաներից մեզ հնարաւորութիւն են տալիս ծանօթանալու և համերգական երաժշտութեան հետ։

### Ժամանակ 31.

Վաղուց սպասուած Շահլամեանը վերջապէս տեսց իւր կոնցերտը երեկ՝ արքունական թատրոնում։ Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր։ Հանդիսականների մեծամասնութիւնը հակերն էին կազմում։ Ամենախն անդամ երբ երգիչը բեմ էր դուրս զավիս՝ օդը թնդում էր ծափահարութիւններով, մասնաւանդ երբ նա երգեց «Զախ տուր ով ծովակր»։ Նա ստացաւ մի ահագի պատկ և «Ոկեցցէ Շահլամեան» կրող թերթիկներ թափւեցան երդչի վրա երբ նա ստաջին անդամ ներկալացաւ հասարակութեան։

Ժամանակի սղութեան պատճառով—հետեւեալ անդամ ևս կը խօսեմ աւելի մանրամասն կերպով Շահլամեանի արժանաւորութիւնների և պակասութիւնների մասին իբրև երգչի։ Առաջժմ ալսքանը կասեմ որ Շահլամեանը ունի հիանալի տեսոր ձախ՝ մեծ չափսի և շատ դուրեկտն տեմբրի—մանաւանդ բարձր նոտաններում, այն ինչ խսկապէս պահանջւում է տեսնորից։

Եթէ Շահլամեանի երաժշտականութիւնը համեմատ լինէր նրա բնապարզե հրաշալի ձանին—նա իրաւամբ կարող էր հրաշքներ գործել, բայց առաջժմ ալդ ալդպէս չէ։ Պէտք է լուսալ որ ժամանակով չնորհիւ պրակտիկավի նա ձեռք կը բերի և երաժշտականութիւնը և երգել իմանալը։ Այս պատճառով սխալ կը լինի եթէ ընդունենք որ Շահլամեանը արդէն կատարելազործւած երգիչ է և այն էլ կոնցերտավին։ Օպերակում նա շատ աւելի լիւր տեղումը կը լինի՝ քանի որ օպերավին երգչից շատ աւելի քիչ է պահանջւում նրբութիւն երգի մէջ, քան կոնցերտավին երգչից։

Ներկազումն պ. Շահլամեանը հրաւիրւած է Պետերբուրգի ոռւս օպերակին թատրոնը։

## ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Յուսիսի 7-ին, կիրակի օր, երեկոնքան ժամ 7-ին թիվլիսի քաղաքավիճ տան դահլիճում կազացաւ առաջին նախապատրաստական ընդհանուր ժողովը միջև ընկերութիւնը հիմնելու մասին խորհրդակցելու համար Փողովը գումարուել է բարահերքով ամսագրիս խմբագիր Աւետիք Արամիսանեանցի, պ. Միքատ Շահապիզի հետ նախապէս համաձայնութիւն կալացնելուց վեառ։ Ժողովին ներկաւ եղան 72 հոգի երկու սիոնից, որոնց մէջ ամենամեծ մասը Թիվլիսում ներկաւ գանւող դրականագիտներն էին, միայնակ ները՝ մարզիկ, որոնք յանկութիւն ունեն նպաստել ընկերութիւն հիմնելուն։ Նիստը բացելուց առաջ ժողով գումարողը ճառ խօսեց, որի մէջ նա, տեսութեան առնելով հայ գրական գասակարգի կաղմակերպւելու ընթացքը այս վերջին 30—35 տարիներում, լազանց այս միտքը թէ գրական գասակարգը պէտք ունի երեք անսակ հաստատութիւնների, մէկը՝ գասակարգի պատիւը պահպանող—ը ն կ ե ր ա կ ա ն դ ա տ ա ս տ ա ն, միւր՝ գասակարգի մտաւոր զարգացմանը նպաստող՝ զ բ ա կ ա ն ա կ ա ն ե գ ի տ ն ա կ ա ն ը ն կ ե ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ե ր բ ա ր զ՝ գասակարգի նիւթական ապահովութիւնը հոգացող՝ զ բ ա կ ա ն ա կ ա ն օ գ ն ե լ ո ւ ը ն կ ե ր ո ւ թ ի ւ ն կամ զ բ ա կ ա ն ա կ ա ն ֆ ո ն դ. Ա լ ժ մ ա լ ս վ երջին խնդիրն է ամենից հասունացել, որի իրագործմանը մեծապէս նպաստել է պ. Շահապիզը, որի օքնեանի հետ կապւած է եղել ապագա դրականական փոնդի օգտին ներկաւ ժողովելու միտքը։ Բայց այդ գրականական փոնդի հիմնելը զարկ կը տաք միւս վերը վշած հիմնարկութիւնների հաստատելուն և նոյն իսկ այն ընկերութիւն կանոնագրութեան մէջ կարող են մտնել չօգւածներ, որոնք առնչութիւն կ'ունենան նոցա հետ։

Ժողովը միաձայն ընդունելով Գրականագիտներին օգնելու ընկերութեան հիմնելու անհրաժեշտութիւնը և աղջոկիսով ժողովը կալացած ճանաչելով, ընտրեց ընդհանուր ժողովի նախադահ (Ա. Արամիսանեանցին) և քարտուղար (Յովհ. Թումանեանցին). ապա կարդացեց հայր Սարգիս Բէղնազարեանցից ներկանացրած մի գրութիւնը, ուր նա խօսում է հիմնելիք ընկերութիւնն օգտաւետութեան մասին, վետով հազարդեց

պ. Ստեփան Մալիսասեանից Ախալցխակից ստացած հեռագիրը ժողովի բարեկաջութեան մասին։ Ժողովի համաձայնութեամբ նախագահը ծանօթացրեց ռասաց գրականագիտական օգնելու ընկերութեան 1859-ին հաստատւած կանոնագրութեան զլիաւոր չօգւածների հետ և ապա ժողովը անցաւ կանոնագրութիւնը մշակելու համար մասնաժողով կազմութու գործին։ Պր. Ամրաս Շահազիվը, ի նշան պատվի, առանց քէարկութեան ընտրեց մասնաժողովի անդամ։ Թերթիկնելով քէարկութեան ենթարկեցին և ընտրմեցին հետեւալ 5 անձերը որպէս մասնաժողովի անդամներ։

Արասիաննեանց, Աւետիք . . . . . 44 ձաշնով

Արգուեանց, Առն . . . . . 38 "

Վարդաննեան, Գիլիսլու . . . . . 36 "

Քալանթար, Ալեքսանդր . . . . . 29 "

Բարխուզարեանց, Արշակ . . . . . 28 "

Քւէարկութեան ժամանակ ներկայ էին 66 հոգի, որոնցից ժողովի նախագահը և քարտուղարը ձեռնսպահ մնալով քէարկութեան մասնակցեցին 64 հոգի։

Ժողովը լանձնարարեց նախագահին հեռագիր ուղարկել ար. Շահազիվին, չնորդաւորելով նորան դործի լաջող ակզենտութեան համար։

Նիստը վակեց ոտի կանգնելով՝ լարգելու համար հանդուցեալ Պետրոս Աղամետնի վիշտառիլը, որը նոյնպէս մի գրականագէտ էր և որի մահւան տարի լիցն էր ապա օրը։

ԼՈՒՍԻՆԻ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԵՌԱԳԻՒՅ ԽԲԻՄԵԱՆ ՀԱՅՅԻՒՄԻՆ. Մայիսի 5-ին, համազգավիճ ժողովսամ կատարւած կաթողիկոսական ընտրութեան օրը, Եջմիածնից տեղեկութիւն տոանալուն պէս, «Մուրճ»-ի խմբագրութիւնը հեռագրեց Ելուսաղիմ՝ «Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանին, «Մուրճ»-ի խմբագրութիւնը հնորհաւորում է միաձո՞ն ընտրութիւնը»:

ԳՈԳՈԼԸ. «ՄՈՒՐՃ»-ում. Ներկայ համալրում ընթերցողները տպւած կը գտնեն ոսաց դրականութեան հանճարեղ ներկապացու ցիշներից մէկի, Նիկոլայ Գոգոլի, գրւածքներից մի նմուշ հաւերէն թարգմանութեամբ: Նիկոլայ Գոգոլի (ծնւած 1809 թ., վախճանւած 1852 թ.) անմահ գրւածքներից մէկն է «Զիշկովի արկածները կամ Մեռած հոգիներ» սոէմը, ուր հանճարեղ դրչով ոսաց հեղինակը ծաղրում է ոսաց կեանքի ալանդակութիւնները: Այդ գրւածքում դուրս բերւած տիպերից, սական, ամենից շատ լատոնին է Պիւչկինի տիպը, որ մի ժշատ կալւածատիրոջ տիպ է: Պատմութիւնը վերաբերում է ոսաց նախարհիումնեան շրջանին, երբ զեռ ևս դուրսթիւն ունէր ճորտութիւնը և երբ մի կալւածք կազմում էին ոչ միան հողը, ալ և նորա վերակ բնակտող ճորտ գիւղացիները, որոնց թէի համեմատ որոշումը էր և կալւածքի արժողութիւնը: Տէրութիւնը մի քանի տասնեւեկ տարիներ մի անգամ այդ լճակիչների թւահամարն էր անում, և այդ «ըեւկղիայի» հիման վերակ էր որ մի կալւածքում հաշում էին ճորտերի թիւը, թէի տասնեւեկ տարիներ անցկացած լինեն այդ բիւղիալից և շատերը նոցանից մեռած և օրինակ՝ հազար մարդուց միան 800 հոգի մնացած լինէին: Կալւածքը գնահատելու կամ հարկատւութեան համար ալդ մեռած մարդէկ (մեռած հոգիներ - մերտեալ ցած) իր կենդանի էին հաշում, և ի հարկէ բեւկղիալից դէս նոր ճնւածները չէին հաշըւում: Գոգոլը իւր հոչակաւոր սոէմավին «Մեռած հոգիներ» վերնագիրը գնելով, ալդ ծիծաղալի կարգ ու կանոնն է ի նկատի ունեցել:

1861 թ. վետրւ 19-ի հրովարտակով՝ որպէս լավանի է, ճորտութիւնը Ռուսաստանում վերացաւ, հետեապէս վերացան նաև ան կարդ ու կանոնները, որոնց շրջափում է Գոգոլը. բայց գրւածքը այնքան նշանաւոր է, որ պահպանեց իւր նշունակութիւնը նաև բնիքորմներից լետով իրքե անմահ նկարագիր մարդկային տիպերին:

Դոգովի գրւածքները բուն ռասկան ժողովրդական բառերի և ոճերի շատ մեծ ճոխութեան և ոճի կորովութեան սլատձառով ընդունւած են որպէս զժւար թարգմանելի: Ներկայ թարգմանութիւնը կատարւած է պ. Մկրտիչ Վաղարեանի ձեռքով, որ հրատարակում ենք մանրակրկիտ կերպով բնագրի հետ մի քանի անգամ համեմատած և վերուղղած լինելուց վետու:

«ԱՌԱՆՅ ՎԵՊԸ» Վ.ԵՊԸ «Մուրճ»-ի անցեալ № 4-ում վերջանում էր «2 ապրիլի» վշատակարանով՝ որը ռական չէր ամբողջացած. ամբողջութեան և զիւրընթեանելիութեան համար ներկայ համարում արտատպում ենք այդ կտորը կցելով դորան նաև շարունակութիւր:

Դալ № 6-ում կը վերջանաէ «Առաց դաւանանքի» վէպի առաջին մասը:

Անցեալ № 4-ում երես 578 զրւած է մի խմբագրական ծանօթութիւն՝ պեսի մի զմ խօսքը բացարող. Ազդաել մի սխալմունք է պատահել, այդ բացարութիւնը վերաբերում է ոչ թէ պեսմիզմ, այլ սկզբան է զմ բառին, որ այնքան չաճախ կրկնուում է պ. Սենկելիչի վէպում: Եւ քանի որ պետիմիզմ և սկեպտիցիզմ բառերը չաճախ զործ են ածւում այդ վէպում, աւելորդ չենք համարում դնել աչտեղ նոցա խմական նշանակութիւնները:

Ուսուի մի զմ, հայերէն՝ հոռետեսութիւն. ազդովէս է կոչւում այն ֆիլոսոփական աշխարհակեցողութիւնը, որի համաձայն աշխարհը ի բնէ վստ է: Պետիմիզմի հակառակ աշխարհակեցողութիւնը կոչւում է օպտիմիզմ, հայերէն՝ լաւատեսութիւն: Պետիմիզմի հակառած մարդը կոչւում է պեսսիմիստ, հայերէն՝ հոռետեսու, օպտիմիզմին հակառածը կոչւում է օպտիմիստ:

Սկզբան այս աշխարհակեցողութիւնն է, որի համաձայն մարդս չի կարող հասնել ճշմարտութեան: Ակեպտիցիզմին հակառածը կոչւում է սկզբան պատմութեան մարդուն:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1892 թ. մայիսի  
16-ին ընդհանուր ժողովի որոշումները.

1) Ընկերութեան գործունէութեան և դրամահաշտի տե-  
ղեկապիրը իւրաքանչիւր տարի տավագրել և քաղաքի անդամ-  
ներին ուղարկել տարեկան ընդհանուր ժողովի նիստից առնը-  
ւազն երեք օր առաջ:

3) Ընկերութեան իւրաքանչիւր իսկական և մշտական  
անդամը իւր աղաս ընտրութեամբ տարեկան հինգ րուբլու  
դիրք է առանում. ան անդամը, որ չի վճարել իւր անդամա-  
վճարը, իրաւունք չունի դիրք առանալու: Պատւի անդամնե-  
րին արտօմ է իւրաքանչիւր հրատարակութիւնից մի-մի օրի-  
նակ, Գաւառական անդամներին գրքեր ուղարկելը վարչու-  
թիւնը իւր վերաց է վերցնում: Ով իւր անդամակցած տարակ  
ընթացքում իրան հասանելի գրքերը չի ստացած, նրան վեց  
ամիս ժամանակ է արտօմ գրքեր ստանալ մինչեւ իւր անդա-  
մակցած ժամանակը լուս տեսած գրքերից:

4) Պարտաւորական է ընկերութեան բոլոր հրատարա-  
կութիւններից մշտական երկերկու օրինակ ուղարկել Խմբիածնի-  
Մայր-Գրադարանին և Գէորգեան հեմարանի մասնադարանին:

5) Բոլոր հատարակական, աղդալին, Ռուսաստանի և ար-  
տասահմանի ուսանողական, հայոց թեմական, ծխական գոլլոց-  
ների զրադարաններին վարչութիւնը իրաւունք ունի իւր բա-  
րեհակեցողութեամբ Ընկերութեան հրատարակութիւններից  
նէք ուղարկելը

6) Ընդհանուր ժողովների որոշումները նուն նիստում  
պիտի կարգացւեն իրանց վերջնական ձեակերպութեամբ:

7) Ընկերութիւնն իւր դրամական կարողութիւնից չի  
կազմում անձնունմիտելի կամ անշարժ զրամագլուխ:

Ծանօթութիւնն: Ան զումարները, որոնց նվազութիւնը չեն  
պարզանաւորում, դառնում են շրջանառու զրամ:

8) Վարչութիւնը իրաւունք ունի միաժամանակ ոչ աւելի  
քան մի հազար բուրբու դիրք ասկառիկ ցրւել զաւառներում  
վաճառելու համար:

9) Նոր անդամները, մինչեւ չը վճարեն իրանց անդամա-  
վճարը, չեն կարող մասնակցել ընդհանուր ժողովներին:

ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ առաջին Տասնամեակը  
հանդիսաւոր կերպավ տօնւեց մայիսի 31-ին, ո. Նշան եկեղե-  
ցու գաւթում գանւող Ընկերութեան ուսումնարանում: Կար-  
գացած ուղերձների թւաւմ կար և «Մուրճ»-ինը, որ հետե-  
ւալն էր.

«Մուրճ» ամսագրի խմբագրութիւնը, ուրախութեամբ խռո-  
տովանելով, որ Ընկերութիւնդ իւր տասնամեաց գոյութեան  
ընթացքում կարողացել է իւր օպտաւէտութիւնը դործով ապա-  
ցուցել, չնորհաւորում է Ընկերութիւնդ Տասնամեակի տօնա-  
խմբութիւնը և ցանկանում է ասրազալի համար տոկուն և չա-  
ռաջադէմ գործունէութիւն, համաձան կեանքի պահանջներին.  
Ճգտելով այդ պահանջներին համապատասխանելու՝ Ընկերութիւնդ  
կ'ապահովացնի իւր գոյութեան կենդանի չարատեռութիւնը և  
ապահով կերպով կ'արժանանայ թէ խրախուսանքի և թէ երախ-  
տագիտութեան հասարակութեան կողմից, զորանով իսկ ար-  
դարացնելով այն վստահութիւնը, որ հասարակութիւնը, ընդ-  
հանրութեան օգտի համար, պէտք է ունենաց դէպի կնոջ հա-  
սարակական կոչումը:

ԵՐԱԺՇՑԱԽԱՆ ՔՐՈՆԻԿԻ այն մասը, որ վերաբերում է անցած ամիսնե-  
րին, անցեալ համարում տպագրելու ժամանակ չունենալով  
տպում ենք ներկայ համարում:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԲԵՐ. Բայց Գրախօսութեան մէջ վիշտածներից, ստաց-  
ած են՝

ՄԱՆՈՒԵԼԵԱՆԻ, ԼԵՒՈՆ.—«Տիգրանուհի», դրամա հինգ  
արարւածով: Արտաստպւած «Մուրճ» ամսագրից. գինն է 50 կոպ.

ՎԻՊԻԼԵԱՆ, հայր Կղեմէո, Մխիթարեան ուխտէն—«Պա-  
սաւորութիւն Ռուբենեան զրամոց». Վիեննա, 1892 թ., Մխիթ.  
տպար. գինն է 3 րուբլի:

ԱԼՄԱՐԵՅԻ, Ա.՝—«Պուստաւ Վազա»: Մոռկւա, տպար.

Մ. Բարխուզարեանցի, 1892 թ., գինն է 4 կոպէկ:

«ՄՈՒՐՃ»-Ի ՆԵՐԿԱՅ № 5-ը լսու է տեսնում սպորականից աւելի մեծ և  
աւելի ուշ՝ անկտածգելի յօդածների պատճառով:

# ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԵՐՏԱՏՊԻԾԾ՝ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

|                                                                                                       | թ.   |
|-------------------------------------------------------------------------------------------------------|------|
| «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . . . .                                                     | 12 — |
| նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . . . .                                                  | 7 —  |
| 2. «ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թւականի, երկու հատորով . . . . .                                              | 12 — |
| նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . . . .                                                  | 7 —  |
| 3. ՊԱՌԵԱՆՅ, ՊԵՐՃ.—ՅԵՅԵՐ» (վէպ) . . . . .                                                              | 1 —  |
| 4. ՏԵՐ-ԴԻՎՈՐԵԱՆՅ, ԳԻՒԳՈՐ (ԴՂԱՐՁԻ)՝ «Մանուկների<br>մարսողութ. գործարանների հիւանդութիւնները» . . . . . | — 05 |
| 5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԵԽԻ-ԿԱՐԱՊԱՏ», վէպ հայ-կաթոլիկ-<br>ների կեանքից . . . . .                          | 1 —  |
| 6. ԼՅՕ. — «ԿԱՐԱԾՆԵՐ» (վէպ) . . . . .                                                                  | — 50 |
| 7. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒԳԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ»:<br>(կեանքից պատկեր) . . . . .                        | — 40 |
| 8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» .                                                     | — 60 |
| 9. ՊԱՌԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ԲՊ.ԴԵ», վէպ . . . . .                                                              | 1 20 |
| 10. ՓԱՒԱԶԵԱՆՅ, Վ. — «ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բոշան. կեանքից)                                                   | — 15 |
| 11. ՄԱՐԻՍԵԱՆ, ՄԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԵ» (մ.ձ վէպ), ա. մասը                                                  | — 50 |
| 12.       »       »       »       »       բ. մասը                                                     | — 75 |
| 12. ՂԱՐԱԳԵՅԶԵԱՆՅ, Յ. — «ՍԵՒ-ԼԵՒՆՑԻՔ» (տոհմագ. պատկ.)                                                  | — 15 |
| 13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵՒԱՆՆԵՐ» . . . . .                                                     | — 03 |
| 14.       »       »       »       » ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» . . . . .                                             | — 03 |
| 15.       »       »       »       » ԵԶԻԴ ԱՂՋԻԿԸ» . . . . .                                            | — 05 |
| 16.       »       »       »       » ԾԱՆՐ ՔԱՐԸ» . . . . .                                              | — 03 |
| 17.       »       »       »       » ՆԻՍՉԻԱԾ ԿԵՍՆՔԸ» . . . . .                                         | — 03 |
| 18.       »       »       »       » ՄԵՐ ԻՆՉԸ ԿՐ ՊԱԿՍԻ» . . . . .                                      | — 03 |
| 19. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔ» . . . . .                                                    | — 15 |
| 20. ԲԱԼԱՎԵԱՆ, ՍԱՄՈՒԵԼ. — «ՄԻԿՐՈԲՆԵՐԸ» . . . . .                                                       | — 10 |
| 21. ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐԵԱՒԱՆՔ» .                                                     | — 10 |
| 22. ՏՈՒԵՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱՆՔՆԵՐ» . . . . .                                                   | — 15 |
| 23. ՎՐՈՅՐ, Մ. — «ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» . . . . .                                                            | — 20 |
| Դիմել՝ ՅԵ Պետական ազգային ակադեմիա:                                                                   |      |

Թիֆլիզի Ընկերութեան Հայոց գրքերի հրատարակութեանն խմբագրական մասնաժողովը սրանով յայտարարում է, որ տպագրութեան համար ընդունւում են հետևեալ բովանդակութեան ինքնուրոյն և թարգմանական գրւածքներ.

1. Գեղարւեատական:

2. Գիտնական, զուտ գիտնական գրւածքներից կը տպագրւեն միայն այնպիսիները, որոնք վերաբերում են հայոց կեանքի հետազոտութեան, իսկ գիտութեան միւս ձիւղերից միայն ժողովրդականացրած գրքեր:

3. Դասագրքեր, նամանաւանդ ընդհանուր գրականութեան, ընդհանուր պատմութեան, հայոց գրականութեան, բնական պատմութեան և ֆիզիկայի ձեռնարկներ, կազմած մեր թեմական դրաբոցների համար:

4. Մանկական ընթերցանութեան համար:

5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան վերաբերեալ (աւանդութիւններ, երգեր, սովորութիւններ և այլն):

Ծանօթութիւն. մանրամասն ծրագիր վերոցիշեալ նիւթերի ժողովելու համար կը տպագրւի յետոց: Ընկերութեանս խմբ. մասնաժողովը իրան է վերապահում ներկայացրած նիւթերից ընարութիւն և քաղւածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ դնում:

Տպագրւած գրքերի համար վարձատրութիւն արւում է մի տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրւածքների համար՝ 20—25 ռ., իսկ թարգմանական գրւածքի համար՝ 15—20 ռուբլի:

Բացառիկ գէպքերում վարձատրութիւնը կարող է և առելի մնել խմբ. մասնաժողովի հաջողութեամբ:

Հայոց Տիֆլիս, Правленію Тифлисского Общества изданія армянскихъ книгъ.

# ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՇՎԱԿՈՒՄ

աշխարհի մէջ կարեմիքինաների բոլոր ցուցահանդէսներում

**ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵԼՆԵՐԻ**  
Կարենը ընկերներ տան տիկինների և աղջիւ օգնականներ  
բոլոր արհեստագործի համար

ԳՏՆԵՐՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թէ վիշտում Զենքերի ընկերութեան կերպութեան պահեստում՝ Գո-  
ռվինսկի պրօսպեկտի վերայ, Մերիմանովի տան և Կըտ բաժ անմունք-  
ների մէջ:

Բագրում. Մեքընէլեան փողոցում,  
Միջքա Աւագեանի ա.  
Ճուղիվարի դէմ  
Զերեկովի ա.  
Բաթումում. Լոռիս-Մեքեան փո-

և նըսնց մասնապեհութու գործառնությունների մոտ  
ՄԵՐՁԻՆ են ՀԻՒՍԽՈՅՑԻՆ ԵԿԻՌՊԱՅՅԻ ՀԱՄԱԿԵՐՏԻ ԶԼԿՎԵՐԻ ԵԿ ԸՆԿԵՐ  
ԳԼԽԱԿՈՐ ԳՈՐԾՎԱԿԱՐԻ ՄՈՏ

፩. ሂደጋዊነት ተብሎ

Գանդիները կարող են, եթէ կամինում են, դրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շաբաթով կամ ամսովի կամ ժամանակամիջոց սասանալ զրաւականով զրամը վճարելու համար:

Յ. Դ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում էն մեքենաներին պատկանելի զործիքները, ինչպէս էն առեղջներ, թել, մետաքս և ալ մեքենային պատկանելի իրեցիններ ամենաչափաւոր դներով:



卷之三





# ՄՈՒԻՇ

ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՀԱՍՏԱԿԱՆԱՆ - ԳՐԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ր.Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԻԱԾ Ե

Տարեկան գիմն է 10 ր.

Բաժանորդագրութեան համար գիմն՝

ԽՄԲԱԴՐԱՏՈՒՆԸ Տիֆլիս. Въ редакцію журнала „МУРЧІ“. Tiflis. Rédaction de la Revue „MOURTCHI“.  
Կամ մեր գործակալութիւններին՝

Թիֆլիս. —Կենտրոնական գրավաճառանոց:

» պ. Յովշաննէս Թումանյաց, Սիօնի փողոց № 27:

ԲԱՔՈՒ. —պ. Աւելիս Գաւթեանց (Մարգար. բնկ., ընթերցարան):

» պ. Առեգան Սուլլաննեանց („Надежда“ բնկ., Набережная:  
ՌԱՍՏՈՎ. —ՆՈՐ-ՆԱԽԶԵՒԱՆ. —Եղբ. Պ. և Գ. Աւաննեաններ:

ԲԱԹՈՒՄ. —պ. Մարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Ծովիանների):

ՎԱՐԱՐՃԱՊԱՏ. —պ. Առեգան Արասխաննեանց:

ՄՈՍԿԻՍ. —պ. Վարդան Թումաննեանց (Чистые Пруды д. Турицыа

» պ. Առեգան Վարդազարեանց, (Б. Харитоньевский, № 6):

ՕԴԵԽԱ. —պ. Միքայէլ Մուրազեանց (գրասհն. եղբ. Ծովիանների):

ԹԱՒՐԻԶ. —պ. Ասատրւր-բէկ Միքայէլեանց:

ԶՄԻՒՐՆԻԱ. —պ. Յ. Տէր-Միքարեանց (Մեսրոպ. վարժարան):

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. —պ. Յակոբ Յ. Տէր-Պօղոսեանին:

ՄԱՐՍԵՅԼ. —պ. Սիմեոն Միքայէլեանց: Rue St Jacques № 86:

ԽՄԲԱԴՐԱՏՈՒՆԸ գտանւում է Թիֆլիս, Վելեմիննեան փողոց, տուն № 8: